



ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



***Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և
կայուն տնտեսական աճի ապահովման
հարկաբյուջետրային և ոլորտային
քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում***

ՄԱՍ 1

Հեղինակներ՝

Է.Մ. Սանդոյան
Ա.Բ. Եղիազարյան
Մ.Հ. Ոսկանյան
Ա.Հ. Գալստյան



**RUSSIAN-ARMENIAN
UNIVERSITY**

**“CENTER FOR THE
PROMOTION OF ECONOMIC
EDUCATION AND
RESEARCH” FOUNDATION**

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

**E. SANDOYAN
A. YEGHIAZARYAN
M. VOSKANYAN
A. GALSTYAN**

**IMPLEMENTATION OF FISCAL AND
INDUSTRIAL POLICIES TO OVERCOME THE
ECONOMIC CRISIS AND ENSURE
SUSTAINABLE ECONOMIC GROWTH IN
ARMENIA. PART 1**

**YEREVAN
RAU PUBLISHING HOUSE
2022**



**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Է.Մ. ՍԱՆԴՈՅԱՆ
Ա.Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Մ.Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Ա.Հ. ԳԱԼՍՏՅԱՆ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ. ՄԱՍ 1**

**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022**

UDC 338.2:330.34

*Published by decision of the Academic and Editorial Boards of the
Russian-Armenian University*

Sandoyan E., Yeghiazaryan A., Voskanyan M., Galstyan A.
Implementation of Fiscal and Industrial Policies to Overcome the Economic
Crisis and Ensure Sustainable Economic Growth in Armenia. Part 1 /
Sandoyan E., Yeghiazaryan A., Voskanyan M., Galstyan A. – Yer.: PH
RAU RA, 2022. – 233p.

The monograph is devoted to the analysis of economic drivers and industrial policy in the Republic of Armenia, taking into account international experience, as well as theoretical studies on the topic under discussion. Based on a retrospective analysis of the Armenian economy the authors highlight the issues of the industrial policy and give recommendations for its improvement.

The book will be of interest to researchers, policy-makers, teachers, undergraduate, graduate, and postgraduate students whose studies are focused on the issues of government regulation, industrial policy and economic growth.

The work reflects the results of a study implemented with financial support from the “Center for the promotion of economic education and research” foundation. The content of the study reflects the views of the authors.

ISBN 978-9939-67-281-6

© RAU Publishing House, 2022

ՀՏԴ 338.2:330.34

ԳՄԴ 65.050

Տ 776

*Հրատարակվել է Հայ-ռուսական համալսարանի գիտական և խմբագրական
խորհուրդների որոշմամբ*

Է.Մ. Սանդոյան, Ա.Բ. Եղիազարյան, Մ.Հ. Ոսկանյան, Ա.Հ. Գալստյան

Տ 776 Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում. Մաս 1 / Է.Մ. Սանդոյան, Ա.Բ. Եղիազարյան, Մ.Հ. Ոսկանյան, Ա.Հ. Գալստյան – Եր.: ՀՌՀ հրատարակչություն, 2022. – 233 էջ.

Մենագրությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական շարժիչն ուժերի և ոլորտային քաղաքականության վերլուծությանը՝ հաշվի առնելով միջազգային փորձը, ինչպես նաև քննարկվող թեմայի շրջանակներում գրականության ուսումնասիրությունները: Հիմնվելով Հայաստանի տնտեսության հետահայաց վերլուծության վրա՝ հեղինակներն ընդգծում են ոլորտային քաղաքականության հիմնախնդիրները և ներկայացնում առաջարկություններ՝ ուղղված դրա բարելավմանը:

Գիրքը կհետաքրքրի հետազոտողներին, քաղաքականություն մշակողներին, դասախոսներին, բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին, ում հետազոտության թեմաներն ընդգրկում են պետական կարգավորման, ոլորտային քաղաքականության և տնտեսական աճի հիմնախնդիրների ուսումնասիրումը:

Աշխատանքն արտացոլում է «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված հետազոտական ծրագրի արդյունքները: Հետազոտության բովանդակությունն արտացոլում է հեղինակների տեսակետները:

ՀՏԴ 338.2:330.34

ԳՄԴ 65.050

ISBN 978-9939-67-281-6

© ՀՌՀ հրատարակչություն, 2022

Բովանդակություն

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ	6
1. ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: 7	
1.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺԳՆԱԺԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, 1929-1934ԹԹ., ՄԵԾ ԴԵՊՐԵՍԻԱ	7
1.2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	20
1.3. ՄԱԿՐՈՏՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	25
1.4. ՑԻԿԼԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	34
1.5. ՀԱԿԱՑԻԿԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	41
1.6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1960-2020ԹԹ..	47
1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	54
1.7.1. Հայաստանում տնտեսական աճի և ճգնաժամերի հիմնական ոլորտները և գործոնները...	54
1.7.2. 2020թ. Հայաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականության վերլուծությունը	70
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	75
2.1. ԵՐԿՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	76
2.2. ԵՐԿՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	80
2.3. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԴԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ	81
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	83
3.1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ	95
3.2. ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ և ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	105
3.3. Մշակող արդյունաբերություն	113
3.4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ և ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ: ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՎԵՐԱՄշակում	126
3.5. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	136
3.6. ՄԵԾԱԾԱԽ և ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԱՏՈՒՐ: ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄՈՏՈՑԻԿԼՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ:	144
3.7. ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ և ՊԱՀԵՍԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	150
3.8. ԿԱՅՈՒԹՅԱՆ և ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	159
3.9. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ԿԱՊ	166
3.10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ:	174
3.11. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	186
3.12. ՎԱՐՁԱՐԱՐԱԿԱՆ և ՕԺԱՆԴԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	198
3.13. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ: ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ և ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ	202
3.14. Մշակույթ, շվարժություններ և ՀԱՆԳԻՍ	212
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	221

1. Հակաճգնաժամային կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունը և տնտեսական աճի գործոնների վերլուծությունն ու գնահատումը Հայաստանում:

1.1. Տնտեսական ճգնաժամի կառավարման մեթոդների տեսական ակնարկ, 1929-1934թթ., Մեծ դեպրեսիա

Համաշխարհային պատմությունը վերջին երկու-երեք դարերի ընթացքում տեսել է բազմաթիվ տնտեսական ճգնաժամեր, որոնք ազդել են ինչպես առանձին երկրների վրա, այնպես էլ արտացոլվել են ընդհանուր տնտեսության զարգացման դինամիկայում: Տնտեսագիտության մեջ ճգնաժամային երևույթների բնույթն ու էությունը նկարագրող հիմնարար հենքը կարելի է համարել Շումպետերի աշխատանքը¹, որում առաջ է քաշվում տնտեսական տատանումների գաղափարը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Ընդ որում, տնտեսական անկայունության բոլոր երեք ժամանակահատվածները փոխկախված և փոխկապակցված տնտեսական տատանումներ են, որոնք նման են փուլերի տեսանկյունից, սակայն տարբերվում են իրենց հետևանքներով և տևողությամբ: Տնտեսական տատանումների շրջանում ամենացածր կետն էլ հենց ճգնաժամն է:

Ճգնաժամը սահմանող հեղինակներից կարելի է առանձնացնել Գ. Հաբերլերին², որը «ճգնաժամը» սահմանում է որպես տնտեսական վերականգնումից դեպի անկում անցում, որը, որպես կանոն, ուղեկցվում է տնտեսական ակտիվության կրճատմամբ, գների աճով, բարձր գործազրկությամբ, սոցիալական բացասական հետևանքներով և այլն:

Ճգնաժամի սահմանում տվող հեղինակների շրջանում կարելի է առանձնացնել

Գ. Հաբերլերին, ով «ճգնաժամը» սահմանում է որպես տնտեսության անցում վերելքից դեպի անկում, ինչը, որպես կանոն, ուղեկցվում է տնտեսական ակտիվության կրճատմամբ, գների աճով, գործազրկության բարձր մակարդակով, բացասական սոցիալական հետևանքներով և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ եթե տնտեսական շրջափուլերի (economic cycles) ուսումնասիրության առաջին փուլում ճգնաժամը դիտարկվում էր որպես ներուժային երկարաժամկետ աճի գծից շեղում, ապա ժամանակակից մոտեցումները գործարար շրջափուլն (business cycle) ու աճը դիտարկում են միևնույն դաշտում: Ըստ էության, նման մոտեցումը ենթադրում է կարգավորող քաղաքականության այլ տեսլական՝ գործարար շրջափուլի առանձին շրջաններում: Այս թեզն առավել մանրամասն կքննարկվի սույն հետազոտության այլ կետերում:

Առաջին տնտեսական ճգնաժամերի շրջանում անհրաժեշտ է նշել տնտեսական ճգնաժամը Մեծ Բրիտանիայում 1825թ.-ին, այնուհետև 1836թ., 1847թ., 1873-1878թթ., 1900-1903թթ., 1907թ., 1920թ. ճգնաժամերը, որոնք արդեն ունեին ավելի համակարգային բնույթ և ընդգրկում էին ինչպես ԱՄՆ-ն, այնպես էլ Եվրոպայի գրեթե բոլոր երկրները: Ըստ էության, համաշխարհային տնտեսության զարգացման, երկրների միջև առևտրային և արտաքին տնտեսական հարաբերությունների

¹ Schumpeter J. A. Business cycles. A theoretical, historical and statistical analysis of the capitalist process. Vol. 1. N. Y.— L., 1939, P. 130—137.

² Gottfried von Haberler, Prosperity and Depression: A theoretical analysis of cyclical movements, 1937. (this is the 3rd edition pub. in 1946)


ամրապնդման յուրաքանչյուր նոր փուլ անխուսափելիորեն ուղեկցվել է նոր տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանով:

Սակայն 1929թ.-ի ճգնաժամը («Մեծ դեպրեսիան»), որը սկսվեց ԱՄՆ-ում և ազդեց ամբողջ արևմտյան տնտեսության վրա, համաշխարհային տնտեսության համար հետևանքների մասշտաբներով տարբերվում էր նախորդներից: Այս իմաստով միայն 2007-2009թթ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը կարելի է համեմատել «Մեծ դեպրեսիայի» հետ՝ աշխարհի տնտեսական համակարգի համար բացասական հետևանքների ուժով: Նկարագրելով «Մեծ դեպրեսիան» և դրա հետևանքները համաշխարհային տնտեսության համար, Դեյվիդ Քենեդին³ փաստում է արդյունաբերական արտադրանքի համախառն ծավալի կրճատումը ԱՄՆ-ում, Կանադայում և Եվրոպայում (առաջին հերթին Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում) 46%-ով, այդ ժամանակ շուկայական տնտեսությունների արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվել էր 67%-ով,

սպառողական պահանջարկի կրճատումը բերեց գյուղմթերքի գների անկման միջինում 40-60%-ով, գործազուրկների քանակը հասավ ընդհանուր ակտիվ աշխատուժի 25%-ին, ինչն էլ հանգեցրեց տնային տնտեսությունների իրական եկամտի կրճատման 58%-ով:

«Մեծ դեպրեսիայի» ընթացքում ԱՄՆ-ի տնտեսական վիճակի մասին տվյալների հիմնական աղբյուրը ամերիկացի գիտնականների հավաքական աշխատանքն է՝ «Ընթացիկ սոցիալական միտումները Միացյալ Նահանգներում» («Recent social trends in the United States»)⁴: Այսպես, 1930թ.-ի արդյունքներով ԱՄՆ-ի ՀՆԱ անկումը կազմել է -8,5% և երկու տարի անց արդեն -12.9% (**Error! Reference source not found.**):

Գնաճի և գործազրկության ցուցանիշները նույնպես ցուցաբերել են բացասական դինամիկա (Նկ. 1.1.2): ԱՄՆ տնտեսությունում ռեցեսիայի բոլոր չորս տարիներին դիտարկվում էր դեֆլյացիա. ՍԳԻ նվազագույն ցուցանիշը գրանցվեց 1932թ.-ին և կազմում էր -10.3%:



Նկ. 1.1.1 ՍԳԻ (% , աճի տեմպ) և գործազրկություն (%):

Աղբյուր՝ ԱՄՆ Դաշնային Պահուստային Համակարգի տվյալների բազա - <https://www.federalreserve.gov/>

Դեֆլյացիայի ֆոնին գործազրկության մակարդակը հասավ իր գագաթնակետին 1933թ.-ին՝ կազմելով 24.9%, ինչը ամերիկյան

Աշխատանքի շուկայի հիմնախնդիրների հետազոտման ասոցիացիայի⁵ հաշվարկների համաձայն կազմում էր շուրջ 12.8 մլն մարդ: 19-

³ Kennedy, David M. Freedom from Fear: the American People in Depression and War, 1929—1945: — New York: Oxford: Oxford University Press, 2001. — 988 p.

⁴ President’s Research Committee on Social Trends: Recent Social Trends in the United States (Westport, Conn.: Greenwood, 1970).

⁵ <https://www.bls.gov/opub/mlr/1948/article/pdf/labor-force-employment-and-unemployment-1929-39-estimating-methods.pdf>

րդ դարի սկզբին ԱՄՆ-ում գործազրկության վերաբերյալ պետական վիճակագրություն չէին վարում, այդ պատճառով գործազրկության վերաբերյալ տվյալները տարբերվում են տարբեր հեղինակների մոտ: Այսպես, ոմանք⁶ հիմնվում են Պոլ Դուգլասի գնահատման վրա, որի համաձայն գործազրկության մակարդակը 1923-1926թթ.-ին կազմում էր 9%, այլոք որպես հիմք են ընդունում Իրվինգ Բերնշտեյնի⁷ գնահատումը, ով նույն ժամանակաշրջանի համար գործազրկությունը սահմանում է 10-13% միջակայքում: Արդյունքում բավականին դժվար է գնահատել այդ տարիներին աշխատաշուկայում աղետի իրական մասշտաբները, սակայն կարելի է կատարվածի մասին մոտավոր պատկեր ստանալ:

Գործազրկության բարձր մակարդակի հետ կապված երկարատև խնդիրների հետևանքով բնակչության իրական եկամուտները կրճատվում էին, ինչն էլ ավելի խորացրեց եկամուտների անհավասարության խնդիրը ԱՄՆ-ում: Համաձայն որոշ հաշվարկների, սոցիալական անհավասարության ամենաբարձր մակարդակը ԱՄՆ-ում 20-րդ դարի առաջին կեսին գրանցվել է երկու անգամ՝ 1916 և 1929 թվականներին, այսինքն «Մեծ դեպրեսիայի» նախօրեին⁸: Որոշակիորեն հենց այստեղ է գտնվում տնտեսությունում կառուցվածքային հիմնախնդիրների սկիզբը, որոնք արդյունքում հանգեցրին համաշխարհային մասշտաբի ճգնաժամի:

1929թ.-ի ճգնաժամի ի հայտ գալու պատճառներին նվիրված են բազմաթիվ հետազոտություններ: Ամենակարևոր աշխատանքներից մեկն է Ալան Գրինսպեյնի⁹ հետազոտությունը, որտեղ նշվում է, որ «Մեծ դեպրեսիայի» ակունքները գալիս են

համաշխարհային տնտեսության խորքային համակարգային խնդիրներից, աշխարհակարգի փոփոխությունից, պայմանավորված հաստատագրված փոխարժեքներից հրաժարվելով, «ոսկե ստանդարտին» կցումից, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմից: Հեղինակն ընդգծում է աշխարհի առաջատար տնտեսությունների անկարողությունը հարմարվել համաշխարհային տնտեսական համակարգի փոփոխություններին և հարմարեցնել սեփական տնտեսություններն ու դրանց կարգավորման մեխանիզմները ձևավորվող նոր համաշխարհային տնտեսական կարգին: Այս իմաստով մենք կարող ենք զուգահեռներ տանել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի, ինչպես նաև COVID-19 համավարակով պայմանավորված ընթացիկ ճգնաժամի հետ:

«Մեծ դեպրեսիայի» պատճառների մանրամասն վերլուծությունը բերում է մակրոտնտեսական կարգավորման տարբեր հիմնարար մոտեցումների ակնարկի: Այսպես, համաձայն Քեյնսի¹⁰ մոտեցման, 20-րդ դարի 20-ականներին ԱՄՆ-ում գերարտադրությունը տեղի էր ունենում դրամական զանգվածի խիստ սղության պայմաններում (ոսկե ստանդարտին կցումն սահմանափակում էր փողի առաջարկի աճը), ինչն էլ իր հերթին բերեց դեֆլյացիա և որպես հետևանք տնտեսական ակտիվության կրճատում, ինչին էլ հետևեց անկայունությունը և ճգնաժամը ֆինանսական համակարգում: Մոնետարիստները ենթադրում էին, որ ճգնաժամի հիմնական պատճառներից էր նաև փողի սուր պակասն էր, սակայն նշում էին, որ ֆինանսական պաշարների պակասուրդը այդ ժամանակաշրջանում կապված էր ԴԴԿ-ի (FRS) զսպող քաղաքականության հետ: «Արգելիք»

⁶ President's Research Committee on Social Trends: Recent Social Trends in the United States (Westport, Conn.: Greenwood, 1970).

⁷ Kennedy, David M. Freedom from Fear: the American People in Depression and War, 1929—1945: — New York; Oxford: Oxford University Press, 2001. — 988 p. — (Oxford history of the United States, vol. 9)

⁸ Gene Smiley "A Note on New Estimates of the Distribution of Income in the 1920s", "A Journal of Economic History", Vol. 60, Issue 4, Dec. 2000, Pp. 1120—1128.

⁹ Alan Greenspan, Adrian Wooldridge. Capitalism in America. Penguin; 1st edition (October 16, 2018). P. 477

¹⁰ Кейнс Дж.М. Общая теория занятости, процента и денег. (The general theory of employment, interest and money, 1935). Перевод с английского Н.Н. Любимова. (Москва: Государственное издательство Иностранной литературы, 1948)

(Prohibition) օրենքի ընդունումը նույնպես բացասական ազդեցություն ունեցավ ԱՄՆ տնտեսության վրա: Որոշ գնահատականների համաձայն ամերիկյան գանձապետարանը օրենքի գործելու տասներկու տարիների ընթացքում կորցրել է շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլար¹¹: Այս միջոցները կարող էին լրացուցիչ պաշար դառնալ ճգնաժամի գազաթնակետի ընթացքում բանկային համակարգում իրացվելիության ապահովման համար: Իհարկե ֆոնդային բորսաներում սպեկուլյատիվ գործառնությունները, և որպես հետևանք բորսայի անկումը 1929թ.-ին ճակատագրական դեր խաղացին¹²:

20-ականների վերջին տնտեսության անկումը խորացնող գործոնների շարքին կարելի է դասել համաշխարհային սակագնային պայքարը, ուղեկցվող ազգային արժույթների դեվալվացիայով, ինչպես նաև բանկային ճգնաժամը, պայմանավորված վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմամբ՝ ֆինանսական համակարգերում իրացվելիության պակասուրդի ֆոնին: Նման մոտեցում կիրառվել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից 2008-2009թթ. և 2014-2015թթ. ճգնաժամերի ընթացքում:

20-րդ դարի 20-ականների վերջին ԱՄՆ-ում ձևավորված իրավիճակը պահանջում էր մակրոտնտեսական կարգավորման, ավելի ճիշտ անհրաժեշտ կարգավորման գործիքակազմի ստեղծման մոտեցումների արմատական փոփոխություն, որոնք թույլ կտային կառավարությանը ժամանակին և արդյունավետորեն չեզոքացնել ներքին և արտաքին ցնցումները ոչ միայն ճգնաժամի ժամանակաշրջանում, այլև տնտեսության գործարար ակտիվության բոլոր մյուս փուլերում: Ըստ էության 1930-ականների սկզբի բարեփոխումները կարելի է համարել

զարգացման «թակարդի» հաղթահարման փորձ, ինչը թույլ է տալիս զուգահեռներ տանել համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլի և մակրոտնտեսական կարգավորման գոյություն ունեցող մոտեցումների վերանայման հրատապ անհրաժեշտության հետ: Կարելի է պնդել, որ այժմ, ինչպես նաև «Մեծ դեպրեսիայի» ժամանակաշրջանում, տեղի է ունենում սեփականության հարաբերությունների, աշխատանքի շուկայի կառուցվածքի և բովանդակության, ֆինանսական համակարգի, կարգավորման և վերահսկողության մոտեցումների և այլնի վերափոխում: Տարբերություն կարելի է համարել այն, որ 20-րդ դարի 30-ականների սկզբի բարեփոխումները իրականացվում էին կայուն ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններում, այն դեպքում, երբ ներկայումս ինստիտուցիոնալ համակարգը նույնպես ենթակա է արդիականացման և փոփոխությունների:

Այս ամենը միասին պահանջում է կարգավորման այն մեխանիզմների ուսումնասիրում, որոնց սկիզբը դրվել է «Մեծ դեպրեսիայի» ժամանակաշրջանում: Ստորև ներկայացած է այն հիմնական միջոցառումների ցանկը, որոնք իրականացվել են ԱՄՆ-ում «Մեծ դեպրեսիայի» դեմ պայքարի ընթացքում: Հաշվի առնելով, որ «Մեծ դեպրեսիան» պահանջում էր հենց հակաճգնաժամային կարգավորում՝ սույն կետի շրջանակներում մեր կողմից կդիտարկվեն պահանջարկի և առաջարկի խթանման մեխանիզմները ՀՆԱ անկման պայմաններում:

Միջոցառումների առաջին խումբը վերաբերում էր դրամավարկային կարգավորմանը (Աղյուսակ 1.1.1): Անհրաժեշտ է նշել, որ համաձայն մի շարք հեղինակների¹³, ԴՊՀ քաղաքականությունը «Մեծ դեպրեսիայի» ընթացքում սխալական էր, և ըստ տարբեր

¹¹ Lerner, Michael. "Prohibition: Unintended Consequences." PBS, Public Broadcasting Service.

¹² Toni Turner. A Beginner's Guide to Short Term Trading: Maximize Your Profits in 3 Days to 3 Weeks. Adams Media (June 1, 2008). P. 336

¹³ Տես օրինակ՝ Hamilton, James, (1987), Monetary factors in the great depression, Journal of Monetary Economics, 19, issue 2, p. 145-169,

<https://EconPapers.repec.org/RePEc:eee:moneco:v:19:y:1987:i:2:p:145-169>; Ben S. Bernanke, 2002. "Deflation: making sure \"it\" doesn't happen here," Speech 530, Board of Governors of the Federal Reserve System (U.S.).

գնահատականների ավելի խորացրեց և երկարաձգեց տնտեսական ճգնաժամը ԱՄՆ-ում: Ֆոնդային շուկաներում սպեկուլյատիվ գործառնությունների կրճատման նպատակով ԴՊՀ-ը անընդհատ բարձրացնում էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչի արդյունքում ստեղծվեց ֆինանսական պաշարների պակասուրդ իրական հատվածում, ինչը տնտեսական ակտիվության անկման պայմաններում էլ ավելի վատթարացրեց իրավիճակը: Այս համատեքստում բարձրացվեց նաև պահուստավորման նորմատիվը, որը 1935-1937թթ.-ին 13%-ից հասավ 26%:

ԴՊՀ-ի ևս մի սխալ կարելի է համարել արժույթային քաղաքականությունը՝ ուղղված դոլարի կայունության ապահովմանը և «ոսկե ստանդարտի» պահպանմանը փաստացիորեն ի վնաս բանկային համակարգի, որն այդ պահին բնութագրվում էր ավանդների արտահոսքի բարձր մակարդակով և փլուզման եզրին էր: Դրամավարկային քաղաքականության խստացման արդյունքում ԴՊՀ-ին հաջողվեց պահպանել դոլարի դիրքերը և հավատարիմ մնալ «ոսկե ստանդարտին», սակայն բերեց

տնտեսական ակտիվության էլ ավելի խորն անկման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հեռանկարում: Միայն 1934թ.-ին իրականացվեց դոլարի դեվալվացիայի քաղաքականություն, ինչը բերեց դրամավարկային քաղաքականության որոշակի մեղմացման:

ԴՊՀ կողմից կիրառված ևս մի միջոցառում է համարվում փողի առաջարկի ընդլայնման քաղաքականությունը, որն իրականացվեց 1932թ.-ի կեսին: ԴՊՀ-ն արժեթղթերի բաց շուկայում ակտիվորեն իրականացնում էր ակտիվների գնման գործառնություններ, ինչով էլ ընդլայնեց փողի առաջարկը, և այդպիսով մեղմացրեց դրամավարկային քաղաքականությունը: Այս միջոցառումները թույլ տվեցին իջեցնել պետական պարտատոմսերի և կորպորատիվ պարտքային թղթերի տոկոսադրույքները, ինչը, ինչպես և ենթադրվում էր, պետք է կանգնեցներ գնանկման գործընթացները և խթաներ տնտեսական ակտիվությունը:

Աղյուսակ 1.1.1 Հակաճգնաժամային հիմնական միջոցառումները «Մեծ դեպրեսիայի» ընթացքում ԱՄՆ-ում. դրամավարկային քաղաքականություն

Գործիք	Նկարագրություն	Արդյունք
Հաշվարկային դրույքի վերահսկողություն	Հաշվարկային դրույքի բարձրացում, խիստ դրամավարկային քաղաքականություն:	Փողի առաջարկի զսպում
Պահուստավորման նորմատիվ	Պարտադիր պահուստավորման նորմատիվը 13%-ից (1935) բարձրացվեց մինչև 26% (1937)	Վարկային առաջարկի զսպում
Դոլարի դեվալվացիա	Բնակչությունից ոսկու բռնագրավումից հետո, հիմնվելով ոսկու պահուստի մասին օրենքի վրա, ընդունված 1934թ.-ի հունվարին, Ռուզվելտը 1934թ.-ի հունվարի 31-ին հոչակագիր արձակեց, որը կրճատում էր դոլարի ոսկե պարունակությունը 25.8-ից մինչև 15 5/21 և ոսկու պաշտոնական գինը սահմանում էր ունցիայի դիմաց 35 դոլար մակարդակի վրա ¹⁴ :	Դոլարը դեվալվացվեց 41 %-ով
Դոլարի արժեզրկման քաղաքականություն	Թողարկվեց երկու մլրդ նոր դոլար	Արտահանման հնարավորության բարձրացում

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

¹⁴ Coode T. H., Bauman J. F. People, Poverty, and Politics: Pennsylvanians During the Great Depression. East Brunswick, N. J., Associated University Presses, 1981.

ԴՊՀ կողմից կիրառված ևս մի միջոցառում էր փողի առաջարկի ընդլայնման քաղաքականությունը, որն իրականացվեց 1932թ.-ի կեսին: ԴՊՀ-ն արժեթղթերի բաց շուկայում ակտիվորեն իրականացնում էր ակտիվների գնման գործառնություններ, ինչով էլ ընդլայնեց փողի առաջարկը, և այդպիսով մեղմացրեց դրամավարկային քաղաքականությունը: Այս միջոցառումները թույլ տվեցին իջեցնել պետական պարտատոմսերի և կորպորատիվ պարտքային թղթերի տոկոսադրույքները, ինչը, ինչպես և ենթադրվում էր, պետք է կանգնեցներ գնանկման գործընթացները և խթաներ տնտեսական ակտիվությունը: Սակայն, ինչպես նշում է Մելտզերը¹⁵, ցածր անվանական տոկոսադրույքների պայմաններում գնանկումը փաստորեն նշանակում էր, որ փոխառությունների իրական արժեքը շատ բարձր էր, քանի որ ցանկացած վարկ անհրաժեշտ է մարել դոլարով, որոնք ունեին շատ ավելի բարձր արժեք: Եվ քանի որ ԴՊՀ-ն, կենտրոնանալով տնտեսության անկման նվազեցման վրա, կրկին խստացրեց դրամավարկային քաղաքականությունը, 1932թ.-

ի վերջին ԱՄՆ տնտեսությունը կրկին կտրուկ անկում ապրեց:

Այսպիսով, ԱՄՆ դրամավարկային քաղաքականությունը տնտեսական ակտիվության անկման պայմաններում զսպող էր, և գործնականում ցույց տվեց նման մոտեցման սխալականությունը: Ընդ որում, տնտեսական աճի տեսանկյունից ճգնաժամի պայմաններում խիստ դրամավարկային քաղաքականությունը զսպող է ինչպես համախառն պահանջարկի կողմից (տնտեսությունում փողի արժեքի բարձրացում հաշվարկային դրույքի միջոցով), այնպես էլ համախառն առաջարկի կողմից (տնտեսությունում գնանկման պահպանում):

Ի տարբերություն դրամավարկային քաղաքականության, հարկաբյուջետային կարգավորումը «Մեծ դեպրեսիայի» ժամանակաշրջանում փաստացի դարձավ առանցքային երկրում տնտեսական ակտիվության խթանման համար: Հարկաբյուջետային քաղաքականության շրջանակներում իրականացվող հիմնական հակաճգնաժամային միջոցառումները ներկայացված են

Աղյուսակ 1.1.2-ում:

Աղյուսակ 1.1.2 Հակաճգնաժամային հիմնական միջոցառումները «Մեծ դեպրեսիայի» ընթացքում ԱՄՆ-ում. հարկաբյուջետային քաղաքականություն

Գործիք	Նկարագրություն	Արդյունք
Հարկային քաղաքականություն	Խոշոր ձեռնարկությունների հարկերի քանակի և չափի ավելացում	Բյուջե հարկային մուտքերի աճ
Պետական բյուջեյի ծախսային քաղաքականություն	Պետական բյուջեյի ծախսերի աճ: Սոցիալական վճարների, նպաստների, սուբսիդիաների աճ: Սպառողական պահանջարկի կրճատման փոխհատուցում պետական ծախսերով:	Դաշնային կառավարության ծախսերը 1932-1940թթ.-ին աճեցին ավելի քան երկու անգամ ¹⁶ :

¹⁵ Bordo, Michael D., 2006. "Review of A History of the Federal Reserve. Volume I (2003) by Allan H. Meltzer," Journal of Monetary Economics, Elsevier, vol. 53(3), pages 633-657, April.

¹⁶ Badger A. The New Deal: The Depression Years, 1933-1940. N. Y., Hill-Wang, 1989.

Գործիք	Նկարագրություն	Արդյունք
<p>Արտակարգ օգնության դաշնային վարչության ստեղծում¹⁷ (Ազգային տնտեսության վերականգնման մասին օրենք, 16 հուլիսի 1933թ.¹⁸).</p>	<p>ԱՕԴՎ խնդիրները ներառում էին. ա) մայրուղիների, հանրային կառույցների և ցանկացած այլ պետական ձեռնարկությունների և կոմունալ հարմարությունների շինարարություն, վերանորոգում և բարեկարգում բ) Բնական հարստությունների պահպանում և դրանց արդյունահանման զարգացում, ներառյալ ջրերի վերահսկում, օգտագործում և մաքրում, հողի և ափամերձ էրոզիայի կանխում, ջրային էներգիայի զարգացում, էլեկտրական էներգիայի փոխանցում, գետային և նավահանգստային տարբեր օբյեկտների կառուցում և ջրհեղեղների կանխում¹⁹:</p>	<p>Նոր աշխատատեղերի ստեղծում բյուջեյի ծախսերի հաշվին և սպառողական պահանջարկի ավելացում:</p>
<p>Մրցակցության սահմանափակում</p>	<p>Կազմվել են 557 հիմնական և 189 լրացուցիչ այսպես կոչված «ազնիվ մրցակցության օրենսգրքեր» (Fair-trade acts)²⁰ տարբեր ոլորտներում: Կողմերը երաշխավորում էին նվազագույն աշխատավարձ, ինչպես նաև միասնական աշխատավարձ մի դասակարգի բոլոր աշխատողների համար: Այս օրենսգրքերն ընդգրկեցին բոլոր արդյունաբերական աշխատողների 95%-ը:</p>	<p>Օրենսգրքերը զգալիորեն սահմանափակում էին մրցակցությունը: «Մեծ դեպրեսիայի» հետազոտողներ Կոուլի և Օհանիանի²¹ հաշվարկների համաձայն առանց Ռուզվելտի վարչակազմի՝ մրցակցությունը զսպող միջոցառումների 1939թ.-ի վերականգնման մակարդակին հնարավոր կլիներ հասնել հինգ տարի ավելի վաղ:</p>
<p>Վարձավորվող հանրային աշխատանքներ</p>	<p>Ընդհանուր առմամբ 1933-1939թթ. Հանրային աշխատանքների վարչության (PWA) և Քաղաքացիական աշխատանքների վարչության (CWA) հովանու ներքո հասարակական աշխատանքներում (ջրանցքների, ճանապարհների, կամուրջների կառուցում՝ հաճախ անմարդաբնակ և ճահճային տարածքներում) ներգրավված զբաղվածների թիվը հասնում էր 4 միլիոնի: Ընդհանուր առմամբ մոտ 4 միլիարդ դոլար է ծախսվել ուղղված գործազուրկների օգնությանը՝ նման աշխատանքի վարձատրման միջոցով: Միջին ամսական աշխատավարձը շուրջ 50 դոլար էր²²:</p>	<p>Ավելացնելով զբաղվածների քանակը՝ Քաղաքացիական աշխատանքների վարչությունն ապահովեց 4 միլիոն մարդու զբաղվածություն, ովքեր կառուցեցին նոր դպրոցների 70%-ը, նոր հիվանդանոցների 35%-ը, 20 ջրամբար ի լրումն գործող 5-ի՝ օգնելով գետը դարձնել նավընթաց, բարելավել հողագործությունը և տնտեսության այլ օբյեկտներ, ինչն էլ թույլ տվեց բարձրացնել բնակչության եկամուտները: Տնկվել է 9 միլիոն ծառ, կառուցվել է ժամանակակից ճանապարհների 1/3-ը: Երկաթուղային փոխադրումների համակարգը օպտիմալացվել և կատարելագործվել է՝ ավելի սերտ կապելով ԱՄՆ տարբեր շրջանները:</p>

¹⁷ Federal Emergency Relief Administration, FERA - <https://content.lib.washington.edu/feraweb/essay.html>

¹⁸ National Industrial Recovery Act of 1933, NIRA

¹⁹ Badger A. The New Deal: The Depression Years, 1933-1940. N. Y., Hill-Wang, 1989.

²⁰ Leuchtenburg W. Franklin D. Roosevelt and the New Deal, 1932-1940. N. Y., Harper & Row, 1963

²¹ Harold L. Cole & Lee E. Ohanian, 2000. "Re-examining the contributions of money and banking shocks to the U.S. Great Depression," Staff Report 270, Federal Reserve Bank of Minneapolis. P. 79

²² Public Works Administration, America Builds: The Record of PWA, Washington, D.C., 1939, Table 16, P. 284, and Table 20, P. 290.

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Գործիք	Նկարագրություն	Արդյունք
Ոլորտային քաղաքականություն	Ավիացիոն ենթակառուցվածքների ստեղծում:	Միայն Հանրային աշխատանքների վարչությունն ապահովեց 547 թռիչքուղիների և 100 այլ նախագծերի կառուցումը: Երկու այլ կազմակերպություններ իրականացրեցին երկու հազար նախագիծ ավիացիայի և օդագնացության ոլորտում՝ ծախսելով կես միլիարդ դոլար (բոլոր ծախսերի 85%-ը) ²³ :
Գյուղատնտեսության խթանում	Գյուղատնտեսության վարկավորման մասին օրենքի ընդունում (12 մայիսի 1933թ.)	12 միլիարդ դոլար գյուղատնտեսական պարտքի վերակազմավորում, հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների իջեցում և բոլոր պարտքերի մարման ժամկետի երկարաձգում: Հաջորդ չորս տարիների ընթացքում ագրարային բանկերը արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրեցին կես միլիոն հողատերերի՝ 2.2 միլիարդ դոլար ընդհանուր գումարով:
Հովանավորչական քաղաքականություն	Ընդունվեց Սմոլթ-Հուլի օրենքը, որը սահմանեց 405 մաքսատուրք ներմուծվող ապրանքների նկատմամբ:	Ներքին արտադրության ընդլայնում, ներմուծման սահմանափակում:

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

Ընդ որում միջոցառումների մեծ մասն ուղղված էին համախառն պահանջարկի խթանմանը պետական բյուջեյի ծախսերի ընդլայնման միջոցով՝ պետական պարտքի մեծացման լույսի ներքո: Մասնավորապես զգալիորեն մեծացավ պետական հատվածի մասը ՀՆԱ-ում, ներդրվեցին գյուղատնտեսության սուբսիդավորման միջոցառումներ, իրականացվում էր հովանավորչական քաղաքականություն, տնտեսության առանձին ոլորտների զարգացման քաղաքականություն՝ ուղղված գիտության վրա հիմնված տեխնոլոգիաներին և մի շարք այլ միջոցառումներ: Կառավարությունը, ըստ էության, անմիջականորեն խառնվում էր

տնտեսությունում շուկայական գործընթացներին:

Կարելի է նշել, որ ժամանակակից հակաճգնաժամային միջոցառումները նույնպես հիմնականում ուղղված են փողի առաջարկի ընդլայնմանը տնտեսությունում պետական ծախսերի մասնաբաժնի ավելացման միջոցով: Օրինակ, աշխարհի բոլոր երկրների բյուջեների լրացուցիչ ծախսերի գումարը տնտեսության արտակարգ խթանման համար 2020թ.-ին հասավ համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 12%-ին²⁴:

Հակաճգնաժամային միջոցառումների երրորդ խումբ կարելի է համարել ֆինանսական համակարգի կարգավորման միջոցառումները (Աղյուսակ 1.1.3):

²³ Johnson M.H. “Laying Foundations: New Deal Public Works and Aviation Infrastructure”. The Journal of Policy History, Vol. 30, No. 4, 2018, P. 696.

²⁴ World Economic Outlook IMF “A Long and Difficult Ascent”, October 2020, P.1

Աղյուսակ 1.1.3 Հակաճգնաժամային հիմնական միջոցառումները «Մեծ դեպրեսիայի» ընթացքում ԱՄՆ-ում. ֆինանսական համակարգի կարգավորում

Գործիք	Նկարագրություն	Արդյունք
Ֆինանսական համակարգի նկատմամբ դաշնային վերահսկողության համակարգի հաստատում	Ընդունվեց Գլաս-Ստիգոլի օրենքը (1933թ.) ներդրումային և առևտրային բանկերի սահմանազատման մասին: Արժեթղթերի հանձնաժողովի մասին օրենքի ընդունում:	Ընդհանուր բանկերի 75%-ի գործունեության վերականգնում: Արժեթղթերի շուկայում գործառնությունների նկատմամբ կարգավորման հաստատում: Ամերիկյան բանկերի վարկային պորտֆելների կազմի փոփոխություն: Եթե 1913թ.-ին առևտրային բանկերն իրենց ակտիվների 53%-ը բաշխում էին առևտրային ձեռնարկություններին վարկերի տեսքով, 33%-ը ներդնում արժեթղթերում, իսկ 14%-ը՝ անշարժ գույքում, ապա 1929թ.-ին պորտֆելի կազմը հետևյալն էր՝ 45%, 38%, 17% ²⁵ :
Բանկային ավանդների ապահովագրության ներդրում	Գլաս-Ստիգոլի (1933թ.) օրենքի համաձայն ստեղծվեց Ավանդների ապահովագրության դաշնային կորպորացիան (FDIC ²⁶): FDIC-ի առանցքային նպատակն էր բանկերի և վարկային հաստատությունների հաշիվների վրա եղած ավանդների ապահովագրությունը:	Ներդրվեց ավանդների պարտադիր ապահովագրությունը մինչև 5000 ԱՄՆ դոլար:
Հիփոթեքային հարվածի սուբսիդավորում	Երկու միլիոն դոլարի վարկ հատկացվեց տան սեփականատերերին՝ պարտքը ցածր տոկոսադրույքով մարելու համար:	Գրավադրված տների մեկ քառորդը փրկվեց անհապաղ վաճառքից:

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

1929թ.-ի ճգնաժամում մեջ դեր խաղաց ֆինանսական հատվածի սպեկուլյատիվ զարգացումը, ինչը, ըստ էության, կրկնվեց 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ժամանակ: ԴՊՀ խիստ դրամավարկային քաղաքականությունը «Մեծ դեպրեսիայի» ժամանակ բերեց բանկային համակարգում իրացվելիության զգալի պակասուրդի, ինչը վատթարացավ ավանդատուների շրջանում խուճապով, ովքեր

ակտիվորեն հանում էին իրենց դրամական միջոցները բանկային համակարգից²⁷: Սակայն եթե «Մեծ դեպրեսիայի» ժամանակ ԴՊՀ-ն չէր փրկում բանկային համակարգը իրացվելիության պակասուրդի փոխհատուցման միջոցով, ապա 2008-2009թթ.-ի ընթացքում դա դարձավ ֆինանսական շուկայում իրավիճակի կայունացման գլխավոր գործիքը²⁸:

Ամենաարդյունավետ միջոցառումը կապված էր ֆոնդային շուկայում սպեկուլյատիվ

²⁵ Kennedy, David M. Freedom from Fear: the American People in Depression and War, 1929—1945: — New York; Oxford: Oxford University Press, 2001. — 988 p. — (Oxford history of the United States, vol. 9)

²⁶ The Federal Deposit Insurance Corporation (FDIC) - <https://www.fdic.gov/>

²⁷ Michael D. Bordo & John Landon-Lane, 2013. "Does expansionary monetary policy cause asset price booms? some historical and empirical evidence," Journal Economía Chilena (The Chilean Economy), Central Bank of Chile, vol. 16(2), pages 04-52, August.

²⁸ Fishback P. "US monetary and fiscal policy in the 1930s", Oxford Review of Economic Policy, Volume 26, Number 3, 2010, Pp. 386–387

գործառնություններից բանկային համակարգի պաշտպանության հետ: 1933թ.-ին ընդունվեց Գլասս-Ստիգոլի օրենքը (Banking Act of 1933 – Glass-Steagall Act)²⁹, որը սահմանազատում էր ներդրումային և առևտրային բանկերի լիազորությունները: 1999թ.-ին Գրեմ-Լիչ-Բլայլի օրենքը (Gramm-Leach-Bliley Financial Services Modernization Act)³⁰ գրեթե չեզոքացրեց Գլաս-Ստիգոլի օրենքը՝ դրա առանցքային դրույթների չեղարկման միջոցով, հատկապես ներդրումային գործառնությունների արգելքի: Միայն 2010թ.-ին ընդունվեց Դոդ-Ֆրանկի օրենքը (The Dodd — Frank Act)³¹, որն իր հերթին վերադարձրեց Գլաս-Ստիգոլի օրենքի դրույթների մեծ մասը և բանկային համակարգը պաշտպանեց ֆոնդային շուկաների ավելորդ տատանողականությունից: Նաև ստեղծվեց Ավանդների ապահովագրության դաշնային կորպորացիա, և որպես այդպիսին ներդրվեց հենց ավանդների ապահովագրման պրակտիկան: Անհրաժեշտ է նշել, որ ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ ֆինանսական համակարգում ճգնաժամի յուրաքանչյուր նոր փուլի դեպքում ընդունվել են խիստ վերահսկիչ նորմատիվներ և կայունացման յուրաքանչյուր փուլում այս միջոցառումները մեղմացվում կամ չեղարկվում էին: Բազմաթիվ հեղինակներ³² ընդգծում են ֆինանսական համակարգի հետ կապված կարգավորիչ միջոցառումների որոշակի ցիկլայնություն: Այլոք³³ ֆինանսական համակարգի կարգավորման մոտեցումների փոփոխականությունը կապում են ֆինանսական ճգնաժամերի նկատմամբ քաղաքական արձագանքի հետ, ինչը բացատրում է ֆինանսական համակարգում կարգավորիչ մեխանիզմների ցիկլիկ բնույթը: Ընդ որում, ըստ որոշ հաշվարկների³⁴, նման հաճախակի

փոփոխությունը բերում է ճգնաժամային շրջանում պետական ծախսերի ավելացման: Դրա համար առավել կայուն (ցիկլիկ) մոտեցումը ֆինանսական համակարգի կարգավորմանը ավելի նախընտրելի է, քան իրավիճակային (հակացիկլիկ) մոտեցումը³⁵:

Ֆինանսական համակարգի կարգավորման մեխանիզմների շրջանում անհրաժեշտ է նաև ընդգծել հիփոթեքային վարկերի սուբսիդավորման քաղաքականությունը, որը իրականացվում էր «Մեծ դեպրեսիայի» ժամանակ, ինչը թույլ տվեց որոշակիորեն մեղմացնել ճգնաժամի սոցիալական հետևանքները:

«Մեծ դեպրեսիան» և Ջ. Քեյնսի գաղափարները հակաճգնաժամային քաղաքականության ընթացքում հիմք հանդիսացան ժամանակակից մակրոտնտեսական կարգավորման համար: Քեյնսի տեսության բազմաթիվ դրույթներ, մեր կարծիքով, արդիական են ցայսօր: Հակաճգնաժամային քաղաքականության փորձը 1929-1933թթ.-ին հիմք հանդիսացավ կարգավորիչ մեխանիզմների համար ինչպես մակրոտնտեսական կայունության պահպանման կամ ապահովման նպատակով, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի և զարգացման հասնելու համար:

Այսօր կարգավորման տակ մենք նախևառաջ հասկանում ենք «մեխանիզմ, որը պահանջում է, որ բիզնեսը և այլ հասարակական կազմակերպություններ հավատարիմ մնան հանրային նպատակներին իրենց

²⁹ Federal Reserve Bank of St. Louis. “Banking Act of 1933.” June 1933, <https://fraser.stlouisfed.org/title/466/item/159527>. 16,

³⁰ Federal Reserve Bank of Minneapolis, The Region: Issue on Financial Modernization, March 2000.

³¹ Dodd-Frank Wall Street Reform and Consumer Protection Act, Pub. L. No. 111-203, § 929-Z, 124 Stat. 1376, 1871 (2010).

³² Տես օրինակ՝ Dagher, J (2018), “Regulatory Cycles: Revisiting the Political Economy of Financial Crises”, IMF

Working Paper, WP 18/8.; Goldstein, M (2009), “Reforming financial regulation, supervision, and oversight: What to do and who should do it”, VoxEU.org, 24 February.

³³ Reinhart, C M, and K Rogoff (2009), *This time Is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press.

³⁴ Laeven, L, and F Valencia (2012), “Systemic banking crises database: An update”.

³⁵ Almasi, P, J Dagher, and C Prato (2018), “Regulatory Cycles: A Political Economy Model”, Working Paper.

գործունեության ընթացքում»³⁶: Միտնիկը³⁷ պետական կարգավորման տեսություններում ընդգծում է երկու հիմնական մոտեցում: հանրային շահերի տեսություն և մասնավոր շահերի տեսություն:

Հանրային շահերի տեսությունը ենթադրում է կարգավորում առաջին հերթին հանրության պաշտպանության և շահի համար: Ընդ որում նման մոտեցումն ուղեկցվում է շուկայի ձախողմամբ, քանի որ տնտեսական գործունեությանը պետության չափազանց շատ մասնակցությունը խարխլում է մրցակցության սկզբունքները և բերում է խափանումների իրական հատվածում³⁸: Մասնավոր շահերի տեսությունն իր հերթին ենթադրում է իրական հատվածի շահերի շեշտադրում, ընդ որում ի վնաս հանրային և սոցիալական հարցերի: Որոշակի հիմաստով այս երկու տեսություններն արտացոլում են տնտեսական զարգացման երկընտրանքը, որի հիմքում ընկած է «արդարության» և «արդյունավետության» միջև ընտրության անհրաժեշտությունը, և տնտեսությունում պետական կարգավորման իրականացման գործընթացում այս երկու կատեգորիաների միջև օպտիմալ հավասարակշռության որոնումը:

Մյուս կողմից, պետական (մակրոտնտեսական) կարգավորումն ընդհանուր առմամբ ենթադրում է երկու առանցքային ուղղություն կամ մոտեցում³⁹: Առաջին մոտեցումը (հակացիկլիկ կարգավորում) ենթադրում է ճգնաժամային ժամանակաշրջանում տնտեսական գործընթացներին ակտիվ միջամտություն պետության կողմից՝ տնտեսության անկման բացասական հետևանքների չեզոքացման կամ գոնե մինիմալացման նպատակով: Երկրորդ մոտեցումը (ցիկլիկ կարգավորում) ենթադրում է տնտեսական աճի (կամ զարգացման) խթանում երկարաժամկետ հեռանկարում կայուն

մակրոտնտեսական միջավայրում, ներուժային ՀՆԱ-ի ձեռքբերում:

Ընդ որում երկու մոտեցումներն էլ կարող են ներառել ինչպես պահանջարկի (ներքեյնսական մոտեցում), այնպես էլ առաջարկի (ներկոնսերվատիվ մոտեցում) խթանման մեխանիզմներ:

Միևնույն ժամանակ կարելի է առանձնացնել մակրոտնտեսական կարգավորման մոտեցումները ելնելով պետության քաղաքականության հիմքում ընկած ռազմավարական նպատակից: Մի կողմից հանդես է գալիս բնակչության բարեկեցության բարձր մակարդակը, որը նշանակում է ուղղվածություն դեպի տնտեսական զարգացում երկարաժամկետ հեռանկարում, և որին կարելի է հասնել միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման դեպքում: Մյուս կողմից պետության առաջ կանգնած է մակրոտնտեսական կայունության ապահովման խնդիրը, որի հիմքում ընկած է գների կայուն մակարդակի ապահովումը: Այդ դեպքում բոլոր մնացյալ մակրոտնտեսական նպատակներն ու խնդիրները դառնում են երկրորդական և կարող են արհամարհվել գնաճային ճնշումների զսպման առանցքային խնդրի հետ հակասության դեպքում: Հենց այս գաղափարն է ընկած գնաճի նպատակադրման քաղաքականության հիմքում:

Այսպիսով, մենք կարող ենք առանձնացնել մակրոտնտեսական կարգավորման երկու մոտեցում. մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականություն և աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականություն:

Հաշվի առնելով պետության նպատակների բազմաբնույթությունը, մեր կողմից որոշվեց որպես հիմք ընդունել մոտեցումների վերոնշյալ չորս խմբերը և դրանց պրիզմայով վերլուծել ինչպես տեսական բազան, այնպես էլ պետական

³⁶ Lehne, R. (2006). Government and Business: American political economy in comparative perspective. Washington, DC: CQ Press.

³⁷ Barry M. Mitnick. The Political Economy of Regulation: Creating, Designing and Removing Regulatory Forms, New York: Columbia University Press, 1980.

³⁸ Bernstein, M. H. (1955). Regulating business by independent commissions. Princeton: Princeton University Press.

³⁹ Musgrave, R.A. Public Finance in Theory and Practice / R.A. Musgrave, P.B. Musgrave. – 5th ed. – NY: McGraw-Hill, 1989. – 664 p.

կարգավորման միջազգային փորձը ինչպես ճգնաժամային պայմաններ, այնպես էլ տնտեսական աճի:

Սույն հետազոտության շրջանակներում մենք փորձել ենք դասակարգել քաղաքականության այս կամ այն տեսակի կարգավորիչ մեխանիզմները՝ հաշվի առնելով

պետական կարգավորման առանցքային գործիքները: Այս աշխատանքում առաջարկված դասակարգման հիմնական դրույթները ներկայացված են Աղյուսակ 1.1.4-ում: Ներկայացված մոտեցումներից յուրաքանչյուրը առանձին կդիտարկվի հետազոտության հետագա փուլերում:

Աղյուսակ 1.1.4 Մակրոտնտեսական քաղաքականության հիմնական մոտեցումները

	<i>Մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականություն</i>	<i>Աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականություն</i>	<i>Ֆիզիկ քաղաքականություն</i>	<i>Հակացիկլիկ քաղաքականություն</i>
Մոտեցում (նազմավարություն)	Գնաճի զսպում	Առաջարկի խթանում	Առաջարկի խթանում (աճի պայմաններում)	Գնաճի զսպում
Քաղաքականության տեսակը՝ ըստ տնտեսական աճի վրա ազդեցության	Չեզոք քաղաքականություն (կախված չէ տնտեսական շրջափուլերից)	Խթանող քաղաքականություն	Խթանող քաղաքականություն (աճի պայմաններում) Զսպող քաղաքականություն (անկման պայմաններում)	Զսպող քաղաքականություն (աճի պայմաններում) Խթանող քաղաքականություն (անկման պայմաններում)
Նպատակ	Գների մակարդակ	Տնտեսական զարգացում	Տնտեսական ցիկլերի հարթեցում	Տնտեսական ցիկլերի հարթեցում
Ժամանակաշրջան	Երկարաժամկետ	Երկարաժամկետ	Կարճաժամկետ	Կարճաժամկետ
Գործիքակազմ	Դրամավարկային քաղաքականություն Արժույթային քաղաքականություն Հարկաբյուջետային քաղաքականություն	Նորարարական ք.-յուն (գիտություն և տեխնոլոգիաներ) Ներդրումներ մարդկային կապիտալում Աշխատանքի շուկայի ճկունության ապահովում Հակամենաշնորհային ք.-յուն Հարկային ք.-յուն Ծախսային ք.-յուն Ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծման ք.-յուն	Դրամավարկային ք.-յուն Հարկաբյուջետային ք.-յուն	Դրամավարկային ք.-յուն Հարկաբյուջետային ք.-յուն Ֆինանսական շուկաների կարգավորման ք.-յուն
Կիրառման պայմանները	Տնտեսական աճի պայմաններում Ճգնաժամի պայմաններում	Տնտեսական աճի պայմաններում	Տնտեսական աճի պայմաններում Ճգնաժամի պայմաններում	Տնտեսական աճի պայմաններում Ճգնաժամի պայմաններում
Արդյունք	Գների կայուն մակարդակ	Բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացում	Տնտեսական աճի ժամանակահատվածի ընդլայնում Կառուցվածքային անհամամասնությունների կրճատում ճգնաժամի ժամանակ	Տնտեսական աճի ժամանակահատվածի ընդլայնում Ճգնաժամային հատվածի տևողության կրճատում

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

1.2. Աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականություն

Աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականության վրա հիմնված մակրոտնտեսական կարգավորման մոտեցման հիմքում ընկած է այն թեզը, որ այն պայմաններում, երբ խնայողությունների աճը չի կարող անընդհատ խթանել տնտեսական աճը, տնտեսության աճի և զարգացման տեսանկյունից առաջին պլան է մղվում արտադրողականության աճի տեմպերի ապահովումը: Միայն աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, ըստ էության, ապահովում ներուժային ՀՆԱ-ի աճը և դրանով իսկ նպաստում ոչ միայն տնտեսական աճին, այլև տնտեսական զարգացմանը, որն իրենից ներկայացնում է բնակչության բարեկեցության և կյանքի որակի աճ:

Արտադրողականության բարձրացման տակ մենք նախևառաջ հասկանում ենք արտադրության արդյունավետության աճ⁴⁰: Տնտեսության մակարդակում արտադրողականությունը տնտեսությանը թույլ է տալիս «օգտագործել իր ֆիզիկական և մարդկային ռեսուրսները արտադրանքի և եկամտի արտադրության համար»⁴¹:

Աշխատանքի (տնտեսության) արտադրողականության աճ սահմանող առանցքային մոտեցումների շրջանում կարելի է առանձնացնել «նեոդասական» մոդելի մոտեցումը՝ հիմնված էկզոգեն գործոնների

(կապիտալի կուտակում, ներքին ազգային խնայողություններ) հաշվին աճի վրա և «աճի նոր տեսության» մոտեցումը, որը ենթադրում է աճի էնդոգեն գործոններ (գիտական ձեռքբերումներ, բարձր տեխնոլոգիաներ, տեխնոլոգիական առաջընթաց): Պոլ Կրուգմանն⁴² ուղղակիորեն կապում է բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը տնտեսության արտադրողականության աճի տեմպերի հետ:

Մի շարք դասականներ⁴³, ինչպես նաև ժամանակակից հեղինակներ⁴⁴, իրենց հետազոտություններում ցույց են տալիս արտադրողականության մակարդակի աճի կարևորությունը տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման տեսանկյունից:

Զարգացող երկրների տեսանկյունից առաջին պլան է մղվում արտադրողականության աճի բարձրացման անհրաժեշտությունը, որպես կայուն և երկարաժամկետ աճի որոշիչ գործոն: Համաձայն Լյուսի⁴⁵, Կուզնեցի⁴⁶ և Չեներիի⁴⁷, տնտեսական զարգացումը պայմանավորված է տնտեսության կառուցվածքի վերափոխմամբ, որի դեպքում ռեսուրսները տեղափոխվում են պակաս արտադրողական ոլորտներից դեպի ավելի արտադրողականները:

Արտադրողականության վրա ազդող առանցքային գործոնների շրջանում անհրաժեշտ է նշել մարդկային կապիտալի զարգացման մակարդակը և որակը,

⁴⁰ Productivity Commission (PC), Submission no. 20, p. 1

⁴¹ PC, A Quick Guide to the Productivity Commission, 2009, p. 1.

⁴² Krugman, P., The Age of Diminished Expectations: US Economic Policy in the 1980s, MIT Press, Cambridge, 1992, p. 9.

⁴³ Տես օրինակ՝ Hicks, John. 1939. Value and Capital. Edited by John Hicks. Oxford, United Kingdom: Clarendon Press.; Schumpeter, Joseph. 1942. Capitalism, Socialism and Democracy. New York: Harper & Row. և այլն.

⁴⁴ Տես օրինակ՝ Hall, Robert E., and Charles I Jones. 1999. “Why Do Some Countries Produce so Much More Output per Worker than Others?” Quarterly Journal of Economics 114 (1): 83–116. <https://doi.org/10.1162/003355399555954>.; Easterly, William, and Ross E. Levine. 2001. “It’s Not Factor Accumulation: Stylized Facts and Growth Models.” The

World Bank Economic Review 15 (2): 177–219. <https://doi.org/10.2139/ssrn.269108>.; Caselli, Francesco. 2005. “Chapter 9 Accounting for Cross-Country Income Differences.” Handbook of Economic Growth. [https://doi.org/10.1016/S1574-0684\(05\)01009-9](https://doi.org/10.1016/S1574-0684(05)01009-9). և այլն.

⁴⁵ Lewis, Arthur W. 1954. “Economic Development with Unlimited Supplies of Labour.” The Manchester School 22 (2): 139–91. <https://doi.org/10.1073/pnas.1006652108>.

⁴⁶ Kuznets, Simon. 1957. “Quantitative Aspects of the Economic Growth of Nations: II. Industrial Distribution of National Product and Labor Force.” Economic Development and Cultural Change 5 (S4): 1–111. <https://doi.org/10.1086/449740>.

⁴⁷ Chenery, Hollis B. 1960. “Patterns of Industrial Growth.” The American Economic Review 50 (4): 624–54. <https://doi.org/10.1257/jep.6.3.79>.

գիտությունն ու տեխնոլոգիաները, տնտեսության տեխնոլոգիական հագեցվածությունը, ենթակառուցվածքը և այլն: Էրոուն⁴⁸ և Ալենը⁴⁹ տնտեսության արտադրողականության բարձրացման գործընթացում ամենամեծ կշիռը տալիս են ներդրումներին, ինչպես նաև հաջող պետական կարգավորմանը: Ներդրումային բաղադրիչի օգտին հիմնական փաստարկներն են, որ գիտության և տեխնոլոգիական նոր առաջնահայացումները տեղի են ունենում հենց ներդրումների ներգրավման շնորհիվ, լինեն դրանք ներքին, թե արտաքին:

Բեյթսը⁵⁰ նշում է ինստիտուցիոնալ միջավայրի, սեփականության իրավունքների և պետական քաղաքականության կայացվածության կարևորությունը՝ արտադրողականության բարձրացման, ինչպես նաև աճի բարձր և կայուն տեմպերի ձեռքբերման տեսանկյունից: Արտադրողականության բարձրացման առավել բարենպաստ պայմանների ստեղծման տեսանկյունից Բարոն⁵¹ և Բարոն ու Սալա-Ի-Մարտին⁵² առաջարկում են դիտարկել պետական բյուջեյի կողմից ներդրումները հանրային բարիքներում, ինչը կլրացվի մասնավոր կապիտալի կողմից, և երկարաժամկետ հեռանկարում կբերի տնտեսության կայուն աճի: Էնգերմանն ու Սոկոլովը⁵³ և Աճենոդլուն, Ջոնսոնն ու Ռոբինսոնն⁵⁴ ընդլայնում են «հանրային բարիք» հասկացությունը՝ ներառելով քաղաքական և

տնտեսական ինստիտուտները, որոնք տնտեսության արտադրողականության բարձրացման և դրա աճի տեսանկյունից ունեն հիմնարար նշանակություն: Կարևոր է նշել, որ տվյալ դեպքում շեշտը դրվում է հենց աճի էնդոգեն գործոնների վրա, ինչը կառավարությանը թույլ է տալիս իրականացնել ավելի ճկուն մակրոտնտեսական քաղաքականություն:

Ադամ Սմիթն⁵⁵ ընդգծում է տրանսպորտի և ենթակառուցվածքի բարելավման, ինչպես նաև իր աշխատանքային պայմանների բարելավման տեսանկյունից աշխատողի անձնական նախաձեռնողականության կարևորությունը՝ արտադրողականության աճի ապահովման համար: Սմիթը կարծում է, որ ստորին մակարդակի աշխատողների սովորական մասնագիտացված գործառնություններն առավել ենթակա են ավելի արդյունավետ մեքենաներով փոխարինմանը: Մարշալը⁵⁶, Յանզը⁵⁷ գալիս են նմանատիպ եզրահանգումների: Ժամանակակից հեղինակներից Նակամուրան⁵⁸ պնդում է, որ գիտության և տեխնոլոգիայի զարգացման արդի փուլում կառավարման միջին և ցածր մակարդակներում շատ պաշտոններ հեշտությամբ փոխարինվում են համակարգչային տեխնոլոգիաներով:

⁴⁸ Arrow, K.J. (1969), “Classificatory Notes on the Production and Transmission of Technological Knowledge”, *American Economic Review* 59 (May), 29-35.

⁴⁹ Allen, R.C. (1983), “Collective Invention”, *Journal of Economic Behavior and Organization* 4, 1-24.

⁵⁰ Bates, W. (2001), *How Much Government? The effects of high government spending on economic performance*, New Zealand Business Roundtable, Wellington, August 2001.

⁵¹ Barro, Robert J. 1990. “Government Spending in a Simple Model of Endogenous Growth.” *Journal of Political Economy* 98 (5): S103–25. <https://doi.org/10.1086/261726>.

⁵² Barro, Robert J., and Xavier Sala-I-Martin. 1992. “Public Finance in Models of Economic Growth.” *The Review of Economic Studies* 59 (4): 645. <https://doi.org/10.2307/2297991>.

⁵³ Engerman, S, and Kenneth L. Sokoloff. 2000. “Institutions, Factor Endowments, and Paths of Development in the New World.” *Journal of Economic Perspectives* 14 (3): 217–32.

⁵⁴ Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. 2001. “The Colonial Origins of Comparative Development: An Empirical Investigation.” *American Economic Review* 91 (5): 1369–1401. <https://doi.org/10.1257/aer.91.5.1369>; Acemoglu, Daron, Simon Johnson, and James Robinson. 2004. “Institutions as the Fundamental Cause of LongRun Growth.” 10481. NBER Working Paper.

⁵⁵ Smith, A. (1963), *The Wealth of Nations*, Volume 1 (first published in 1776), Homewood, Illinois: Richard D. Irwin.

⁵⁶ Marshall, A. (1898), *Principles of Economics*, Fourth Edition (first edition 1890, eighth edition 1920), London: The Macmillan Co

⁵⁷ Young, A.A. (1928), “Increasing Returns and Economic Progress”, *Economic Journal* 38, 527-542.

⁵⁸ Nakamura, A.O. and P. Lawrence (1994), “Education, Training and Prosperity”, *John Deutsch Institute for the Study of Economic Policy* (March), 235-279.

Ռոմերը⁵⁹, Գրոսմանն ու Հելփմանը⁶⁰, Ագիոնը, Ֆիլիպսն ու Հովիթը⁶¹ որպես կայուն և երկարաժամկետ աճի շարժիչ ուժ նշում են ներդրումները երկրի գիտահետազոտական ներուժում, որն իր հերթին պայմանավորում է տեխնոլոգիական առաջընթացը:

Արտադրողականության բարձրացման կարևորագույն գործոնների շրջանում Մարշալը⁶² և այլ հեղինակներ⁶³ ընդգծում են բնակչության աճը՝ առաջին հերթին մարդկային կապիտալի աճի, ինչպես նաև կապի բարելավման տեսանկյունից: Բեյթսը⁶⁴ նշում է ապրանքների հարկերի նվազեցման գործոնը, աշխատանքային ծառայությունները և կապիտալը, ինչպես նաև անձնական անվտանգության ապահովումն ու սեփականության իրավունքի պաշտպանությունը:

1950-ականներին Սոլոուի⁶⁵ և Սվոնի⁶⁶ կողմից մշակվել է աճի մոդել, որում ֆիզիկական կապիտալի, աշխատուժի և ընդհանուր գործոնային արտադրողականության փոփոխությունները որոշում են տնտեսության աճի տեմպերը: Ընդ որում, այստեղ որպես մարդկային կապիտալում ներդրումների առանցքային աղբյուր են հանդես գալիս ուղղակի ներդրումները, դրանով իսկ մոդելը ենթադրում է տնտեսության աճի էկզոգեն գործոն:

Լուկասը⁶⁷ մարդկային կապիտալի կուտակումը դիտարկում է կրթության պրիզմայով, որն արտադրողականության խթանման և դրանով իսկ տնտեսական աճի

համար ստեղծում է անհրաժեշտ միջավայր: Ռեբելոն⁶⁸ մարդկային կապիտալը դիտարկում է որպես ֆիզիկական կապիտալին լրացում, և ենթադրում է, որ պաշարների երկու տեսակների համալիր օգտագործումը կարող է բերել տնտեսության արտադրողականության մակարդակի բարձրացման, և հետևաբար կայուն տնտեսական աճի:

Վերը նկարագրվածը թույլ է տալիս ընդհանրացնել աշխատանքի արտադրողականության աճը պայմանավորող առանցքային գործոնները: Արտադրողականության աճի գործոնների առավել ամբողջական դասակարգումը ներկայացված է Կիմի և այլոց⁶⁹ աշխատանքում և իր մեջ ներառում է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված հետևյալ կատեգորիաները.

- նորարարությունները, որպես նոր տեխնոլոգիաների գեներացման և ներդրման գործոն,

- կրթությունը, որպես նոր տեխնոլոգիաների հաղորդիչ,

- աշխատանքի շուկայի զարգացում և ճկունություն,

- տնտեսությունում շուկայական միջավայրը, որպես ոլորտների և ֆիրմաների միջև ռեսուրսների արդյունավետ և ճկուն բաշխումը պայմանավորող գործոն,

- ենթակառուցվածքը (տրանսպորտ, կապ, էներգետիկա, ջրամատակարարում և այլն), որպես տնային տնտեսությունների,

⁵⁹ Romer, Paul M. 1987. "Growth Based on Increasing Returns Due to Specialization." *The American Economic Review* 77 (2): 56–62. <https://doi.org/10.2307/1805429>.

⁶⁰ Grossman, Gene M., and Elhanan Helpman. 1991. "Quality Ladders in the Theory of Growth." *The Review of Economic Studies* 58 (1): 43. <https://doi.org/10.2307/2298044>.

⁶¹ Aghion, Philippe, and Howitt. 1992. "A Model of Growth through Creative Destruction." *Econometrica* 60 (2): 323–51. <https://doi.org/10.2307/2951599>.

⁶² Marshall, A. (1898), *Principles of Economics*, Fourth Edition (first edition 1890, eighth edition 1920), London: The Macmillan Co.

⁶³ Diewert and Fox (1999; 255-257) for the falloff in OECD country TFP growth after 1973

⁶⁴ Bates, W. (2001), *How Much Government? The effects of high government spending on economic performance*, New Zealand Business Roundtable, Wellington, August 2001.

⁶⁵ Solow, R. M. 1956. "A Contribution to the Theory of Economic Growth." *The Quarterly Journal of Economics* 70 (1): 65–94. <https://doi.org/10.2307/1884513>.

⁶⁶ Swan, T. 1956. "Economic Growth and Capital Accumulation." *Economic Record* 32 (2): 334–61. <https://doi.org/10.1111/j.1475-4932.1956.tb00434.x>.

⁶⁷ Lucas, Robert E. 1988. "On the Mechanics of Economic Development." *Journal of Monetary Economics* 22 (1): 3–42. [https://doi.org/10.1016/0304-3932\(88\)90168-7](https://doi.org/10.1016/0304-3932(88)90168-7).

⁶⁸ Rebelo, S. 1991. "Long-Run Policy Analysis and Long-Run Growth." *Journal of Political Economy* 99 (3): 500–521. <https://doi.org/10.1086/261764>.

⁶⁹ Kim, Young Eun, Norman Loayza, and Claudia Meza-Cuadra. 2016. "Productivity as the Key to Economic Growth and Development." *World Bank Research Policy Brief*, no. 3. <https://documents.worldbank.org/curated/en/314741472533203058/Productivity-as-the-key-to-economic-growth-and-development>.

ձեռնարկությունների և շուկաների տնտեսական գործունեության ապահովման գործոն,

- ինստիտուտները (կարգավորող, դատական և քաղաքական համակարգերում), որպես սոցիալական և տնտեսական կայունության, սեփականության իրավունքի և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման գործոն:

Տնտեսության արտադրողականության աճը խթանող գործոնների ևս մի դասակարգում պատկանում է Հարիսին⁷⁰, ով ցուցակում ներառում է հետևյալ պայմանները.

- Ներդրումների աճ (վերարտադրվող կամ ֆիզիկական կապիտալում):
- Ներդրումների աճ կրթության, վերապատրաստման և մարդկային կապիտալի ոլորտում:
- Առաջնային ռեսուրսների աճ:
- Արտադրության աճ՝ մասշտաբի էֆեկտի շնորհիվ:

- Ընդհանուր գործունային արտադրողականության բարձրացում (Total Factor Productivity – TFP), ինչը, որպես կանոն, պայմանավորված է մասնագիտացման խորացմամբ:

- Շուկաների գործունեության բարելավում:

- Նոր ապրանքների և գործընթացների մշակման վերաբերյալ նոր գիտելիքների հասանելիություն:

- Վերոնշյալի համատեքստում նպատակահարմար կլինի նշել նաև գործոնները, որոնք կխոչընդոտեն տնտեսության արտադրողականության աճին: Բացի տնտեսության արտադրողականության աճի վերոնշյալ գործոնների բացակայությունից, նման գործոնների շարքին կարելի է դասել.

- Բարձր հարկերը, տնտեսությունում հարկային բեռի բարձր մակարդակը:
- Բարձր և անկայուն գնաճը:

Աղյուսակ 1.2.1 Աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականության հիմնական մեխանիզմները

Գործիքակազմ	Մեխանիզմ	Արդյունք
Նորարարության քաղաքականություն (գիտություն և տեխնոլոգիա)	Բարձր տեխնոլոգիական ոլորտներում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավում: Հարկային արտոնություններ տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտների համար:	Բարձր տեխնոլոգիաների ներմուծում ՕՈՒՆ ներգրավման միջոցով: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացում:
Ներդրումներ մարդկային կապիտալում	Ներդրումներ (պետական և մասնավոր) կրթության և գիտության ոլորտում: Կապ համալսարանների և իրական հատվածի միջև՝ արտադրանքի ձևավորմամբ (ապրանք, ծառայություն, կադրային կազմ):	Մարդկային կապիտալի զարգացում: Գիտության և տեխնոլոգիաների գեներացում:
Աշխատանքի շուկայում ճկունության ապահովում	Աշխատաշուկայի և կրթական ծառայությունների շուկայի սերտ կապի ապահովում:	Գործազրկության ցածր մակարդակ: Կրթության և մարդկային կապիտալի մեջ ներդրումների արդյունավետություն:
Հարկային քաղաքականություն	Բիզնեսի եկամուտների հարկման ցածր դրույքներ:	Տնտեսության հարկային բեռի կրճատում:

⁷⁰ Harris, R.G. (2001), “Determinants of Canadian Productivity Growth: Issues and Prospects”, Forthcoming in Productivity

Issues in a Canadian Context, A. Sharpe and S. Rao (eds.), Montreal: McGill-Queen’s Press.

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Գործիքակազմ	Մեխանիզմ	Արդյունք
Պեղական բյուջեի ծախսային քաղաքականություն	Ներդրումներ ենթակառուցվածքում, հանրային բարիքներում:	Տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և շուկաների տնտեսական գործունեության ապահովում: Կյանքի որակի բարձրացում:
Ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման քաղաքականություն	Օրենսդիր և նորմատիվ բազա: Դատական համակարգի անկախություն: Օրենքի գերակայություն: Հակակոռուպցիոն քաղաքականություն:	Սոցիալական և տնտեսական կայունության ապահովում, սեփականության իրավունքի և քաղաքացիների իրավունքների պաշտպանություն:

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

Այսպիսով, արտադրողականության աճին ուղղված պետական կարգավորման խնդիրը պետք է ներառի վերը թվարկված գործոնների ապահովումը երկրի տնտեսական գործունեության ընթացքում: Աշխատանքի արտադրողականության բարձրացման քաղաքականության գործիքներն ու մեխանիզմները ներկայացված են Աղյուսակ 1.2.1-ում:

Վերը ներկայացված մեխանիզմները պահանջում են իրականացում համալիր (համակարգային) մոտեցման շրջանակում և չեն կարող բերել տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի բարձրացման դրական միտումների մակրոտնտեսական կարգավորման առաջ դրված խնդիրների կետային և անհետևողական իրականացման դեպքում:

1.3. Մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականություն

Մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականության հիմքում ընկած է այն թեզը, որ առանցքային ցուցանիշները որոշակի մակարդակի վրա պահելու միջոցով մակրոտնտեսական միջավայրում կայունության պահպանմամբ կարելի է ապահովել տնտեսական աճ երկարաժամկետ հեռանկարում: Ընդ որում, մակրոտնտեսական կայունության ապահովման հիմքում նախևառաջ ընկած է գնաճի ցածր մակարդակի պահպանումը:

Մակրոտնտեսական կայունության ապահովման խնդրին նվիրված են Զ.Մ. Քեյնսի, Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի, Ժ.-Բ. Սեյի, Վ. Պարետոյի, Դ.Ս. Միլի, Կ. Մարքսի, Ա. Մարշալի, Ի. Ֆիշերի և մի շարք այլ տնտեսագետների աշխատությունները: Մակրոտնտեսական կայունության տեսության համախումբը դա սահմանում են որպես տնտեսության կայուն զարգացում ճգնաժամերի բացակայության պայմաններում: Ընդ որում կայունության տակ հասկացվում է առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների համադրելի մակարդակի պահպանումը կամ ապահովումը: Այսպիսով, ամբողջ մակրոտնտեսական քաղաքականությունը բերվում է այդ ցուցանիշների ապահովմանը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Շատ դեպքերում գների կայուն մակարդակը առաջնագծում է՝ որպես մակրոտնտեսական կայունության երաշխավոր: Քեյնսը մակրոտնտեսական կայունության տակ

հասկանում էր արտաքին և ներքին հավասարակշռության համադրումը, որն իր հերթին պայմանավորում է բնակչության լրիվ զբաղվածություն, կայուն տնտեսական աճ և ցածր գնաճ⁷¹: Տնտեսական աճի ապահովման մեխանիզմներ են հանդես գալիս հարկաբյուջետային քաղաքականության կողմից լրիվ զբաղվածության ապահովումը և դրամավարկային քաղաքականության կողմից գնաճի ցածր մակարդակի պահպանումը:

Ժամանակակից տեսություններն⁷² այս չափանիշներին ավելացնում են նաև պետական բյուջեյի (պետական պարտքը և բյուջեյի պակասուրդը), ինչպես նաև արժույթային քաղաքականության ցուցանիշները: Մակրոտնտեսական կայունության առանցքային գործոններն արտացոլված են ինտեգրացիոն միությունների ստեղծման սկզբունքներում: Մակրոտնտեսական կայունության ցուցանիշները («կոնվերգենցիայի Մաստրիխտյան ստանդարտները») գրված են 1992թ.-ի Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագրում⁷³: Դրանք ներառում են ցածր և կայուն գնաճը, ցածր երկարաժամկետ տոկոսադրույքը, անհրաժեշտ կայուն գնաճային սպասումների ձևավորման համար, պետական պարտքի ցածր մակարդակ ՀՆԱ-ի նկատմամբ (ՀՆԱ 60%-ից ոչ բարձր), պետական բյուջեյի պակասուրդի ցածր մակարդակ (3%-ից ոչ բարձր), ինչպես նաև կայուն արժույթային փոխարժեք⁷⁴:

⁷¹ **Ocampo J.A.**, A Broad View of Macroeconomic Stability, DESA Working Paper No. 1, October 2005, p.3

⁷² Տես օրինակ՝ Benassy-Quere A. et al. (2010) Economic policy. Theory and Practice. Oxford: Oxford University Press; Taylor J. B. (1995) 'Stabilization policy and long term economic growth', in G. Wright, R. Landau (eds.) Growth and development: The economics of the 21st century; Wolf R. D. and Resnick S. A. (2012) Contending Economic Theories. Neoclassical, Keynesian, and Marxian. Massachusetts: The MIT Press.

⁷³ Treaty on European Union – Final Act, 1992, The Euro: explanatory notes by Directorate General II – Economic and Financial Affairs, Euro Papers, Number 17, February 1998.

⁷⁴ ԵՄ արժույթային զոտույն անդամ երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկաբյուջետային կարգավորման ներդաշնակեցման քաղաքականությունը ընդհանուր դրամավարկային քաղաքականության համատեքստում հանգեցրեց մակրոտնտեսական կարգավորման ընդհանուր անհավասարակշռության և առանձին տնտեսություններին զրկեց ճգնաժամի ընթացքում արտաքին ցնցումներին արդյունավետորեն արձագանքելու կարողությունից: Բացի այդ, ԵՄ-ին անդամակցելու տնտեսական չափանիշների հիմքում ընկած ցուցանիշները ներկայումս չեն արտացոլում եվրոզոտու երկրներում հարկաբյուջետային քաղաքականության իրական ցուցանիշները: Այսպիսով, նման չափանիշների արդյունավետությունը կարող է կասկածի տակ դրվել:

ԵԱՏՄ երկրների համար մասին պայմանագրի Հոդված 63-ում⁷⁵. մակրոտնտեսական կայունության պետական բյուջեյի պակասուրդ (ոչ ավելի քան 3%), պետական պարտք (ոչ ավելի քան 50%) և չափանիշներն արտացոլված են 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության գների կայուն մակարդակ:

Աղյուսակ 1.3.1 Մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականության հիմնական մեխանիզմները

Գործիքակազմ	Մեխանիզմ	Արդյունք
Ջսպող դրամավարկային քաղաքականություն (Գնաճի նպաստակադրում)	Վերաֆինանսավորման տոկոսադրույք Պահուստավորման նորմատիվ Բաց շուկայական գործառնություններ արժեթղթերի շուկայում	Դրամական զանգվածի կրճատում Գների կայուն և ցածր մակարդակ
Արժույթային քաղաքականություն	Արժույթային ինտերվենցիաներ, արժույթային սահմանափակումներ	Դրամական զանգվածի կրճատում: Ազգային արժույթի կայուն փոխարժեք:
Ջսպող հարկաբյուջետային քաղաքականություն	Պետական պարտքի կարգավորում, բյուջեյի պակասուրդի վերահսկողություն:	Հարկային բեռի բարձրացում: Բյուջեյի ծախսերի կայուն մակարդակ:

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

Այսպիսով, մակրոտնտեսական կայունության ձեռքբերման առանցքային գործիքներն են հարկաբյուջետային, դրամավարկային և արժույթային քաղաքականությունները: Մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականության հիմնական մեխանիզմներն ընդհանրացված են Աղյուսակ 1.3.1-ում: Բոլոր

դեպքերում նախատեսվում է զսպող քաղաքականություն տնտեսության աճի պայմաններում: Նման քաղաքականության շեշտը նախևառաջ երկարաժամկետ հեռանկարն է: Դիտարկենք քաղաքականության տեսակներից յուրաքանչյուրն ավելի մանրամասն:

Ջսպող դրամավարկային քաղաքականություն

Ջսպող դրամավարկային քաղաքականության կիրառման գաղափարը աճը պայմաններում հիմնված է տնտեսական աճի վրա գնաճային ճնշման բացասական ազդեցության թեզի վրա: Ֆրիդմանի համաձայն, դրամավարկային քաղաքականությունը կարող է և պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որ փողն ինքն իրենով բացասական ազդեցություն չունենա երկրի տնտեսության վրա⁷⁶: Այլ խոսքով, գների հավասարակշիռ մակարդակը մակրոտնտեսական կայունության երաշխավորն է, և հենց այդ խնդիրը պետք է առանցքային լինի

դրամական իշխանությունների համար: Այստեղից էլ մակրոտնտեսական կայունության ապահովման տեսության հիմքում ընկած է դրամական իշխանությունների կողմից կայուն գների մակարդակի ապահովումը:

Փորձագիտական համայնքում բավականին հակասական է գնահատվում գների կայուն և ցածր մակարդակի պահպանման պայմաններում տնտեսական աճի վրա դրամավարկային կարգավորման ազդեցությունը: Կարծիքները միմյանց հակառակ են. Թեզից այն մասին, որ գների

⁷⁵ "Договор о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014) - <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95276>

⁷⁶ Friedman M. "The Role of Monetary Policy" // The American Economic Review, Vol. 58, No. 1, 1968, pp.12.

մակարդակի զսպումը պայմանավորում է տնտեսական աճը, մինչև թեզը, որ նման քաղաքականությունը տանում է անկման և տնտեսական աճի համար բացասական հետևանքների:

Առաջին թեզի օգտին փաստարկների շրջանում նշվում է, որ գնաճն ինքն իրենով մակրոտնտեսական անկայունացման գործոն չէ, սակայն գների տատանողականության բարձր մակարդակի դեպքում կարող է համարվել որպես այդպիսին և սպառնալիք ներկայացնել տնտեսական աճի համար⁷⁷: Մի շարք հեղինակներ⁷⁸ նշում են, որ գների կայուն մակարդակը պայմանավորում է տնտեսական աճը՝ որպես համապատասխան կայուն մակրոտնտեսական միջավայրի ստեղծող: Այլ հեղինակներ⁷⁹ առաջ են քաշում թեզն այն մասին, որ երկրում գների մակարդակի իջեցման ուղղված դրամավարկային քաղաքականության գործիքակազմի օգնությամբ դրամական իշխանություններն ունեն տնտեսական աճի խթանման հնարավորություն: Հարքերը⁸⁰ նշում է, որ եթե դրամավարկային քաղաքականության միջոցով հաջողվի ապահովել տնտեսական սուբյեկտների գնաճային սպասումների և իրական գնաճի միջև հավասարություն, ապա նման քաղաքականությունը, ամենայն հավանականությամբ, ոչ մի ազդեցություն չի ունենա ներդրումային որոշումների վրա, ինչն էլ իր հերթին կապահովի կայուն տնտեսական աճ երկարաժամկետ հեռանկարում: Ընդ որում, դրամավարկային քաղաքականությունը չի կարող ազդել համախառն արտադրանքի ներուժային մակարդակի վրա: Այդ պատճառով

կախված այն հանգամանքից, թե արդյոք տնտեսությունն աշխատում է ներուժայինից բարձր թե ցածր մակարդակի վրա, կարելի է ընտրություն կատարել խթանող և զսպող դրամավարկային քաղաքականության միջև: Միևնույն ժամանակ վերջին հետազոտությունները⁸¹ ցույց տվեցին, որ երկարաժամկետ տնտեսական աճի ցուցանիշները թույլ են կորելացվում գնաճի ցուցանիշների փոփոխությունների հետ:

Տնտեսական զարգացման վրա կանխատեսելի կամ անկանխատեսելի գնաճի ազդեցությունն առավել մեծ նշանակություն ունի: Ըստ Բարոյի⁸² էմպիրիկ ապացույցները ցույց են տալիս, որ գնաճի բարձր մակարդակները ասոցացվում են փոփոխական, և հետևաբար պակաս կանխատեսելի գնաճի հետ: Ֆրիդմանը⁸³ նույնպես նշում է, որ տնտեսական աճը հասանելի է ինչպես աճող, այնպես էլ ընկնող գների դեպքում այն պայմանով, որ դրանց ենթադրվող աճը չափավոր է և կանխատեսելի: Մյուս կողմից, գոյություն ունի կարծիք⁸⁴, որ երկարաժամկետում գնաճն ունի բացասական ազդեցություն այն դեպքում, երբ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում գնաճի ազդեցությունը տնտեսական աճի վրա ունի հակասական արդյունք: Ժամանակավոր բարձր գնաճի ժամանակահատվածներում տնտեսական աճի տեմպերը կրճատվում են: Սակայն գների մակարդակի կայունացումից հետո, տնտեսական աճի տեմպերը վերադառնում են իրենց բնականոն վիճակին:

Բրունոն և Էստերլին⁸⁵ տնտեսական աճի վրա գնաճի ազդեցության մասին իրենց

⁷⁷ Corden M., Macroeconomic Policy and Growth: Some Lessons of Experience, Proceedings World Bank fifth Annual Conference Qfl. Development Economics, 1990, pp. 59-84.

⁷⁸ Levine R., Zervos S., "What We Have Learned About Policy and Growth from Cross-Country Regressions?" The American Economic Review Vol. 83, No. 2, Papers and Proceedings of the Hundred and Fifth Annual Meeting of the American Economic Association, May, 1993, pp. 426-430

⁷⁹ Annicchiarico B., Rossi L. Monetary Policy in a New Keynesian Model with Endogenous Growth. Università degli studi di Pavia, # 167 (02-12), 2012, p. 11

⁸⁰ Նույն տեղում, pp. 5-6

⁸¹ Coats, W. (2000) Inflation Targeting in Transition Economies: The Case of the Czech Republic, ed. by. CNB and IMF.

⁸² Барро Р. (1995 г.) «Инфляция и экономический рост», Квартальный бюллетень Банка Англии, май.

⁸³ M. Fridmen, A. Shwarc. A Monetary History of the United States, 1867-1960. Princeton, N.Y. 1963

⁸⁴ Bencivenga, Valerie R., and Bruce D. Smith, 1991, "Financial Intermediation and Endogenous Growth," Review of Economic Studies, Vol. 58, pp. 195-209.; Allen, Mark, and others "A Balance Sheet Approach to Financial Crisis," IMF Working Paper, 2002. — 02/210 (Washington: International Monetary Fund) P. -34.

⁸⁵ Bruno M., Easterly W. "Inflation Crises and Long-Run Growth", Journal of Monetary Economics, Vol. 41, no. 1 (February 1998): pp. 3-26.

հետազոտությունում նշում են, որ հիմնականում գնաճային ճգնաժամի ընթացքում տնտեսական աճը ավելի բարձր էր քան նույն ժամանակաշրջանի համար միջին համաշխարհայինը և ցածր՝ համեմատած նախաճգնաժամային ցուցանիշի հետ: Ընդ որում, գնաճի ծախսերը՝ գների հարաբերական անկայունություն, անորոշություն, գների մասին հավաստի տեղեկատվության քչացում, վարկավորման պայմանների վատթարացում, զգալի են դառնում միայն գնաճի հարաբերականորեն բարձր մակարդակի դեպքում: Ավելի ցածր գնաճի դեպքում գնաճի աճը կարող է կախված լինել պահանջարկի և առաջարկի տարբեր ցնցումներից և չցուցաբերել հստակ փոխկախվածություն: Բացի այդ Բրունոն և Էստերլին ցույց տվեցին, որ գնաճի մակարդակի իջեցման դեպքում տեղի ունի տնտեսական աճի տեմպերի բարձրացում այն դեպքում, եթե դրա մակարդակը գերազանցում է 40%-ը, մնացյալ դեպքերում տնտեսական աճի տեմպերի բարձրացման և գնաճի մակարդակի միջև որոշակի կորելացիա բացակայում է:

Սրա հետ համաձայնվում են նաև այլ հեղինակներ⁸⁶ նշելով, որ տվյալ պահին դժվար է որոշակի եզրահանգում կատարել տնտեսական աճի վրա գնաճի մակարդակի աճի հարաբերականորեն ցածր և կայուն տեմպերի դրական կամ բացասական ազդեցության վերաբերյալ: Սաքսը⁸⁷ նշում է, որ չնայած համաձայնությանն այն մասին, որ ոչ մի տնտեսություն չի կարող արդյունավետորեն

գործել հիպերինֆլացիայի դեպքում, չկա կոնսենսուս գնաճի իջեցման արդյունքում օգուտների վերաբերյալ: Չկա ապացույց, որ գնաճի ավելի ու ավելի ցածրացումը տալիս է ծախսերի հետ համադրելի օգուտ, իսկ որոշ տնտեսագետների անգամ համարում են, որ գնաճը չափազանց ցածրացնելու ձգտումը բերում է բացասական հետևանքների: Բուլարդը և Քեյթինգը նշում են, որ ի սկզբանե փողերի ստեղծման բարձր տեմպեր ունեցող տնտեսությունում փողի աճի տեմպերի բարձրացումը բացասական է ազդում երկարաժամկետ իրական աճի վրա⁸⁸:

Ըստ Ֆիշերի⁸⁹, գնաճի և տնտեսական աճի միջև բացասական կապն արտահայտվում է ներդրումների կրճատման և արտադրողականության աճի նվազման մեջ: Դե Գրեգորիոն⁹⁰ բացասական ազդեցության նշված գործոններին ավելացնում է աշխատանքի արժեքի բարձրացումը, որը բերում է զբաղվածության կրճատման և ՀՆԱ-ի նվազման:

Ընդհանուր առմամբ վերը ներկայացված փաստերն ընկած են դրամավարկային քաղաքականության ոլորտում առնվազն վերջին 30 տարիներին ժամանակակից կենտրոնական բանկերի՝ զսպող քաղաքականությանը հավատարմության հիմքում: Գների կայուն մակարդակի պահպանման քաղաքականության տարածվածության ապացույցն է գնաճի նպատակադրման քաղաքականություն վարող երկրների քանակի դինամիկան (Նկ. 1.3.1) և ԱՄՀ դիրքորոշումն այս հարցում:

⁸⁶ Sachs, J. (1996) “Economic Transition and American Economic Review, 86, pp.147–152.

⁸⁷ Stiglitz, J.E. (2003). Globalization and its discontents. W.W.Norton & Company, New York, London, 288 pp.


⁸⁸ Bullard, James, and John Keating, 1995, “The Long-Run Relationship Between Inflation and Output in Postwar

Economies,” Journal of Monetary Economics, Vol.36,pp.477-96.

⁸⁹ Fischer S., “The role of macroeconomic factors in growth”. Journal of Monetary Economics 32, 1993, pp. 485-512.

⁹⁰ De Gregorio J., “Inflation, taxation, and long-run growth”. Journal of Monetary Economics 31, 1993, pp. 271-298.

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկ. 1.3.1 Գնաճը նպատակադրող երկրները՝ կախված զարգացման մակարդակից

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից ԱՄՀ դասակարգման հիման վրա: *International Monetary Fund, Annual Report on Exchange Arrangements and Exchange Restriction, 2020.* – www.imf.org

Մյուս կողմից, թեզն այն մասին, որ գների մակարդակի զսպումը կարող է բացասական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա երկարաժամկետ հեռանկարում, նույնպես ներկայացված է նշանակալի փաստարկներով:

Չեկեթին և Էրմանը⁹¹, հետազոտելով գնաճի նպատակադրման քաղաքականության իրականացման հետևանքները երկրում տնտեսական աճի վրա, եկան եզրահանգման, որ ցնցումների շրջանում դրամավարկային քաղաքականությունը կարող էր երկարաժամկետ նպատակային մակարդակում պահել կամ գնաճը, կամ տնտեսական աճի տեմպերը:

Մի շարք գիտնականների հետազոտությունների արդյունքները թույլ տվեցին ընդհանուր եզրահանգում կատարել, որ գնաճի նպատակադրման քաղաքականությունը նպաստել է տնտեսական աճի տեմպերի տատանողականության նվազեցմանը, այսինքն հարթեցրել է ցուցանիշի տատանումները:

Արժույթային քաղաքականություն

Քանի որ մակրոտնտեսական կայունության պահպանման պայմաններում մակրոտնտեսական կարգավորման բոլոր նպատակները

Սակայն ՀՆԱ աճի տեմպի վրա դրամավարկային քաղաքականության նկատելի ազդեցություն ոչ մի հետազոտության կողմից չի բացահայտվել⁹²:

Վերլուծությունը նաև ցույց տվեց, որ գնաճի նպատակադրման քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի տեմպերի և տատանողականության վրա միանշանակ չէ: Կախված հետազոտության մեթոդից, ընտրված ժամանակաշրջանից և ուսումնասիրվող երկրների նմուշից՝ տնտեսական զարգացման մեջ դրամավարկային քաղաքականության դերի վերաբերյալ եզրահանգումները կարող են լինել միմյանց հակառակ: Սակայն կարելի է պնդել, որ գների կայուն մակարդակի պահպանումն ի վնաս մակրոտնտեսական մնացած նպատակների (օրինակ, գործազրկության նվազեցում) զարգացող տնտեսության պայմաններում անփոփոխ տանում է ռեցեսիայի երկարաժամկետ հեռանկարում

պետք է ենթարկվեն կայուն գների ապահովմանը, ապա արժույթային քաղաքականությունը նույնպես պետք է

⁹¹ Cecchetti S., Ehrmann M. Does Inflation Targeting Increase Output Volatility? An International Comparison of Policymakers' Preferences and Outcomes. Central Bank of Chile. 2002. p. 266.

⁹²Svensson L. Inflation Targeting // National bureau of economic research, Working Paper 16654. 2010. pp. 11-12.

իրականացվի այս խնդրի շրջանակներում: Մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից առաջնային է համարվում ազգային դրամական միավորի կայունության ապահովումը: Խիստ արժույթային քաղաքականությունը նպաստում է անորոշության նվազեցմանը երկրում ինչպես արժույթային փոխարժեքի, այնպես էլ տոկոսադրույքների նկատմամբ: Ըստ Գոլդշտեյնի, ազգային արժույթի դեվալվացիան անվանական արժեքով կարող է բերել միայն երկրում գների ընդհանուր մակարդակի աճի, այլ ոչ թե իրական ՀՆԱ ծավալների ավելացման⁹³:

Գիլֆասոնը նշում է, որ ազգային արժույթի փոխարժեքի կցման քաղաքականությունն ապահովում է մակրոտնտեսական կայունություն և նպաստում արտաքին առևտրաշրջանառության աճին: Բացի այդ, արժույթի կայուն փոխարժեքը զսպում է երկրում գների մակարդակի աճը, ինչը նաև, համաձայն հեղինակի, դրական գործոն է երկարաժամկետ տնտեսական աճի համար⁹⁴:

Դե Գրոուն և Շնաբլը նշում են, որ երկրի տնտեսության աճն արժույթային փոխարժեքի կցման քաղաքականության արդյունքում պայմանավորվում է երկու պատճառով: Առաջին, արժույթային փոխարժեքի նկատմամբ անորոշության իջեցումը խթանում է արտաքին առևտուրը: Երկրորդ, երկրի արժույթի նկատմամբ վստահության բարձրացումը կնվազեցնի տոկոսադրույքների մեջ ներառված ռիսկի պրեմիայի չափը: Ցածր տոկոսադրույքները, իրենց հերթին, նպաստում են երկրում ներդրումների ծավալի աճին և խթանում են ներքին սպառումը⁹⁵:

Այս դիրքորոշումը պայմանավորում է դրամական իշխանությունների մոտեցումն իրականացնել խիստ արժույթային կարգավորում

մակրոտնտեսական կայունության ապահովման պայմաններում: Լուծվում է միանգամից երկու խնդիր. Գների կայուն մակարդակի ապահովում, ինչպես նաև որոշակիության վիճակ, և հետևաբար կայունություն տնտեսությունում առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների գծով:

Այլ տեսանկյունի համաձայն⁹⁶, տնտեսական աճի վրա արժույթային ռեժիմի ազդեցությունն առաջին հերթին կախված է դրամավարկային քաղաքականության արդյունավետությունից: Արժույթային կարգավորման ցանկացած ռեժիմ կարող է դրական ազդել տնտեսության վրա միայն դրամավարկային խարսխի (դրամական ազդեգատներ կամ գնաճ) կիրառման պայմաններում: Առանց դրամավարկային խարսխի կիրառման ցանկացած արժույթային քաղաքականություն, բացի ազգային արժույթի կցման քաղաքականությունից, կբերի տնտեսական աճի տեմպերի կրճատման:

Սակայն, մեր կարծիքով, նման արժույթային քաղաքականությունը թույլ չի տալիս տնտեսությանը ճկուն հարմարվել արտաքին շուկայի պայմանների փոփոխությանը, ինչը վերջին հաշվով բերում է գնային ազդակների աղավաղման և երկրում ռեսուրսների անարդյունավետ բաշխման: Այս համատեքստում Մակինոնն ու Շնաբլը⁹⁷ բերում են 1997-1998թթ. ասիական ճգնաժամի օրինակը: Նրանք նշում են, որ մինչ այդ ճգնաժամը Արևելյան ասիական երկրների մեծ մասը կիրառում էր ազգային արժույթը ԱՄՆ դոլարի կցելու քաղաքականություն, ինչն այդ երկրների դրամական իշխանությունների կարծիքով պետք է տարածաշրջանում ապահովեր մակրոտնտեսական կայունություն: Նման արժույթային քաղաքականությունն

⁹³ Goldstein, M. Managed Floating Plus. Washington DC: Institute for International Economics, Policy Analyses in International Economics. 2002

⁹⁴ Gylfason, T. Fix or Flex? Alternative Exchange Rate Regimes in an Era of Global Capital Mobility, North American Journal of Economics and Finance, 11(2), 2000 p. 173-189.

⁹⁵ De Grauwe, P. and Schnabl, G. Exchange Rates Regimes and Macroeconomic Stability in Central and Eastern Europe. CESifo Working Paper, 1182, 2004. p.1-34.

⁹⁶ Bailliu, J., Lafrance, R. and Perrault, J.F. Does Exchange Rate Policy Matter for Growth? International Finance, 6(3), 2003. p.381-414.

⁹⁷ R. McKinnon, G.Schnabl. The East Asian Dollar Standard, Fear of Floating, and Original Sin Review of Development Economics, 8(3), 331-360, 2004

առաջին տարիներին բերեց տարածաշրջանի երկրների տնտեսությունների գրավչության աճի և օտարերկրյա ներդրումների ներհոսքի:

Սակայն արդյունքում ԱՄՆ դոլարին ազգային արժույթների կցումը՝ այդ երկրներում զգալիորեն ավելի բարձր տոկոսադրույքների պայմանները քան ԱՄՆ-ում և Ճապոնիայում, բերեց փողի շուկայում սպեկուլյացիաների աճի՝ խթանելով տարածաշրջանում բանկային համակարգի ռիսկերի աճը: Անկայունության աճին նաև նպաստեց հարաբերականորեն պակաս զարգացած արժեթղթերի շուկայի գոյության փաստը և բանկերի՝ կարճաժամկետ միջոցները երկարաժամկետ ներդրումային նպատակներով կիրառման անհեռատես քաղաքականությունը:

Գարոֆալոն⁹⁸, Գոշը⁹⁹, Քոլինսը¹⁰⁰ նշում են, որ ազգային արժույթի կցումը խթանում է երկրում ներդրումների ներհոսքը, սակայն խոչընդոտում է աշխատանքի արտադրողականության ավելի արագ աճին: Համատեղ աշխատանքում Կապլերը, Ռեյսենը և այլք¹⁰¹, դիտարկելով արժույթային փոխարժեքի ամրապնդման ազդեցությունը առևտրային հաշվեկշռի և իրական թողարկման վրա, բացահայտեցին, որ ազգային արժույթի փոխարժեքի զգալի ամրապնդումը բերում է երկրում զուտ արտահանման կրճատման խնայողությունների և արտահանման ծավալների կրճատման արդյունքում: Հատկապես նման արդյունք դիտարկվում է զարգացող երկրներում: Ընդ որում ՀՆԱ-ի վրա ազդեցությունը չնչին է, քանի որ զուտ

արտահանման ծավալների կրճատումը փոխհատուցվում էր ներքին պահանջարկի աճով:

Կապլերը, Ռեյսենը և այլք¹⁰², ինչպես նաև Բուսիեղը, Լոպեսը և Թիլլեն¹⁰³ նշում են, որ այլ հավասար պայմաններում ազգային արժույթի փոխարժեքի ամրապնդումը նվազեցնում է համախառն թողարկման աճի տեմպերը միայն զարգացող երկրներում: Մակլեոդը և Միլեվան¹⁰⁴, հետազոտելով խիստ արժույթային քաղաքականության ազդեցությունը տնտեսական աճի վրա, բացահայտեցին, որ որքան ցածր է երկրում մեկ շնչի հաշվով եկամուտը, այնքան ուժեղ է արժույթի արժեզրկման ազդեցությունը արտադրողականության վրա: Նաև անհրաժեշտ է նշել մի հետազոտություն, որտեղ հեղինակները¹⁰⁵ եկել են եզրահանգման, որ խիստ արժույթային քաղաքականության իրականացումը արտաքին շուկաների հետ ակտիվ փոխհարաբերության պայմաններում, ապահովում է գների մակարդակի կայունություն, սակայն միևնույն ժամանակ պայմանավորում է տնտեսության խոցելիություն արտաքին ցնցումների նկատմամբ:

Այսպիսով, ընդհանրացնելով մակրոտնտեսական կարգավորման մոտեցումը կայունության ապահովման շրջանակներում, կարող ենք ասել, որ բավականին շատ հարցեր են առաջանում տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման տեսանկյունից:

⁹⁸ Garofalo, P. Exchange Rate Regimes and Economic Performance: The Italian Experience. Banca D'Italia Quaderni dell'Ufficio Ricerche Storiche, 10, 2005, p.1-50.

⁹⁹ Ghosh, A.R., Ostry, J.D., Gulde, A.M. and Wolf, H.C. Does the Exchange Rate Regime Matter for Inflation and Growth? IMF Economic Issues, 2, 1997. p.1-19.

¹⁰⁰ Collins, M.S. On Becoming More Flexible: Exchange rate Regime in Latin America and the Caribbean, Journal of Development Economics, 51, 1996, p.117-138.

¹⁰¹ Kappler, M., H. Reisen, M. Schularick, and E. Turkisch, E., "The Macroeconomic Effects of Large Exchange Rate Appreciations", Open Economies Review. 2012

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ M. Bussière, C. Lopez, C. Tille. Do Real Exchange Rate Appreciations Matter for Growth? Graduate Institute of International and Development Studies Working Paper No: 06. 2014. 41 pp.

¹⁰⁴ Mcleod D., Mileva E. Real Exchange Rates and Productivity Growth // Fordham University Department of Economics Discussion Paper No: 2011-04.

¹⁰⁵ Husain A., Mody A., Rogoff K. S. Exchange rate regime durability and performance in developing versus advanced economies // NBER working paper. 2004. 47 pp.

Չսպող հարկաբյուջետային քաղաքականություն

Քանի որ մակրոտնտեսական կայունության ապահովման քաղաքականության ուղադրության կենտրոնում է գտնվում գների մակարդակը և դրա կայունության ապահովումը, ապա հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես դառնում է այդ խնդրի իրականացման գործիք: Դրամավարկային և արժութային քաղաքականության օրինակով, հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես պետք է ուղղված լինի դրամական զանգվածի կրճատմանը՝ չափազանց մեծ գնաճային ճնշումից խուսափելու համար: Այսպիսով, հարկաբյուջետային կարգավորման խնդիրը դառնում է պետական ծախսերի կրճատումը հարկային բեռի բարձրացմանը զուգահեռ, ինչը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում բերում է դրամական զանգվածի կրճատման, և հետևաբար գների կայուն մակարդակի պահպանման: Շատ դեպքերում նման քաղաքականությունը զսպող դրամավարկային քաղաքականության հետ համատեղ պայմանավորում է ոչ միայն գների կայունություն, այլև բերում է դեֆլյացիոն գործընթացների, ինչը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ տնտեսական աճի վրա:

Որոշ հեղինակներ¹⁰⁶ նշում են, որ տնտեսության տատանողականությանը հարկաբյուջետային քաղաքականության ժամանակին արձագանքը կարող է հաջող լինել մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից: Ինչպես պնդում է Սպիլիմբերգոն¹⁰⁷, շատ երկրներ շեշտը դնում են ֆիսկալ կարգավորման վրա մակրոտնտեսական

կայունության ձեռքբերման գործընթացում՝ մոնետար գործիքների կիրառման անհնարինության պատճառով (արժութային միություններ, դոլարայնացում, փոխարժեքի խիստ հաստատագրում և այլն) կամ մոնետար գործիքների չկայացվածության հետևանքով (թույլ զարգացած ֆինանսական շուկաներ, բացասական գնաճային սպասումներ և այլն): Ըստ Բլանշարի և Սամերսի¹⁰⁸, մակրոտնտեսական կայունության վրա հարկաբյուջետային քաղաքականության դրական ազդեցությունը պայմանավորող գործոններից է տոկոսադրույքների ցածր մակարդակը:

Հարկաբյուջետային կարգավորումը կարող է ապահովել մակրոտնտեսական կայունություն երեք հիմնական ուղիներով.

1. Հարկային համակարգի ներկառուցված կայունարար (built-in stabilizer):

2. Հարկային մուտքերի փոփոխությունը կախված տնտեսության ցիկլիկ բնույթից, ինքնաբերաբար ազդում է համախառն ազգային խնայողությունների հավասարակշռվածության վրա և բերում է մակրոտնտեսական կայունության¹⁰⁹: Անհրաժեշտ է նշել, որ մակրոտնտեսական կայունության վրա ներկառուցված կայունարարների ազդեցության հետազոտությունների մեծ մասը կենտրոնանում են արդյունաբերական զարգացած տնտեսությունների վրա: Այս հետազոտություններից շատերը հիմնվում են Գալիի¹¹⁰ հիմնարար գաղափարների վրա և կենտրոնանում են թողարկման տատանողականության և տնտեսությունում պետական մասնակցության մակարդակի՝

¹⁰⁶ Kumhof, Michael, and Douglas Laxton (2009), “Chile’s structural surplus rule: a model-based evaluation,” IMF Working Paper No 09/88.

¹⁰⁷ Spilimbergo, Antonio, Steven Symansky, Olivier Blanchard, and Carlo Cottarelli (2008), “Fiscal policy for the crisis,” IMF Staff Position Note No 08/01.

¹⁰⁸ Blanchard O. J., Summers L. H. Rethinking Stabilization Policy: Evolution or Revolution? National Bureau of

Economic Research, NBER Working Paper, 2017, no. w24179. DOI: 10.3386/w24179.

¹⁰⁹ Տես օրինակ՝ Blinder, Alan, and Robert Solow (1974), “Analytical Foundations of Fiscal Policy,” in The Economics of Public Finance, (Washington, D.C: The Brookings Institution).

¹¹⁰ Galí, Jordi (1994), “Government size and macroeconomic stability,” European Economic Review 38, 117–132.

որպես բյուջեի մնացորդի ցիկլիկ զգայունության ցուցանիշի, միջև բացասական կապի վրա:

3. Պետական ծախսեր: Շրջափուլերի հարթեցման և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով բյուջեն կարող է մեծացնել կամ կրճատել ծախսային բաղադրիչը: Բաքսթերը և Քինգը¹¹¹ նշում են, որ մակրոտնտեսական հավասարակշռության նեոդասական մոդելներում պետական ծախսերի կարճաժամկետ ավելացումը, որը ֆինանսավորվում է պետական պարտքի կուտակմամբ, պայմանավորում է համախառն թողարկման աճ, սակայն կարող է բերել ներդրումների և տնային տնտեսությունների սպառման մակարդակի կրճատման: Պետական ծախսերի ավելացման երկարաժամկետ հեռանկարի դեպքում տեղի կունենան ներդրումների աճ, սակայն կկրճատվի տնային տնտեսությունների սպառումը:

4. Պետական պարտքի կարգավորում: Տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության վրա պետական պարտքի ազդեցությունը բնութագրվում ա բավականին հակասական: Մի կողմից, եթե օտարերկրյա

արժույթի ներհուսքը արտաքին փոխառությունների տեսքով նպաստում է կապիտալի կուտակմանը, ապա այդ փոխառությունները կբերեն տնտեսական աճի: Մյուս կողմից պետության արտաքին պարտքը զսպում է տնտեսական աճը, քանի որ զսպում է տնտեսությունում եկամտի աճը¹¹²: Եթե պետական բյուջեյի պակասուրդի աճը գերազանցում է ՀՆԱ աճին, պետական պարտքի ավելացումը երկարաժամկետ հեռանկարում դրսևորվում է ներդրումների ու խնայողությունների կրճատմամբ և բերում է տնտեսական աճի տեմպերի կրճատման:

Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ¹¹³ կասկածի տակ են դնում հարկաբյուջետային կարգավորման արդյունավետությունը՝ մակրոտնտեսական կայունության ձեռքբերման տեսանկյունից: Օրինակ, Կոմհոֆը և Դուգլասը¹¹⁴ նշում են, որ երբ ցնցումները վերաբերում են առաջարկի կողմի գործոններին, ապա հարկաբյուջետային քաղաքականության չափազանց ակտիվությունը կարող է, հակառակը, բերել մակրոտնտեսական միջավայրի անկայունացման:

¹¹¹ Baxter M., King R. G. Fiscal Policy in General Equilibrium. The American Economic Review, 1993, vol. 83, no. 3, pp. 315–334.

¹¹² Krugman P., Financing vs. Forgiving a Debt Overhand, Journal of Development Economics 29, 1988, pp. 253–268.

¹¹³ Van der Ploeg, Rick (2005), “Back to Keynes?,” *CESifo Economic Studies* 51/4, 777–822.

¹¹⁴ Kumhof, Michael, and Douglas Laxton (2009), “Chile’s structural surplus rule: a model-based evaluation,” IMF Working Paper No 09/88.

1.4. Գիկլիկ քաղաքականություն

Մակրոտնտեսական կարգավորման մոտեցումը, հիմնված ցիկլիկ քաղաքականության վրա, որոշակիորեն նման է մակրոտնտեսական կայունության ապահովման մոտեցմանը: Սույն մոտեցմամբ ենթադրվում է խթանող քաղաքականություն աճի պայմաններում և զսպող քաղաքականություն ճգնաժամի պայմաններում: Շրջափոփվելի տեսության և մակրոտնտեսական կարգավորման հիմքում ընկած է ավտոմատ կայունարարների կիրառման մոտեցումը, որոնք աճի ժամանակաշրջանում խաղում են զսպող դեր, իսկ ճգնաժամի պայմաններում, հակառակը, խթանում են տնտեսությունը: Սակայն գործնականում շատ երկրներ կայունարարները կիրառում են հակառակ տրամաբանությամբ. Աճի պայմաններում իրականացվում է խթանող քաղաքականություն, իսկ ճգնաժամի պայմաններում՝ զսպող: Հատկապես սա բնորոշ է ֆիսկալ գործիքներին, երբ տնտեսական աճի պայմաններում կառավարությունը նախընտրում է ավելացնել պետական բյուջեյի ծախսերը: Մյուս կողմից, ճգնաժամի պայմաններում բյուջեյի ծախսերը կրճատվում են մինչև նվազագույնը, քանի որ, որպես կանոն, այդ ժամանակ երկրները բախվում են բյուջեյի պակասուրդի խնդրին:

Շատ հետազոտություններ¹¹⁵ ապացուցում են, որ նման փորձն ավելի տարածված է զարգացած տնտեսությամբ երկրների շրջանում: Ընդ որում, կարելի է պնդել, որ աճի շրջանում տնտեսության չափազանց խթանումը տարբեր երկրներում բերել է տնտեսության գերտաքացման և հանգեցրել է 2007-2008թթ.-ի

համաշխարհային ֆինանսական ճգնաժամին: Պետական ծախսերի աճը և հարկային բեռի կրճատումը տնտեսության աճի պայմաններում բերեցին ներքին և արտաքին պարտքի ակնհայտ աճի, ինչն էլ բերեց տնտեսության գերտաքացման: Ճգնաժամի վրա հասնելն էլ իր հերթին կրճատեց բյուջեյում հարկային մուտքերը, ինչը կառավարությանը ստիպեց կրճատել պետական ծախսերը, այսինքն վարել զսպող քաղաքականություն:

Մակրոտնտեսական կարգավորման ցիկլայնությունը վերջին տարիներին զարգացած երկրներում դիտարկվել է մի շարք գիտական աշխատություններում¹¹⁶: Այս հետազոտությունների հիմնական շեշտը դրված է ՀՆԱ աճի և պետական ծախսերի աճի հարաբերակցության վրա զարգացած երկրներում: Ընդ որում, պետական ծախսերի նման ավելացման առանցքային դերը վերագրվում է ավտոմատ կայունարարներին, որոնք, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, որոնք փաստացի թողարկման՝ ներուժայինին գերազանցման պայմաններում յուրաքանչյուր 1 տոկոսային կետով ավելացմանը զուգահեռ, որպես կանոն, պետական ծախսերն ավելացնում էին 0.5%-ով:

Գիտական հետազոտություններում այդ թեմայով կարելի է գտնել ցիկլայնության «զլոփկոտրուկի» մի քանի բացատրություն, որոնք հիմնականում կապված են թույլ քաղաքական ինստիտուտների գաղափարի հետ: Լեյնը և Թորնելը¹¹⁷, օրինակ, նշում են «ազահության» էֆեկտը, որը բնորոշ է թույլ իրավական և քաղաքական ինստիտուտներով

¹¹⁵ Տես օրինակ՝ Philip Lane, (2003), The cyclical behaviour of fiscal policy: evidence from the OECD, Journal of Public Economics, 87, (12), 2661-2675; Zvi Hercowitz & Michel Strawczynski, 2004. "Cyclical Ratcheting in Government Spending: Evidence from the OECD," The Review of Economics and Statistics, MIT Press, vol. 86(1), pages 353-361, February; Darby, J. and Melitz, J. (2008) Social expenditure and automatic stabilisers in the OECD. Economic Policy, 23 (56). pp. 715-756. ISSN 0266-903X

¹¹⁶ Տես օրինակ՝ Van den Noord, Paul, 2000, "The Size and Role of Automatic Fiscal Stabilizers in the 1990s and

Beyond," Economics Department Working Paper No. 230 (Paris: Organization for Economic Cooperation and Development); Bouthevillain, Carine, Philippine Cour-Thimann, Gerrit van den Dool, Pablo Hernández de Cos, Geert Langenus, Matthia Mohr, Sandro Momigliano, and Mika Tujula, 2001, «Cyclically-Adjusted Budget Balances: An Alternative Approach», ECB Working Paper No. 77 (Frankfurt: European Central Bank).

¹¹⁷ Lane, Philip, and Aaron Tornell, 1999, "The Voracity Effect," The American Economic Review, Vol. 89, No.1, pp. 22-46.

տնտեսություններին: Տնտեսության աճի և հարկային եկամուտների համապատասխան ավելացման պայմաններում աճում է բյուջեյի ավելցուկի բաշխման համար պայքարը շահագրգիռ կողմերի միջև: Սա իր հերթին բերում է բյուջեյի եկամուտների անհամաչափ բաշխման և, որպես կանոն, հղի է ճգնաժամի վրա հասնելու դեպքում այդ ոլորտներում ծախսերի կտրուկ կրճատման ռիսկերով:

Թավլին և Վեգը¹¹⁸ նույնպես նշում են տնտեսության աճի պայմաններում պրոցիկլիկ քաղաքականության դրսևորման քաղաքական բաղադրիչը՝ շեշտը դնելով ինչպես ինստիտուտների թուլության վրա, այնպես էլ քաղաքական ճնշման: Ալեսինան և Թաբելինին¹¹⁹, ի լրումն այդ փաստարկների, նաև նշում են կոռուպցիայի մասին, Գերսոնը¹²⁰ հակված է պետության պրոցիկլիկ քաղաքականությունը համարել սոցիալապես օպտիմալ՝ շեշտը դնելով «ինստիտուտների» և «կանոնների/ սահմանափակումների» համադրության վրա:

Չնայած որ մակրոտնտեսական քաղաքականության ցիկլայնությունը դիտարկող հետազոտությունների մեծ մասը շեշտը դնում է միայն հարկաբյուջետային քաղաքականության վրա, անհրաժեշտ է նշել, որ աճի ժամանակաշրջաններում դրամավարկային քաղաքականությունը նույնպես կարող է կրել պրոցիկլիկ բնույթ: Պրոցիկլիկ կարգավորումն այս դեպքում նշանակում է, որ կենտրոնական բանկը կամ ֆինանսական վերահսկողության ցանկացած այլ մարմին մշակում է կարգավորման ստանդարտներ՝ հաշվի չառնելով տնտեսության ցիկլայնության էֆեկտը: Ավելին, աճի պայմաններում ֆինանսական համակարգի վերահսկողությունը, որպես կանոն, թուլանում է և դա նույնպես բերում է ճգնաժամի:

Ցիկլիկ քաղաքականության առանցքային մեխանիզմները բերված են Աղյուսակ 1.4.1-ում:

Տնտեսության աճի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունն ավելացնում է պետական ծախսերը և կրճատում տնտեսության հարկային բեռը՝ կրճատելով հարկերի դրույքները կամ հարկային արտոնություններ սահմանելով տնտեսության տարբեր ոլորտների համար: Արդյունքում տնտեսական ակտիվությունն այդ ոլորտներում էլ ավելի է մեծանում, և նման քաղաքականության բացասական հետևանք կարող է լինել տնտեսության գերտաքացումը: Այս ամենի հետ մեկտեղ, եթե դրամավարկային քաղաքականությունը նույնպես կրում է պրոցիկլիկ բնույթ, ապա դա կարող է բերել փողի առաջարկի գերընդլայնման և գների աճի, ինչը կարճաժամկետ հեռանկարում կարող է բերել տնտեսական ակտիվության էլ ավելի մեծացման:

Մյուս կողմից, տնտեսության անկման ժամանակաշրջանում զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը պայմանավորված է պետական բյուջե հարկային եկամուտների կրճատմամբ և արտահայտվում է պետական ծախսերի համապատասխան նվազեցմամբ: Նման քաղաքականության արդյունքն է դառնում աղքատության աճը, բնակչության բարեկեցության նվազումը և վերջապես ճգնաժամի խորացումը: Միևնույն ժամանակ ճգնաժամի պայմաններում պրոցիկլիկ դրամավարկային քաղաքականությունը ձգտում է պայմանավորել մակրոտնտեսական կայունությունը և թույլ չտալ գների բարձր մակարդակ, ինչը արդյունքում բերում է գների մակարդակի կրճատման և ռեցեսիայի խորացման:

¹¹⁸ Talvi, Ernesto, and Carlos Vegh, 2005, “Tax Base Variability and Procyclicality of Fiscal Policy,” *Journal of Development Economics*, forthcoming.

¹¹⁹ Alesina, Alberto, and Guido Tabellini, 2005, “Why is Fiscal Policy often Procyclical?” (Unpublished; Milan: IGER-Bocconi University)

¹²⁰ Guerson, Alejandro, 2003, “On the Optimality of Procyclical Fiscal Policy When Governments Are Not Credible,” (unpublished Ph.D. thesis; Washington: George Washington University).

Աղյուսակ 1.4.1 Ֆիզիկ քաղաքականության հիմնական մեխանիզմները

Գործիքակազմ	Մեխանիզմ	Արդյունք
Տնտեսության աճի պայմաններում		
Խթանող ֆիսկալ քաղաքականություն	Պետական բյուջեյի ծախսերի ընդլայնում	Տնտեսության գերտաքացում
Խթանող մոնետար քաղաքականություն	Վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցում, փողի առաջարկի ընդլայնում	Գների մակարդակի աճ
Տնտեսության անկման պայմաններում		
Հսպող ֆիսկալ քաղաքականություն	Պետական բյուջեյի ծախսերի կրճատում	Ճգնաժամի խորացում
Հսպող մոնետար քաղաքականություն	Վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացում, փողի առաջարկի աճի զսպում	Գների մակարդակի նվազում

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

Այսպիսով, աճի պայմաններում երկրները հաճախ դիմում են փողի առաջարկի ընդլայնման քաղաքականությանը՝ ֆիսկալ կամ մոնետար մեխանիզմների միջոցով, ինչն արդյունքում բերում է տնտեսության գերտաքացման: Ավելի

մանրամասն դիտարկենք պրոցիկլիկ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններն աճի պայմաններում՝ տնտեսական աճի համար հետևանքների տեսանկյունից:

Հարկաբյուջետային քաղաքականություն

Պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության տակ հասկանում ենք քաղաքականություն, որը նպաստում է տնտեսական աճին բումի ընթացքում և տնտեսության կրճատմանը՝ անկման շրջանում: Որպես կանոն մակրոտնտեսական կարգավորման նման մոտեցումը բացասական է արտացոլվում բնակչության կենսամակարդակի և բարեկեցության ցուցանիշների վրա, բարձրացնում է տնտեսության տատանողականությունը, նվազեցնում ներդրումների մակարդակը տնտեսությունում և մարդկային կապիտալում, ինչպես նաև նպաստում է աղքատության մակարդակի բարձրացմանը: Հետազոտություններից

մեկում¹²¹, որպես նման քաղաքականության բացասական արդյունքի օրինակ է բերվում, որ երբ ընդլայնողական ֆիսկալ քաղաքականությունն աճի շրջանում չի փոխհատուցում բյուջեյի կորուստները ճգնաժամի ընթացքում, ապա բյուջեյի չափազանց մեծ արտաքին փոխառությունները, պայմանավորված պակասուրդով, կարող են բերել պետական պարտքի զգալի խնդիրների, մինչև անգամ դեֆոլտի: Մի շարք էմպիրիկ հետազոտություններ ցույց են տալիս, որ դիսկրետ ֆիսկալ քաղաքականությունը պրոցիկլիկ լինելու միտում ունի տարբեր երկրներում և տարբեր ժամանակաշրջաններում և հատկապես հատուկ է զարգացող երկրներին:

¹²¹ Serven, Luis, 1998, “Macroeconomic Uncertainty and Private Investment in LDCs: an Empirical Investigation,” Working Paper No. 2035 (Washington: World Bank).

Անհրաժեշտ է նշել, որ պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունն իր էությանմբ հակասում է ինչպես նեոդասական պատկերացումներին այն մասին, որ ֆիսկալ քաղաքականությունը պետք է հարթեցնի հարկային անհամամասնությունները և բյուջեյի ծախսային մասը պետք է արձագանքի գործարար շրջափուլի փոփոխություններին, այնպես էլ քեյնսական տեսությանը, որի համաձայն հարկերն ու ծախսերը պետք է մեղմացնեն, այլ ոչ թե խորացնեն գործարար շրջափուլի տատանումները:

Առանցքային պատճառների շրջանում, որոնք բացատրում են ֆիսկալ քաղաքականության պրոցիկլայնությունը, կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Սահմանափակ հասանելիություն ներքին և արտաքին փոխառություններին¹²²: Հատկապես զարգացող երկրներում ճգնաժամի պայմաններում պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականություն կիրառելու օգտին եղած փաստարկները հիմնված են այն թեզի վրա, որ գործնականում ճգնաժամի պայմաններում, որպես կանոն, տեղի է ունենում կապիտալի հոսքերի կտրուկ կրճատում, ինչը նվազեցնում է պետական ծախսերի միջոցով տնտեսությունը խթանելու հնարավորությունները և կառավարությանը ստիպում է կրճատել պետական ծախսերը: Միևնույն ժամանակ, որպես կանոն, նման երկրներում ֆինանսական շուկան թույլ զարգացած է լինում, և դա էլ իր հերթին էլ ավելի է սահմանափակում ներքին պարտքի միջոցով բյուջեյի համալրման հնարավորությունները: Այսպիսով, զարգացող երկրները, գոնե ճգնաժամի պայմաններում,

ստիպված են լինում դիմել պրոցիկլիկ քաղաքականության:

2. Ինստիտուցիոնալ և քաղաքական միջավայրի չկայացվածություն¹²³: Փաստարկների այս խումբը կենտրոնացված է ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման վրա, որպես ֆիսկալ կարգավորման արդյունավետության գործոն: Այն դեպքում, երբ նման միջավայրը բավարար ձևավորված չէ, առաջին պլան է մղվում ոչ ֆորմալ խմբերի շահերը, որոնք աճի պայմաններում հասնում են խոշոր հարկային արտոնությունների՝ ելնելով անձնական շահերից, ինչպես նաև պետական բյուջեյի հաշվին տնտեսության որոշակի ոլորտներում տարբեր ներարկումների: Քաղաքական թույլ կառույցներն ու ինստիտուցիոնալ չկայացվածություն արդյունքում պատճառ են դառնում պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար տնտեսության աճի պայմաններում:

3. Եկամուտների բևեռացում և սոցիալական անհավասարություն¹²⁴: Այս մոդելի համաձայն՝ տարբեր սոցիալական խմբերի նախապատվությունների տարասեռությունը բերում է նրան, որ հարկաբյուջետային քաղաքականությունը դառնում է ավելի պրոցիկլիկ: Այս համատեքստում եկամուտների անհավասարությունը, չափվող Ջինիի գործակցով, դիտարկվում է որպես նախապատվությունների տարասեռության ցուցանիշ: Որքան բարձր է եկամուտների անհավասարությունը, այնքան ավելի մեծ է ճնշումը բնակչության ավելի հարուստ հատվածի կողմից տնտեսական ակտիվությունը խթանելու համար աճի պայմաններում:

¹²² Տես օրինակ՝ Gavin, M. and R. Perotti, 1997, "Fiscal Policy in Latin America," NBER Macroeconomic Annual, (Cambridge, Massachusetts: National Bureau of Economic Research); Caballero, R. and Krishnamurthy, A. (2004). "Fiscal Policy and Financial Depth". NBER Working Paper 10532, May; Calderón, César and Klaus Schmidt-Hebbel (2008). "Business Cycles and Fiscal Policies: The Role of Institutions and Financial Markets". Central Bank of Chile Working Paper No. 481.

¹²³ Տես օրինակ՝ Lane, Philip R. (2003). "Business Cycles and Macroeconomic Policy in Emerging Market Economies". *International Finance*, Vol. 6, No. 1, pp. 89-108; Talvi, Ernesto and Carlos A. Végh (2005). "Tax Base Variability and

Procyclical Fiscal Policy in Developing Countries". *Journal of Development Economics*, Vol. 78, pp. 156-190; Alesina, Alberto, Guido Tabellini and Filipe R. Campante (2008). "Why is Fiscal Policy Often Procyclical?" *Journal of the European Economic Association*, Vol. 6, No. 5, pp. 1006-1036.

¹²⁴ Woo, Jaejong (2009). "Why Do More Polarized Countries Run More Procyclical Fiscal Policy?" *The Review of Economics and Statistics*, Vol. 91, No. 4, pp. 850-870; Thornton, John (2008). "Explaining Procyclical Fiscal Policy in African Countries". *Journal of African Economies*, Vol. (17), No. 3, pp. 451-464.

Մյուս կողմից տնտեսության աճի պայմաններում կառավարությունը հաճախ ավելացնում է պետական բյուջեյի ծախսերը բնակչության աղքատ մասի օգտին, ինչը տնտեսության մեջ սահմանվում է որպես «պոպուլիզմ»: Շատ հետազոտություններ¹²⁵ ցույց են տալիս, որ պոպուլիստական շարժումների աճ է նկատվում այն երկրներում, որտեղ դիտարկվում է բնակչության ներգաղթի մեծ հոսք, որը, որպես կանոն, բնութագրվում է ցածր եկամուտներով:

Այնուամենայնիվ, կարևոր է նաև, թե որքանով է պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունը բացասական կամ դրական ազդում տնտեսական աճի վրա ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Ինչպես հայտնի է, տնտեսական աճի էնդոգեն մոդելներում հարկաբյուջետային քաղաքականությունը գրավում է առանցքային դիրքերից մեկը: Ընդ որում, աճի պայմաններում խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է բերել բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման երկարաժամկետ հեռանկարում: Ինչպես նշում են Էնգենը և Սքիները¹²⁶, հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև կապը զգալի է: Ըստ նրանց հետազոտության, հարկային դրույքները կրճատումը 2.5%-ով բերում է տնտեսական աճի բարձրացման 0.2-0.3%-ով: Եվ չնայած տնտեսական աճի արձագանքն անհամաչափ է հարկման դրույքների կրճատմանը, հեղինակները պնդում են, որ երկարաժամկետ հեռանկարում համապատասխան փոփոխությունը դրական կազդի երկրում կենսամակարդակի վրա:

Հակառակ եզրահանգման է գալիս Մայլը¹²⁷, ով, դիտարկելով զարգացած երկրների խումբ, բացահայտեց, որ հարկային մոտքերի ավելացման ֆոնին տնտեսական աճը մնում էր բավականին կայուն, ինչը բերեց այն եզրահանգման, որ խթանող հարկային քաղաքականությունն աճի պայմաններում թույլ ազդեցություն ունի տնտեսական աճի վրա:

Այնուամենայնիվ, պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունը բավարար չափով շարունակում է դրսևորվել մի շարք երկրներում, հատկապես զարգացող կամ ձևավորվող շուկաներ երկրներում: Գեվինն ու Պերոտին¹²⁸, հետազոտելով Լատինական Ամերիկայի փորձը, բացահայտեցին, որ տնտեսական աճի ժամանակաշրջաններում պրոցիկլայնությունը պայմանավորում էր պետական բյուջեյի ավելցուկի աճ 0.25%-ով՝ ՀՆԱ մակարդակի յուրաքանչյուր 1% աճին զուգընթաց: Միննույն ժամանակ անկման շրջանում նման մոտեցումը խորացնում էր ճգնաժամը՝ պայմանավորելով պակասուրդի գրեթե 1% աճ ՀՆԱ 1% կրճատման դեպքում: Այսինքն երկարաժամկետ հեռանկարում ֆիսկալ կարգավորման պրոցիկլայնությունը բացասաբար էր անդրադառնում տնտեսական աճի վրա:

Իլզեցկին ու Վեգը¹²⁹ վերլուծել են տնտեսական շրջափոփի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության մակարդակն Իռլանդիայում՝ ապացուցելով պրոցիկլիկ ֆիսկալ քաղաքականության բացասական հետևանքները տնտեսական աճի համար երկարաժամկետ հեռանկարում: Ավելի վաղ

¹²⁵ Տես օրինակ՝ Kriesi, Hanspeter, Edgar Grande, Romain Lachat, Martin Dolezal, Simon Bornschieer and Thimotheos Frey (2006): 'Globalization and the transformation of the national political space: Six European countries compared', European Journal of Political Research 45: 921-956.; Inglehart, Ronald F. and Pippa Norris (2016): 'Trump, Brexit, and the Rise of Populism: Economic Have-Nots and Cultural Backlash', HKS Faculty Research Working Paper Series, RWP16-026.

¹²⁶ Engen, M.E. and Skinner, J., 1996. Taxation and economic growth. National Tax Journal, 49(4), pp.617-642.

¹²⁷ Myles, G.D., 2000. Taxation and Economic Growth. Fiscal Studies. The Journal of Applied Public Economics, 21(1), pp.141- 168

¹²⁸ Gavin, M. and Perotti, R., 1997. Fiscal Policy in Latin America. In: B. Bernanke, & J. Rotemberg, eds. NBER Macroeconomics Annual, pp.11-72. Cambridge: The MIT Press.

¹²⁹ Ilzetzki, E. and Vegh, C.A., 2008. Procyclical Fiscal Policy in Developing Countries: Truth or Fiction? NBER Working Paper 14191, National Bureau of Economic Research

հետազոտություններում Լեյնը¹³⁰ նույնպես եկել է նման եզրահանգման:

Մի շարք հետազոտություններ¹³¹ ապացուցում են, որ պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է խոչընդոտել երկարաժամկետ տնտեսական աճին, հատկապես ֆինանսական միջնորդության ինստիտուտների զարգացվածության ցածր մակարդակով երկրներում: Ավելին, որոշ

հետազոտություններ¹³² բացահայտել են պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության բացասական ազդեցությունը պետական բյուջեյի խոցելիության տեսանկյունից ճգնաժամի պայմաններում: Այսպիսով, կարելի է պնդել, որ պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականությունն ուղեկցվում է զգալի ռիսկերով տնտեսական աճի համար երկարաժամկետ հեռանկարում:

Դրամավարկային քաղաքականություն

Ի տարբերություն հարկաբյուջետային քաղաքականության, պրոցիկլիկ դրամավարկային քաղաքականությանն շատ հետազոտություններ նվիրված չեն: Հետազոտությունների մեծ մասը դրամավարկային քաղաքականության ցիկլայնությունը դիտարկում է ֆիսկալ քաղաքականության ցիկլայնության համատեքստում: Բացի այդ շեշտն ավելի շատ դրվում է ձևավորվող շուկաների վրա, քանի որ մոնետար քաղաքականության ցիկլայնություն զարգացած երկրներում գրեթե չի դիտարկվում:

Ինչպես հայտնի է գործարար շրջափոփ տատանումների կայունացմանն ուղղված դրամավարկային քաղաքականությունը համարվում է օպտիմալ¹³³: Սակայն ի տարբերություն զարգացած երկրների, ձևավորվող շուկայական տնտեսությամբ երկրները բնութագրվում են կամ պրոցիկլիկ, կամ լավագույն դեպքում հակացիկլիկ դրամավարկային քաղաքականությամբ, ինչը, որպես կանոն, ուղեկցվում է արտադրության ավելի բարձր տատանողականությամբ:

Շատ հետազոտություններ¹³⁴ հաստատում են այն փաստը, որ կենտրոնական բանկերը զարգացող երկրներում հակում ունեն բարձրացնել (իջեցնել) տոկոսադրույքները անկման (աճի) ժամանակ: Քաջ հայտնի է, որ բարձր մակրոտնտեսական տատանողականությունն ավելի հատուկ է զարգացող տնտեսությամբ երկրներին: Որոշ աշխատանքներ այս տատանողականությունը պայմանավորում են նրանով, որ պրոցիկլիկ դրամավարկային քաղաքականությունը կարող էր նպաստել ավելի զգալի տնտեսական տատանումների՝ դիտարկվող զարգացող տնտեսությամբ երկրներում:

Հետազոտությունները, որպես կանոն, հաստատում են այն գաղափարը, որ զարգացող երկրների դրամավարկային քաղաքականությունը հիմնականում պրոցիկլիկ է: Օրինակ, Կամինսկին¹³⁵, գնահատելով կորեյացիան քաղաքականության կողմից վերահսկվող կարճաժամկետ տոկոսադրույքի և գործարար շրջափոփ ցուցանիշի միջև 104 երկրների նմուշի վրա 1960-2003թթ.

¹³⁰ Lane, P.R., 1998. On the Cyclicity of Irish Fiscal Policy. The Economic and Social Review, 29(1), pp.1-16.

¹³¹ Aghion, P. and Marinescu, I., 2007. Cyclical Budgetary Policy and Economic Growth: What Do We Learn from OECD Panel Data? NBER Macroeconomics Annual, 22, pp. 251-278; Aghion, P. Hemous, D. and Kharroubi, E., 2009. Credit Constraints, Cyclical Fiscal Policy and Industry Growth. National Bureau of Economic Research, Working Paper Available at: [Accessed on August 2019].

¹³² Stoian, A. Obreja Braşoveanu, L. Braşoveanu, I.V. and Dumitrescu, B., 2018. A Framework to Assess Fiscal

Vulnerability: Empirical Evidence for European Union Countries. Sustainability 2018, 10(7), 2482, pp. 1-20.

¹³³ Woodford, M., 2001. The Taylor rule and optimal monetary policy. American Economic Review, Papers and Proceedings. 91(2), 232-237.

¹³⁴ Lane, P., 2003. Business Cycles and Macroeconomic Policy in Emerging Market Economies. International Finance. 6(1), 89-108.

¹³⁵ Kaminsky, G., Reinhart, C., Végh, C., 2004. When It Rains, It Pours: Proccyclical Capital Flows and Macroeconomic Policies, in: Gertler, M., Rogoff, K (Eds.), NBER Macroeconomics Annual, Cambridge, MA, MIT Press.

Ժամանակաշրջանի համար գալիս է այն եզրահանգման, որ ի տարբերություն զարգացած երկրների, դրամավարկային քաղաքականությունը ձևավորվող շուկայով երկրներում կրում է պրոցիկլիկ բնույթ (մասնավորապես այն է՝ կենտրոնական բանկի տոկոսադրույքներն իջնում են աճի ժամանակ և բարձրանում անկման ընթացքում): Բացի այդ, հեղինակները նաև գնահատել են Թեյլորի

կանոնի տարբերակները, ինչը հաստատեց նախորդ եզրահանգումը: Ավելի ուշ այս արդյունքները հաստատվեցին Քալդերի¹³⁶ և Յախինի¹³⁷ կողմից:

Այսպիսով, հետազոտությունների մեծ մասը գալիս է եզրահանգման՝ տնտեսական աճի վրա պրոցիկլիկ մոնետար քաղաքականության բացասական ազդեցության մասին:

¹³⁶ Calder´on, C., Duncan, R., Schmidt-Hebbel, K., 2004a. The role of credibility in the cyclical properties of macroeconomic policies in emerging economies. Review of World Economics. 140(4), 613-633; Calder´on, C., Duncan, R., Schmidt-Hebbel, K., 2004b. Institutions and Cyclical

Properties of Macroeconomic Policies. Central Bank of Chile, working paper series 285.

¹³⁷ Yakhin, Y., 2008. Financial Integration and Cyclicity of Monetary Policy in Small Open Economies. Mimeo, Rice University.

1.5. Հակացիկլիկ քաղաքականություն

Հակացիկլիկ քաղաքականության ժամանակակից պատկերացումը ելնում է «Մեծ դեպրեսիայի» ընթացքում մակրոտնտեսական կարգավորման փորձից: Հակացիկլիկ քաղաքականության հիմքում ընկած է տնտեսական ցիկլերը հարթելու անհրաժեշտության մասին թեզը, երբ աճի պայմաններում անհրաժեշտ է իրականացնել զսպող մակրոտնտեսական քաղաքականություն, իսկ ճգնաժամի պայմաններում՝ խթանող: Անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն պրոցիկլիկ քաղաքականության, հակացիկլիկ կարգավորման ոլորտում հետազոտությունների մեծ մասն առաջին պլանում դնում են դրամավարկային քաղաքականությունը: Մասնավորապես այս շեշտադրումն ակնհայտ է ճգնաժամի պայմաններում, երբ անհրաժեշտ են կարճաժամկետ և ճկուն գործիքներ, իսկ մոնետար կարգավորումն այս իմաստով ավելի արդյունավետ է տնտեսության կարգավորման տեսանկյունից:

Ըստ Յախինի¹³⁸, մակրոտնտեսական կարգավորման հակացիկլիկ մոտեցման տեսական հիմքը փոքր բաց տնտեսության նոր քայնասական մոդելն է, որը ենթադրում է, որ համաշխարհային տնտեսությանը երկրի ինտեգրման բարձր մակարդակի դեպքում պետական կարգավորման օպտիմալ մոտեցում է հակացիկլիկ քաղաքականությունը, իսկ այն դեպքում, երբ տնտեսությունը կրում է ավելի փակ բնույթ, օպտիմալ կլինի պրոցիկլիկ մոտեցումը: Հակացիկլիկ քաղաքականության այլ տեսական հիմք է¹³⁹ Թեյլորի կանոնը և աճի կանոնը: Այս դեպքում մակրոտնտեսական քաղաքականության առանցքային գործիքն է

մոնետար կարգավորումը, հիմնված գնաճի թիրախային մակարդակի պահպանմանը, և ինչն ավելի կարևոր է, գնաճային ֆոնի կայունացմանը, ինչը երկարաժամկետ հեռանկարում ապահովում է ներուժային արժեքներից աճի տեմպերի շեղումների ճշգրտում:

Մյուս կողմից հակաճգնաժամային կարգավորման փորձը 2007-2008թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում ցույց տվեց, որ մոնետար կարգավորման գործիքները այնքան էլ արդյունավետ չեն և երկրների մեծ մասը տնտեսության անկման շրջանում դիմեցին հենց ֆիսկալ գործիքներին: Ավելին, 2020թ.-ի արդյունքներով նույնպես կարելի է պնդել, որ հակացիկլիկ կարգավորման մեխանիզմների շրջանում ամենամեծ տարածումն ունեին հարկաբյուջետային քաղաքականության տարրերը:

Հակացիկլիկ քաղաքականության առանցքային գործիքներին են դասում ֆիսկալ, մոնետար և արժույթային կարգավորումը, պետական պարտքի կառավարման քաղաքականությունը, ինչպես նաև ֆինանսական կարգավորումը, հատկապես բանկային վերահսկողությունը: Գործիքների բոլոր տեսակները կարող են կիրառվել ինչպես աճի պայմաններում (կիրառվում է աճի զսպման քաղաքականություն), այնպես էլ տնտեսության անկման պայմաններում (կիրառվում է աճի խթանման քաղաքականություն):

Աղյուսակ 1.5.1-ում ընդհանրացված են հակացիկլիկ քաղաքա-կանության հիմնական մեխանիզմները:

¹³⁸ Yakhin, Y., 2008, "Financial Integration and Cyclicity of Monetary Policy in Small Open Economies," Monaster Center for Economic Research Discussion Paper No. 08-11.

¹³⁹ Bili, M. R., 2011. "Output Gaps and Monetary Policy at Low Interest Rates" *Federal Reserve Bank of Kansas City - Economic Review, First Quarter 2011*, 63-87

Աղյուսակ 1.5.1 Հակացիկլիկ քաղաքականության հիմնական մեխանիզմները

Գործիքակազմ	Մեխանիզմ	Արդյունք
Տնտեսության աճի պայմաններում		
Զսպող ֆիսկալ քաղաքականություն	Պետական բյուջեյի ծախսերի կրճատում, հարկային բեռի ավելացում: Պետական փոխառությունների մարում կամ նվազեցում:	Տնտեսական ցիկլերի հարթեցում: Պետական պարտքի մակարդակի կրճատում:
Զսպող մոնետար քաղաքականություն	Վերաֆինանսավորման տոկոսադրույքի և պահուստավորման նորմատիվի բարձրացում: Լողացող փոխարժեք:	Փողի առաջարկի աճի զսպում: Գների կայուն մակարդակ:
Ֆինանսական շուկաների կարգավորման քաղաքականություն	Կարգավորող և վերահսկող մեխանիզմների խստացում:	Ռիսկերի նվազեցում ֆինանսական համակարգում:
Տնտեսության անկման պայմաններում		
Խթանող ֆիսկալ քաղաքականություն	Պետական բյուջեյի ծախսերի ընդլայնում, հարկային բեռի նվազեցում: Պետական փոխառությունների ավելացում:	Փողի առաջարկի ընդլայնում, տնտեսական գործունեության խթանում, ՀՆԱ-ում պետական հատվածի մասի մեծացում: Պետական պարտքի մակարդակի բարձրացում:
Խթանող մոնետար քաղաքականություն	Վերաֆինանսավորման տոկոսադրույքի և պահուստավորման նորմատիվի իջեցում: Լողացող փոխարժեք:	Փողի առաջարկի ընդլայնում
Ֆինանսական շուկաների կարգավորման քաղաքականություն	Կարգավորող և վերահսկող մեխանիզմների մեղմացում: Ֆինանսական համակարգում կորուստների փոխհատուցում պետական ներարկումների հաշվին:	Վարկային առաջարկի ընդլայնում

Աղբյուր՝ կազմված է հեղինակների կողմից

Աղյուսակում ներկայացված քաղաքականության տեսակները դիտարկենք ավելի մանրամասն:

Հարկաբյուջետային քաղաքականություն

Տնտեսության ցիկլային բնույթից կախված հարկաբյուջետային քաղաքականություն կիրառելու հնարավորության շուրջ առանցքային հակասությունները հարկաբյուջետային գործիքների ճկունության աստիճանը և ազդեցության լագն է: Հեղինակների մի խումբ¹⁴⁰ իրենց հետազոտություններում գալիս է եզրահանգման, որ անկման պայմաններում պետական ծախսերի ավելացումը կարող է գրեթե ամբողջությամբ փոխհատուցել սպառողական պահանջարկի կրճատումը: Բլանշարը¹⁴¹, ընդհակառակը, ապացուցում է, որ պետական ծախսերի ավելացումն ուժեղացնում է ցնցումները տնտեսությունում: Բլայնդերը¹⁴² տնտեսական շրջափուլերի վրա հարկաբյուջետային մեխանիզմների ազդեցության նման ոչ գծայնությունը բացատրում է նրանով, որ պետական ծախսերի կողմից մասնավոր սպառման մասնաբաժնի դուրս մղման էֆեկտը սովորաբար կիրառելի է թողարկման դրական շեղման պայմաններում, մինչ այն պայմաններում, երբ ՀՆԱ ծավալները ցածր են ներուժայինից, որպես կանոն, պետական բյուջեն գրանցում է պակասուրդ:

Ֆաթաշը և Միխովը¹⁴³, օգտագործելով Չոլեսկիի տարրալուծումը ֆիսկալ ցնցումները բացահայտելու համար, պարզեցին, որ պետական ծախսերի աճը սովորաբար չափազանց մեծ է, բայց ավելի քան փոխհատուցում է մասնավոր սպառման անկումը: Բլանշարն ու Պերոտին¹⁴⁴, հարկաբյուջետային քաղաքականության

ավտոմատ կայունարարների արձագանքը որոշելու համար օգտագործելով ֆիսկալ փոփոխականների ճկունության մասին տեղեկատվությունը, իրենց հետազոտությունում ապացուցում են, որ ընդլայնողական ֆիսկալ ցնցումներն ավելացնում են թողարկման ծավալը, դրական ազդեցություն են ունենում մասնավոր սպառման և բացասական՝ մասնավոր ներդրումների վրա: Պերոտին¹⁴⁵, հետազոտելով տնտեսական աճի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն Ավստրալիայում, Կանադայում, Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում, նույնպես ապացուցեց մասնավոր սպառման վրա բավականին բարձր դրական ազդեցությունը, բայց միևնույն ժամանակ ապացուցեց նաև մասնավոր ներդրումների չեզոքությունը բյուջետային միջոցառումներին:

Մեծաքանակ էմպիրիկ գրականություն¹⁴⁶ նվիրված է այն հարցին, թե արդյոք ֆիսկալ ցնցումները, մասնավորապես պարտքի հաշվին պետական ծախսերի ավելացումը կամ պարտքի հաշվին հարկերի կրճատումը, կարող են դրական ազդեցություն ունենալ թողարկման ծավալի վրա կարճաժամկետ հեռանկարում: Սակայն բոլոր այս հետազոտությունները կրում են բավականին ընդհանուր բնույթ և դիտարկում են հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունն ընդհանուր առմամբ տնտեսական շրջափուլի վրա, ինչը պայմանավորում է որոշակի գործիքների արդյունավետության որոշման բարդությունն այս

¹⁴⁰ Տես օրինակ՝ Baxter, M. and R. King (1993): "Fiscal Policy in General Equilibrium", American Economic Review 83(3), pp. 315-334; Christiano, L. , Aiyagari, S. R. and M. Eichenbaum (1992): "The output, employment, and interest rate effects of government consumption", Journal of Monetary Economics 30(1), pp. 73-86; Fat'as, A. and L. Mihov (2001): "Fiscal Policy and Business Cycles: An Empirical Investigation", Moneda y Credito 212, pp. 167-210.

¹⁴¹ Blanchard, O. and R. Perotti (2002): "An Empirical Characterization of the Dynamic Effects of Changes in Government Spending and Taxes on Output", Quarterly Journal of Economics 117(4), pp. 1329-1368.

¹⁴² Blinder, A. S. (1987): "Credit Rationing and Effective Supply Failures", The Economic Journal 97(386), pp. 327-352.

¹⁴³ Fatas, A.; Mihov, I. (2001), "The effects of fiscal policy on consumption and employment: theory and evidence", CEPR Discussion Paper # 2760.

¹⁴⁴ Blanchard, O.; Perotti, R. (2002), "An empirical characterization of the dynamic effects of changes in government spending and taxes on output", Quarterly Journal of Economics, 117(4), 1329-1368.

¹⁴⁵ Perotti, R. (2004), "Estimating the effects of fiscal policy in OECD countries", University of Bocconi, Working Paper.

¹⁴⁶ Romer C. D. and D. Romer (2010): "The Macroeconomic Effects of Tax Changes: Estimates Based on a New Measure of Fiscal Shocks", American Economic Review, 100(3), pp. 763-801.; Mertens and Ravn (2012)

կամ այն դեպքում՝ տնտեսական աճի տեսանկյունից:

Դե Կաստրոն և Հերնանդես դե Կոսը¹⁴⁷, դիտարկելով Իսպանիայի տվյալները, ապացուցեցին, որ թեև դրական կապ գոյություն ունի պետական ծախսերի և թողարկման ծավալների միջև կարճաժամկետ հեռանկարում, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ծախսերի աճի ցնցումները բերում են միայն ավելի բարձր գնաճի և զգալիորեն կրճատում են արտադրողականությունը: Հեփկե-Ֆալկը¹⁴⁸, դիտարկելով Գերմանիայի փորձը, եկավ այն եզրահանգման, որ պետական ծախսերի դրական ցնցումը չնչին մեծությամբ է ավելացնում թողարկումը և մասնավոր սպառումը: Մյուս կողմից Ջորդանոն և այլք¹⁴⁹, դիտարկելով Իտալիայի փորձը, ապացուցեցին,

Դրամավարկային քաղաքականություն

Բաց տնտեսության պայմաններում դրամավարկային քաղաքականության իրականացումը հակացիկլիկ քաղաքականության տեսանկյունից բավականին բարդ խնդիր է: Շատ տնտեսագետների հետաքրքիր է այն հարցը, թե արդյո՞ք մոնետար քաղաքականությունը պետք է լինի հակացիկլիկ: Պատասխանը կայանում է նրանում, թե ինչպիսի՞ն է հարցի գինը: Ինչպիսի՞ք են համախառն պահանջարկի կայունացման քաղաքականության տնտեսական օգուտներն արտաքին ցնցումների պայմաններում:

Առաջին հեղինակների շրջանում, ովքեր դիտարկել են այս հարցը, կարելի է նշել Ֆիշերին¹⁵⁰, իսկ հետ Ֆելիսին և Թեյլորին¹⁵¹, ովքեր եկան եզրահանգման, որ դրամավարկային քաղաքականության խնդիրն է

որ պետական ծախսերի աճն անընդհատ դրական ազդեցություն է ունենում թողարկման և մասնավոր սպառման վրա:

Այսպիսով, հակացիկլիկ քաղաքականության դեպքում ֆիսկալ միջոցառումների ազդեցության մասին հստակ պատասխան գրականության մեջ չկա: Մենք դա բացատրում ենք նրանով, որ հեղինակներից յուրաքանչյուրը դիտարկել է որոշակի տնտեսության փորձը, այս դեպքում որոշակի պահի դրությամբ: Այս իմաստով ակնհայտ է դառնում, որ հակացիկլիկ քաղաքականության պայմաններում ֆիսկալ գործիքների կիրառման համընդհանուր բաղադրատոմսեր չկան, և անհատական մոտեցում է անհրաժեշտ յուրաքանչյուր առանձին դեպքում:

համախառն թողարկման կայունացումը դրամական զանգվածի փոփոխության միջոցով՝ արտաքին և ներքին ցնցումների արդյունքներին հակազդելու նպատակով: Օրինակ՝ ռեսուրսների համաշխարհային գներից մեծ կախվածության պատճառով, ռեցեսիայի մեջ գտնվող երկրները ներքին շուկայում մակրոտնտեսական կայունություն պահպանելու համար դիմում են խիստ դրամավարկային քաղաքականությանը, ինչը հակասում է հակացիկլիկ քաղաքականությանը, որպես այդպիսին¹⁵²: Չնայած բաց տնտեսության պայմաններում օպտիմալ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ ծավալուն գրականությանը, դժվար է պատճառահետևանքային եզրակացություններ անել մակրոտնտեսական տվյալների հիման վրա, քանի որ և՛

¹⁴⁷ De Castro Fernandez, F.; Hernandez De Cos, P. (2006), "The economic effects of exogenous fiscal shocks in Spain: a SVAR approach", ECB Working Paper #647.

¹⁴⁸ Heppke-Falk, K.H.; Tenhofen, J.; Wolff, G. B. (2006), "The macroeconomic effects of exogenous fiscal policy shocks in Germany: a disaggregated SVAR analysis", Deutsche Bundesbank, Discussion Paper #41.

¹⁴⁹ Giordano, R.; Momigliano, S.; Neri, S.; Perotti, R. (2007), "The effects of fiscal policy in Italy: Evidence from a VAR model", European Journal of Political Economy, 23, 707-733.

¹⁵⁰ Fischer, Stanley. "Long-Term Contracts, Rational Expectations, and the Optimal Money Supply Rule." J.P.E. 85 (February 1977): 191-205.

¹⁵¹ Phelps, Edmund S., and Taylor, John B. "Stabilizing Powers of Monetary Policy under Rational Expectations." J.P.E. 85 (February 1977): 163-90. Rotemberg, Julio J. "The New Keynesian Microfoundations." In NBER Macroeconomics Annual 1987, edited by Stanley Fischer. Cambridge, Mass.: MIT Press, 1987.

¹⁵² Frankel, Jeffrey. "Monetary policy in emerging markets." Handbook of Monetary Economics. Vol. 3. Elsevier, 2010. 1439-1520.

պահանջարկի ցնցումները, և՛ քաղաքականության պատասխանները հաճախ էնդոգեն են հիմնական տնտեսական պայմանների համար: Այս առումով, հետազոտության մեծ մասը հիմնականում կենտրոնացած է տեսական մոդելների և չափիչ հավասարումների վրա¹⁵³:

2007-2009թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ընթացքում շատ կենտրոնական բանկեր վարում էին խթանող դրամավարկային քաղաքականություն՝ ֆինանսական շուկայի խնդիրների մեղմացման, թողարկման ծավալների ավելացման և գնաճի կայունացման նպատակով: Դրամավարկային քաղաքականությունը բավականին հաջող էր ֆինանսական շուկայի խնդիրների մինիմալացման տեսանկյունից, սակայն թողարկման աճն ու գնաճը մի շարք զարգացած տնտեսությամբ երկրներում գրանցեցին ցածր ցուցանիշներ, ինչը դանդաղեցրեց վերականգնողական աճը¹⁵⁴: Այս դիտարկումները հանգեցրին լայն քննարկման այն մասին, թե արդյոք դրամավարկային քաղաքականության փոխանցման ուղիները կարելի է համարել հաջողված ճգնաժամի պայմաններում, մասնավորապես ֆինանսական ճգնաժամի պայմաններում, և թե ընդհանուր

առմամբ որքանով է հաջող իրականացվել դրամավարկային քաղաքականությունը ֆինանսական գլոբալիզացիայի և համաշխարհային տնտեսության անկայունության բարձր մակարդակի պայմաններում¹⁵⁵: Այս առումով հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր հակացիկլիկ դրամավարկային քաղաքականությունը, և արդյոք արժե ճգնաժամի պայմաններում ավելի մեծ առաջնություն տալ խթանող հարկաբյուջետային քաղաքականությանը: Բացի այդ, կարևոր է դառնում հակացիկլիկ դրամավարկային քաղաքականության անցանկալի կողմնակի ազդեցությունների հարցը, ինչպիսիք են՝ ավելորդ ռիսկերի ի հայտ գալը և ֆինանսական ակտիվների ուռճացված գները, որոնք կարող է դառնալ դրամական մարմինների կողմից երկարաժամկետ ընդլայնողական քաղաքականության վարման հետևանքը¹⁵⁶:

Դրամավարկային քաղաքականության ցիկլային բնույթի վերաբերյալ հետազոտությունները¹⁵⁷ թույլ են տալիս եզրակացնել, որ զարգացած երկրներում դրամավարկային քաղաքականությունը հիմնականում հակացիկլիկ է, իսկ զարգացող երկրներում՝ պրոցիկլիկ:

¹⁵³ Տես օրինակ՝ Corsetti, Giancarlo, Luca Dedola, and Sylvain Leduc. "Optimal monetary policy in open economies." *Handbook of Monetary Economics*. Vol. 3. Elsevier, 2010. 861-933.

¹⁵⁴ Pain, N., C. Lewis, T.-T. Dang, Y. Jin, and P. Richardson (2014). OECD forecasts during and after the financial crisis: A post mortem. OECD Economics Department Working Paper No.1107.

¹⁵⁵ Bouis, R., L. Rawdanowicz, J.-P. Renne, S. Watanabe, and A. K. Christensen (2013). The effectiveness of monetary policy since the onset of the financial crisis. OECD Economics Department Working Paper No. 1081.

¹⁵⁶ Տես օրինակ՝ Rajan, R. G. (2005). Has financial development made the world riskier? *Proceedings – Economic Policy Symposium - Jackson Hole, Federal Reserve Bank of Kansas City Aug*, 313–369.; Altunbasa, Y., L.

Gambacorta, and D. Marques-Ibanez (2014). Does monetary policy affect bank risk? *International Journal of Central Banking March*, 95–135; Jimenez, G., S. Ongena, J.-L. Peydró, and J. Saurina (2014). Hazardous times for monetary policy: What do twenty-three million bank loans say about the effects of monetary policy on credit risk-taking? *Econometrica* 82(2), 463–505.

¹⁵⁷ Frankel, J.A., 2011. Monetary policy in emerging markets, in: Freidman B., Woodford, M. (Eds.), *Handbook of Monetary Economics*, Vol. 3B. North Holland, Amsterdam, pp. 1439-1520.; McGettingham, D., Moriyama, K., Ntsama, J.N.N., Painchar, F., Qu, H., Steinberg, C., 2013. Monetary policy in emerging markets: taming the cycle. IMF Working Paper 13/96.; Vegh, C.A., Vuletin, G., 2013. Overcoming the fear of free falling: monetary policy graduation in emerging markets. NBER Working Paper 18175.

Ֆինանսական շուկաների կարգավորման քաղաքականություն

Հակացիկլիկ քաղաքականության տեսանկյունից ֆինանսական համակարգի կարգավորման ոլորտում ժամանակակից հետազոտությունները մեծ ուշադրություն են դարձնում ոչ ֆորմալ գործոններին, որոնք ընկած են ֆինանսական կարգավորման խստության կամ մեղմ լինելու հիմքում ժամանակակից տնտեսությունում: Շատ հետազոտություններ¹⁵⁸ ֆինանսական կարգավորումը և դրա ուղղվածությունը դիտարկում են որպես ֆինանսական միջնորդության որոշակի ինստիտուտների շահերի համար սակարկությունների արդյունք: Չնայած, որ մակրոտնտեսական քաղաքականության բնույթը, ճնշման ոչ ֆորմալ ինստիտուտները և մասնավոր շահերը ենթակա են անընդհատ փոփոխությունների, Կալոմիրիսը և Հաբերը¹⁵⁹ պնդում են, որ հենց մասնավոր շահն է ընկած բանկային կարգավորման շատ նորմատիվների հիմքում տարբեր երկրներում՝ անկախ ժամանակաշրջանից: Ֆինանսական վերահսկողության քաղաքականության ապակարգավորման կամ մեղմացման պատճառների վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ¹⁶⁰ հաստատում են ֆինանսական համակարգերի կարգավորման քաղաքականության իրականացման գործում մասնավոր շահերի գերակայության թեզը: Այսպիսով, կարելի է պնդել, որ այդ կողմնակալ պատճառներից ելնելով՝ ֆինանսական կարգավորումը, որպես կանոն, կրում է ցիկլային բնույթ:

Հարկ է նշել Ռեյզանի հետազոտությունը¹⁶¹, ով վերջին համաշխարհային ֆինանսական ճգնաժամի վերաբերյալ իր աշխատանքում առաջադրում է թեզ խիստ կարգավորման վտանգի մասին, որը կարող է հղի լինել տնտեսության համար ավելի վատ հետևանքներով, քան ապակարգավորումը: Բլայնդերն¹⁶² էլ իր հերթին ներկայացնում է հակառակ տեսակետ, ըստ որի՝ ճգնաժամի պայմաններում միայն խիստ կարգավորումը կարող է օպտիմալ լինել: Այլ կերպ ասած, ըստ Բլայնդերի, ֆինանսական համակարգը կարգավորելու քաղաքականությունը, մեծ մասամբ, պետք է ունենա պրոցիկլիկ բնույթ: Ֆինանսական շուկայի կարգավորման քաղաքականության ցիկլային բնույթի վերաբերյալ հետաքրքիր տեսակետ առկա է Այզենմանի¹⁶³ աշխատանքում, ով առաջ է քաշում թեզ այն մասին, որ ֆինանսական համակարգը և դրա կարգավորման մեխանիզմները ընկած են տնտեսության ցիկլային բնույթի հիմքում, և ուստի ֆինանսական շուկաների կարգավորման օպտիմալ քաղաքականությունը կարող է հարթել տնտեսության ցիկլայնությունը:

Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ ֆինանսական համակարգի կարգավորման քաղաքականությունը, մեծ մասամբ, չի կրում ցիկլային բնույթ ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում:

¹⁵⁸ Տես օրինակ՝ Stigler, G., 1971. The Theory of Economic Regulation. The Bell Journal of Economics and Management Science, 2(1), 3-21.

¹⁵⁹ Calomiris, Charles W., and Stephen H. Haber. "Fragile by design." The political origin of banking crises and scarce credit. The Princeton Economic History of the Western World, Joel Mokyr, Series Editor (2014).

¹⁶⁰ Տես օրինակ՝ Posner, E.A. (1997) The political economy of the Bankruptcy Reform Act of 1978. Michigan Law Review 96(1), 47-126; Kroszner, R., Strahan, P. (1999) What Drives Deregulation? Economics and Politics of the Relaxation of Bank Branching Restriction. Quarterly Journal of Economics, 1437-1467; Benmelech, E., Moskowitz, T.J. (2010) The political economy of financial regulation: evidence from US state usury laws in the 19th century. The journal of finance,

65(3), 1029-1073; Mian, A., Sufi, A., Trebbi, F. (2010) The political economy of the subprime mortgage credit expansion. w16107, NBER; Mian, Sufi, Trebbi. The Political Economy of the Subprime Mortgage Credit Expansion. Quarterly Journal of Political Science, 2013, 8, 373-408; Rajan, R.G., Ramcharan, R. Constituencies and legislation: The fight over the mcfadden act of 1927, w17266. NBER, 2011.

¹⁶¹ Reinhart, C.M., Rogoff. This time is different: eight centuries of financial folly. princeton university press, 2009.

¹⁶² Blinder, A.S. (2015) Financial Entropy and the Optimality of Over-regulation. The New International Financial System: Analyzing the Cumulative Impact of Regulatory Reform 48,3.

¹⁶³ Joshua Aizenman and Reuven Glick, Sterilization, Monetary Policy, and Global Financial Integration. Review of International Economics, 17(4), 777-801, 2009.

1.6. Տնտեսական քաղաքականության մոդելները և դրանց փոփոխությունները 1960-2020թթ

2008-2009թթ. ֆինանսական ճգնաժամից հետո ժամանակակից տնտեսական աճին նվիրված ընդարձակ գրականության մեջ արդեն համընդհանուր համաձայնություն կա այն թեզի վերաբերյալ, որ տնտեսական ճգնաժամերը հանդիսանում են ժամանակակից շուկայական տնտեսության անբաժանելի մասը և դրանցից խուսափելը գործնականում անհնար է¹⁶⁴, հետևաբար տնտեսական աճի ժամանակահատվածներն անխուսափելիորեն զուգորդվում են և զուգորդվելու են ապագայում տնտեսական անկման ժամանակահատվածների հետ: Այդ տեսակետը եկավ փոխարինելու երկար տարիներ գերակայող այն կարծիքին, որ ճիշտ տնտեսական քաղաքականության պարագայում զարգացած և զարգացող երկրները հնարավորություն ունեն խուսափել տնտեսական ճգնաժամերից և ապահովել երկարաժամկետ անընդմեջ տնտեսական աճ:

1980-2000թթ.-ին ճիշտ տնտեսական քաղաքականություն էր համարվում առաջարկի կարգավորման (հիմնականում խրախուսման) վրա հիմնված մոնետար քաղաքականությունը, որի հիմնական գործիքն էր դրամական զանգվածի (ներառյալ վարկային ռեսուրսների) առաջանցիկ ընդլայնումը, որը զուգորդվում է տնտեսության ապակարգավորման (deregulation) և հարկաբյուջետային բարեփոխումների հետ: Այդ քաղաքականությունը՝ այսպես կոչված “reaganomics”-ը, գաղափարապես հիմնված էր շուկաների ինքնակարգավորման կարողությունների պետական կարգավորման նկատմամբ

գերակայության և ավելի արդյունավետ լինելու ենթադրության վրա:

Մյուս կողմից դրամական զանգվածի և վարկի ընդլայնումը սահմանափակվում էր ելնելով գնաճի զսպման անհրաժեշտությունից, որը տնտեսական քաղաքականության նախորդ ցիկլի (գերակայող էր երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 80թթ.-ների սկիզբը) վերջին տասնամյակում՝ 1971-1980թթ. կտրուկ արագացել էր զուգորդվելով տնտեսական աճի տեմպերի էական անկման հետ¹⁶⁵:

1945-1980թթ գերակայող տնտեսական քաղաքականության հիմքն էին նեոքեյնսական մոտեցումները, համաձայն որոնց կառավարությունները կարող են հասնել լրիվ զբաղվածության և պահպանել այն կառավարելով առաջարկը համապատասխան դրամավարկային և հարկային քաղաքականության կիրառմամբ¹⁶⁶:

Այնուամենայնիվ, այդպիսի անցումը, որը սկզբից տեղի ունեցավ ԱՄՆ-ում, հետագայում տարածվելով Մեծ Բրիտանիայի և այլ զարգացած ու զարգացող երկրներում ուներ օբյեկտիվ պատճառներ, որից հիմնականն էին 20-րդ դարի 70-ական թվականներին կտրուկ ավելացած գնաճը, պետական ծախսերի և հարկային բեռի բարձր մակարդակը, որոնք իր հերթին բերեցին տնտեսական զարգացման տեմպերի նվազմանը: Այն պայմանավորված էր հումքի գների կտրուկ աճով¹⁶⁷, իսկ գնաճը՝ նաև 1971թ ոսկու ստանդարտից վերջնականապես հրաժարվելուց բխող հետևանքներով¹⁶⁸:

¹⁶⁴ Stu՝ օրինակ Алан Гринспейн Карта и территория, Москва, Альпина 2015

¹⁶⁵ Այսպես կոչված ստագֆլացիա՝ բարձր գնաճ զուգորդվող տնտեսական զարգացման տեմպերի անկման և չկրճատվող գործազրկության հետ

¹⁶⁶ Stu՝ օրինակ Джозеф Стиглиц Люди, власть и прибыль: Прогрессивный капитализм в эпоху массового недовольства, Москва, Альпина 2020

¹⁶⁷ 1970-1981թթ, երբ գումարային սղաճը ԱՄՆ-ում կազմել էր 134,3%, ոչ էներգետիկ հումքային ապրանքների գները

աճեցին 2,38 անգամ, իսկ էներգետիկ ռեսուրսների գները՝ 21,7 անգամ (տես՝ В. Иноземцев Экономика без догм. Как США создают новый экономический порядок. Москва, Альпина 2021).

¹⁶⁸ 1971թ օգոստոսին ԱՄՆ նախագահ նիքսոնը դադարացրեց դոլարի ոսկով փոխանակումը, որը ազդարարեց անցումը նոր ֆինանսական համակարգին, որտեղ դրամական զանգվածի թողարկումը արդեն սահմանափակվում էր միայն ԱՄՆ կառավարության ցանկություններով:

Ինչպես վկայում է Աղյուսակ 1.6.1-ը, անցումն առաջարկի կառավարման տնտեսական մոդելին որոշակիորեն հնարավորություն տվեց զսպել գների աճը 1980-2000թթ.-ին: Այդ ժամանակահատվածը վերը նկարագրված մակրոտնտեսական կայունացման քաղաքականության տարածման շրջանն էր ամբողջ աշխարհում, ներառյալ զարգացող և 1991թ.-ից նաև անցումային երկրներում: Այդ քաղաքականության, ինչպես նաև ճգնաժամերը հաղթահարելու ցիկլիկ քաղաքականության հիմնական դրույթները տեղ գտան հայտնի Վաշինգտոնյան կոնսենսուսի 10 կետերում¹⁶⁹, որոնք ներկայացնում էին “reaganomics”-ի հիմնական դրույթները հարմարեցված զարգացող և անցումային երկրների համար և լայնորեն կիրառվում էր IMF-ի, Համաշխարհային բանկի, ԱՄՆ և ԵՄ կողմից որպես այդ երկրների տնտեսական օժանդակություն նախապայման: Սակայն 90-ականների տարածաշրջանային ճգնաժամերը (1994՝ Մեքսիկա, 1997՝ Լատինական Ամերիկա և Հարավ-Արևելյան Ասիա, 1998՝ Ռուսաստան, 2002՝ Արգենտինա) կասկածի տակ դրեցին այդ քաղաքականության ինչպես հիմքերը, այնպես էլ արդյունավետությունը¹⁷⁰:

Ինչպես երևում է Աղյուսակ 1.6.2-ից այդ անցումը չկարողացավ ապահովել 70-ականների տնտեսական աճի վերականգնումը, բացառությամբ ԱՄՆ-ի, որտեղ 20 տարվա ընթացքում տնտեսական ակտիվության միջին տարեկան մակարդակը գերազանցում էր 70-ականների ցուցանիշը:

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի անկման ընդհանուր ֆոնին ընդհանուր առմամբ 1980-2000թթ.-ին հաջողվեց պահպանել և որոշակիորեն ամրապնդել զարգացած երկրների գերակայող

դիրքերը համաշխարհային տնտեսությունում (տես՝ Աղյուսակ 1.6.3):

Սակայն 1980-2000թթ սկսեցին արտահայտվել այն միտումները, որոնք խորացան 2000-կաններին և բերեցին զարգացած երկրների աճի տեմպերի հետագա անկմանը, բարձր միջին եկամուտ ունեցող երկրների տնտեսական դերի աճին և հատկապես Չինաստանի աննախադեպ վերելքին:

Այդ միտումներից էր զարգացած երկրների ապահովագրության զարգացումը և անցումը ծառայությունների էկոնոմիկային՝ մասնավորապես ԱՄՆ-ում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1970թ.-ին 14.6 տոկոսից նվազեց մինչև 12.6% 1980թ.-ին, 11.7% 1990թ.-ին և 2000թ.-ին, հասնելով 10.9 տոկոսի 2017թ.-ին¹⁷¹: Կտրուկ նվազեց նաև շինարարության տեսակարար կշիռը՝ 1970թ 11% մինչև 3.45% 2017թ¹⁷²:

Չնայած անցումը մակրոտնտեսական կայունության քաղաքականությանը ենթադրում էր պետության դերի սահմանափակումը հարկերի և ծախսերի կրճատման և արդյունքում բյուջեների բալանսավորման միջոցով, ինչպես նաև պետական պարտքի կառավարելի սահմաններում պահելը, դա մեծ հաշվով տեղի չունեցավ: Ինչպես վկայում է Աղյուսակ 1.6.4-ը ԱՄՆ, Միացյալ Թագավորության և Գերմանիայի օրինակով տնտեսական աճի և տնտեսության իրական սեկտորի տեսակարար կշռի նվազման պայմաններում, այդ երկրներում պետության վերաբաշխիչ դերը չնվազեց, ընդհակառակը, պետական եկամուտների հարաբերականորեն կայուն լինելու պարագայում սկսեցին աճել պետական ծախսերը որի արդյունքում աճեցին բյուջետային պակասուրդները, որոնք ֆինանսավորվում էին պետական պարտքի առաջանցիկ աճով¹⁷³:

¹⁶⁹ John Williamson What Washington Means by Policy Reform, Chapter 2 from *Latin American Adjustment: How Much Has Happened?* Edited by John Williamson. 1990. Peterson Institute for International Economics

¹⁷⁰ Տես՝ The Washington Consensus Reconsidered, Edited by Marcus Sera & Jozeph Stiglitz. 2020. Oxford University Press

¹⁷¹ Հաշվարկված է UN Statistics\SNA Database հիման վրա

¹⁷² Հիմնականում միտումները կցուցադրվեն ԱՄՆ օրինակի վրա, սակայն դրանք նաև նաև բնութագրիչ են ԵՄ և այլ զարգացած երկրների համար

¹⁷³ Այն երկրները որոնք հնարավորություն ունեն պարտքեր կուտակել իրենց սեփական տարադրամով (դրա համար անհրաժեշտ է ազգային արժույթի ամբողջությամբ փոխարկելի լինելը և դրա օգտագործումը միջազգային

Ինչպես վկայում է Աղյուսակ 1.6.1. պարտքային պարտավորությունների առաջանցիկ աճը զարգացած երկրներում չարտահայտվեց գնաճի մեջ, որը բնութագրիչ էր 70-ականների համար:

Մեր կարծիքով դա պայմանավորված էր մի շարք նոր ի հայտ եկած գործոններով, որոնց ազդեցությունը շարունակվում է մինչ այժմ: Դրանցից առաջինը՝ բնական, հատկապես էներգետիկ ռեսուրսների գների անկայունությունն էր (volatility)¹⁷⁴, որը պայմանավորված էր ոչ միայն առաջարկի և պահանջարկի տատանումներով, այլ քաղաքական և ֆինանսական քաղաքականությամբ պայմանավորված սպեկուլյատիվ զարգացումներով: Այսպիսով 70-ականներին նավթի գների աճը ունեցավ զգալի գնաճային ազդեցություն զարգացած և ներմուծող երկրների վրա, իսկ 1980-2000թթ. ժամանակաշրջանի համար՝ զգալի դեֆլյացիոն ազդեցություն, որը մեղմեց գնաճային զարգացումները զարգացած և ներմուծող երկրների վրա:

Երկրորդ գործոնը՝ գլոբալիզացիան և առևտրի ազատականացումն էր, որոնք սկսեցին ինտենսիվ զարգանալ 90-ականներին նոր թափ ստանալով ԽՍՀՄ վերանալուց հետո: Դրանք մի կողմից նպաստեցին նյութական արտադրության տեղափոխմանը ավելի էժան աշխատուժ ունեցող երկրներ որի արդյունքում կայունացվեցին արդյունաբերական արտադրանքի գները և արագ զարգացման հնարավորություններ տվեցին ցածր և բարձր միջին եկամուտ ունեցող երկրներին, որով բացատրվում է Չինաստանի աննախադեպ աճը:

Մյուս կողմից ԱՄՆ 1990-2019թթ ընթացքում ապրանքների և ծառայությունների ամենամեծ արտահանողից դարձավ ամենամեծ ներմուծող, իսկ Չինաստանը 2013թ սկսված՝ աշխարհի ամենամեծ արտահանող: Ինչպես վկայում է Աղյուսակ 1.6.5.ը ԱՄՆ-ն 1970-2019թթ ունեցել է առևտրային հաշվեկշռի մշտական պակասուրդ, այդ թվում և Չինաստանի հետ առևտրում¹⁷⁵, որը ի տարբերություն առևտրային պակասուրդ ունեցող և փոխարկելի տարադրամ չունեցող երկրների ֆինանսավորել է փող տպելու կամ այլ խոսքերով՝ ընդլայնողական դրամական քաղաքականության միջոցով: Չինաստանը իր հերթին ունենալով առևտրային հաշվեկշռի մշտական և աճող ավելցուկ և չունենալով փոխարկելի տարադրամ օգտագործել է ԱՄՆ առևտրային հաշվեկշռի պակասուրդը արտահանման վրա հիմնված սեփական տնտեսական աճը ապահովելու համար կուտակելով դոլարային պահուստներ և հանդիսանալով ԱՄՆ ամենախոշոր վարկատուն¹⁷⁶: Այսպիսով աշխարհում 90-ականներից սկսել է ձևավորվել նոր երկմակարդական ֆինանսական համակարգ, որի առաջին մակարդակը կազմում են միջազգային առևտրում օգտագործվող տարադրամ թողարկող երկրները (ԱՄՆ, եվրոգոտու երկրները, Մեծ Բրիտանիա) որոնք կարող են իրենց թույլ տալ տնտեսության պարտքային ընդարձակ ֆինանսավորումը սեփական տարադրամով առանց դեֆոլտի վտանգի և ինչպես վերջին 30 տարիների փորձը ցույց է տալիս՝ առանց սղաճի աճի: Երկրորդ մակարդակը կազմում են այն բոլոր երկրները որոնց տարադրամը չի օգտագործվում

առևտրում) պարտքային դեֆոլտի շատ ավելի քիչ հավանականություն ունեն քան այն երկրները, որոնք ստիպված են փոխառություններ վերցնել այլ երկրների փոխարկելի տարադրամով և հաշվի առնել փոխանակման կուրսի փոփոխման ռիսկերը, քանի որ առաջինները կարող են իրականացնել տնտեսության ինֆլյացիոն ֆինանսավորում պարզապես անհրաժեշտ քանակությամբ տարադրամ տպելով: Տես՝ Քեյ Դալիո. *Большие долговые кризисы. Принципы преодоления*. Москва, 2021

¹⁷⁴ 70-կանների համեմատ, երբ տեղի ունեցավ նավթի գների աննախադեպ աճ, 1988թ նավթի միջին տարեկան գինը համադրելի գներով կազմել էր 1980թ մակարդակի 28,2%, 1998թ՝ 17,5%, իսկ 2011թ (գների պատմական մաքսիմումը)

110,6%: Տես՝ BP Statistical Review of World Energy. www.bp.com

¹⁷⁵ 2019թ դրությամբ ԱՄՆ պակասուրդը Չինաստանի հետ ապրանքային առևտրում կազմել է 365.8 միլիարդ դոլար (<https://wits.worldbank.org/CountryProfile/en/Country/USA/Year/LTST/TradeFlow/EXPIMP/Partner/by-country>)

¹⁷⁶ Չինաստանի տարադրամային պահուստները աճել են 1991թ 48,1 միլիարդ դոլարից մինչև 3.9 տրիլիոն դոլար 2014թ հետագայում նվազելով մինչև 3,069 տրիլիոն դոլար 2016թ և հասնելով 3,357 տրիլիոն դոլար 2020թ: Ի համեմատություն ԱՄՆ միջազգային պահեստները կազմել են 2020թ ընդհամենը 144 միլիարդ դոլար: (<https://knoema.ru/atlas/Китай/Международные-резервы>)

միջազգային առևտրում և որոնք պարտք են վերցնում փոխարկելի տարադրամով, ունենալով տնտեսության պարտքային ֆինանսավորման շատ ավելի սահմանափակ հնարավորություններ: Առևտրային հաշվեկշռի ավելցուկ ունենալու դեպքում այդ երկրները (օրինակ՝ Չինաստանը) ստիպված են ձևավորել ծավալուն միջազգային պահուստներ հակահիմնադրամային և տնտեսական աճի ապահովման կամ տնտեսության՝ ցնցումներից ապահովագրման նպատակով:

Երրորդ գործոնը՝ սահմանափակ սղաճը պայմանավորված է այդ երկու խումբ երկրների համար նույն գործոններով բայց ազդեցության տարբեր ինտենսիվությամբ: Այդ գործոնները երկուսն են՝ բնակչությանը և բիզնեսին պատկանող ակտիվների¹⁷⁷, և անշարժ գույքի գները: Երկուսն էլ ունեն «փուչիկի» (bubble) բոլոր հատկությունները՝ տնտեսական աճի ժամանակահատվածում դրանք աճում են ՀՆԱ-ից նկատելիորեն ավելի արագ, իսկ տնտեսական ճգնաժամի դեպքում արագ նվազում են, ինչպես ցույց է տալիս Ադյուսակ 1.6.4-ը:

Չորրորդ գործոնը՝ տնտեսության ֆինանսալիզացումն է¹⁷⁸, որը ամբողջ աշխարհում 1970-2007թթ.-ին աճում էր առաջանցիկ տեմպերով, կրճատվեց 2008թ.-ին և վերականգնվեց 2019թ.-ին¹⁷⁹:

Հինգերորդ գործոնը՝ փողի գնի քաղաքականությունն էր¹⁸⁰, որի կիրառումը

2000թ.-ից հետո ձեռք բերեց հակացիկլիկ բնույթ Ադյուսակ 1.6.4-ում ներկայացված երկրների համար:

Այսպիսով, ամփոփելով տնտեսական քաղաքականության մոդելների դեկլարացված նպատակները և դրանց կիրառման փորձը 1980-2008թթ.-ին՝ պետք է եզրակացնել, որ զարգացած երկրներում առաջարկի խրախուսման վրա հիմնված մակրոտնտեսական կայունության մոդելը քիչ թե շատ աշխատել է միայն սղաճի կրճատման հարցում, պայմանավորված վերը նշված գործոնների ազդեցությամբ, սակայն 1990թ.-ից սկսված փաստորեն փոխարինվել է էժան փողի, տնտեսության ֆինանսալիզացիայի և պետական պարտքի վրա հիմնված տնտեսական աճի խրախուսման ցիկլիկ քաղաքականությամբ, որը և բերել է 2008-2009թթ. ֆինանսական ճգնաժամին: 2008-2009թթ. քաղաքականությունը դարձավ հակացիկլիկ, համակցելով նեոքեյնսական առաջարկի խրախուսման մոդելները պահանջարկի խրախուսման մոնետարիստական մոդելների հետ էժան փողի, վերը նշված առաջին խմբի երկրների փող տպելու վրա հիմնված պարտքային պարտավորությունների աճի պայմաններում: Նույն տիպի մոտեցումները, բայց շատ ավելի լայն ծավալով, կիրառվեցին 2020թ.-ին Covid-19-ով պայմանավորված ճգնաժամի արդյունքները մեղմելու նպատակով:

¹⁷⁷ Ադյուսակ 1.6.4 -ում դրանք մոտարկված են ընկերությունների շուկայական կապիտալիզացիայի ցուցանիշով

¹⁷⁸ Ադյուսակ 1.6.4 -ում այն մոտարկված է վարկավորումը Ֆինանսական սեկտորի կողմից և մասնավոր սեկտորի վարկավորումը ցուցանիշներով:

¹⁷⁹ Համաձայն Համարչարիային բանկի զարգացման ինդիկատորների շտեմարանի տվյալների՝ World bank, WDI

dataset (1960-2019) մասնավոր սեկտորի վարկավորման ծավալները 1970թ կազմել են ՀՆԱ 69,7%, 1981թ՝ 73.9%, 1989թ՝ 116.9%, 2000թ՝135.9%, նվազել են 2008թ մինչև 120.6% և վերականգնվել են 2019թ՝ 132.4%

¹⁸⁰ Ադյուսակ 1.6.4 -ում այն մոտարկված է պետական պարտքի իրական տոկոսադրույթը ցուցանիշով:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Աղյուսակ 1.6.1 ՀՆԱ դեֆյաստորը 1960-2020թթ, միջին տարեկան աճը, %

	1960-1970	1971-1980	1981-1990	1991-2000	2001-2008	2009-2019	2020
Աշխարհ	2,26	10,06	4,01	1,23	4,91	0,42	0,88
Բարձր եկամույք	2,61	10,24	4,53	1,14	4,36	0,08	1,01
Ցածր եկամույք			0,21*	0,06	6,31	0,09	
Ցածր միջին եկամույք	1,80	8,92	0,66	0,34	6,75	0,83	
Բարձր միջին եկամույք	0,25	9,38	1,46	2,37	7,79	1,31	
ԱՄՆ	2,54	6,91	4,18	2,06	2,39	1,62	1,02
ԵՄ		12,58	4,48	-1,07	8,41	-1,34	1,02
Չինաստան	0,55	1,26	-2,49	2,22	6,73	2,81	1,02

*1982-1990թթ համար

Աղբյուր՝ World bank, WDI dataset (1960-2019), IMF World economic outlook April 2021, Dataset (2020), Հեղինակների հաշվարկներ

Աղյուսակ 1.6.2 ՀՆԱ 1960-2020թթ, միջին տարեկան աճը, %

	1960-1970	1971-1980	1981-1990	1991-2000	2001-2008	2009-2019	2020
Աշխարհ	4,89	3,81	3,12	2,78	3,24	2,53	-3,30
Բարձր եկամույք	4,88	3,54	3,13	2,68	2,23	1,50	-4,70
Ցածր եկամույք			1,45*	2,01	5,94	4,03	
Ցածր միջին եկամույք	3,99	4,13	3,41	3,07	5,93	5,35	
Բարձր միջին եկամույք	5,32	5,54	3,08	3,15	6,27	4,55	
ԱՄՆ	3,75	3,16	3,32	3,44	2,18	1,83	-3,50
ԵՄ		3,35	2,41	2,21	2,00	1,01	-6,60
Չինաստան	3,50	6,18	9,29	10,43	10,69	7,83	2,30

*1982-1990թթ համար

Աղբյուր՝ World bank, WDI dataset (1960-2019), IMF World economic outlook April 2021, Dataset (2020), Հեղինակների հաշվարկներ

Աղյուսակ 1.6.3 Տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում, 1960-2020թթ, %

	1960	1970	1980	1990	2000	2009	2019	2020
Աշխարհ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Բարձր եկամույք	77.61	80.48	79.71	83.82	82.24	72.87	62.85	
Ցածր եկամույք		0.88	0.79	0.48	0.40	0.54	0.62	
Ցածր միջին եկամույք	6.47	5.60	5.20	3.85	3.63	5.12	7.22	
Բարձր միջին եկամույք	16.34	13.73	15.22	11.83	13.72	21.47	29.34	
ԱՄՆ	39.67	36.25	25.45	26.35	30.49	23.10	24.43	24.76
ԵՄ		24.52	29.43	28.73	21.59	25.49	17.81	17.94
Չինաստան	4.36	3.13	1.70	1.59	3.60	7.21	16.28	17.42

Աղբյուր՝ World bank, WDI dataset (1960-2019), IMF World economic outlook April 2021, Dataset (2020), Հեղինակների հաշվարկներ

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Աղյուսակ 1.6.4 Պետական ֆինանսները, պետական պարտքը և ֆինանսական համակարգը 1970-2009թթ, %
ՀՆԱ նկատմամբ

	1970	1980	1990	2000	2008	2009
ԱՄՆ						
Պետական Եկամուտներ	30.2	31.6	32.9	35.4	32.7	31.1
Պետական ծախսեր	32.3	34.3	37.2	33.9	39.1	42.7
Համախառն պետական պարտքը	46.4	41.9	63.1	54.5	71.8	85.8
Պետական պարտքի սպասարկումը	1.43	1.77	3.39	2.46	2.73	2.5
Պետական պարտքի իրական տոկոսադրույքը, %	1.71	-1.56	3.15	2.66	2.35	2.34
Վարկավորումը Ֆինանսական սեկտորի կողմից	112.7	116.4	145.6	191.6	214.6	222.5
Ընկերությունների շուկայական կապիտալիզացիան	41.8	47.6	51.9	147.4	78.8	104.3
Միացյալ Թագավորություն						
Պետական Եկամուտներ	44.6	42.0	39.3	40.4	42.9	40.1
Պետական ծախսեր	42.0	47.6	41.1	36.8	47.8	51.5
Համախառն պետական պարտքը	73.2	46.2	38.4	41.0	52.0	68.3
Պետական պարտքի սպասարկումը	4.04	4.89	3.67	2.72	2.27	1.88
Պետական պարտքի իրական տոկոսադրույքը, %	2.30	2.01	1.63	4.17	0.94	1.45
Մասնավոր սեկտորի վարկավորումը	19.8	26.2	104.8	115.2	191.6	192.6
Ընկերությունների շուկայական կապիտալիզացիան	35.5	6.4	77.7	155.4	63.9	115.9
Գերմանիա						
Պետական Եկամուտներ	40.0	45.2	42.8	46.2	44.0	44.9
Պետական ծախսեր	39.5	48.2	44.7	45.1	44.0	48.1
Համախառն պետական պարտքը	18.3	31.3	42.2	60.2	66.7	74.4
Պետական պարտքի սպասարկումը	0.95	2.11	2.69	3.20	2.76	2.69
Պետական պարտքի իրական տոկոսադրույքը, %	4.42	3.16	6.25	3.88	1.32	2.90
Մասնավոր սեկտորի վարկավորումը				112.4	97.0	98.8
Ընկերությունների շուկայական կապիտալիզացիան	10.5	7.5	20.1	65.4	29.8	38.0

Աղբյուր՝ World bank, WDI dataset (1960-2019), IMF World economic outlook April 2021, Dataset (2020), Հեղինակների հաշվարկներ

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Աղյուսակ 1.6.5 ԱՄՆ և Չինաստանի մասնակցությունը միջազգային առևտրին 1970-2019թթ, միլիարդ ԱՄՆ դոլար 2010թ համադրելի գներով*

	1971-1980	1981-1990	1991-2000	2001-2008	2009-2019
ԱՄՆ					
<i>Արդաշահում</i>	2935.7	4477.7	9634.1	11454.2	23351.8
<i>Ներմուծում</i>	3618.2	5714.6	11577.5	17043.1	30069.8
<i>Առևտրային հաշվեկշիռ</i>	-682.5	-1236.9	-1943.4	-5588.9	-6718.0
<i>ՀՆԱ նկատմամբ, %</i>					
<i>Արդաշահում</i>	4.7	5.8	9.1	10.2	13.0
<i>Ներմուծում</i>	5.8	7.4	10.9	15.2	16.7
<i>Առևտրային հաշվեկշիռ</i>	-1.1	-1.6	-1.8	-5.0	-3.7
Չինաստան					
<i>Արդաշահում</i>		510.1	1800.5	6685.9	21968.0
<i>Ներմուծում</i>		416.6	1342.1	5183.7	19696.0
<i>Առևտրային հաշվեկշիռ</i>		93.6	458.5	1502.2	2272.0
<i>ՀՆԱ նկատմամբ, %</i>					
<i>Արդաշահում</i>		8.6	11.6	23.6	23.7
<i>Ներմուծում</i>		7.0	8.6	18.3	21.3
<i>Առևտրային հաշվեկշիռ</i>		1.6	3.0	5.3	2.5
ՀՆԱ ԱՄՆ	62197.8	77464.7	106017.2	111990.1	179854.2
ՀՆԱ Չինաստան		5935.9	15515.3	28352.4	92545.6

* Գումարային ըստ ժամանակահատվածների
Աղբյուր՝ World bank, WDI dataset (1960-2019), Հեղինակների հաշվարկներ

1.7. Հայաստանի Հանրապետության փնտրության ակնարկ

1.7.1. Հայաստանում փնտրության աճի և ճգնաժամերի հիմնական ոլորտները և գործոնները

Հայաստանի հանրապետությունն իր 30 տարվա անկախ պետականության գոյության ընթացքում ունեցել է 3 տնտեսական ճգնաժամ՝ 1991-1993թթ., 2009թ. և 2020թ կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամը, որը սկսել է 2020թ. մարտից և դատելով 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներից տնտեսության աճը, ամենայն հավանականությամբ, 2021թ.-ին կվերականգնվի¹⁸¹:

Հստակության նպատակով (1) տնտեսական ճգնաժամի տևողությունը կհամարվի այն ժամանակահատվածը (ամիսներով կամ տարիներով չափվող), որի ընթացքում տեղի է ունենում թողարկման ֆիզիկական ծավալների կրճատումը, (2) հետճգնաժամային

1991-1993թթ. տնտեսական ճգնաժամը

1991-1993թթ. տնտեսական ճգնաժամի հիմնական պատճառը ԽՍՀՄ փլուզումն էր, որը քանդեց տնտեսական կապերը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև և ավելի լայն իմաստով, նախկին սոցիալիստական երկրների միջև, որոնք բոլորը հայտնվեցին այս կամ այլ աստիճանի խորության տնտեսական ճգնաժամի մեջ¹⁸⁴:

Բոլոր այդ երկրներում ճգնաժամը կրում էր համակարգային բնույթ պայմանավորված տնտեսական կացութաձևերի փոփոխմամբ՝ շուկայական տնտեսական համակարգին անցման հետ կապված: Հայաստանում այդ ճգնաժամին ավելացավ Արցախի ազատագրման պատերազմը, դրանով

վերականգնողական ժամանակաշրջան կհամարվի այն ժամանակահատվածը, որի ընթացքում կվերականգնվի թողարկման այն ծավալը, որը եղել է մինչև ճգնաժամի սկիզբը¹⁸²:

Ըստ տարածման կամ ազդեցության աստիճանի ճգնաժամերը կարող են դասակարգվել որպես տեղական կամ ոլորտային, ազգային, տարածաշրջանային¹⁸³ և համաշխարհային: Երբ տնտեսական ճգնաժամը զուգակցվում է այլ ճգնաժամերի հետ՝ մասնավորապես պետական կառավարման, կացութաձևերի, բնական և տեխնաձին աղետների հետ, խոսքը գնում է համակարգային ճգնաժամի մասին:

պայմանավորված տրանսպորտային շրջափակումը և էներգետիկ ճգնաժամը: Միևնույն ժամանակ համաշխարհային տնտեսությունում տնտեսական աճը շարունակվում էր՝ միջին տարեկան մոտ 2,5 տոկոս: Այսպիսով այս ճգնաժամը կրում էր համակարգային և տարածաշրջանային բնույթ:

Ընդհանուր առումով, ECA (Եվրոպա և Կենտրոնական Ասիա) երկրներում ճգնաժամը սկսեց 1992թ.-ին և տևեց 2 տարի՝ 1992 և 1993 թվականներին: Եվս 2 տարի պահանջվեց 1991թ.-ի մակարդակը վերականգնելու համար:

Նախկին ԽՍՀՄ երկրների համար ճգնաժամը շատ ավելի ծանր էր քան ECA այլ երկրների համար: Օրինակ, Ռուսաստանում

¹⁸¹ Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների 2021թ առաջին եռամսյակում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 2020թ 96,5%, իսկ առաջին կիսամյակում՝ 105%:

¹⁸² Այս պահին՝ 2021թ օգոստոսին հնարավոր չի ճշգրիտ գնահատել 2020թ հետճգնաժամային ժամանակահատվածի տևողությունը: Ներկայիս տնտեսական աճի պահպանման դեպքում այն կարող է կազմել մոտ 18 ամիս:

¹⁸³ Այս աշխատության մեջ որպես տարածաշրջան դիտարկվում է Համաշխարհային բանկի Եվրոպա և

Կենտրոնական Ասիա երկրների խումբը (ECA), որին և պատկանում է Հայաստանը

¹⁸⁴ Բացառությամբ Չինաստանի և Վյետնամի: Չինաստանի տնտեսական աճի միջին տարեկան տեմպը այդ ժամանակաշրջանում (1991-1995թթ) կազմում էր մոտ 10 տոկոս: Այսուհետ, եթե այլ բան չի նշվում վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային բանկի և Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալների շտեմարաններից:

ճգնաժամը սկսեց 1991թ.-ին և տևեց 6 տարի, տնտեսական աճը վերսկսվեց 1997թ.-ին, 1990թ.-ի մակարդակը վերականգնվեց միայն 2007թ.-ին, իսկ ընդհանուր տնտեսական անկումը 1996թ.-ին դրությամբ կազմեց 40.2 տոկոս 1990թ. նկատմամբ:

Հայաստանում ճգնաժամի տևողությունն ավելի կարճ էր, բայց տնտեսական հետևանքներն ավելի ծանր էին քան Ռուսաստանում: Այն տևեց 3 տարի, տնտեսական աճը վերսկսվեց 1994թ.-ին և անընդմեջ շարունակվեց 14 տարի մինչև 2009թ.-ի ճգնաժամը¹⁸⁵, 1990թ.-ի մակարդակը վերականգնվեց 2004թ.-ին, իսկ տնտեսական անկումը 1993թ.-ի դրությամբ կազմեց 53.1 տոկոս կամ 2 անգամից ավել:

Տնտեսական ճգնաժամը ազդեց տնտեսության բոլոր ոլորտների վրա և հիմնովին փոխեց տնտեսության կառուցվածքը, որը չվերականգնվեց հին տեսքով՝ հետ զգելով երկիրը մոտ 15 տարով, այն ինդուստրիալից դարձնելով հիմնականում ագրարային երկիր: Արդյունաբերությունն ամենատուժած ոլորտներից էր. երեք տարվա ընթացքում անկումը կազմեց 57.3%, այդ թվում մշակող արդյունաբերության մեջ՝ 58.1%, արդյունահանող արդյունաբերությունում՝ 37 տոկոս: Ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրանքի 1990թ. ֆիզիկական ծավալները վերականգնվեցին միայն 2012թ.-ին, իսկ արդյունահանող արդյունաբերության ծավալները՝ արդեն 2001թ.-ին: Արդյունաբերության 1990թ. տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մինչև հիմա չի վերականգնվել՝ 2019թ.-ին այն կազմել էր 18.8%, 2020թ.-ին՝ 19.9% 1990թ. 31.8% համեմատ:

Գյուղատնտեսությունն այն ոլորտն էր, որը խորը ճգնաժամի պայմաններում ապահովեց տնտեսության գոյատևումը՝ փրկելով այն վերահաս սովից երկրի ապահինդուստրիալիզացման և աշխատանքի արտադրողականության կտրուկ կրճատման

հաշվին: Գյուղատնտեսության այդ կայունացնող դերը հնարավոր դարձավ 1990-1991թթ.-ին իրականացված ագրարային ռեֆորմի հաշվին: Արդյունքում կտրուկ ավելացավ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1990թ. 15.8%-ից մինչև 48.6% 1993թ.-ին: Ավելին, գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության միակ ոլորտն էր, որտեղ տնտեսական անկումը նվազագույնն էր՝ 10.9% 1993թ.-ին, իսկ 1990թ. ծավալները վերականգնվեցին արդեն 1998թ.-ին:

Տնտեսական ճգնաժամերի հիմնական բնութագրիչներից մեկն է՝ պետական ֆինանսական ռեսուրսների ծավալների կտրուկ նվազումը մի կողմից, մյուս կողմից՝ ծախսերի ոչ պակաս կտրուկ ավելացման անհրաժեշտությունը: 1990-1994թթ. արտաքին ֆինանսավորման աղբյուրների սահմանափակության պայմաններում կիրառվում էր ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն՝ բյուջեի պակասուրդի Կենտրոնական բանկի կողմից ինֆլյացիոն ֆինանսավորման տեսքով, 1990թ. բյուջեն ուներ 13.6% ավելցուկ, 1992թ.՝ 0.25% պակասուրդ, 1993թ.՝ 50.5% պակասուրդ, 1994թ.՝ 38.4% պակասուրդ, իսկ 1995թ.-ից սկսված, երբ ընդլայնվեցին միջազգային կազմակերպությունների կողմից արտոնյալ արտաքին ֆինանսավորման հնարավորությունները, սկսեց կիրառվել Վաշինգտոնյան կոնսենսուսի վրա հիմնված մակրոտնտեսական կայունության քաղաքականությունը, որի արդյունքում վերացավ 1992-1993թթ. հիպերսղաճը, սկսեց կրճատվել բյուջեի պակասուրդը (1995թ.՝ ՀՆԱ 6%, 1996թ.՝ ՀՆԱ 4.3% և այլն): Ինչ վերաբերում էր դրամավարկային քաղաքականությանը՝ ապա ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն երկիրը սկսեց վարել 1994թ.-ից, 1993թ.-ի նոյեմբերից ազգային արժույթը՝ դրամը ներմուծելուց հետո: 1995թ.-ից ինքնուրույն դրամավարկային քաղաքականու-

¹⁸⁵ Տնտեսական աճի միջին տարեկան տեմպը 1994-2008թթ կազմեց մոտ 9%, այդ թվում 1994-1997թթ՝ 5,35%, 1998-2003թթ՝ 10,6%, 2004-2008թթ՝ 11,6%

թյունը նույնպես սկսեց կրել զսպողական բնույթ: Ինչ վերաբերում է 1990-1993թթ., ապա երկիրը, գտնվելով ռուսական ռուբլու գոտում, օգտվում էր ընդհանուր ինֆլյացիոն դրամական քաղաքականությունից:

Տնտեսական ճգնաժամերի այլ հիմնական բնութագրիչը՝ երկրի արտաքին տնտեսական կապերի խաթարումն է՝ արտահանումը 1994թ.-ին կազմում էր 1990թ. մակարդակի 65.5%, միևնույն ժամանակ երկրի թողարկման կրճատման պայմաններում, նվազագույն ներքին սպառումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, աճում է ներմուծման դերը՝ ներմուծումը 1994թ. կազմում էր 1990թ. մակարդակի 91.9%, այսինքն ճգնաժամի ժամանակ վատթարանում են նաև առևտրային և վճարային հաշվեկշիռները¹⁸⁶:

Նշված տիպի համակարգային ճգնաժամերից դուրս գալու և վերականգնողական աճը սկսելու համար Հայաստանի դեպքում տնտեսության համար

Հայաստանի տնտեսության հիմնական առանձնահատկությունները

Հայաստանի տնտեսության բաժանումն առանձին ժամանակահատվածների հետևյալն է՝ 1990-1993թթ՝ ճգնաժամային տարիներն են, 1994-1997թթ՝ տնտեսության վերականգնողական աճի առաջին փուլն է, 1998-2003թթ՝ վերականգնողական աճի երկրորդ փուլն է, 2004-2009թթ՝ տնտեսության հետվերականգնողական աճի ժամանակահատվածը, ներառյալ 2009թ. ճգնաժամը, 2010-2014՝ 2009թ. ճգնաժամից հետո վերականգնողական աճն է, 2015-2017թթ. և 2018-2019թթ.՝ տնտեսական աճի հետվերականգնողական ժամանակահատվածներն են, որոնք տարբերվում են իրարից տնտեսական

հիմնական արտաքին պայմանները հետևյալն էին՝ Արցախյան ազատագրման պատերազմում երկարաժամկետ զինադադարի ապահովումը (1994թ.), տրանսպորտային շրջափակման թուլացումը (սկսած 1994թ.-ից), էներգետիկ ճգնաժամի վերացումը (1996թ. ՀԱԷԿ-ի վերագործարկմամբ), որոնք թույլ տվեցին էականորեն թուլացնել ճնշումը տնտեսության վրա, արտաքին արտոնյալ պայմաններով լայնածավալ ֆինանսավորման սկիզբը (1995թ սկսած)¹⁸⁷, որը թույլ տվեց նվազեցնել բյուջեի պակասուրդը, դադարեցնել տնտեսության ինֆլյացիոն ֆինանսավորումը (օրենսդրորեն արգելվեց 1997թ.-ից) և հասնել մակրոտնտեսական կայունացմանը՝ հետագայում այն պահպանելով:

Մեր կարծիքով, 1991-1993թթ. ճգնաժամը, լինելով աննախադեպ իր խորությամբ և ուղեկցող արտաքին գործոններով, դժվար թե կրկնվի ապագայում:

դինամիկային հիմնական գործոններով: 2020թ.՝ քովիդ-19-ով պայմանավորված համաշխարհային ճգնաժամն էր: Սակայն չնայած այդ տարբերությունների ամբողջ ժամանակահատվածում աշխատել են ընդհանուր գործոններ, որոնք և կազմում են երկրի տնտեսության հիմնական առանձնահատկությունները:

Դրանցից առաջինը՝ տնտեսության արտաքին ֆինանսավորումն է, որը տնտեսական աճի վերսկսումը, իսկ ապա նաև շարունակությունը պայմանավորող հիմնական

¹⁸⁶ Համակարգային ճգնաժամերի ժամանակ որպես կանոն ներմուծման փոխարինման հնարավորությունները, հատկապես Հայաստանի նման փոքր, բաց և տնտեսության մի շարք բազային ճյուղեր չունեցող երկրներում բավականին սահմանափակ են: Մյուս կողմից այդպիսի երկրներում ներմուծման փոխարինման քաղաքականությունը իր սկզբնական փուլերում պահանջում է ներմուծման ծավալների աճ, որի համար բացակայում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները, որոնք հիմնականում պետք է ուղղել կրիտիկական ներմուծմանը:

¹⁸⁷ Նշված լայնածավալ վարկավորումը և օգնությունը հնարավոր դարձավ այն պատճառով, որ մնացած աշխարհում բացի ECA երկրներից տնտեսական աճը շարունակվում էր և Հայաստանը բավականին արագ իրականացնում էր շուկայական տնտեսության հիմնական տարրերի, ինչպես նաև ժամանակակից պետական ինստիտուտների ներդրումը, որը հանդիսանում էր միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորումը իրականացնելու հիմնական նախապայմանը:

գործոնն էր¹⁸⁸ և շարունակում է մնալ այդ գործոնը:

Աղյուսակ 1.7.1 Հայաստանի արտաքին ֆինանսավորման ծավալները 1990-2020թթ, միլիոն ԱՄՆ դոլար ընթացիկ գներով

	1990-1993	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2014	2015-2017	2018-2019	2020	1990-2020
Արտաքին ֆինանսավորում	-1092	-1838	-3219	-7497	-2366	-11206	-3430	-3531	-1180	-35359
ՀՆԱ	6799	6020	12953	35730	8648	52753	32627	26070	12645	194245
% ՀՆԱ նկատմամբ	-16.1	-30.5	-24.8	-21.0	-27.4	-21.2	-10.5	-15.9	-9.3	-18.2

Աղբյուրը՝ ՀՀ վճարային հաշվեկշիռ, Համաշխարհային բանկի WDI տվյալների շտեմարան

Ինչպես երևում է

Աղյուսակ 1.7.1-ից, Հայաստանի տնտեսության կախվածությունն արտաքին ֆինանսավորումից մնում է բարձր, չնայած պակասել է 1997թ.-ից հետո՝ հասնելով նվազագույնի 2015-2017թթ. և նորից աճելով 2018-2019թթ., գրանցելով ամենացածր մակարդակը 2020թ.-ին:

Հայաստանի մյուս առանձնահատկությունը՝ մեծածավալ սփյուռքի և մշտական արտագաղթի առկայությունն է, որը պայմանավորում է մասնավոր տրանսֆերտների չափազանց մեծ դերը որպես երկրի արտաքին ֆինանսավորման և տնտեսական աճի ապահովման հիմնական գործոններից մեկը: Ընդ որում, ըստ տրանսֆերտների ստացման

երկրների՝ գերակայող դեր ունեն ՌԴ-ն (ընդհանուր տրանսֆերտների 45-60 տոկոսը) և ԱՄՆ-ն (ընդհանուր տրանսֆերտների մոտ 15 տոկոսը)¹⁸⁹:

Հայաստանի հաջորդ առանձնահատկությունը՝ ֆինանսական միջնորդության համակարգն է, որտեղ 30 տարում, չնայած այդ շուկայի համար անհրաժեշտ ամբողջ ինստիտուցիոնալ համակարգի առկայությանը¹⁹⁰, չի ձևավորվել ընկերությունների շուկայական կապիտալիզացիայի համակարգը՝ ֆոնդային շուկան¹⁹¹: Ֆոնդային շուկան ժամանակակից տնտեսությունում հանդիսանում է տնտեսության ֆինանսավորման մեծությամբ երկրորդ աղբյուրը՝ բանկային համակարգից հետո:

¹⁸⁸ Արտաքին ֆինանսավորման ծավալները հաշվարկվում են որպես առևտրային հաշվեկշռի գումարներ: Ենթադրվում է, որ եթե հաշվեկշիռը բացասական է, երկիրը համարվում է արտաքին ֆինանսավորում ստացող, եթե այն դրական է, երկիրը արտաքին ֆինանսավորում տրամադրող է:


¹⁸⁹ Ռուսաստանում աշխատում է երկու գործոն՝ մեծաքանակ և աճող սփյուռքը և Հայաստանի ռեզիդենտների սեզոնային միգրացիան Ռուսաստան աշխատելու նպատակով: ԱՄՆ-ում հիմնականում գործում է առաջին գործոնը: Առաջին գործոնը ավելի կայուն բնույթ ունի, իսկ երկրորդը փոփոխական է կախված է ընդունող երկրի տնտեսական վիճակից և աշխատուժի պահանջարկից: Ինչ վերաբերում է 2020թ

մասնավոր տրանսֆերտների աննախադեպ աճին, ապա այն պայմանավորված էր երկրորդ Արցախյան պատերազմով:

¹⁹⁰ Ֆոնդային բորսան, կարգավորող օրենսդրությունը և կառավարող մարմինը՝ ՀՀ կենտրոնական բանկը

¹⁹¹ Ֆոնդային շուկայի հիմնական ցուցանիշը՝ ընկերությունների շուկայական կապիտալիզացիան է, որը 2018թ Ռուսաստանում կազմել էր ՀՆԱ 34,5%, ԱՄՆ-ում՝ 147,9%, Չինաստանում՝ 45,5%, Գերմանիայում՝ 44,3%, բարձր միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 47%, բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 139%: Հայաստանում այդ ցուցանիշը մոտ է 0-ի:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկ. 1.7.1 Մասնավոր տրանսֆերտները Հայաստանում 1994-2021թթ, միլիոն ԱՄՆ դոլար, ընթացիկ գներով

* 2021թ առաջին եռամսյակ

Աղբյուրը՝ ՀՀ վճարային հաշվեկշիռ, Համաշխարհային բանկի WDI տվյալների շրջմարտ

Բացի դրանից ընդլայնողական դրամավարկային քաղաքականության կիրառման դեպքում, որը գերակայում է զարգացած երկրներում 2009թ. սկսած, ֆոնդային շուկան¹⁹² կլանելով ավելցուկ դրամական ռեսուրսները, նպաստում է հակաինֆլյացիոն միտումների ձևավորմանը, որոնք զսպում են սղաճը ընդլայնողական քաղաքականության արդյունքում՝ մինևույն ժամանակ ձեռք բերելով գնալով աճող սպեկուլյատիվ, «փուչիկային» (bubble) բնույթ, ավելացնում են տնտեսական ճգնաժամերի հավանականությունը և ուժգնությունը: Հայաստանում բացակայում է նաև


ֆինանսական միջնորդության «սովերային» համակարգը¹⁹³ ներդրումային բանկերը, հեղջ ֆոնդերը, փոխադարձ ֆոնդերը և այլն: Այսպիսով, ֆինանսական միջնորդության համակարգը Հայաստանում ներկայումս բաղկացած է չորս ենթահամակարգերից՝ բանկային հաստատություններ, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և ինստիտուցիոնալ ներդրողներ¹⁹⁴, որտեղ բանկերն ունեն գերակայող դեր՝ 2019թ. դրությամբ բանկերը ապահովել են ներքին վարկավորման 95.3 տոկոսը:

¹⁹² Անշարժ գույքի և էներգետիկ հումքային ռեսուրսների շուկաների հետ մեկտեղ

¹⁹³ Այն ֆինանսական միջնորդության ինստիտուտները, որոնք մինչև 2009թ չէին կարգավորվում կենտրոնական բանկերի կողմից, քանի որ չունեին ավանդներ ներգրավելու իրավունք:

¹⁹⁴ Ինստիտուցիոնալ ներդրողները Հայաստանում երկուսն են՝ Կենսաթոշակային հիմնադրամները, և Զինծառայողների ապահովագրման հիմնադրամը որոնք մեր ունեցած տեղեկություններով տնտեսության մասնավոր հատվածում ներդրումներ չեն իրականացնում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկ. 1.7.2 Հայաստանի ֆինանսական համակարգը 1994-2020թթ, հիմնական ցուցանիշները
Աղբյուրը՝ ՀՀ ազգային հաշիվներ, Համաշխարհային բանկի WDI տվյալների շտեմարան

Ինչպես վկայում է Նկ. 1.7.2-ը, ֆինանսական միջնորդության համակարգի զարգացումը և հետևաբար դերը տնտեսության և տնտեսական աճի մեջ 1994-2020թթ.-ին բաժանվում է 2 մասի՝ 1994-2003թթ.՝ կայացման ժամանակահատված, որտեղ համակարգի զարգացման տեմպերը էականորեն ավելի ցածր էին ինչպես ընդհանուր տնտեսության այնպես էլ միջազգային ֆինանսական համակարգի զարգացման տեմպերից, և 2004-2020թթ., երբ համակարգը զարգանում էր ավելի արագ քան տնտեսությունը և միջազգային տնտեսական համակարգը և աստիճանաբար դարձավ տնտեսության ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Այսպես՝ 2003թ.-ին ֆինանսական միջնորդության համակարգի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 1.4%, մասնավոր հատվածի վարկավորումը՝ ՀՆԱ 5.6%-ը, որը կազմել է աշխարհի միջինի 7.5% համեմատ 1 շնչի ՀՆԱ աշխարհի միջինի 15.2% հետ: Արդեն 2019թ. ֆինանսական միջնորդության համակարգի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 6%, (2020 ճգնաժամային տարում՝


6.7%) մասնավոր հատվածի վարկավորումը՝ ՀՆԱ 57.1%, (2020 թ.՝ 67.1%), որը կազմել է աշխարհի միջինի 63.4% համեմատ 1 շնչի ՀՆԱ աշխարհի միջինի 40.4% հետ:

Ինչպես վկայում է Նկ. 1.7.3-ը, 2004թ.-ին սկսել են առաջանցիկ աճել տնտեսության ոլորտային վարկավորման ծավալները՝ արդյունաբերությանը (ներառյալ էներգետիկան)՝ 2004թ. 8.3% մինչև 52.8% 2020թ., գյուղատնտեսությանը՝ 2 տոկոսից մինչև 27.2 տոկոս, շինարարությանը՝ 1.8 տոկոսից մինչև 62.4 տոկոս, տրանսպորտ և կապը՝ 0.9 տոկոսից մինչև 36.8 տոկոս, առևտուրը՝ 14.1 տոկոսից մինչև 80.2 տոկոս, սպասարկման ոլորտը¹⁹⁵՝ 1.6 տոկոսից մինչև 11.9 տոկոս: Մինչև 2004թ. համակարգը զբաղվում էր բացառապես առաջարկի ֆինանսավորմամբ: 2004թ.-ից սկսեցին օգտագործել նաև պահանջարկի ֆինանսավորմանն ուղղված սպառողական, իսկ 2005թ.-ից՝ նաև հիփոթեքային վարկեր: Սպառողական վարկերի ծավալը նոմինալ արտահայտությամբ 2004-2020թթ.-ին աճել է 23.6 անգամ, իսկ հիփոթեքային վարկերինը

¹⁹⁵ Սպասարկման ոլորտը՝ տնտեսության բոլոր այլ ճյուղերը՝ որոնք նկարում առանձին ներկայացված չեն

2005-2020թթ.¹⁶⁶ 43.3 անգամ¹⁹⁶: 2004թ. սպառողական վարկերը կազմել են տնային տնտեսությունների վերջնական սպառման 2.4%, 2019թ.¹ 16.9%, իսկ 2020թ.¹ 20.1%: Իր հերթին

հիփոթեքային վարկերը 2005թ.-ին կազմել են շինարարության ոլորտի ավելացված արժեքի 2.5%¹ հասնելով 2019թ. 86.4%, իսկ 2020թ.¹ 111.5%:



Նկ. 1.7.3 Հայաստանի տնտեսության վարկավորման կառուցվածքը 2000-2020թթ.*, ընթացիկ գներ

*Արդյունաբերություն, առևտուր, շինարարություն, գյուղատնտեսություն (ծախ առանցք), տրանսպորտ և կապ (ծախ առանցք), սպասարկման ոլորտ (ծախ առանցք)¹ տրոկոսներով ոլորտի ավելացված արժեքի նկատմամբ, սպառողական վարկեր (ծախ առանցք)¹ տրոկոսներով տնային տնտեսությունների վերջնական սպառման նկատմամբ, հիփոթեքային վարկեր¹ տրոկոսներով շինարարության ավելացված արժեքի նկատմամբ
Աղբյուրը՝ ՀՀ ազգային հաշիվներ, ՀՀ կենտրոնական բանկի տվյալների շտեմարան

Ֆինանսական միջնորդության համակարգի և հետևաբար տնտեսության դոլարայնացման մակարդակն ընդհանուր առմամբ կախված է ավելացված արժեքի ներքին շղթաների խորությունից և արժույթային փոխարժեքի կայունությունից՝ լինելով շատ բարձր 2000-ականների սկզբին, նվազեց 2000թ. 82.6% -ից հասնելով մինչև 38.5% 2008թ.-ին, հետագայում աճելով և կազմելով 50% 2020 ճգնաժամային տարում: Այսպիսով ֆինանսական համակարգի դոլարայնացման աստիճանն ավելի ցածր է, երբ տնտեսության զարգացումը տեղի է ունենում հիմնականում non-tradable ապրանքների և

ծառայությունների հաշվին և ավելի բարձր է, երբ տնտեսության զարգացումը տեղի է ունենում հիմնականում tradable ապրանքների և ծառայությունների հաշվին¹⁹⁷:

Հայաստանի ֆինանսական միջնորդության համակարգի հաջորդ առանձնահատկությունը՝ «թանկ» վարկերն են: Ինչպես վկայում է Նկ. 1.7.4-ը, վարկավորման տոկոսները Հայաստանում 2009թ.-ից սկսած ավելի բարձր էին քան Վրաստանում¹⁹⁸, և նկատելիորեն ավելի բարձր քան Ռուսաստանում, ԱՄՆ-ում և

¹⁹⁶ Համամատողության համար՝ ընդհանուր վարկավորման ծավալը աճել է 2004- 2020թթ.¹ 28,5 անգամ, իսկ 2005-2020թ.¹ 20,8 անգամ: Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների վերջնական սպառմանը, այն 2004-2020թթ ընթացքում աճել է ընդհամենը 2,8 անգամ:


¹⁹⁷ non-tradables՝ շինարարության և ծառայությունների ոլորտի արտադրանքը, որը սպառվում է երկրի ներսում,

tradables՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների արտադրանքը, որը կարող է արտահանվել:

¹⁹⁸ Տնտեսական բնութագրերը, ներառյալ սղաճը, արտաքին ֆինանսավորումը, տնտեսության կառուցվածքը, զարգացման տեմպերը Վրաստանում համեմատելի են Հայաստանի հետ

Չինաստանում¹⁹⁹: Չնայած, որ Հայաստանում վարկավորման տոկոսադրույքները 20 տարում նվազել են մոտ 3 անգամ, ֆինանսական համակարգի միջոցով տնտեսության

զարգացման հնարավորություններն ավելի սահմանափակ են, իսկ ձևավորվող պարտքային պարտավորությունները՝ ավելի բարձր քան նկարում նշված և շատ այլ երկրներում:



Նկ. 1.7.4 Տնտեսության վարկավորման նմինալ տոկոսները 2000-2020թթ.

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի WDI տվյալների շտեմարան

Հարաբերական «թանկ» վարկերը հիմնականում բացատրվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող հակաինֆլյացիոն զսպողական դրամավարկային քաղաքականությամբ, որը անփոփոխ էր ողջ ժամանակահատվածում, բացառությամբ ճգնաժամային 2009 և 2020 թվականները, և հիմնված էր մակրոտնտեսական կայունությունը պահպանելու վրա: Կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը 2009 և 2020 թվականներին կրում էր հակացիկլիկ բնույթ՝ ծախսերի ավելացում հարկերի կրճատման պայմաններում: Այդ քաղաքականությունների տարբերությունները 2009թ.-ից սկսած բերեցին նրան, որ Հայաստանում ընդլայնողական վարկային քաղաքականությունն աճող ծավալներով սկսվեց վարվել կառավարության կողմից ֆինանսական միջնորդության համակարգի արագացված զարգացման խրախուսման միջոցով՝ հիմնականում հիփոթեքային և գյուղատնտեսական վարկերի

տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով, որը հնարավորություն է տալիս էականորեն ավելացնել վարկավորման ծավալներն առանց տոկոսադրույքների համապատասխան իջեցման:

Ֆինանսական միջնորդության համակարգի այդպիսի զարգացումները, մասնավորապես անշարժ գույքի շուկայի վերջին մի քանի տարվա ինտենսիվ սուբսիդավորումը, այդ շուկայում «փուչիկի» առաջացման և հետագա ճգնաժամի վտանգ են առաջացնում: 2018-2020թթ.-ին Երևանում անշարժ գույքի միջին շուկայական գները աճել են 32.2 տոկոսով²⁰⁰, իսկ 2020թ.-ին դրանք աճել են 7.5%, ի տարբերություն 2009թ.-ի, երբ դրանք նվազել էին մինչև 265.8 հազար դրամ 2008թ. 296.3 հազար դրամի համեմատ: Համաձայն որոշ հետազոտությունների²⁰¹, վարկային միջոցների հաշվին ձեռք բերվող ակտիվների գների առաջանցիկ աճը վկայում է «փուչիկների» ձևավորման և հետագա հնարավոր ճգնաժամի մասին այդ ոլորտում:

¹⁹⁹ Ռուսաստանը և Չինաստանը 2000-2019թթ ունեցել են առևտրային հաշվեկշռի նկատելի ավելցուկներ, ԱՄՆ-ն աշխարհում ամենամեծ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, սղաճը Ռուսաստանում ամենաբարձրն էր մնացած 4 երկրների համեմատ, ԱՄՆ-ում և Չինաստանում՝ ամենացածրը:

²⁰⁰ Համեմատության համար ՀՆԱ նմինալ աճը կազմել է 11,1 տոկոս

²⁰¹ Տես՝ Алан Гринспейн, Карта и территория, Москва, 2015, Рей Далио, Большие долговые кризисы. Принципы преодоления, Москва 2021

Անհանգստացնող է նաև վիճակը սպառողական վարկերի ոլորտում, որտեղ տնային տնտեսությունների պարտքային բեռը ֆինանսական համակարգին 2020թ.-ին կազմել էր 929 միլիարդ դրամ²⁰² կամ ամեն մի աշխատանքային տարիքում գտնվող քաղաքացու համար՝ 462.7 հազար դրամ, իսկ տոկոսները ներառյալ՝ 555.3 հազար դրամ՝ կամ 2.92 միջին ամսեկան աշխատավարձ:

1994-2008թթ. և 2010-2019թթ. տնտեսական աճը և այն պայմանավորող գործոնները

1994-2008թթ.-ին կամ 14 տարի շարունակ Հայաստանում տեղի եր ունենում անընդմեջ տնտեսական աճ միջին տարեկան մոտ 9 տոկոսի չափով, որը նկատելիորեն ավելի բարձր էր միջին համաշխարհային աճի տեմպերից՝ այդ ժամանակաշրջանի համար մոտ 3.3%²⁰⁴, որը և հնարավորություն տվեց վերականգնել տնտեսության 1990թ. մակարդակը 2004թ. սկսած և ավելացնել ՀՆԱ-ն մոտ 3.5 անգամ²⁰⁵, իսկ 1 շնչին ՀՆԱ-ն մոտ 4.1 անգամ:

Սակայն 2009թ.-ին²⁰⁶ Հայաստան հասավ ԱՄՆ-ից ծագած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը Հայաստանի տնտեսության վրա շատ ավելի մեծ ազդեցություն ունեցավ՝ Հայաստանում ՀՆԱ-ն կրճատվեց 14.1%²⁰⁷, այդ կրճատման մոտ 55% պայմանավորված էր շինարարության ծավալների կրճատմամբ 41,6%-ով: Ծգնաժամի պատճառով կրճատման ենթարկված այլ ոլորտներն էին արդյունաբերությունը՝ մոտ 6%, առևտուրը՝ 3.6%, ծառայությունները՝ 21.8%:

Հիփոթեքային վարկերը ներառելով պարտքային բեռը կկազմի 1410.2 միլիարդ դրամ կամ 2020թ. տնային տնտեսությունների վերջնական սպառման 30.5 տոկոսը, ՀՆԱ 22.8 տոկոսը, իսկ տոկոսները ներառյալ՝ 35.5, կամ ՀՆԱ 26.6 տոկոսը: Անհանգստացնողն այստեղ ոչ այնքան պարտքի չափերն են²⁰³, որքան աճի տեմպերը և սպասարկման բարձր արժեքը:

Ծառայությունների գրեթե ամբողջ կրճատումը տեղի է ունեցել տրանսպորտի և անշարժ գույքի ոլորտներում, որից առաջինը պայմանավորված էր արտաքին ապրանքաշրջանառության (ներմուծումը կրճատվել էր 19,2%՝ արտահանումը՝ 13,1%) կրճատմամբ, ինչպես նաև տնտեսական ակտիվության ընդհանուր անկմամբ: Երկրորդը՝ բնութագրիչ է ցանկացած տնտեսական ճգնաժամի համար, երբ տնօրինվող ֆինանսական ռեսուրսների կրճատման պարագայում մարդիկ սկսում են խնայել և փոխվում են տնային տնտեսությունների ծախսային գերակայությունները՝ հոգուտ սննդամթերքի և հիմնական ծառայությունների և ի վնաս երկարաժամկետ սպառման առարկաների և ինվեստիցիոն բարիքների, ներառյալ անշարժ գույքը:

Հատկանշական է, որ այն պարագայում, երբ ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում ճգնաժամը սկսել է անշարժ գույքի ֆինանսավորման շուկայում²⁰⁸ և հետագայում

²⁰² Առանց տոկոսադրույքերի, որոնք սպառողական վարկերի համար կազմում են 16-20 տոկոս

²⁰³ 2019 դրությամբ տնային տնտեսությունների պարտքը ֆինանսական համակարգին կազմել է 1 274,7 միլիարդ դրամ կամ ՀՆԱ 19,5 տոկոսը: Այդ ցուցանիշը դեռ շատ հեռու է ԱՄՆ ցուցանիշներից՝ 79,35% ՀՆԱ 2020թ վերջին, մոտ է Ռուսաստանի ցուցանիշին՝ ՀՆԱ 22,1 տոկոս 2020թ վերջին:

²⁰⁴ Հայաստանը զարգանում էր ավելի արագ քան համաշխարհային տնտեսությունը բոլոր նշված ժամանակահատվածներում՝ 1994-1997թթ՝ 5,35% համաշխարհային 3,27% համեմատ, 1998-2003թթ՝ 10,6%՝ 2,87% համեմատ և 2004-2008թթ՝ 11,6%՝ 3,77% համեմատ:

²⁰⁵ Ծգնաժամի վերջին տարվա՝ 1993թ նկատմամբ

²⁰⁶ Ավելի սուղ 2008թ 4-րդ եռամսյակից երբ Հայաստանի տնտեսությունում գրանցվեց 1,2% անկում 2007թ 4 եռամսյակի նկատմամբ, և 12,2% նախորդ եռամսյակի

նկատմամբ՝ ընդ որում շինարարությունում այդ անկումը կազմեց 12,1% և 31,6% համապատասխանաբար:

²⁰⁷ Համաշխարհային տնտեսությունը 2009թ կրճատվեց 1,68%, իսկ ԱՄՆ-ում որտեղից և ծագել էր ճգնաժամը, այն տևեց 2 տարի՝ 2008թ ՀՆԱ-ն կրճատվեց 0,13%, իսկ 2009թ՝ 2,53%

²⁰⁸ Հայտնի է, որ ճգնաժամի հիմնական պատճառը՝ ԱՄՆ-ում անշարժ գույքի ձեռքբերման արհեստական խրախուսումն էր (subprime mortgage crisis), որը պայմանավորված էր ներդրումային գործունեության ապակարգավորմամբ, և դրանից բխող գնալով ավելացող քանակով տնային տնտեսությունների ներգրավումը անշարժ գույքի շուկա, որոնցից նկատելի և աճող մասը վճարունակ չէին: Ամբողջ գործընթացը հիմնված էր անշարժ գույքի գների առաջանցիկ աճի սպասումների վրա: Անվճարունակ վարկատուների

տարածվել ֆինանսական միջնորդության համակարգի, իսկ հետո նաև տնտեսության իրական հատվածների վրա, Հայաստանում ֆինանսական ճգնաժամ չի եղել այն պարզ պատճառով, որ չի եղել հիփոթեքային մասսայական վարկավորում²⁰⁹: 2008թ. հիփոթեքային վարկավորումը ծածկում էր շինարարության ավելացված արժեքի 9.2%, 2019թ.՝ 86.4%, 2020թ.՝ արդեն 111.5%:

Ինչ վերաբերում է պետական գործողություններին 2009թ. ճգնաժամի օրոք, ապա քանի որ Հայաստանում ֆինանսական ճգնաժամ, ինչպես նաև համակարգաստեղծ բիզնեսների սնանկացման վտանգ չի եղել, քանակական թուլացման (quantitative easing) կամ ձեռք բերման (bail out)²¹⁰ քաղաքականությունները չեն կիրառվել: Կիրառվել են ճգնաժամի համար անխուսափելի պետական եկամուտների նվազումից և ծախսերի ավելացման անհրաժեշտությունից բխող բյուջեի պակասուրդի ավելացման գործողությունները (2009թ պետական բյուջեի պակասուրդը կազմեց ՀՆԱ 7.5% 2008թ 0.7% համեմատ), ինչպես նաև կիրառվել են հասցեական միջոցառումներ առանձին տուժած ոլորտներին աջակցելու նպատակով:

Տնտեսական աճը Հայաստանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում վերականգնվեց արդեն 2010թ.-ին²¹¹, իսկ մինչճգնաժամային 2008թ. մակարդակին հասնելու համար Հայաստանին պահանջվեց 4 տարի:

Հատկանշական է, որ 2009թ.-ին տնտեսական ճգնաժամից տուժեցին

Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտները, իսկ ճգնաժամի հաղթահարման արդյունքում ձևավորվեց տնտեսության նոր կառուցվածք՝ զարգացման նոր շարժիչ ուժերով:

Ինչպես երևում Աղյուսակ 1.7.2-ից, 1994-1997թթ.-ին վերականգնողական աճը հիմնականում պայմանավորված էր վերադարձով նորմալ կենսապայմաններին, առանձնապես կապված չէր ներդրումների ծավալի ավելացման հետ և հիմնվում էր արդեն գոյություն ունեցող հզորությունների վերագործարկման վրա, իսկ ներդրումները հիմնականում իրագործվում էին արտադրական ենթակառուցվածքների վերագործարկման համար (օրինակ՝ ՀԱԷԿ-ի վերագործարկումը 1996թ.): Զուտ հարկերի բարձր տեսակարար կշիռը տնտեսական աճի մեջ պայմանավորված էր ներմուծումից ԱԱՀ սահմանում հարկելով սկսած 1997թ.-ից :

Վերականգնողական աճի երկրորդ փուլում (1998-2003թթ) արդեն հայտնվում է նշանակալի և գնալով աճող ներդրումային բաղադրիչը, շինարարությունը սկսում է դառնալ երկրի զարգացման հիմնական շարժիչ ուժը՝ գերազանցելով արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը և առևտրին և զիջելով միայն ծառայությունների ոլորտին (տես՝ Աղյուսակ 1.7.3, որը ցույց է տալիս ամեն մի ոլորտի ավանդը գումարային տնտեսական աճի մեջ):

քանակի ավելացման պարզայում գները սկսեցին նվազել, որը և դրեց ֆինանսական ճգնաժամի հիմքերը:

²⁰⁹ Հայաստանում 2009թ ֆինանսական միջնորդության համակարգի ավելացված արժեքը կրճատվեց 1,6 տոկոսով, վարկավորման ծավալները աճեցին մոտ 8 միլիարդ դրամով, իսկ վարկավորման տոկոսները 2008թ 17% հասան 18,8%:

²¹⁰ Quantitative easing՝ երբ Կենտրոնական բանկը ձեռք է բերում մասնավոր ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերը առանց դրանց

իրական տոկոսադրույքները հաշվի առնելով, տրամադրելով դրանց համապատասխան ֆինանսական միջոցներ, bail out՝ համապատասխան ֆինանսական կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնեմասի ձեռք բերում՝ դրա դիմաց ֆինանսավորման հատկացմամբ կազմակերպության կողմից դրա հետագա ետ գնման պայմանով:

²¹¹ Հայաստանում՝ 2,2%, համաշխարհային տնտեսության մեջ՝ 4,3%:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Աղյուսակ 1.7.2 Տնտեսական աճի ոլորտային աղբյուրները Հայաստանում 1994-2019թթ, համադրելի գներով՝ միլիոն 2019 թ ԱՄՆ դոլար

	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
Գումարային տնտեսական աճ որից՝	674.6	2360.1	4342.5	-1449.1	1632.6	1586.3	1589.7	10736.6
Արդյունաբերություն	109.4	382.8	135.3	-87.0	462.1	447.5	363.7	1813.7
<i>Արդյունահանող</i>	3.6	56.6	22.1	6.75	81.25	186.0	15.5	371.9
<i>Մշակող</i>	56.6	300.1	60.0	-39.6	314.9	260.5	324.2	1276.8
Էներգետիկա	49.2	26.0	53.2	-54.2	65.9	0.95	24.1	165.2
Գյուղատնտեսություն	29.8	257.7	436.0	82.2	189.3	137.9	-219.3	913.6
Շինարարություն	49.4	500.7	1200.8	-798	-134.2	-180.3	40.6	679.0
Առևտուր	203.6	306.0	386.6	-52.3	144.8	216.7	255.0	1460.5
Ծառայություններ	114.9	626.2	1541.9	-327.9	636.5	930.7	948.1	4470.3
Ավելացված արժեք	507.1	2073.4	3700.5	-1182.9	1298.4	1552.5	1388.3	9337.3
Զուտ հարկեր	167.5	286.7	642.0	-266.2	334.2	33.8	201.4	1399.3

Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրություն

Աղյուսակ 1.7.3 Տնտեսական աճի ոլորտային աղբյուրները Հայաստանում 1994-2019թթ, տոկոսներով

	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
Գումարային տնտեսական աճ որից՝	100.0	100.0	100.0	-100.0	100.0	100.0	100.0	100.0
Արդյունաբերություն	16.2	16.2	3.1	-6.0	28.3	28.2	22.9	16.9
<i>Արդյունահանող</i>	0.5	2.4	0.5	0.5	5.0	11.7	1.0	3.5
<i>Մշակող</i>	8.4	12.7	1.4	-2.7	19.3	16.4	20.4	11.9
Էներգետիկա	7.3	1.1	1.2	-3.7	4.0	0.2	1.5	1.5
Գյուղատնտեսություն	4.4	10.9	10.0	5.7	11.6	8.7	-13.8	8.5
Շինարարություն	7.3	21.2	27.7	-55.1	-8.2	-11.4	2.6	6.3
Առևտուր	30.2	13.0	8.9	-3.6	8.9	13.7	16.0	13.6
Ծառայություններ	17.0	26.5	35.5	-22.6	39.0	58.7	59.6	41.6
Ավելացված արժեք	75.2	87.9	85.2	-81.6	79.5	97.9	87.3	87.0
Զուտ հարկեր	24.8	12.1	14.8	-18.4	20.5	2.1	12.7	13.0

Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրություն

2004-2008թթ.-ին տնտեսության կառուցվածքը և տնտեսական աճի հիմնական աղբյուրները կտրուկ փոխվեցին՝ շինարարությունը և ծառայությունները միասին ապահովեցին գումարային տնտեսական աճի 63.2%՝ նախորդ ժամանակահատվածի 47.7% համեմատ, իսկ արդյունաբերության և գյուղատնտեսության գումարային ավանդը կազմեց ընդհամենը 13.1% նախորդ ժամանակահատվածի 27.1% համեմատ:

Շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1994թ.-ին հասավ 5.8%, 2008թ.-ին մինչև 18.7%, արդյունաբերությանը՝ 26.1%-ից իջավ մինչև 13.2%, իսկ գյուղատնտեսությանը՝ 22.6%-ից մինչև 13.6%: Պետք է նշել, որ այդ ժամանակահատվածում ապահովվեց երկրի ամենաարագ զարգացումը, որի արդյունքում 4 տարվա ընթացքում ՀՆԱ-ն ավելացավ մոտ 2 անգամ:

Երկրի զարգացման այդ մոդելը, որտեղ գերակայում էին արտահանման առարկա չարտադրող ոլորտները (non-tradeable) արտահանման կամ ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտների նկատմամբ, և որը հիմնված էր անշարժ գույքի գների աճի դրական սպասումների վրա²¹², զոհ գնաց 2008-2009թթ. ֆինանսական ճգնաժամին, որի ընթացքում, ինչպես սովորաբար տեղի է ունենում համաշխարհային ճգնաժամերի ժամանակ, ներդրումները զարգացող շուկաներում, որոնց թվում է նաև Հայաստանը, կտրուկ կրճատվում են դիսկայնության աճի պատճառով (ներդրումների փախուստ):

Զարգացման այն շղթան, որը դրական սպասումների ժամանակ ավելացնում էր ներդրումների ծավալը և նպաստում հիմնական զարգացող ոլորտի (տվյալ դեպքում՝ շինարարությանը) և դրան սպասարկող ոլորտների զարգացմանը՝ շինանյութերի, փայտամշակման, մետաղների արտադրության և այլն, ինչպես դրա հետ կապված ներմուծման աճին, սպասումները փոխվելու դեպքում սկսում է աշխատել հակառակ ուղղությամբ, որով և պայմանավորված էին այն ոլորտային կրճատումները, որոնք տեղի ունեցան 2009թ.-ին հիմնականում շինարարության աննախադեպ անկման պատճառով: Եվ որքանով ավելի ուժեղ էր այդ ոլորտների կապը հիմնական զարգացող ոլորտի հետ, այնքան բարձր էր կրճատման չափը:

2010-2013թթ. ճգնաժամից վերականգման շրջանն էր, որում անհրաժեշտաբար կրճատվեցին աճի տեմպերը ներդրումների փախուստի պատճառով և սկսվեց ձևավորվել տնտեսության նոր կառուցվածք, որտեղ ծառայությունները մնացին զարգացման հիմնական շարժիչ ուժը, որի հետ մեկտեղ շարժիչ ուժեր սկսեցին դառնալ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը՝

ավելացնելով տնտեսության արտահանման ներուժը՝ տնտեսությունը սկսեց ձեռք բերել որոշակի արտահանման ուղղություն, իսկ շինարարությունը շարունակեց կրճատվել:

2014-2017թթ.-ին տնտեսության արտահանման ուղղությունը պահպանվեց, սակայն ավելացավ ծառայությունների դերը որպես տնտեսական աճի հիմնական աղբյուր, և դրա ավանդը դարձավ ավելի մեծ, քան մնացած այլ ոլորտների գումարային ավանդը:

Ծառայությունների դերը, որպես տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ, ավելի խորացավ 2018-2019թթ.-ին, շարունակվեց նաև գյուղատնտեսության անկումը, որը սկսել էր դեռ 2016թ.-ին և պայմանավորված էր գյուղատնտեսության հարաբերական շահութաբերության անընդհատ կրճատմամբ և գյուղատնտեսությանը օժանդակող արդյունավետ համակարգի բացակայությամբ:

Աղյուսակ 1.7.4-ը և Աղյուսակ 1.7.5-ը ներկայացնում են տնտեսական աճի/ճգնաժամի աղբյուրները կախված դրանց տեղից՝ ներքին օգտագործում կամ արտահանում, ինչպես նաև տնտեսության ֆինանսական կապերը աճի/ճգնաժամի ընթացքում արտաքին աշխարհի հետ:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակները 1994թ.-ից սկսած Հայաստանը խորը կախվածություն է ունեցել արտաքին ֆինանսավորումից, որի հաշվին միջինում ֆինանսավորվել է տնտեսական աճի կեսը: Կախվածությունն արտաքին ֆինանսավորումից առավելագույնն էր 2018-2019թթ.-ին, երբ արտաքին ֆինանսավորման աճը գերազանցեց ՀՆԱ աճը 11.7%, նվազագույնն էր 2004-2008թթ.-ին, երբ արտաքին ֆինանսավորման հաշվին ապահովվել էր տնտեսության աճի մոտ 20%: 2014-2017թթ.-ին արտաքին ֆինանսավորման հաշվին ապահովվել էր տնտեսական աճի 26.6%:

²¹² Երևանում անշարժ գույքի միջին շուկայական գները 2004թ կազմել են 122,5 հազար դրամ, իսկ 2008թ՝ 296,3

հազար դրամ, նվազելով 2009թ մինչև 265,8 հազար դրամ: Միևնույն ժամանակ գործարքների քանակը Երեվանում 2009թ նվազել է 23,5% 2008թ համեմատ:

Աղյուսակ 1.7.4 Տնտեսական աճի ձևավորման աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ, համադրելի գներով՝ միլիոն 2019 թ ԱՄՆ դոլար

	1991-1993	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
ՀՆԱ փոփոխություն	-3288	674,5	2360	4342,5	-1449	1633	1586	1590	10737
Վերջնական սպառում, տնային տնտեսություններ	-1817	791	1622	2765,1	-359	1295	313	2202	8630
Վերջնական սպառում, պետություն	62	6,5	183	479,9	-14,2	195	12,6	112	1118
Համախառն կուտակում	-42	388	665,5	2240	-1109	-322	21	441	2288
Ընդհամենը՝ ներքին սպառում	-1797	1186	2470	5484	-1482	1169	347	2755	12035
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	-1129	-324	1400	-242	-195	1187	1655	610	4092
Արտաքին Ֆինանսավորում	-362	-187,5	-1510	-900	228	-723	-416	-1775	-5391

Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրություն

Աղյուսակ 1.7.5 Տնտեսական աճի ձևավորման աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ, տոկոսներով

	1991-1993	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
ՀՆԱ փոփոխություն	-100.0	100.0	100.0	100.0	-100.0	100.0	100.0	100.0	100.0
Վերջնական սպառում, տնային տնտեսություններ	-55.3	117.3	68.7	63.7	-24.8	79.3	19.8	138.5	80.4
Վերջնական սպառում, պետություն	1.9	1.0	7.7	11.1	-1.0	12.0	0.8	7.1	10.4
Համախառն կուտակում	-1.3	57.6	28.2	51.6	-76.6	-19.7	1.3	27.7	21.3
Ընդհամենը՝ ներքին սպառում	-54.7	175.8	104.7	126.3	-102.3	71.6	21.9	173.3	112.1
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	-34.3	-48.0	59.3	-5.6	-13.4	72.7	104.3	38.4	38.1
Արտաքին Ֆինանսավորում	-11.0	-27.8	-64.0	-20.7	15.7	-44.3	-26.2	-111.7	-50.2

Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրություն

Արտահանումը հանդիսացել է տնտեսական աճի նշանակալի աղբյուր 1998-2003թթ., երբ արտահանման հաշվին ապահովվել է տնտեսական աճի մոտ 1/3 և 2014-2017թթ., երբ ամբողջ տնտեսական աճն ապահովվել է

արտահանման հաշվին: 2004-2008թթ. համախառն կուտակումն ուներ առավելագույն ավանդ տնտեսական աճի մեջ և դա այդ ժամանակահատվածում ապահովեց տնտեսական աճի երկնիշ ցուցանիշներ:

2020թ. տնտեսական ճգնաժամը և տնտեսության կառուցվածքային փոփոխությունները

2020թ տնտեսական ճգնաժամը 2009թ. ճգնաժամի պես ուներ համաշխարհային բնույթ, բայց արհեստական ծագում և ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, մեծամասամբ պայմանավորված էր տնտեսական գործունեության սահմանափա-

կումներով (lockdowns), մասնավորապես առևտրում և մարդկային շփում պահանջող սպասարկման ոլորտներում՝ ուղևորափոխադրումներում, հյուրանոցային և ռեստորանային ոլորտներում և այլ: 2020թ. երկրորդ կեսից, երբ այդ սահմանափակումները սկսեցին թուլացվել,

ճգնաժամի խորությունը նվազեց և 2021թ.-ին դրանք հիմնականում վերացնելուց հետո ամբողջ աշխարհում և նաև Հայաստանում սկսվեց վերականգնողական տնտեսական աճը:

Աղյուսակ 1.7.6-ը ցույց է տալիս, որ 2020թ. ճգնաժամի խորությունը նկատելիորեն ավելի ցածր էր քան 2009թ.-ին, քանի որ 2020թ.-ին չկար շինարարության պես տնտեսության հիմնական շարժիչ ուժը, որը 2004-2008թթ.-ին

ապահովել էր ընդհանուր տնտեսական աճի 27.7 տոկոսը և պատասխանատու էր 2009թ.-ի տնտեսական անկման 55.1 տոկոսի համար: Մյուս կողմից 2020թ. ճգնաժամով պայմանավորված տնտեսության ապագա կառուցվածքային և տնտեսական աճի շարժիչ ուժերի փոփոխությունները նույնպես ավելի թույլ արտահայտված կլինեն քան եղել են 2010-2019թթ.-ին:

Աղյուսակ 1.7.6 2009թ. և 2020թ. ճգնաժամերի ոլորտային բնութագրերը՝ ճյուղային կառուցվածք

	2009	2020	2021*		2009	2020	2021*
ՀՆԱ	-14.1	-7.4	5.0**	Կացություն ու հանրային սնունդ	23.5	-43.3	62.5***
Գյուղատնտեսություն	5.9	-4.1	6.8***	Մշակույթ, զվարճություն, հանգիստ	3.4	-21.3	-36.1***
Արդյունաբերություն	-6.4	-1.7	2.1***	Կրթություն	2.2	1.3	6.9(1)
<i>Արդյունահանող</i>	6.3	8.4	7.2***	Առողջապահություն	-5.4	6.9	42.6(1)
<i>Մշակող</i>	-5	-3.6	-1.1***	Անշարժ գույքի հետ կապված	-20.7	-14.5	18.9(1)
Էներգետիկա	-12	-1.2		Տեղեկատվություն ու կապ	10.9	8.4	12.7***
Շինարարություն	-41.6	-6.7	10.8***	Տրանսպորտ	-28.3	-34.4	7.3***
Առևտուր	-5.3	-13.2	8.0****	Ֆինանսական ու ապահովագրական գործունեություն	-1.6	5.4	3.1***

* 2021թ. հունվար-հունիս, ** տնտեսական ակտիվության ցուցանիշ *** համախառն թողարկում
 **** ապրանքաշրջանառություն (1) վճարովի ծառայություններ
 Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների և 2021թ. ընթացիկ վիճակագրություն

2020թ. ճգնաժամի արդյունքում տնտեսության 4 ամենաարագ զարգացող ոլորտներից՝ արդյունահանող արդյունաբերություն (միջին տարեկան աճը 2010-2019թթ՝ 14.5%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ՝ 1.69%, 2019թ՝ 3.25%), ֆինանսական միջնորդության համակարգ (միջին տարեկան աճը 2010-2019թթ՝ 13.9%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ՝ 2.75%, 2019թ՝ 6%), կացություն և հանրային սնունդ (միջին տարեկան աճը 2010-2019թթ՝ 15.4%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ՝ 0.8%, 2019թ՝ 1.89%) և մշակույթ, զվարճություն, հանգիստ (միջին տարեկան աճը 2010-2019թթ՝ 27%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ՝ 0.92%, 2019թ՝ 5.55%), տուժել են երկուսը՝ կացություն և հանրային սնունդ ու մշակույթ, զվարճություն, հանգիստ: Առաջինը, դատելով 2021թ. առաջին

կիսամյակի արդյունքներից, ունի վերականգման ներուժ, որը կախված է տնային տնտեսությունների համախառն սպառման ծավալների աճից (հասարակական սնունդ) և արտագնա ու ներքին զբոսաշրջության ծավալների ավելացումից (կացության ծառայություններ): Երկրորդը, դատելով 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներից, ամենայն հավանականությամբ կդադարի տնտեսության շարժիչ ուժը լինելուց:

Այդ ոլորտների գումարային ավանդը 2010-2019թթ. տնտեսական աճին կազմել է 37.6%, իսկ միայն մշակույթ, զվարճություն, հանգիստ ոլորտինը՝ 14.6%: Մյուս կողմից նշված երկու ոլորտների տնտեսական անկումը 2020թ. պատասխանատու է այդ տարվա տնտեսական անկման 26.2% համար:

Աղյուսակ 1.7.7 2009թ և 2020թ ճգնաժամերի ՀՆԱ օգտագործման բնութագրերը

	2009	2020		2009	2020
ՀՆԱ	-14.1	-7.4	Կապիտալի համախառն կուտակում	-25.4	-8.6
Համախառն սպառում, որից	-4.0	-10.1	Ապրանքների և ծառայությունների արտահանում, որից	-10.4	-32.4
Տնային տնտեսությունների	-4.3	-13.8	Ապրանքների արտահանում	-34	-3.9
Պետական հիմնարկների, այդ թվում	-1.2	15.2	Ծառայությունների արտահանում	33.5	-62.1
Անհատական պահանջմունքներ բավարարող	-2.7	8.7	Ապրանքների և ծառայությունների ներմուծում, որից	-19.2	-31.7
Կոլեկտիվ պահանջմունքներ բավարարող	2.6	25.6	Ապրանքների ներմուծում	11.7	-17.7
NGO ծառայությունները տնային տնտեսությունների	27.7	-24.6	Ծառայությունների ներմուծում	-43.2	-61.5
Համախառն կուտակում, որից	-30.9	-9.6			

Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվների և վճարային հաշվեկշռի վիճակագրություն

Այսպիսով, 2020թ. ճգնաժամի արդյունքում հավանական է, որ տնտեսության կառուցվածքը, ի տարբերություն 2009թ. ճգնաժամի արդյունքների էական փոփոխությունների չի ենթարկվի, բայց կստանա ավելի հավասարակշռված բնույթ, ունենալով մի շարք զարգացման բևեռներ, որոնցից ոչ մեկը չի ունենա գերակայող դեր, ինչպես շինարարությունը 2004-2008թթ.-ին: Վերը նշված աճող ոլորտներին, ելնելով 2020 և 2021 թվականների առաջին կիսամյակի արդյունքներից, կարելի է հավելել տեղեկատվության ու կապի ոլորտը (միջին տարեկան աճը 2010-2020թթ.՝ 6.8%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ.՝ 2.64%, 2020թ.՝ 4.39%), առողջապահության (միջին տարեկան աճը 2010-2020թթ.՝ 4%, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010թ.՝ 4.8%, 2020թ.՝ 5.3%) և մշակող արդյունաբերության ոլորտները: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը՝ դրա հետագա զարգացումը պահանջում է մասնավորապես գյուղացիական տնտեսությունների հետագա խոշորացում և դրանց ապրանքայնության աստիճանի կտրուկ աճ, որը հիմնականում պետք է տեղի ունենա ներկայումս գործող սուբսիդիոն համակարգի էական փոփոխության և ընդլայնման միջոցով:

Հետագա հետազոտությունները, որոնք ուղղված կլինեն հարաբերականորեն բարձր արտադրողականություն ունեցող և հետևաբար ավելի մեծ ծավալով ավելացված արժեք ստեղծող ոլորտների բացահայտմանը, հնարավորություն կտան ավելի ստույգ առանձնացնել ապագա աճի հնարավոր ոլորտները և մշակել այդ ոլորտների զարգացման խրախուսմանն ուղղված տնտեսական քաղաքականության գործիքակազմը:

ՀՆԱ օգտագործման ուղղությունների համեմատությունը 2009 և 2020 թվականների ճգնաժամերի ընթացքում ցույց է տալիս, որ համախառն սպառումը 2020թ.-ին կրճատվել է մոտ 2.5 անգամ ավելի շատ քան 2009թ.-ին, չնայած ՀՆԱ ծավալների կրճատման համարյա երկու անգամ պակաս լինելուն: Ընդ որում դա տեղի է ունեցել տնային տնտեսությունների սպառման կրճատման հաշվին՝ -13.8 տոկոս կամ -789.8 միլիարդ դրամ ընթացիկ գներով, այն ժամանակ, երբ ՀՆԱ ընդհանուր անկումը նույն գներով կազմել էր միայն 361.6 միլիարդ դրամ, որը վկայում է 2020թ. տնային տնտեսությունների պահանջարկի խրախուսման քաղաքականության ոչ արդյունավետ լինելու մասին 2009թ. համեմատ, երբ ՀՆԱ կրճատման 14.1 տոկոսի պարագայում տնային

տնտեսությունների սպառումը կրճատվել էր միայն 4.3 տոկոսով:

Կառավարության 2020թ. պահանջարկի խրախուսման քաղաքականությունն ուներ 3 բաղադրիչ՝ (1) պետության կողմից ֆինանսավորվող աշխատավարձերի բարձրացումը 5.3 տոկոսի չափով, որը պետք է ապահովեր տնային տնտեսությունների լրացուցիչ պահանջարկ մոտ 200 000 աշխատողների հաշվարկով 21.6 միլիարդ դրամի չափով, (2) տարիքային կենսաթոշակների բարձրացում 8.9 տոկոսի չափով, որը պետք է ապահովեր տնային տնտեսությունների լրացուցիչ պահանջարկ մոտ 464 000 կենսաթոշակառուների հաշվարկով 19.4 միլիարդ դրամի չափով և (3) lockdown-ների պատճառով աշխատանքային եկամուտները կորցրած մասնավոր սեկտորում զբաղվածների այդ կորուստի մասնակի փոխհատուցումը:

Ելնելով 2020թ.-ին տեղի ունեցած տնային տնտեսությունների սպառման անհամաչափ անկումից և հաշվի առնելով, որ պետության կողմից վարձատրվող անձանց և կենսաթոշակառուների եկամուտները նույնիսկ աճել են՝ ակնհայտ է դառնում, որ մասնավոր հատվածի աշխատակիցների խրախուսման ծրագրերը անբավարար էին ինչպես ծածկույթի այնպես էլ ծավալային առումով:

Ինչ վերաբերում է պետական հիմնարկների սպառման աճին, այն հիմնականում պայմանավորված էր 2020թ. համար առանձնահատուկ երկու հանգամանքով՝ քովիդ-19 համավարակով, որի դեմ պայքարի արժեքը կարելի է գնահատել առնվազն 57.3 միլիարդ դրամ, և երկրորդ Արցախյան պատերազմով, որի արժեքի մեր գնահատականն առանց ոչնչացված զինտեխնիկայի և մինչև 2020թ. կուտակված զինամթերքի արժեքի կազմում է առնվազն 111.8 միլիարդ դրամ

Համախառն կուտակման կրճատումը տոկոսային առումով ավելի շատ էր քան ՀՆԱ

կրճատումը, բայց մոտ 3 անգամ ավելի քիչ, քան 2009թ.-ին, պայմանավորված շինարարության ծավալների աննախադեպ անկմամբ, որը 2020թ.-ին տեղի չի ունեցել և արտահայտում է ճգնաժամի ընթացքում կուտակման անկումը՝ ելնելով ապագայի անորոշությունից և բացասական սպասումներից:

Ապրանքների և ծառայությունների արտահանումը 2020թ.-ին կրճատվել էր մոտ 3 անգամ ավել քան 2009թ.-ին, ընդ որում այդ անկումը հիմնականում տեղի է ունեցել ծառայությունների արտահանման աննախադեպ 62,1% կամ 1321 միլիոն դոլար անկման պատճառով, որի 94% պայմանավորված է եղել ճանապարհորդությունների ծավալի կրճատմամբ: Ապրանքների արտահանման ծավալները կրճատվել են ընդհամենը 3.9 տոկոսով: Դատելով 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներից՝ ապրանքային արտահանման 23.2% աճ, 2019թ.-ի ապրանքային արտահանման ծավալները կվերականգնվեն արդեն 2021թ.-ի ընթացքում:

Ապրանքային ներմուծումը կրճատվել էր 2020թ.-ին 17.7 տոկոսով, իսկ ծառայությունների ներմուծումը 61.5% կամ 1490 միլիոն դոլար, որի 79% պայմանավորված է եղել ճանապարհորդությունների ծավալի կրճատմամբ: Դատելով 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներից՝ ապրանքային արտահանման 10.6% աճ, 2019թ. ապրանքային արտահանման ծավալները կվերականգնվեն 2022թ.-ի ընթացքում:

Ինչ վերաբերում է ծառայությունների արտահանմանը և ներմուծմանը, ապա դրանց մինչճգնաժամային մակարդակների վերականգնումը մեծապես կախված է արտագնա և ներգնա զբոսաշրջության դինամիկայից:


1.7.2. 2020թ. Հայաստանի սոցիալ-տնտեսական քաղաքականության վերլուծությունը

Տնտեսական ճգնաժամի ուժգնությունը տարբեր երկրներում պայմանավորված էր նախ և առաջ lockdown-ների ուժգնությամբ և դրանց կիրառման ծավալով, երկրորդը՝ երկրների տնտեսության կառուցվածքով²¹³ և երրորդը՝ վարվող տնտեսական քաղաքականության բնույթով, որը գրեթե բոլոր երկրներում ուներ հակացիկլիկ բնույթ և տարբերվում էր առաջարկի ու պահանջարկի խրախուսման չափերով և կիրառվող գործիքներով՝ միայն կառավարության հարկաբյուջետային ընդլայնողական կամ հարկաբյուջետային և դրամավարկային ընդլայնողական քաղաքականության կիրառմամբ²¹⁴:

Հայաստանում, ինչպես շատ այլ սահմանափակ փոխարկելիությամբ տարադրամ ունեցող երկրներում²¹⁵, հակաճգնաժամային հակացիկլիկ քաղաքականության հիմնական գործիք է հարկաբյուջետային ընդլայնողական

քաղաքականությունը: Ինչպես ցույց է տալիս Նկ. 1.7.5-ը այդ քաղաքականությունն օգտագործվել է և 2009, և 2020 թվականների ճգնաժամերի ընթացքում: Այն ենթադրում է բյուջետային ծախսերի կտրուկ աճ եկամուտների կրճատման պայմաններում, էականորեն ավելացնելով բյուջեի պակասուրդը, որն իր հերթին ֆինանսավորվում է արտաքին և ներքին պարտավորությունների աճի հաշվին:

Այս ձևով գեներացված եկամուտները որպես կանոն օգտագործվում են երեք ուղղություններով՝ (1) ճգնաժամով պայմանավորված եկամուտների կորուստը փոխհատուցելու համար, որը հնարավորություն է տալիս չկրճատել արդեն հայտարարված ծախսերը և կատարել լրացուցիչ ծախսեր, որոնց օգնությամբ ձգտելով աշխուժացնել տնտեսությունը (2) պահանջարկի և (3) պահանջարկի ավելացման միջոցով:



Նկ. 1.7.5 Հայաստանի բյուջետային համակարգը և պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները 2000-2020թթ, տոկոս ՀՆԱ նկատմամբ

Աղբյուրը՝ IMF 2021թ ապրիլի World Economic Outlook տվյալների շտեմարան

²¹³ Հավասար այլ պայմաններում ավելի մեծ տնտեսական անկում է գրանցվել այն երկրներում, որտեղ ավելի բարձր էր այդ ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

²¹⁴ Այստեղ սեփական փոխարկելի տարադրամ և այդ տարադրամով առանց ինֆլյացիոն ռիսկերի պարտքային պարտավորություններ կուտակելու հնարավորություն ունեցող երկրները՝ ԱՄՆ-ն, եվրագոնայի երկրները, օգտագործում էին երկու քաղաքականությունները միասին: Այն երկրները, որոնք այդ հնարավորությունը չունեին

օգտագործում էին կամ իրենց կուտակված տարադրամային ռեզերվները, կամ ավելացնում էին պարտավորությունները փոխարկելի տարադրամով և ներքին արժույթով՝ ներառյալ Հայաստանը:

²¹⁵ Այստեղ սահմանափակ փոխարկելիության տակ հասկացվում է այն տարադրամը, որը չի օգտագործվում ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրում, իսկ փոխարկելի է համարվում այն տարադրամը, որը հանդես է գալիս միջազգային առևտրում որպես բոլորի կողմից օգտագործվող վճարային միջոց


2009թ. ճգնաժամի ընթացքում պետական եկամուտները կրճատվեցին 75.1 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 2.39%, իսկ ծախսերը աճեցին 103.6 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 3.3%: Հաշվի առնելով եկամուտների կրճատումը՝ ծախսերի բացարձակ աճը կազմեց 178.8 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 5.7%: 2020թ. ճգնաժամի ընթացքում պետական եկամուտները կրճատվեցին 68.8 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 1.1%, իսկ ծախսերն աճեցին 187.4 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 3%: Հաշվի առնելով եկամուտների կրճատումը՝ ծախսերի բացարձակ աճը կազմեց 256.2 միլիարդ դրամ, կամ ՀՆԱ 4.14%:

Նկ. 1.7.5-ը նաև ցույց է տալիս, որ մինչև և հետճգնաժամային ժամանակահատվածներում հարկաբյուջետային քաղաքականությունն ուներ զսպողական բնույթ, ուղղված լինելով բյուջեի պակասուրդի կրճատմանը, ավելի ինտենսիվ կերպով 2005-2008թթ., 2010-2014թթ. և 2017-2019թթ. ընթացքում: Բյուջեի պակասուրդի աճը 2015-2016թթ. հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանի զարգացումներով, որի արդյունքում այդ տարիներին Հայաստանում տնտեսական աճի տեմպերն էականորեն դանդաղեցին²¹⁶:

Հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունը, որը դրսևորվում է այն կիրառող շատ

երկրներում, այդ թվում Հայաստանում, կայանում է նրանում որ անկախ եկամուտների հետճգնաժամային դինամիկայից, տարբեր, հիմնականում քաղաքական պատճառներով, հնարավոր չի լինում կրճատել պետական ծախսերի բացարձակ մեծությունը և դրանք շարունակում են աճել, որը բյուջետային քրոնիկ պակասուրդ ունեցող երկրներում բերում է պետական պարտքի անընդհատ ավելացմանը: 2009թ.-ից սկսած Հայաստանի պետական պարտքը 2010-2020թթ.-ին աճել է նոմինալ արտահայտությամբ միջինում տարեկան 12.4%, 2010-2019թթ.՝ 11.8% համեմատ 2010-2019թթ. նոմինալ ՀՆԱ միջին տարեկան 7.7% աճի հետ:

Ինչ վերաբերում է դրամավարկային քաղաքականությանը, որի հիմնական նպատակը Հայաստանում գների կայունության ապահովումն է գնաճային նպատակադրման գործիքակազմը կիրառելու միջոցով, ապա այն տնտեսական աճի հատվածներում որպես կանոն կրում է աճի նկատմամբ չեզոք բնույթ: Սակայն տնտեսական ճգնաժամերի ընթացքում այն նույնպես ձեռք է բերում հակացիկլիկ ընդլայնողական քաղաքականության հատկություններ և այդ ընթացքում ունի կառավարության հարկաբյուջետային քաղաքականության հետ համաձայնեցվածության եզրեր:



Նկ. 1.7.6 Փողի զանգվածի դինամիկան՝ բացարձակ (միլիարդ դրամ) և ՀՆԱ նկատմամբ 2000-2020թթ.


Աղբյուրը՝ Հայաստանի և նշված երկրների կենտրոնական բանկերի տվյալների շտեմարաններ

²¹⁶ 2015թ.՝ 3,2%, 2016թ.՝ 0,2%

Նկ. 1.7.6-ը ցույց է տալիս փողի առաջարկը բնութագրող փողի զանգվածի դինամիկան տնտեսական աճի և ճգնաժամերի ժամանակահատվածներում՝ և 2009թ., և 2020թ. ճգնաժամերի ընթացքում փողի զանգվածն արագացված տեմպերով աճել է, ներառյալ Չինաստանը, որտեղ և 2009թ., և 2020թ. գրանցվել է տնտեսական աճ՝ 9.4% և 2.3%: Հայաստանում փողի զանգվածի աճը կազմել է 2009թ.՝ 15.1%, 2020թ.՝ 8.9%: Այսպիսով, փողի զանգվածի վարվելակերպը Նկ. 1.7.7-ում նշված և շատ այլ երկրներում ուներ այդ ճգնաժամերի ընթացքում արտահայտված հակացիկլիկ բնույթ և ընդլայնողական ուղղություն: Ինչ վերաբերում է մինչճգնաժամային ժամանակահատվածին, ապա համաձայն ԱՄՆ Դաշնային Պահուստային Համակարգի մասնագետների կարծիքի՝ «Դաշնային Պահուստային Համակարգի ... վերլուծաբանները երկար ժամանակ մշտադիտարկում էին փողի առաջարկի աճը՝ կարծելով, որ այն ազդում է տնտեսական ակտիվության և գների մակարդակի վրա: Այդ ժամանակ ԴՊՀ-ն ձգտում էր հասնել գների կայունության, կայուն տնտեսական աճի և

բարձր զբաղվածության՝ իր մակրոտնտեսական նպատակներին, նաև փողի առաջարկի ծավալների վրա ազդելով: Սակայն վերջին տասնամյակներում կապը փողի առաջարկի աճի և ԱՄՆ տնտեսության զարգացումների միջև դարձավ շատ ավելի թույլ և նաև թուլացավ վերաբերմունքը փողի առաջարկին որպես դրամական քաղաքականության ուղեցույց»²¹⁷: Նկ. 1.7.6-ը բավականաչափ հստակ ապացուցում է այդ թեզը:

Ինչ վերաբերում է կենտրոնական բանկերի հաշվարկային տոկոսադրույքների քաղաքականությանը՝ որը պարտադիր պահուստավորման և կապիտալի համարժեքության նորմերի հետ մեկտեղ հանդիսանում է վարկային շուկայի կարգավորման հիմնական գործիքը, ապա այն, ինչպես վկայում է Նկ. 1.7.7-ը նույնպես կրել է հակացիկլիկ բնույթ՝ նվազեցնելով տոկոսադրույքները և հետևաբար ավելացնելով վարկավորումը ու կրճատելով դրա սպասարկման արժեքը և 2009թ. (բացի Ռուսաստանից), և 2020թ. (բացի Վրաստանից):



Նկ. 1.7.7 Կենտրոնական բանկերի տոկոսադրույքները 2008-2020թթ
Աղբյուրը՝ Հայաստանի և նշված երկրների կենտրոնական բանկերի տվյալների շտեմարաններ

217
<https://www.newyorkfed.org/aboutthefed/fedpoint/fed49.html>

Հատկանշական է որ 2009 և 2020 թվականների հակացիկլիկ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության արդյունքում գնաճային ճնշումներ չեն գրանցվել ոչ 2009թ.-ին, ոչ էլ 2020թ.-ին²¹⁸: Ուշագրավ է նաև ԱՄՆ FED տոկոսադրույքային քաղաքականությունը, որտեղ 2009-2015թթ. տոկոսադրույքները մոտ էին զրոյի՝ դրամական ընդլայնողական քաղաքականությունը շարունակվել է ևս 5 տարի ճգնաժամի ավարտից հետո և նույն վիճակն է 2021թ.-ին: Ավելին՝ 2020թ. մարտի դրությամբ ԱՄՆ-ում զրոյացվել է պարտադիր պահուստավորման նորման: 2020թ.-ից հետո չի ավելացրել տոկոսադրույքը նաև Չինաստանի կենտրոնական բանկը:

Այսպիսով, զարգացումներն այն երկրներում՝ ներառյալ ԱՄՆ, որոնք վերջին ժամանակ պահպանում են զրոյին մոտիկ կամ բացասական հաշվարկային տոկոսադրույքներ²¹⁹, ցույց են տալիս, որ այդ երկրների կողմից իրականացվող տնտեսության ինֆլյացիոն ֆինանսավորումը ըստ էության չի գեներացնում սղաճ ոչ այն կիրառող երկրներում, ոչ էլ այն երկրներում, որտեղ կենտրոնական բանկի տոկոսադրույքները խիստ դրական են²²⁰: Բացի դրանից, ավանդական դրամական քաղաքականության գործիքակազմի հնարավորությունները, ներառյալ փողի զանգվածը և կենտրոնական բանկի տոկոսադրույքները, այդ երկրներում սպառվել են և հայտնվում են նոր գործիքներ՝ քանակական թեթևացում (quantitative easing), խնդրահարույց ակտիվների ձեռք բերում կենտրոնական բանկերի կողմից (bail out) և այլն: Դեռ պարզ չէ՝ ինչպես այդ փոփոխությունները կազդեն այլ երկրների դրամավարկային քաղաքականության գործիքակազմի վրա:

Այնուամենայնիվ, կան որոշակի ազդակներ, նաև Հայաստանի օրինակով, որ ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը չի բերում գնաճային ճնշման ավելացմանը:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Հայաստանի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը ընդհանուր առմամբ և 2009թ., և 2020թ. համապատասխանել է աշխարհում վարվող հակաճգնաժամային քաղաքականության մոտեցումներին, կրել է հակացիկլիկ բնույթ և ունեցել է բավարար արդյունավետություն:

Հայաստանը, ինչպես այլ երկրները, 2020թ.-ին կիրառել է բյուջետային ֆինանսավորում ունեցող լրացուցիչ նպատակային օժանդակության ծրագրեր, որոնց ընդհանուր հայտարարած ծավալը 2020թ. սեպտեմբերի 10-ի դրությամբ կազմել է 163.4 միլիարդ դրամ (340 միլիոն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ 2.5%), իսկ հաստատված ծրագրերի քանակը կազմել է 25²²¹:

Հնարավոր չեղավ պարզել այդ ծրագրերի իրական ֆինանսավորման ծավալները 2020թ. վերջի դրությամբ: Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանի ՀՀ կառավարության օգոստոսի 12-ի նիստին հայտարարության համաձայն, այդ օրվա դրությամբ այդ ծրագրերի շրջանակում ծախսվել էր 64 միլիարդ դրամ, որից 26,6 միլիարդ՝ սոցիալական ծրագրերի, 17,5 միլիարդ՝ տնտեսական ծրագրերի և 19,9 միլիարդ բանկային տոկոսների սուբսիդավորման ծրագրերի վրա:

Նմանատիպ առաջարկը և պահանջարկը խրախուսող ծրագրեր ընդունել են նաև մի շարք նախկին ԽՍՀՄ երկրներ: IMF տվյալներով²²² Ադրբեջանում այդ ծրագրերի փաթեթը 2020թ. կազմել է ՀՆԱ 4.8%, Վրաստանում՝ 3.8%,

²¹⁸ 2009թ ՀՆԱ դեֆլյատորը կազմել է աշխարհում 2,38%, 2020թ՝ 1,68%, Հայաստանում՝ 2,5% և 1,9%, Ռուսաստանում՝ 1,97% և 0,897%, Վրաստանում՝ -2,136% և 6,9%, ԱՄՆ-ում՝ 0,762% և 1,21%, Չինաստանում՝ -0,21% և 0,672%:

²¹⁹ ԵՄ կենտրոնական բանկը, զրոյական հաշվարկային տոկոս 2015թ սկսած, Ճապոնիայի կենտրոնական բանկը՝ -0,1% 2016թ սկսած, Մեծ Բրիտանիա՝ 0,1 տոկոս 2020թ, Ավստրալիա՝ 0,1 տոկոս 2020թ, Կանադա՝ 0,25 տոկոս 2020թ և այլ

²²⁰ 2019թ ՀՆԱ դեֆլյատորը Ճապոնիայում կազմել է 0.6%, 2020թ՝ Մեծ Բրիտանիայում՝ 5,67%, Եվրոգոնայում՝ 1,197%, Ավստրալիայում՝ 1,968%, Կանադայում՝ 0.832%

²²¹ Реагирование на кризис, связанный с пандемией COVID-19, в странах восточного партнерства, OECD, 13 октября 2020

²²² Sten՝ IMF, Policy responses to Covid-19 as of July 21, 2020 (<https://www.imf.org/en/Topics/imf-and-covid19/Policy-Responses-to-COVID-19>)

Ռուսաստանում՝ 3.5%, Ղազախստանում՝ մոտ 9%, Ղրղզստանում՝ մոտ 7%, Ուզբեկստանում՝ մոտ 2%: Այսպիսով, այդ ծրագրերի ծավալները Հայաստանում ավելի ցածր էին, քան նշված երկրների մեծ մասի մոտ: Ինչ վերաբերում է զարգացած երկրներին, ելնելով ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն վարելու դրանց ավելի լայն հնարավորություններից, նշված փաթեթների ծավալները ավելի մեծ էին և ծածկույթով ավելի բազմազան²²³:

Պետք է նաև նշել, որ այդ փաթեթների ծախսման ուղղությունները մոտավորապես նույն էին բոլոր երկրներում, ներառյալ Հայաստանը՝ տարբերվելով ընդգրկված ոլորտների քանակով և օգնության ծավալներով:

Առաջարկի խրախուսման ոլորտում այդ ուղղություններն էին՝ (1) վարկային տոկոսների սուբսիդավորում, (2) ժամանակավոր վարկային տոկոսային արձակուրդներ²²⁴, (3) ուղղակի օգնություն՝ միաժամանակյա կամ որոշակի ժամանակահատվածի համար²²⁵ ձեռնարկություններին, որոնք ունեին գործունեության ծավալների նվազում քվիդի պատճառով՝ զբաղվածությունը պահպանելու և աշխատավարձ վճարելու նպատակով, (4) ժամանակավոր հարկային արձակուրդներ կամ նվազեցումներ (ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները) քվիդ-19 սահմանափակումներից տուժած ձեռնարկությունների համար²²⁶, (5) սուբսիդիաներ քվիդ-19 սահմանափակումներից տուժած ռազմավարական ոլորտներին²²⁷, (6)

դրամաշնորհների տրամադրում նոր ստեղծվող բիզնեսների համար՝ հատկապես թվայնացման, կանաչ էներգիայի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում, (6) 50-ից մինչև 100 տոկոս մեծածավալ պետական վարկային երաշխիքների տրամադրում մասնավորապես արտահանող ձեռնարկությունների համար²²⁸:

Ինչ վերաբերում է պահանջարկի խրախուսմանը, արդեն վերը նշվել էր, որ այդ ուղղության արդյունքները Հայաստանում բավարար համարել չի կարելի ելնելով տնային տնտեսությունների սպառման 13.8% անկումից: Հիմնականում դա պայմանավորված է պահանջարկը խրախուսող ծրագրերի իրացման փոքր ծավալներով²²⁹, այդ ծրագրերի շահառուների ընտրման չափազանց խիստ պայմաններով, ինչպես նաև դրանց չափազանց մեծ քանակությամբ²³⁰:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով 2021թ. վերսկսված տնտեսական աճը և հետագա lockdown-ների կրկնման ցածր հավանականությունը, այդ ծրագրերի վերլուծությունը և թերությունների բացահայտումը կորցրել է իր արդիականությունը: Շատ ավելի արդիական է սոցիալ-տնտեսական քաղաքականության նոր մոտեցումների մշակումը՝ ապագայում կայուն տնտեսական աճ ապահովելու և ապագա տնտեսական ճգնաժամերից արագ դուրս գալու նպատակով առանց տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ կանգնեցնելու:

²²³ Նույն IMF, Policy responses to Covid-19 as of July 21 տվյալներով 2000թ Գերմանիայում դրանք կազմել են ՀՆԱ 8,6%, Ֆրանսիայում՝ մոտ 8%, Իտալիայում՝ մոտ 7%, Իսպանիայում՝ 7,4%

²²⁴ Վերջինս (վարկային արձակուրդները) Հայաստանում իրականացվում էր ֆինանսական միջնորդության համակարգի հաշվին

²²⁵ Հայաստանում՝ հիմնականում միաժամանակյա

²²⁶ Հայաստանում չի կիրառվել

²²⁷ Հայաստանում չի կիրառվել

²²⁸ Հայաստանում չի կիրառվել

²²⁹ Ինչպես արդեն նշվել է այդ ծրագրերի ծախսված գումարային ծավալը 2020թ օգոստոսի 12 դրությամբ կազմել է ընդհամենը 26,6 միլիարդ դրամ

²³⁰ 25 ծրագրերից 13-ը ունեին սոցիալական բնույթ և ուղղված էին պահանջարկի խրախուսմանը բավականին նեղ ոլորտներում

2. Տնտեսական աճի շարժիչ ուժերի բացահայտումը. վերլուծության տեսական հիմքերը

Տնտեսական քաղաքականության առանցքային խնդիրն է կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում տնտեսական զարգացման համար ինչպես ընդհանուր, այդպես էլ ոլորտային նպաստավոր պայմաններ ստեղծելը: Տնտեսական զարգացումը կարելի է բնութագրել որպես տնտեսության բարդության աստիճանի աճ²³¹, որը բնութագրվում է երկրում իրականացվող տնտեսական գործառույթների քանակի աճով: Մյուս կողմից տնտեսական զարգացումը և հետևաբար տնտեսության բարդացումը տեղի է ունենում որպես չորս փոխկապված և զուգահեռ գործառույթների համակցում՝

- տնտեսության ներքին արդյունավետության՝ արտադրության գործունեների արտադրողականության աճ²³²;
- տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում, երբ արտադրանքի շուկաները ստանում են գլոբալ բնույթ, երկրի ընդհանուր կամ արտաքին արդյունավետության աճ²³³;
- երկրում արտադրված ապրանքների և ծառայությունների միջև ավելացված արժեքի շղթաների²³⁴ (ներքին ինտեգրացում) քանակի ու ծավալների և այդ շղթաների արդյունավետության աճ
- ներմուծվող և երկրում արտադրված ապրանքների և ծառայությունների միջև ավելացված արժեքի շղթաների (արտաքին ինտեգրացում) քանակի և ծավալների աճ:

²³¹ Տնտեսության բարդությունը կարելի է նկարագրել որպես տնտեսությունում առկա գործունեության տեսակների, մասնագիտությունների և զբաղմունքների և դրանց միջև գործող տարբեր տեսակի կապերի (նյութական, դրամական, տեղեկատվական) քանակով և ինտենսիվությամբ: Այսպես՝ պարզ տնտեսությունը, օրինակ ագրարայինը, այնպիսի տնտեսություն է, որտեղ մի կողմից գործունեության տեսակները և դրանց կապերը միմյանց և արտաքին աշխարհի հետ սահմանափակ են և բնութագրվում են ցածր ինտենսիվությամբ, իսկ մյուս կողմից արտադրական

Տնտեսական քաղաքականության արդյունավետությունը վերլուծելու և համապատասխան փոփոխություններ առաջարկելու համար անհրաժեշտ է այն քննարկել՝ ելնելով երկրում տեղի ունեցած վերը նշված տնտեսության բարդության աստիճանից և ներքին ու արտաքին արդյունավետության փոփոխություններից: Այսինքն, վերլուծությունը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝ (ա) արդյոք նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել տնտեսության բարդության աստիճանի աճ, թե ոչ, և ինչ պատճառներով, (բ) արդյոք նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել տնտեսության արդյունավետության աճ, թե ոչ, և ինչ պատճառներով, (գ) փոխվել է արդյոք երկրի արտաքին արդյունավետությունը, թե ոչ, և ինչ պատճառներով (դ):

Առաջին հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել երկրի տնտեսության կառուցվածքը, ոլորտների քանակը և ծավալները, ինչպես նաև դրանց միջև կապերը:

Երկրորդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել ներքին արդյունավետության մի շարք ցուցանիշներ՝ արտադրողականությունը, ֆոնդազինվածությունը, կապիտալատարությունը, նյութա- և էներգատարությունը, միավոր աշխատուժի արժեքը և այլն:

Երրորդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել տնտեսության արտաքին արդյունավետության մի շարք ցուցանիշներ, ներառյալ՝ արտաքին

գործունեության հիմնական նպատակը սեփական պահանջարկի բավարարումն է:

²³² Տնտեսական գրականության մեջ այն կոչվում է TFP (Total Factor Productivity):

²³³ Այն բնութագրվում է համաշխարհային աշխատանքի բաժանման և մասնագիտացման մեջ երկրի տեղի և դերի ավելացմամբ: Տեղը և դերը համապատասխանաբար բնութագրում են երկրի մասնագիտացումը աշխատանքի բաժանման մեջ և այդ մասնագիտացման փոփոխությունը

²³⁴ Value Added Chain

ապրանքաշրջանառությունը, ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև կապիտալի արտահանման և ներմուծման ծավալներն ու կառուցվածքը:

Չորրորդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել երկրում ձևավորված ներքին և արտաքին ինտեգրացման ավելացված արժեքի շղթաների երկարությունը և ինտենսիվությունը, մասնավորապես կրիտիկական ներմուծումը, տեխնոլոգիաների ներմուծումը, միջոլորտային կապերը և դրանց ինտենսիվությունը:

Այս նպատակներից ելնելով, սույն հետազոտության շրջանակներում վերլուծվել է Հայաստանի տնտեսությունն ամբողջությամբ և ըստ ՀՆԱ հիմնական ճյուղերի:

Ընդհանուր տեսական մոտեցումները, որոնք սույն հետազոտության մեջ հանդիսանում են տնտեսական զարգացման քաղաքականության գնահատման և համապատասխան առաջարկների մշակման հիմքերը, երկուսն են՝ երկրի համեմատական առավելությունների²³⁵ և երկրի մրցակցային առավելությունների²³⁶ տեսությունները: Առաջինն անդրադառնում է այն հարցին, թե ինչպիսի գործիքների կիրառմամբ կարելի է արագ ավելացնել տնտեսության ներքին և արտաքին արդյունավետությունը (տեղի առումով): Երկրորդն առնչվում է տնտեսական զարգացման հետ կապված այլ հիմնահարցի՝ որոնք են տնտեսության արդյունավետ և արագ բարդացման գործիքները և ինչպես են դրանք ազդում արտաքին արդյունավետության վրա (դերի խորացման և ավելացման առումով):

2.1. Երկրի համեմատական առավելությունները

Համաձայն այս տեսության, երկրները պատմականորեն բաժանվում են երկու տիպի՝ առաջնային (պիոներական) կամ զարգացած և հասնող²³⁷ զարգացման, կամ զարգացող երկրների:

Առաջնային զարգացումը՝ տնտեսության բարդացումն է արտադրության նոր տեխնոլոգիաների, նոր արտադրատեսակների կամ տնտեսության նոր հատվածների ստեղծման միջոցով, որը ընդհանուր առմամբ ավելացնում է արտադրական կապիտալի տեսակարար կշիռը²³⁸ և կրճատում է դրա հարաբերական գինն՝ ավելացնելով աշխատուժի

հարաբերական գինը²³⁹: Միևնույն ժամանակ վերանում են արտադրության հին տեխնոլոգիաները, հին արտադրատեսակները կամ տնտեսության այն հատվածները, որոնք արտադրում են հնացած արտադրատեսակներ²⁴⁰: Այդ գործառույթները պայմանավորող հիմնական գործոն է հանդիսանում գիտատեխնիկական առաջընթացը, որն առաջնային զարգացման երկրներում կրում է հիմնականում էնդոգեն բնույթ²⁴¹ և պայմանավորում է երկրում կուտակված գիտելիքի և ունակությունների ու կապիտալի ծավալներով: Ֆինանսական

²³⁵ Տես՝ Джастин Линн “Демистификация китайской экономики”, М. Мысль 2013, глава 6

²³⁶ Տես՝ Майкл Портер “Международная конкуренция. Конкурентные преимущества стран”, М. Альпина 2017, часть 3

²³⁷ Catch up growth կամ догоняющее развитие. Նշված խմբերի կազմը ժամանակի ընթացքում փոխվում է: Պատմականորեն՝ արդյունաբերական հեղափոխության սկզբում պիոներական զարգացման երկիր էր Մեծ Բրիտանիան, իսկ հասնող զարգացման երկրները՝ ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Գերմանիան և այլն, որոնք հասնող զարգացման արդյունքում տեղափոխվեցին առաջին խումբ:

²³⁸ Ընդհանուր դեպքում՝ ավելացնելով աշխատուժի ֆոնդազինվածությունը

²³⁹ Աշխատուժի հարաբերական գինը ավելանում է հիմնականում աշխատուժի նկատմամբ պահանջների աճի պատճառով, որը ավելացնում է կրթական և մասնագիտական նախապատրաստման համար անհրաժեշտ ժամանակը և ռեսուրսերը

²⁴⁰ Դա շուկայական տնտեսության զարգացման առանձնահատուկ ձևն է, որը կոչվում է ստեղծագործական ոչնչացում (creative destruction)

²⁴¹ Այսինքն հիմնված է հիմնականում տվյալ երկրում մշակված և/կամ առաջին անգամ ներդրված տեխնոլոգիաների, նոր արտադրատեսակների և տնտեսության նոր ճյուղերի վրա:

առումով այն որոշվում է այն ծախսերի ծավալներով, որոնք ուղղված են գիտությանը և հետազոտություն-ների²⁴², մասնագիտական կրթության զարգացմանը, ինչպես նաև կապիտալի այդ թվում նորարարական կապիտալի ձեռք բերումն ապահովող ֆինանսական միջնորդության համակարգի հզորությամբ:

Այսպիսով, առաջնային զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ է կապիտալի որոշակի կուտակված ծավալների առկայություն, որը զարգացման ընթացքում ավելանում է, այսինքն առաջնային զարգացման գինը անընդհատ աճում է:

Առաջնային զարգացման երկրներում այդ գործընթացներին զուգահեռ ձևավորվում է և զարգացման ընթացքում փոփոխվում է նաև զարգացումը խրախուսող ինստիտուցիոնալ համակարգը որն ապահովում է.

1. Սեփականության իրավունքի պաշտպանությունը, ինչպես արտադրական կապիտալի, ինտելեկտուալ սեփականության,²⁴³ այնպես էլ աշխատուժի նկատմամբ²⁴⁴;

2. Տնտեսական վեճերի արդյունավետ և կանխատեսելի լուծումը;

3. Տնտեսական զարգացման արդյունավետ ֆինանսավորումը (ֆինանսական միջնորդության զարգացած և հասանելի համակարգի միջոցով);

4. Մրցակցության պաշտպանությունը և մենաշնորհների կարգավորումը;

5. Պետության և շուկայական տնտեսության միջև տնտեսական զարգացմանը նպաստող գործառույթների բաժանումը:

Այն երկրները, որոնք չեն կարողացել ապահովել առաջնային զարգացման համար

անհրաժեշտ կապիտալի կուտակումը, չեն կարողանում այն իրականացնել առաջնային զարգացման գնի անընդհատ ավելացման պատճառով: Այն ժամանակ զարգացման միակ հնարավոր ճանապարհն է դառնում հասնող զարգացման ճանապարհը, որը անցել են ներկայիս բոլոր առաջնային զարգացման երկրները: Ինչ վերաբերում է հասնող զարգացման (զարգացող) երկրներին, ապա ճիշտ իրականացվող քաղաքականության դեպքում զարգացումը²⁴⁵ հիմնվում է հետամնացության առավելության²⁴⁶ գործառույթների արդյունավետ օգտագործման վրա: Հետամնացության առավելության էությունը կայանում է նրանում որ կրճատվում է զարգացման համար անհրաժեշտ ֆինանսավորման ծավալները համեմատ առաջնային զարգացման երկրների, կիրառելով արդեն մշակված և այդ երկրներում հաջողությամբ փորձարկված տեխնոլոգիաները և զարգացման ինստիտուցիոնալ կառուցվածքները²⁴⁷: Հասնող զարգացման ընթացքում պետք է հաշվի առնվի երկրում արտադրության գործոնների հարաբերական գները. որպես կանոն զարգացող երկրներում աշխատուժը նկատելիորեն ավելի էժան է քան արտադրական կապիտալը: Ինչպես նշում է Ջաստին Լինն²⁴⁸ զարգացած երկրների առաջատար տեխնոլոգիաների և փորձի օգտագործումը, հաշվի առնելով աշխատուժ/կապիտալ գների հարաբերակցությունը, թույլ է տալիս զարգացող երկրին համեմատաբար ավելի սեղմ ժամկետներում և ավելի քիչ ծախսերով ապահովել տնտեսության արագացված

²⁴² Research and development (R&D)

²⁴³ Օրինակ՝ արտոնագրային համակարգը:

²⁴⁴ Վերջինը մարդու իրավունքների պաշտպանության տնտեսական հիմքն է հանդիսանում:

²⁴⁵ Այս հետազոտության համատեքստում՝ տնտեսական զարգացումը ենթադրում է արագ անցումը զարգացող երկրի կարգավիճակից զարգացած երկրի կարգավիճակին և այդ կարգավիճակում մնալը երկարաժամկետ հեռանկարում:

²⁴⁶ Առաջին անգամ ձևակերպված է «Alexander Gershenkron “Economic Backwardness in Historical Perspective”, Harvard University Press, 1962» գրքում:

²⁴⁷ Այդ ձևերը կարող են լինել համապատասխան արտոնագրերի ձեռք բերումը, օտարերկրյա արտադրական կապիտալի ներգրավումը երկրում արտադրությունը կազմակերպելու նպատակով, “reverse engineering” կամ տեխնոլոգիաների մշակում օտարերկրյա արտադրատեսակների կրկնօրինակման միջոցով:

²⁴⁸ Джастин Линн “Демистификация китайской экономики”, М. Мысль 2013

զարգացման տեմպեր և մտնել զարգացած երկրների շարքը²⁴⁹:

Այսպիսով՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Եվրոպայի երկրներում, իսկ 1960թ.-ից հետո՝ Արևելյան Ասիայի երկրներում «տնտեսական հրաշքի» հիմնական պատճառը և շարժիչ ուժն այդ երկրների և առաջատար զարգացման երկրների մեջ «տեխնոլոգիական խզման» օգտագործումն է, որի շնորհիվ ներդրվում էին առաջատար տեխնոլոգիաներ, որոնք իրենց հերթին խթան հանդիսացան սեփական տեխնոլոգիաների մշակման և երկրների արդիականացման համար:

Նկար 2.1.1-ում ներկայացված է հետամնացության առավելության օգտագործման ընդհանուր սխեման: Այդ սխեմայով, ելնելով կապիտալի հարաբերական թանկությունից, առաջատար տեխնոլոգիաների յուրացման միջոցով առաջնային արդիականացման են ենթակա տնտեսության աշխատատար ոլորտները, որի հիմնական նպատակն է այդ ոլորտներում արտադրության ծավալների առաջանցիկ աճը, ինչը կապահովի ինչպես աշխատանքի արտադրողականության, այնպես էլ աշխատատեղերի քանակի աճ: Այդ փուլում տեխնոլոգիական առաջընթացը հիմնականում ներմուծվող է: Նման առաջընթաց ապահովելու համար ներքին ծախսերն ուղղված պետք է լինեն համապատասխան կադրերի պատրաստմանը և այդ տեխնոլոգիաների հարմարեցմանը տեղական պայմաններին²⁵⁰: Այս փուլում կրիտիկական է տեխնոլոգիաների ներմուծումն ապահովող ֆինանսական մատչելի

համակարգի առկայությունը: Այդ ոլորտների առաջանցիկ զարգացումն ապահովելու համար պետք է ապահովվի դրանց արտադրանքի ներքին սպառումը և արտահանումը, որը ընդլայնում է սպառման շուկաները և ապահովում տարադրամային ռեսուրսների կուտակումը:

Տեխնոլոգիաների այդպիսի ներմուծումը պետք է ապահովի տնտեսության արդյունավետության աճ և արագացած զարգացում այդ ոլորտներում ավելացված արժեքի ավելացման միջոցով: Նոր տեխնոլոգիաները շարժիչ ուժ են հանդիսանում տնտեսության կառուցվածքային փոփոխության համար, որը իրականացվում է դեպի արդիականացվող ոլորտներն աշխատուժի շարժի միջոցով և նույնպես արագացնում է տնտեսական աճը: Միևնույն ժամանակ ստեղծվում կամ զարգանում են հարակից ճյուղերը, ներառյալ էնդոգեն տեխնիկական զարգացումը ապահովող ոլորտները, որոնք սկսում են սպասարկել արդիականացվող ոլորտները՝ եղած տեխնոլոգիաների հիման վրա արտադրանքի նոր տեսակների մշակման և այդ տեխնոլոգիաների փոփոխման միջոցով՝ ելնելով արտադրության կուտակված փորձից և ստացված գիտելիքների պաշարից:

Այդպիսի զարգացումը, որտեղ տեխնոլոգիաների ներմուծումը և/կամ փոփոխությունն ուղղված է և՛ զբաղվածության ավելացմանը, և՛ արտադրողականության աճին, անխուսափելիորեն բերում է աշխատուժի հարաբերական գնի թանկացմանը²⁵¹: Ինչ-որ պահից սկսած հարաբերականորեն էժան

²⁴⁹ Հասնող զարգացման երկրերի առավելությունը զարգացման տեմպերի մեջ կարելի է բնութագրել ՀՆԱ կրկնապատկման ժամկետներով: Այսպես՝ Մեծ Բրիտանիայում, որը պատմականորեն հանդիսացել է առաջնային զարգացման առաջին երկիրը, այդ կրկնապատկման համար պահանջվել է 58 տարի (1780–1838), ԱՄՆ-ում՝ 47 (1839–1886), Ճապոնիայում՝ 34 (1885–1919), Բրազիլիայում՝ 18 (1961–1979), Հարավային Կորեայում՝ 11 (1966–1977), Չինաստանում՝ 10 (1977–1987): Հայաստանին ՀՆԱ կրկնապատկման համար պահանջվեց 28 տարի (1990–2018), այդ թվում 14 տարի պահանջվեց ՀՆԱ 1990թ.-ի մակարդակը վերականգնելու համար:

²⁵⁰ Տեղական պայմաններին հարմարեցումը որպես կանոն տեղի է ունենում ելնելով նրանից, որ անհրաժեշտության

դեպքում իջեցվում է տեխնոլոգիաների կապիտալատարության աստիճանը:

²⁵¹ Այդ թանկացումը կախված է նաև ժողովրդագրական իրավիճակից: Եթե երկրում ապահովվում է բնակչության ընդլայնված վերարտադրություն, որը ապահովում է աշխատանքային ռեսուրսների քանակի աճը, աշխատուժի հարաբերական թանկացումը որոշակիորեն զսպվում է: Եթե բնակչության ընդլայնված վերարտադրությունը տեղի չի ունենում, ինչպես ներկայումս Հայաստանում, աշխատանքային ռեսուրսների քանակն ունի նվազման միտում, որը արագացնում է աշխատուժի հարաբերական թանկացումը:

աշխատուժի համեմատական առավելությունը վերանում է և երկրի տնտեսական զարգացման հիմնական ուղղությունը պետք է դառնա աշխատանքի խնայողությունը և դրա փոխարինումն արտադրական կապիտալով: Այդ պայմաններում երկիրը պետք է անցում կատարի հիմնականում էնդոգեն տնտեսական առաջընթացին և ինքնուրույն ստեղծի նոր տեխնոլոգիաներ: Հակառակ դեպքում երկիրը, կորցնելով էժան աշխատուժի առավելությունը և չկարողանալով ապահովել էնդոգեն տեխնոլոգիական զարգացումը, ընկնում է այսպես կոչված «միջին եկամտի թակարդի»²⁵² մեջ:

«Միջին եկամտի թակարդից» խուսափելու համար անհրաժեշտ է էնդոգեն տեխնոլոգիական զարգացումը խրախուսող

քաղաքականության քայլ առ քայլ մշակում և ներդնում դեռ էժան աշխատուժի համեմատական առավելության գործելու ժամանակ: Այլ կերպ ասած՝ երկիրը պետք է անցում կատարի էժան աշխատուժի և ներմուծվող տեխնոլոգիաների հիման վրա իրականացվող հասնող զարգացումից դեպի երկրի ներսում գեներացված արտադրատեսակների և տեխնոլոգիաների վրա հիմնված առաջատար զարգացմանը: Այդ զարգացման շարժիչ ուժը պետք է առաջին հերթին լինի ընդլայնվող ներքին շուկան և դիվերսիֆիկացված արտահանումը: Դա պահանջում է էական ներդրումներ ենթակառուցվածքների և կրթության²⁵³, ինչպես նաև հետազոտությունների մեջ:

Երկրի համեմատական առավելությունները՝ աշխատուժի առկայությունը և գինը, կապիտալի առկայությունը և գինը

Տեխնոլոգիաների ներմուծում և փոփոխություն հաշվի առնելով աշխատարությունը: Ներմուծման, մասնագիտական կրթության և փոփոխության ֆինանսավորում

Արտադրանքի ներքին սպառման և արտահանման ապահովում: Տարադրամային ռեսուրսների կուտակում

Տնտեսության արդյունավետության աճ՝ աշխատանքի արտադրողականություն, ֆոնդազինվածություն, ավելացված արժեք

Տնտեսության կառուցվածքի փոփոխություն, աշխատուժի տեղաշարժը ավելի արդյունավետ ոլորտներ, նոր սեկտորների ձևավորում

Երկրի համեմատական առավելությունների փոփոխություն, աշխատուժի գնի հարաբերական աճ, կապիտալի գնի հարաբերական նվազում

Նկար 2.1.1. Հետամնացության առավելության օգտագործման սխեման տնտեսության արագացված զարգացման ապահովման համար:

²⁵² Middle Income Trap. Համաշխարհային բանկի համաձայն «Միջին եկամտի թակարդի» այն իրավիճակն է, երբ երկիրը չի կարողանում անցում կատարել եկամտային միջին խմբից (մինչև 12 000 ԱՄՆ 2010թ. դոլար 1 շնչին ՀՆԱ) դեպի բարձր եկամտային խումբ (12 000 և ավելի ԱՄՆ 2010թ. դոլար 1 շնչին ՀՆԱ): Ավելին 1960-2010թթ.-ին այդ խմբի 110 երկրներից միայն 5 երկրներ են կարողացել խուսափել

«միջին եկամտի թակարդից»: Բոլորը Հարավ Արևելյան Ասիայից են՝ Ճապոնիան, Հարավային Կորեան, Թայվանը, Հոնկոնգը և Սինգապուրը: Տես՝ Shek, Colin (23 May 2019). "Aiming for the Top: Can China Escape the Middle Income Trap?". Cheung Kong Graduate School of Business (CKGSB).
²⁵³ Asia 2050. Realizing the Asian Century. ADB, 2011

2.2. Երկրի մրցակցային առավելությունները

Տեխնոլոգիաների ներմուծումն արդյունավետության աճի հետ մեկտեղ կարող է ավելացնել երկրի տնտեսության բարդության աստիճանը, եթե այդ տեխնոլոգիաները բացում են երկրի համար գործունեության նոր ոլորտներ: Այն դեպքում, եթե դրանք փոխարինում են եղած տեխնոլոգիաները, տնտեսության արդյունավետությունն աճում է, սակայն տնտեսության բարդությունը չի ավելանում: Այստեղ, ելնելով միջազգային առավելությունների տեսությունից և երկրների հասնող զարգացման հաջողված փորձից,²⁵⁴ երկրի տնտեսության բարդացման հիմնական գործիքներ են հանդիսանում ավելացված արժեքի շղթաների ընդլայնումը և երկարացումը: Դրանք իրականացվում են երկու զուգահեռ գործընթացների միջոցով: Առաջինը՝ երկրի ներկայիս արտադրական կառուցվածքի վրա և թողարկվող միջանկյալ սպառման²⁵⁵ արտադրատեսակների վրա հիմնված ավելացված արժեքի շղթաների երկարացումն է (ներքին ինտեգրացումը) մինչև վերջնական սպառման արտադրանքի թողարկումը: Ներքին ինտեգրացիան կայանում է նաև նրանում որ ներմուծվող կամ այլ կերպ յուրացվող տեխնոլոգիաների հիման վրա ստեղծվում են դրանց սպասարկող ոլորտներ²⁵⁶ և տեղի է ունենում համապատասխան ավելացված արժեքի շղթաների երկարացում և տնտեսության բարդացում:

Ինչ վերաբերում է արտաքին ինտեգրացմանը, որը ներկայումս տնտեսության բարդացման հիմնական գործիքն է հանդիսանում, ապա այն բնութագրում է երկրի հնարավորությունը ինտեգրացվել միջազգային ավելացված արժեքի շղթաների մեջ և ստեղծել

բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներ և ծառայություններ օգտագործելով ներմուծվող հումքը²⁵⁷ կամ արտադրելով կոմպլեկտավորող նյութեր կամ մատակարարելով ծառայություններ այլ երկրներում տեղադրված արտադրության և ծառայությունների համար: Հասնող զարգացման երկրների համար այդ ներդրումը աշխատանքի միջազգային բաժանման մեջ սկզբից կապված է էժան աշխատուժի հարաբերական առավելության վրա: Զարգացման հետ զուգընթաց երկրի մասնագիտացումը կարող է փոխվել և տարածվել նաև կապիտալատար ոլորտների վրա, հետագայում կենտրոնանալով ավելի բարդ արտադրության և ծառայությունների վրա: Առաջնային կամ ինովացիոն զարգացման փուլում երկիրը կարող է կենտրոնանալ ավելացված արժեքի ստեղծման միջազգային բաժանման ավելի բարձր սեգմենտներում՝ բարդ կոմպլեկտավոր մասերի արտադրություն, միջին և բարձր տեխնոլոգիաներով վերջնական սպառման արտադրանքի և ծառայությունների արտադրություն, նոր ապրանքատեսակների մշակում և այլն:

Այսինքն հաջող հասնող զարգացման ընթացքում պետք է փոխվի երկրի դերը աշխատանքի միջազգային բաժանման մեջ – հումքային արտադրանքից մինչև վերջնական արդյունք, աշխատատար արտադրանքից մինչև մասնակցությունը միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի և ծառայությունների արտադրության մեջ և նոր ապրանքատեսակների և տեխնոլոգիաների ստեղծումը:

²⁵⁴ Հիմնականում Հարավ Արևելյան Երկրների և Չինաստանի

²⁵⁵ Օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանք – պատրաստի սննդամթերք, պղնձի խտանյութ. – պատրաստի պղինձ և այլն

²⁵⁶ Օրինակ՝ տեխնոլոգիաների սպասարկումը և արդիականացումը, նոր արտադրատեսակների մշակումը և դիզայնը և այլն

²⁵⁷ Օրինակ՝ թեյի արտադրությունը Մեծ Բրիտանիայում կամ սուրճի արտադրությունը Իտալիայում համապատասխան սպասարկման ոլորտների հետ միասին՝ սուրճ պատրաստող մեքենաներ, մասնագիտացված ռեստորաններ, սպասք և այլն

2.3. Պետական քաղաքականությունը երկրի համեմատական առավելությունների օգտագործման և տնտեսության բարդացման գործընթացում

Պետության գործառույթները և մասնակցության աստիճանը երկրի համեմատական առավելությունների օգտագործման և տնտեսության բարդացման գործընթացներում էականորեն տարբերվում են՝ ելնելով երկրի զարգացվածության աստիճանից և ժամանակից:

Մասնավորապես, հասնող զարգացման երկրներում, ելնելով 1960-2020թթ. զարգացման փորձից, այն էականորեն ավելի բարձր է քան զարգացած երկրներում: Դրա հիմնական պատճառներն են երկրում զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սղությունը²⁵⁸, ներքին շուկայի սահմանափակ ծավալները և հասնող զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառուցվածքի թուլությունը: Արդյունավետ ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման հարցերը կքննարկվեն տվյալ հետազոտության հաջորդ փուլերում: Այստեղ կշռափվեն ինստիտուցիոնալ կառուցվածքի հետ կապված միայն այն հարցերը, որոնք առնչվում են հասնող զարգացումը և տնտեսության բարդացումն ապահովող տնտեսական քաղաքականությանը:

Ելնելով Հարավ-Արևելյան Ասիայի փորձից²⁵⁹՝ երկրի քաղաքականությունը պետք է հիմնվի երկրի համեմատական առավելությունների օգտագործման վրա և ավելացնի ինչպես կապիտալի, այնպես էլ աշխատուժի օգտագործման արդյունավետությունը,

հետևաբար տեխնոլոգիաների ներմուծման վրա հիմնված արտադրությունը չի պահանջելու որևէ լրացուցիչ սուբսիդավորում, որովհետև ըստ սահմանման պետք է ավելի արդյունավետ լինի քան գործող արտադրությունը: Հետևում է, որ տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

- Ընդհանուր կուտակման առաջանցիկ աճի ապահովումը՝ սպառման համեմատ երկրի ներդրումային ներքին ռեսուրսների աճը երաշխավորելու նպատակով: Այլ կերպ ասած սպառման ծավալները (ներառյալ աշխատավարձերը) չպետք է արտադրողականությունից ավելի արագ աճեն:
- Տեխնոլոգիաների ձեռք բերումը ապահովող ներմուծման կամ այլ կերպ յուրացման տեսքով հատուկ ֆինանսավորման համակարգի ստեղծումը, որը գործում է վարկերի շուկայականից ցածր տոկոսներով տրամադրելու սկզբունքով²⁶⁰:
- Ներմուծվող կամ այլ կերպ յուրացվող տեխնոլոգիաների հիման վրա արտադրված ապրանքների ու ծառայությունների ներքին սպառման ու արտահանման հնարավորությունների ապահովումը, որն այլ միջոցառումների շարքում ենթադրում է ներմուծման հարաբերական թանկացման և արտահանման հարաբերական էժանացման քաղաքականության կիրառումը²⁶¹:

²⁵⁸ Այն կարող է արտահայտվել ինչպես սեփական կուտակված ռեսուրսների սղությամբ այնպես էլ փոխառու փողի բարձր գնով, որը արտահայտում է այդ երկրներում ներդրումների ավելի բարձր ռիսկայնությունը համեմատ զարգացած երկրների հետ

²⁵⁹ Джастин Линн “Демистификация китайской экономики”, М. Мысль 2013, Alice H. Amsden “Asia’s Next Giant. South Korea and Late Industrialization”, Oxford University Press, 1989

²⁶⁰ Հարավ-Արևելյան Ասիայի երկրների փորձը (մասնավորապես Կորեան և Թայվանը), որ այդպիսի սուբսիդավորման համակարգը կրում է ժամանակավոր բնույթ. այնքան ժամանակ, մինչև փոխառու ռեսուրսների գինը պակասում է երկրի զարգացման ընթացքում:

²⁶¹ Այդ քաղաքականության երեք հիմնական գործիքներից (մաքսային քաղաքականություն, փոխարժեքի քաղաքականություն, արտահանման ուղղակի սուբսիդավորում) ներկա պայմաններում, ելնելով Հայաստանի ՀԱԿ (WTO) անդամակցումից, երրորդ գործիքի կիրառումը հնարավոր չէ՝ արգելված է ՀԱԿ կանոններով, առաջինի հնարավորությունները նույնպես ելնելով ՀԱԿ կանոններից խիստ սահմանափակ է: Այսպիսով հիմնականը դառնում է փոխարժեքի քաղաքականությունը՝ դրամի նպատակային արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ: Տարբերակված փոխարժեքների քաղաքականությունը, որը հաջողությամբ կիրառվում էր Հարավ-Արևելյան Ասիայի մի շարք երկրներում հասնող զարգացման ընթացքում,

- Ինչ վերաբերում է արտադրության ուղղակի սուբսիդավորմանը, ապա այն պետք է կիրառվի այն դեպքերում, երբ երկիրը կորցրել է կամ կորցնում է իր էժան աշխատուժի առավելությունը և այդ արտադրությունը դառնում է անմրցունակ, բայց տարբեր պատճառներով պահպանում է այդ արտադրությունը: Հայաստանի ներկայիս զարգացման պայմաններում այդպիսի արտադրություն է գյուղատնտեսությունը:
- Երկրի հարկային քաղաքականությունը վարկային քաղաքականության հետ մեկտեղ պետք է խրախուսի տեխնոլոգիաների ներմուծումը և/կամ դրանց հարմարեցումը երկրի համեմատական առավելություններին՝ մասնավորապես վերացնելով շահութահարկը²⁶², ուղղելով շահույթը տեխնոլոգիաների ձեռք բերման և/կամ դրանց հարմարեցմանը:
- Երկրի տնտեսության արդյունավետության ավելացման համար կարևոր են նաև մասնագիտական կրթությանը և հետազոտություններին ուղղված ֆինանսավորման ծավալների առաջանցիկ աճը և համապատասխան ինստիտուցիոնալ փոփոխությունները, որոնք պետք է ավելացնեն կրթության և հետազոտությունների որակը, կապեն դրանք տեխնոլոգիաների ներմուծման, հարմարեցման և արդիականացման հետ²⁶³:
- Երկրի տնտեսության բարդացման գործում, որը պետք է հիմնականում իրականացվի ավելացված արժեքի շղթաների երկարացման միջոցով, նույնպես կարող է գործել վերը նշված ֆինանսավորման համակարգը՝ ելնելով այն հայտանիշից, որ ֆինանսավորվող ուղղահայաց և հորիզոնական ինտեգրացումը, աճեցնելով ավելացված արժեքի ծավալները, ավելացնում է նաև արտադրության արդյունավետությունը:

Հայաստանի պայմաններում բավականին խնդրահարույց է՝ ելնելով կառավարման արդյունավետության ավելի թույլ մակարդակից քան Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում:

²⁶² Հիմնված է ստոնիայի և Վրաստանի փորձի վրա: Հարկման ենթակա կլինեն միայն շահույթից ստացված ֆիզիկական անձանց եկամուտները:


²⁶³ Այն կարելի է իրագործել տեխնոլոգիա ներմուծողների պատվերներով իրականացվող կադրերի նախապատրաստման և պետական կամ համատեղ ֆինանսավորմամբ կատարվող տեխնոլոգիաների հարմարեցմանը կամ արդիականացմանն ուղղված հետազոտությունների միջոցով:

3. Հայաստանի տնտեսության ընդհանուր վերլուծությունը

Հայաստանի տնտեսության դինամիկան 1990-2020թթ.-ին, ելնելով տնտեսական աճի և ճգնաժամերի փուլերից, գործոններից և դրանց ազդեցությունների գնահատականներից, արդեն ներկայացվել է սույն հետազոտության առաջին փուլում²⁶⁴: Այս, հետազոտության երկրորդ փուլում տնտեսության ընդհանուր վերլուծությունն ընդգրկում է անկախությանն անմիջապես նախորդող 1990թ.-ը, որը հանդիսանում է հետազոտության բազային տարին և անկախության ժամանակահատվածը՝

1991-2021թթ., և նպատակ ունի պատասխաններ գտնել վերը նշված հարցերին տնտեսության արդյունավետության և բարդության աստիճանի դինամիկայի և դրանք պայմանավորող գործոնների վերաբերյալ:

Նկար 2.3.1-ում ներկայացված է ՀՆԱ-ի դինամիկան վերջին երեսուն տարիների ընթացքում՝ ներառյալ 2021թ.-ի երեք եռամսյակները²⁶⁵: Առաջին փուլը՝ 1991-1993թթ., ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված տնտեսական համակարգային ճգնաժամն էր²⁶⁶:



Նկար 2.3.1 ՀՆԱ, ՀՆԱ աճի տեմպերը, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Երկրորդ փուլը 1994-2008թթ.-ն էին, երբ Հայաստանի տնտեսությունը բնութագրվում էր վերականգնողական (1994-2003թթ.) և հետվերականգնողական (2004-2008թթ.) աճով և տնտեսական աճի բավականին բարձր տեմպերով²⁶⁷:

Երրորդ փուլը՝ հարաբերական լճացման շրջանն է, որը սկսվում է 2009թ. ճգնաժամային տարուց և շարունակվում է հաջորդող տասը

տարիներին²⁶⁸: Եվ վերջապես, չորրորդ փուլը 2020-2021թթ.-ն են՝ բնութագրվող և՛ համավարակով, և՛ անորոշ վիճակով ամբողջ աշխարհում՝ ինչպես տնտեսական աճի, այնպես էլ տնտեսության կառուցվածքի, Արցախյան Երկրորդ պատերազմի և Հայաստանի տնտեսության համար դրա հետևանքների առումով:

²⁶⁴ Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում, Մաս 1, 1.8. Հայաստանի Հանրապետության Տնտեսության Ակնարկ, ՀՌՀ, օգոստոս 2021:

²⁶⁵ 2022թ. փետրվարի տվյալներով տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ.-ին գնահատվել էր 105.8%, որը մոտավորապես բնութագրում է ՀՆԱ աճի տեմպերը և մոտիկ է Համաշխարհային բանկի 2022թ. հունվարի 106.1%

գնահատականին: Տես՝ Global Economic Prospects. January 2022. The World Bank, 2022.

²⁶⁶ Տնտեսության անկման միջին տարեկան տեմպերը՝ 17.3%:

²⁶⁷ 1994-2008թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը կազմել էր 8.2%, 1994-2003թթ՝ 6.7%, 2004-2008թթ՝ 9.5%, որի արդյունքում 2008թ. ՀՆԱ-ն կազմեց 1990թ. ՀՆԱ-ի 166%

²⁶⁸ 2009-2019թթ. միջին տարեկան տնտեսական աճը կազմել էր 2.4%, որը բավականին ցածր է:

Եթե վերցնենք անկախության ամբողջ ժամանակահատվածը՝ 1991-2021թթ, ընդունելով 2021թ. ՀՆԱ աճի տեմպը հավասար տնտեսական ակտիվության 5.8% աճի ցուցանիշին, ապա միջին տարեկան աճի տեմպը կկազմի 2.4%: Համեմատության համար 1991-2021թթ.-ին Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանի համաձայն միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 2.6%: Այսինքն Հայաստանի վիճակը աշխարհում 2021թ.-ին 1990թ.-ի համեմատ իրականում վատացել է:

Այդ վատացման պատճառները կապված են աճի տեմպերի խիստ տատանումների հետ. արագ աճի ժամանակահատվածները զուգորդվում են ճգնաժամերի հետ, որից հետո շատ ավելի դանդաղ վերականգնողական աճի հատվածների հետ, իսկ ճգնաժամերը շատ ավելի խորը բնույթ ունեն քան միջին հաշվով աշխարհում: Օրինակ՝ 2009թ. ճգնաժամի պատճառով տնտեսական անկումը Հայաստանում կազմել էր 14.1%, աշխարհում՝ 1.67%, 2020թ.-ին՝ 7.4% և 3.4%, համապատասխանաբար: Նույնիսկ հաշվի առնելով երկրի տնտեսության փոքր չափերը և բացության բարձր աստիճանը՝ վերը նշված թվերը վկայում են Հայաստանի տնտեսության բարձր անկայունության մասին՝ երկրի տնտեսական կառուցվածքը և տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերն արագ փոփոխվում են՝ գյուղատնտեսություն և արդյունաբերություն 1994-2000թթ.-ին, շինարարություն և ծառայություններ 2001-2008թթ.-ին, արդյունաբերություն և ծառայությունների ոլորտ 2010-2019թթ.-ին, ներքին սպառում՝ 2000-2008թթ.-ին և արտահանում՝ 2010-2019թթ.-ին: Դա նաև վկայում է որ երկիրը՝

- չի կարողանում բավարար չափով օգտվել իր էժան ու հարաբերականորեն որակյալ աշխատուժի հարաբերական առավելությունից²⁶⁹,
- բավարար չափով չի իրականացնում տեխնոլոգիաների ներմուծում և հետևաբար չի ամրապնդում իր էժան աշխատուժի համեմատական առավելությունը,
- անհրաժեշտ չափով չի վարում ավելացված արժեքի շղթաների ավելացմանը նպաստող քաղաքականություն, օրինակ գյուղմթերքների հետագա վերամշակման գործում²⁷⁰, որը մեր կարծիքով գյուղատնտեսության արդեն 6 տարի տևող ճգնաժամի հիմնական պատճառներից մեկն է:

Արդյունքում՝ տատանվում է նաև երկրի տնտեսության բարդության աստիճանը, որի հիմնական ցուցանիշներից մեկը երկրի կառուցվածքային փոփոխությունների անկայուն բնույթն է:

Հայաստանի ՀՆԱ-ի կառուցվածքն ունի բավականին ցածր դիվերսիֆիկացման աստիճան (Նկար 2.3.2), որը կառուցվածքի անկայունության հիմնական պատճառներից մեկն է: Մյուս պատճառը այն է, որ տեղի ունեցող ճգնաժամերի արդյունքում ամենաշատը տուժում են մինչ ճգնաժամը երկրի զարգացման հիմնական շարժիչ ուժերը հանդիսացող ոլորտները: Եթե 1998-2008 թթ.-ին Հայաստանի տնտեսական աճի լոկոմոտիվը եղել է շինարարության ոլորտը²⁷¹, այնուհետև հետագա 12 տարիներին տնտեսության կառուցվածքում գերիշխող են արտադրության, գյուղատնտեսության (մինչև 2016թ.), առևտրի և ծառայությունների ոլորտները, որտեղ վերջին երեքը²⁷² բնութագրվում էին ավելի ցածր արդյունավետությամբ քան շինարարությունը:

²⁶⁹ Դրա վառ օրինակն է ադամանդագործության և ոսկերչության ոլորտները, որոնք երկրի արտահանման ամենամեծ միավորներն էին 90-ականների վերջին և 2000-ականների սկզբին, հարաբերական առավելության կորուստը հիմնականում փոխարժեքի քաղաքականության և տեխնոլոգիաների անբավարար ներմուծման հետևանքով էր:


²⁷⁰ Բացառությամբ գինու և այլ սպիրտային արտադրանքի:

²⁷¹ Շինարարության արագ զարգացումը հնարավորություն տվեց արագ զարգանալու ոչ մետաղական արդյունահանող, շինանյութերի և լաբաներկային արդյունաբերությանը, նախագծային աշխատանքներին, այսինքն ձևավորվեց շինարարական քլաստերը հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացման միջոցով:

²⁷² Բացառությամբ ֆինանսական միջնորդության, ինչպես նաև հյուրանոցային և հասարակական սննդի ոլորտների, որոնց արդյունավետությունն ավելի բարձր է

Դիտարկելով ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների մասնաբաժինների վերջին քսան տարիների ընթացքում՝ կարող ենք նկատել տնտեսության զարգացման հետևյալ միտումները (Նկար 2.3.3): Մասնավորապես՝ տնտեսության առանցքային ճյուղի՝ մշակող արդյունաբերության ցածր, չնայած ավելացող և գյուղատնտեսության շատ բարձր, չնայած կրճատվող կշիռը²⁷³: Հայաստանում 1990թ.-ին գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 10.9% էր, որը 1995թ. դրությամբ կազմեց 31.5%, 2010թ.՝ 14.5%, 2020թ.՝ 11.5%: Արդյունաբերության²⁷⁴ համար պատկերը հետևյալն է՝ 1990թ.-ին՝ 37.8%, 1995թ.՝ 20.5%, 2010թ.՝ 15%, 2020թ.՝ 19.9%: Մշակող արդյունաբերության դեպքում՝ 1990թ.

տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 31% էր, 1995թ.՝ 11.3%, 2010թ.՝ 9%, 2020թ.՝ 11.9%: Համեմատության համար գյուղատնտեսության տեսակարար կշիռն աշխարհի ՀՆԱ-ում 1995թ.-ին կազմել էր 7.6%, 2010թ.՝ 3.7%, 2018թ.՝ 3.3%: Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն աշխարհի ՀՆԱ-ում 1995թ.-ին կազմել էր 16%, 2010թ.՝ 15.9%, 2018թ.՝ 15.4%: Բարձր միջին եկամտային խմբում, որին ներկայումս պատկանում է Հայաստանը, գյուղատնտեսության միջին տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1995թ.-ին կազմել էր 13%, 2010թ.՝ 7.2%, 2018թ.՝ 6.3%: Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը այդ խմբի ՀՆԱ-ում 1995թ.-ին կազմել էր 10.2%, 2010թ.՝ 21.4%, 2018թ.՝ 19.3%²⁷⁵:



Նկար 2.3.2 ՀՆԱ կառուցվածքը, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Այսպիսով, ելնելով վերը նշված համեմատություններից՝ Հայաստանը միջնաժամկետ հեռանկարում դեռ կունենա էժան աշխատուժի համեմատական առավելությունը, որի հիմնական ուղղությունը պետք է լինի աշխատուժի արտահոսքը գյուղատնտեսությունից և դրա ներհոսքը մշակող արդյունաբերություն ու մի շարք այլ ճյուղեր,

որոնց արդյունավետությունն էականորեն ավելի բարձր է քան գյուղատնտեսությունում: Տեխնոլոգիաների ներմուծումը կամ այլ կերպ յուրացումը հենց պետք է ապահովի այդ տեղաշարժը:

2020թ.-ին գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը կազմում էր ընդհանուր արտադրողականության

²⁷³ Գյուղատնտեսության տեսակարար կշիռը տնտեսության բարդացման հիմնական ցուցանիշներից մեկն է: Զարգացման ընթացքում գյուղատնտեսության տեսակարար կշիռը պետք է կրճատվի:


²⁷⁴ Արդյունահանող, մշակող արդյունաբերությունը, էներգետիկան և ջրամատակարարումը:

²⁷⁵ Համաշխարհային բանկ

52%-ը, մշակող արդյունաբերության արտադրողականության 44%-ը: Մոտավորապես նույն պատկերն էր նաև 2019թ.-ին և նախորդող տարիներին: Ելնելով արտադրողականության այդպիսի խզումներից՝ գյուղատնտեսական տեխնոլոգիաների ինտենսիվ ներմուծումն աշխատանքի արտադրողականության արագ աճի ապահովման նպատակով հիմք կհանդիսանա աշխատուժի տեղաշարժը գյուղատնտեսությունից ապահովելու համար: Ներկայումս այդ տեղաշարժը շատ դանդաղ է տեղի ունենում. 1997-2020թթ.-ի ընթացքում գյուղատնտեսական զբաղվածությունը կրճատվել է 564.2 հազարից մինչև 229.6 հազար կամ տարեկան 3.8%:

2003-2008թթ.-ի տնտեսական աճի լոկոմոտիվը՝ շինարարության ոլորտը, որը սույն ժամանակահատվածում զբաղեցնում էր ՀՆԱ միջինում 25%-ը, 2009թ.-ից հետո 2020թ.-ի դրությամբ նվազել է մինչև 7%: Այս կրճատումը տեղի է ունեցել չնայած շինարարության ոլորտում բավականին խոշոր կապիտալ ներդրումների և հիփոթեքային վարկերի արագ ընդլայնմանը: Այսպիսով, շինարարության ոլորտի կողմից ստեղծված կլաստերային զարգացումը երկարաժամկետ հեռանկարում ըստ էության վերացավ:

- Այլ ոլորտներ
- Այլ ծառայություններ
- Առողջապահություն և բնակչության սոց. ապաստարկում
- Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոց. ապ.
- Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն
- Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
- Կացության և հանրային սննդի կազմակերպում
- Առևտուր
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում
- Մշակող արդյունաբերություն
- Տնային տնտեսությունների գործունեություն
- Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
- Կրթություն
- Վարչարարական և օժանդակ գործունեություն
- Անշարժ գույքի հետ կապված գործունեություն
- Տեղեկատվություն և կապ
- Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
- Շինարարություն
- Էլեկտրակ., գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Հանրագործական արդյունաբերություն



Նկար 2.3.3 ՀՆԱ կառուցվածքը, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


ՀՆԱ-ի կառուցվածքի մեկ այլ առանձնահատկություն կարելի է համարել ենթակառուցվածքների և տնտեսության ինստիտուցիոնալ շրջանակների հետ կապված հատվածների փոքր մասնաբաժինը: Զարգացած երկրների փորձի համաձայն՝ կարելի է ասել, որ նշված հատվածները, որպես կանոն, պայմանավորում են տնտեսության այնպիսի խոշոր ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը, ինչն իր հերթին խթանում է տնտեսական աճը և ընդհանուր տնտեսական զարգացումը:

Այսպիսով, ենթակառուցվածքներին և ինստիտուցիոնալ կառուցվածքին առնչվող հատվածների ցածր մասնակցությունը որոշում է նրա խոցելիությունն արտաքին ցնցումների նկատմամբ, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարում առաջացնում է տնտեսական աճի դանդաղում:

Հարկ է նշել նաև, որ առողջապահության, կրթության և գիտության ոլորտները նույնպես ցածր մասնաբաժին ունեն ՀՆԱ կազմում, ինչը բացասաբար է անդրադառնում համախառն արտադրանքի ընդլայնման ներուժի վրա:

Հաջորդ ցուցանիշը միջանկյալ սպառումն է, որը ներկայացված է Նկար 2.3.4-ում: Միջանկյալ սպառումը ներառում է հաշվետու ժամանակաշրջանում արտադրական գործընթացում ամբողջությամբ սպառված ապրանքներն ու ծառայությունները²⁷⁶: Նշենք, որ միջանկյալ սպառման կառուցվածքում բացարձակ առաջատարն է մշակող արդյունաբերությունը, որը 2020թ. զբաղեցնում է

ընդհանուր միջանկյալ սպառման մոտ 20%-ը: Ընդ որում, ինչպես մշակող արդյունաբերության ոլորտում, այնպես էլ մնացած բոլոր ոլորտներում նկատելի է միջանկյալ սպառման աճ: Սակայն, հաշվի առնելով նյութատարության ցուցանիշը, պետք է նշել, որ զգալի փոփոխություններ չեն դիտարկվում, ինչը վկայում է ողջ տնտեսության ոչ բավարար արդյունավետության մասին վերջին 10-12 տարիների ընթացքում:



Նկար 2.3.4 Միջանկյալ սպառման կառուցվածքը, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կապիտալի կառուցվածքն ըստ ոլորտների, ինչպես հաշվեկշռային, այնպես էլ մնացորդային արժեքով, ցույց է տալիս բավականին չափավոր աճ ինչպես ընդհանուր տնտեսության մակարդակով, այնպես էլ առանձին հատվածների մեծ մասում (Նկար 2.3.5 և Նկար 2.3.6): Կապիտալի ամենամեծ աճը դիտարկվում է էներգետիկայի, արդյունաբերության, անշարժ գույքի և կրթության ոլորտներում:


Կարևոր են համարվում տնտեսության մեջ կապիտալի արդյունավետ օգտագործման ցուցանիշները: Այս առումով մենք դիտարկել ենք

կապիտալ-աշխատուժ հարաբերակցության, աշխատանքի արտադրողականության և կապիտալատարության ցուցանիշները: Կապիտալ-աշխատանք հարաբերակցությունը (capital labour ratio) կապիտալի և աշխատանքի հարաբերակցությունն է, որն օգտագործվում է արտադրական գործընթացում, ձեռնարկությունում կամ արդյունաբերության մեջ: Կապիտալի խորացումը (կապիտալ-աշխատուժ հարաբերակցության աճ) իրավիճակ է, երբ տնտեսությունում աճում է մեկ աշխատողի հաշվով կապիտալի չափը:

²⁷⁶ «Ազգային հաշիվների համակարգ 2008», Եվրոհանձնաժողով, Արժույթի միջազգային հիմնադրամ, Տնտեսական համագործակցության և զարգացման


կազմակերպություն, Միացյալ ազգերի կազմակերպություն և Համաշխարհային բանկ: Նյու-Յորք, 2012թ.:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 2.3.5 Կապիտալի կառուցվածքն ըստ ոլորտների, հաշվեկշռային արժեք, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am




Նկար 2.3.6 Կապիտալի կառուցվածքն ըստ ոլորտների, մնացորդային արժեք, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը Հայաստանի տնտեսությունում վերջին տասը տարիների ընթացքում ցույց է տալիս զգալի աճի միտում (Նկար 2.3.7): Ցուցանիշի կտրուկ փոփոխություն է նկատվում 2009թ.-ին, երբ մեկ տարվա ընթացքում կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը կրկնապատկվեց: Աշխատանքի արտադրողականության աճը

տեղի է ունենում ավելի չափավոր տեմպերով: Վերջին տասը տարիների ընթացքում աշխատանքի արտադրողականության ցուցանիշը գրեթե կրկնապատկվել է: Վերջապես, կապիտալատարության ցուցանիշը 2009թ.-ին գրանցել է կտրուկ աճ, ապա նկատվում է դինամիկայի լճացում:



Նկար 2.3.7. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականություն:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Տնտեսությունում միջին ամսական աշխատավարձի դինամիկան ներկայացված է Նկար 2.3.8-ում: 2020 թվականի դրությամբ տնտեսության միջին աշխատավարձը կազմել է 189 716 դրամ, իսկ աշխատանքի գինը 2019 թվականի դրությամբ կազմել է 206 877 դրամ:

Սակայն աճի տեմպերի առումով կարելի է արձանագրել դրա էական դանդաղում վերջին առնվազն 8-9 տարիների ընթացքում: 2012թ.-ին անվանական աշխատավարձերի կտրուկ աճը պայմանավորված է եկամտային հարկի

հաշվարկման մեթոդաբանության փոփոխությամբ համաձայն 2013թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային բարեփոխման, որը միավորեց հարկվող եկամտահարկի բազան և սոցիալական ապահովության վճարները՝ ներմուծելով ընդհանուր եկամտահարկի գաղափարը: Այս բարեփոխման արդյունքում գրանցվել է անվանական աշխատավարձի կտրուկ աճ, մինչդեռ իրական աշխատավարձերը մնացել են գրեթե անփոփոխ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 2.3.8. Միջին աշխատավարձը և աշխատանքի գինը տնտեսությունում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am Նշում՝ 2012-2013թթ. աշխատավարձի ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով, 2012թ. համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են ըստ 01.01.2013թ.-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (<O-246) գործող մեթոդաբանության

Միջին աշխատավարձերն ըստ ոլորտների ինչպես մակարդակի, այնպես էլ աճի տեմպերի առումով էականորեն տարբերվում են: Ամենաբարձր եկամուտները դիտարկվում են ֆինանսական հատվածում, բացառությամբ վերջին 2-3 տարիների, երբ տեղեկատվության և

կապի ոլորտում միջին աշխատավարձի մակարդակը գերազանցեց ֆինանսական հատվածին: Ամենացածր աշխատավարձը դիտարկվում է գյուղատնտեսության, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում:



Նկար 2.3.9. Միջին աշխատավարձն ըստ տնտեսական գործունեության տեսակների:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Տնտեսական աճի և զարգացման տեսանկյունից կարևոր է նաև դիտարկել զբաղվածությունն ըստ տնտեսության ոլորտների: Վերջին քսան տարիների

ընթացքում զբաղվածության դինամիկայում նկատվել է զբաղվածների թվի աննշան անկում: Զբաղվածների ամենամեծ տեսակարար կշիռը գյուղատնտեսության ոլորտում է, սակայն 2000

թվականի համեմատ գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը նվազել է գրեթե երեք անգամ:

Հանրային հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը և բացարձակ քանակը նկատելիորեն աճել է: Այսպիսով, եթե 2004 թվականին պետական հատվածում զբաղվածների կշիռը ընդհանուր զբաղվածության նկատմամբ կազմել է մոտ 3%, իսկ բացարձակ թվով՝ 29.1 հազար մարդ, ապա 2019 թվականին կշիռը կազմել է մոտ 8-10%, կամ 89.5 հազար մարդ:

Միաժամանակ, եթե 2000 թվականին արտադրության ոլորտում ներգրավված է եղել 180 հազար մարդ, ապա 2020 թվականին արտադրությունում զբաղվածների թիվը կազմել է 113.5 հազար մարդ: Առևտրի ոլորտում, ինչպես նաև ծառայություններ մատուցող այլ ոլորտներում, զբաղվածների թիվն աճել է մոտ 30 տոկոսով: Այսպիսով, ինչպես զարգացած և զարգացող երկրների մեծ մասում, ներկայումս Հայաստանում զբաղվածների ամենամեծ մասնաբաժինը ընդհանուր առմամբ բաժին է ընկնում ծառայությունների ոլորտին:




Նկար 2.3.10. Զբաղվածությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Նկար 2.3.11-ում ներկայացված է տնտեսության տարբեր ոլորտներում գների ինդեքսների դինամիկան: Ինչպես տեսնում ենք, ինդեքսների մեծ մասը բավականին անկայուն է: Ընդ որում, ամենամեծ անկայունությունը նկատվում է գյուղատնտեսության ոլորտում, որն ամենայն հավանականությամբ պայմանավորված է ոլորտի առանձնահատկություններով:

2008թ.-ին շինարարության ոլորտում դիտարկվում է գների աճ, ինչը կարելի է պայմանավորել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներով և այս ընթացքում Հայաստանում շինարարության ոլորտի կրճատմամբ: Ի վերջո, հարկ է նշել, որ Նկար 2.3.11-ում ներկայացված ինդեքսների մեծ մասի դինամիկան ներդաշնակված չէ միմյանց հետ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 2.3.11. Գների ինդեքսներն ըստ տնտեսության ճյուղերի, %, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հայկական ապրանքների արտահանումը ԵԱՏՄ երկրներ 2015-2018 թվականներին նկատելի աճ է գրանցել, որից հետո առաջիկա երեք տարիներին արտահանման ծավալները մնացել են նույն մակարդակի վրա: Արտահանման մեջ գերակշռող մասնաբաժինը (մոտ 70%) ընկնում է մշակող

արդյունաբերության արտադրանքին: Երկրորդ տեղում են գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության արտադրանքը: Մնացած հատվածները կառուցվածքում աննշան դիրքեր են զբաղեցնում:




Նկար 2.3.12. Արտահանման ծավալները դեպի ԵԱՏՄ երկրներ, մլն ԱՄՆ դոլար:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինևույն ժամանակ, դեպի այլ երկրներ արտահանման կառուցվածքը փաստացի բաժանված է երկու հատվածի՝ մշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության արտադրանքի: Արտահանման ծավալների

դինամիկան կրկին ցուցաբերել է աճի միտում մինչև 2017 թվականը, սակայն հաջորդ 3 տարիներին արտահանման ծավալները գրեթե չեն փոփոխվել:




Նկար 2.3.13. Արտահանման ծավալները դեպի այլ երկրներ, մլն ԱՄՆ դոլար:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա այս դեպքում էլ դիվերսիֆիկացիա չի նկատվում: Ներմուծման հիմնական բաժինն ընկնում է մշակող արդյունաբերության արտադրանքին: Ներմուծման մեջ չեն չեն մասնաբաժին է զբաղեցնում գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտը:

2015-2019 թվականներին գրանցվել է ներմուծման ծավալների աճ, իսկ 2020 թվականին՝ կտրուկ անկում՝ պայմանավորված COVID-19 համավարակի և Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքներով:




Նկար 2.3.14. Ներմուծման ծավալներն այլ երկրներից, մլն ԱՄՆ դոլար:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Վերջապես, քանի որ տնտեսության ֆինանսավորման առանցքային աղբյուրը, որպես կանոն, ֆինանսական հատվածն է, ուստի սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է տնտեսության ճյուղերի վարկավորման կառուցվածքն ինչպես բանկային համակարգի, այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից: Նկար 2.3.15-ում ներկայացված է բանկային համակարգի կողմից տնտեսության ճյուղերի վարկավորման կառուցվածքը:

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր վարկերի ամենամեծ տեսակարար կշիռն ընկնում է շինարարության, առևտրի, մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներին, ընդ որում ամեն տարի դիտարկվում է այս ոլորտների մասնաբաժնի զգալի աճ: Նշենք, որ 2020 թվականին դիտարկվել է ընդհանուր վարկավորման զգալի աճ՝ մոտ 17 տոկոսով:




Նկար 2.3.15. Առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, մլրդ դրամ:

Աղբյուր՝ կազմված է ՀՀ ԿԲ փվալների բազայի հիման վրա – www.cba.am

Միևնույն ժամանակ, վարկային կազմակերպությունների կողմից վարկավորման կառուցվածքը զգալիորեն տարբերվում է բանկային համակարգից (Նկար 2.3.16): Գերիշխող բաժինը զբաղեցնում է ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը, որը միաժամանակ զգալի աճ է գրանցում: Զգալի

աճ է նկատվում նաև գյուղատնտեսության ոլորտում: Սակայն վարկերի մեծ մասն այս կամ այն կերպ մնում է ֆինանսական հատվածում, ինչը նշանակում է, որ ֆինանսավորման մեծ մասը չի գնում իրական հատված և չի նպաստում տնտեսական աճին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 2.3.16. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է ՀՀ ԿԲ տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

3.1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն

Գյուղատնտեսությունը բավականին կարևոր է երկրի ՀՆԱ-ի համար: Կարևորությունը պայմանավորվում է տեսակարար կշռով ինչպես ՀՆԱ-ում, այնպես էլ զբաղվածության մեջ՝ 2020թ.-ին դրանք կազմել են 11% և 21.8%: Ներկայումս, ըստ ՀՆԱ-ում տեսակարար կշռի, ոլորտը երկրորդն է մշակող արդյունաբերությունից հետո և առաջինը՝ ելնելով զբաղվածությունից:


Ելնելով զարգացման միջազգային փորձից՝ գյուղատնտեսության դերը տնտեսական զարգացման մեջ անընդհատ նվազում է դրա կարևորության աստիճանի նվազման հետ զուգահեռ: Մյուս կողմից գյուղատնտեսությունը հասնող զարգացման ընթացքում հանդիսանում է աշխատուժի մատակարարող՝ տնտեսության այլ ոլորտների համար:

Հայաստանի դեպքում գյուղատնտեսության դերը նույնպես նվազում է, սակայն շատ ավելի դանդաղ տեմպերով, քան միջին հաշվով աշխարհում և մասնավորապես բարձր միջին եկամտային խմբում, որին ներկայումս

պատկանում է Հայաստանը: Վերջին քսան տարիների ընթացքում գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կրկնակի նվազել է՝ 23%-ից հասնելով 11%-ի (Նկար 3.1.1): Նույն միտումը նկատվում է նաև տնտեսական աճի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշռի դինամիկայում: Հարկ է նշել, որ վերջին հինգ տարիներին նկատվում է գյուղատնտեսության անկում (Նկար 3.1.1): Այսպիսով՝ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշռի նվազումը Հայաստանում ընդհանուր համաշխարհային օրինաչափությունների հետ մեկտեղ պայմանավորված է նաև ոլորտի անկմամբ:

Համեմատելով Հայաստանի ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը համաշխարհային, ինչպես նաև բարձր միջին եկամտուններ ունեցող երկրների միջին ցուցանիշի հետ, կարելի է նկատել, որ տվյալ ոլորտը Հայաստանում ներկայումս ունի ՀՆԱ մոտ երկու անգամ ավելի մեծ կշիռ քան համապատասխան միջինները:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.1.1. A ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեյի և Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Վերոնշյալը նաև վկայում է գյուղատնտեսությունից աշխատուժի՝ դեպի այլ ճյուղեր տեղաշարժի ավելի ցածր արագության մասին քան աշխարհում և բարձր միջին եկամուտ ունեցող երկրներում:

Ոլորտի կառուցվածքը ներկայացված է Նկար 3.1.2-ում: Գյուղատնտեսության ոլորտի հիմնական հատվածներն են բուսաբուծությունը

ու անասնաբուծությունը, որոնք 2021 թվականի դրությամբ զբաղեցնում են ամբողջ ոլորտի համապատասխանաբար 48% և 47%-ը: Զկնորսության հատվածը զարգանում է շատ ավելի արագ քան բուսաբուծությունն ու անասնաբուծությունը և դրա տեսակարար կշիռը 2008թ. 1%-ից հասել է մոտ 4.4%-ի 2021թ.-ի դրությամբ:




Նկար 3.1.2. Գյուղատնտեսական հատվածի կառուցվածքը, %.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեյի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ուշագրավ է նաև անասնաբուծության տեսակարար կշռի աճը բուսաբուծության համեմատ, որը վկայում է անասնաբուծության աճող և բուսաբուծության նվազող հարաբերական արդյունավետության մասին:

Ավելացված արժեքի դինամիկան կրկնում է ոլորտի թողարկման ծավալների դինամիկան: Բավականին արագ աճը փոխարինվում է լճացմամբ 2012-2013թթ.-ին և սկսում նվազել սկսած 2016թ.-ից (Նկար 3.1.3):

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.1.3. Ավելացված արժեքը A ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինչև 2011թ.-ը գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է միջանկյալ սպառման աճի զգալի տեմպեր: Այնուհետև 2011թ.-ն աչքի է ընկնում տվյալ ցուցանիշի կտրուկ աճով, որից հետո սկսվում է լճացման շրջանը: Վերջին երկու տարիները բնութագրվում են միջանկյալ սպառման որոշակի անկմամբ:

Մինևույն ժամանակ մինչև 2009թ.-ը ոլորտում թողարկման նյութատարության

ցուցանիշն²⁷⁷ ուներ նվազման միտում, ինչը խոսում էր ոլորտում արդյունավետության բարելավման մասին: Սակայն 2009թ.-ից հետո դիտարկվում է նյութատարության ցուցանիշի փոքր աճ, ինչը թույլ է տալիս դատել ոլորտում արդյունավետության որոշակի կորստի մասին վերջին 11-12 տարիների ընթացքում:



Նկար 3.1.4. Միջանկյալ սպառումն A ոլորտում, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Գյուղատնտեսության զարգացումը բնութագրող հաջորդ ցուցանիշը ոլորտում օգտագործվող կապիտալի ծավալներն են (տե՛ս Նկար 3.1.5): Ըստ հաշվեկշռային և մնացորդային արժեքների ոլորտում ներդրված կապիտալի ծավալների դինամիկան

բնութագրվում է տատանողականությամբ և կրում է ցիկլային բնույթ: Ցուցանիշների կտրուկ անկումը 2016թ.-ից հետո, կապված է կապիտալի հաշվարկման մեթոդաբանության փոփոխության հետ: Ցուցանիշների որոշակի աճ է նկատվում 2019թ.-ին:

²⁷⁷ Միջանկյալ սպառումը հարաբերած թողարկմանը

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.1.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը A ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինչև 2016թ.-ը ներառյալ կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունն աճում էր, սակայն հաջորդող տարիներին տեղի ունեցավ ցուցանիշի կտրուկ անկում (Նկար 3.1.6): 2017թ.-ից հետո կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը կրճատվել է մոտ 6 անգամ: Միևնույն ժամանակ, կապիտալատարության ցուցանիշը

տարեց տարի նույնպես կրճատվում է, այն ժամանակ, երբ աշխատանքի արտադրողականությունն ունի աճի միտում: Նշենք նաև, որ 2018-2019թթ.-ը չի բնութագրվում աշխատանքի արտադրողականության դրական դինամիկայով:



Նկար 3.1.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունն A ոլորտում:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում միջին աշխատավարձին, ինչպես նաև աշխատանքի գինին՝ տնտեսության ընդհանուր միջինի համեմատ, կարելի է նկատել բավականին զգալի տարբերություն (Նկար 3.1.7): Եթե 2020թ.-ի դրությամբ միջին աշխատավարձը գյուղատնտեսության ոլորտում 122,482 դրամ էր, ապա ամբողջ տնտեսությունում այն կազմում էր 189,716 դրամ: Այսպիսով, ոլորտում աշխատանքի վարձատրությունը 25-30%-ով ցածր է տնտեսության միջինից:

Ավելին, աշխատավարձի դինամիկան ցույց է տալիս տնտեսության և ոլորտում միջին աշխատավարձերի մակարդակների միջև ճեղքի ավելի ու ավելի մեծացման միտում:

Աշխատանքի գինն ունի նույն միտումը, որը կարելի է նկատել միջին աշխատավարձի դինամիկայի դեպքում: Միևնույն ժամանակ, աշխատանքի գինը տնտեսությունում աճում է ավելի արագ տեմպերով, քան գյուղատնտեսության ոլորտում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.1.7. Աշխատավարձ և աշխատանքի գինն A ոլորտում, դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչպես տեսնում ենք Նկար 3.1.8-ում, վերջին 18 տարիների ընթացքում ոլորտում զբաղվածների թիվը կրճատվել է ավելի քան երկու անգամ: Միաժամանակ, նվազել է նաև գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների

տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածների մեջ, որը 2019 թվականի դրությամբ կազմել է 22%՝ 2002 թվականի 45%-ի համեմատ: Այս միտումը պայմանավորված է արտադրողականության աճով:



Նկար 3.1.8. Զբաղվածություն և աշխատանքի արտադրողականությունն A ոլորտում :


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Նկարը նաև վկայում է գյուղատնտեսությունում արտադրողականության ավելի արագ աճի մասին, քան ընդհանուր տնտեսությունում²⁷⁸, ինչը թույլ է տվել կրճատել գյուղատնտեսական արտադրողականության ճեղքվածքը տնտեսության միջինի նկատմամբ 2002թ. 37%-ից մինչև 52.8% 2020թ.-ին:

Այսպիսով, չնայած նրան, որ արտադրողականության աճի արդյունքում գյուղատնտեսության ներքին մրցունակության աստիճանը դիտարկվող ժամանակահատվածում բարձրացել է, եկամտային խզումը գյուղատնտեսության և տնտեսության այլ հատվածների մեջ մնում է բավականին բարձր, որը և գյուղատնտեսության շարունակվող ներքին անմրցունակության հիմնական պատճառն է: Ինչ վերաբերում է

գյուղատնտեսության արտաքին մրցակցությանը, ապա արտադրողականության համեմատությունները բարձր միջին եկամտային խմբի հետ բերված են Նկար 3.1.9 Նկար 3.2.9-ում:

Նկարը վկայում է, որ ընդհանուր տնտեսության տեսանկյունից լավագույն տարիներն էին 2007 և 2008 թվականները, որից հետո տեղի է ունեցել հարաբերական արտադրողականության անկում և 2008թ. մակարդակը 2018թ. դրությամբ դեռ չի վերականգնվել: Գյուղատնտեսությունում պատկերը այլ է՝ 2003թ. սկսած արտադրողականությունը Հայաստանում գերազանցում է խմբի միջին արտադրողականությունը, իսկ 2018թ. դրությամբ կազմել էր խմբի միջինի 138%-ը:




Նկար 3.1.9. Հայաստանի աշխատանքի արտադրողականությունը՝ ընդհանուր և գյուղատնտեսական ոլորտում ԱՄՆ 2010թ. համադրելի դոլարներով և համեմատությունը բարձր միջին եկամտային խմբի ցուցանիշների հետ, %

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեյի և Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am, www.worldbank.org

²⁷⁸ Ընդհանուր տնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը 2002-2020թ. աճել է միջին տարեկան 5% գյուղատնտեսությունում 6,4% աճի համեմատ

Նկարը վկայում է, որ 1995-2020թթ. գյուղատնտեսական արտադրության ներքին պայմանները վատթարացել են, քանի որ գյուղատնտեսության գները աճել են 154.7% այն դեպքում, երբ միջին գները (ՀՆԱ դեֆլատոր) աճել են 2.8 անգամ, իսկ արդյունաբերական, շինարարության, տրանսպորտի և կապի գները

նույնպես նկատելիորեն ավելի շատ, քան գյուղատնտեսական ապրանքների գները²⁷⁹, որը հիմնական պատճառն է վերը նշված եկամուտների խզման պահպանման և գյուղատնտեսական շարունակվող ճգնաժամի չնայած արտադրողականության բավականին կայուն աճին:



Նկար 3.1.10. Գների համեմատական դինամիկան տնտեսության հիմնական ոլորտներում ոլորտում ըստ 1995-2020թթ. կուտակային դեֆլատորի, %


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դիտարկելով Հայաստանի գյուղատնտեսական ապրանքների արտահանումը ԵԱՏՄ երկրներ (տե՛ս Նկար 3.1.11), ինչպես նաև այլ երկրներ (տե՛ս Նկար 3.1.12)՝ ապա կարելի է նկատել, որ գրանցվել է ցուցանիշների զգալի աճ: Ընդ որում, առավել բարձր աճի տեմպեր են


նկատվում դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման դեպքում: Ընդ որում արտահանման երկու խմբերում էլ ամենամեծ կշիռն է զբաղեցնում գյուղատնտեսական, որսորդության արտադրանքը և հարակից ծառայությունները:

²⁷⁹ Դա նշանակում է որ միավոր գյուղատնտեսական արտադրանքի գնողունակությունը 2020թ. նվազել է 1995թ. նկատմամբ մոտ 1.8 անգամ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.1.11. Գյուղատնտեսության ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի այլ երկրներ, մլն դրամ
 Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/




Նկար 3.1.12. Գյուղատնտեսության ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ, մլն դրամ
 Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում էներգոսպառմանը, անհրաժեշտ է նշել, որ էներգիայի սպառման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ընկնում է նավթամթերքին, որին հաջորդում է էլեկտրաէներգիայի սպառումը (տե՛ս Նկար 3.1.13): Թողարկման

էներգատարության տեսանկյունից կարելի է նկատել, որ 2014թ.-ին տեղի է ունեցել կտրուկ աճ՝ նավթամթերքի օգտագործման աճի հաշվին, որին հաջորդում է բավականին կայուն շրջան՝ բնութագրվող էներգատարության աննշան նվազմամբ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.1.13. Էներգետիկ հաշվեկշիռը գյուղատնտեսության ոլորտում

Աղբյուր՝ Կազմվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության վիճակագրական բաժնի կողմից հրատարակվող «Էներգետիկ հաշվեկշիռ» զեկույցների հիման վրա – <https://unstats.un.org/unsd/energystats/pubs/balance/>

Քանի որ Հայաստանում ֆինանսական միջնորդության կազմակերպությունների տեսանկյունից կարելի է հիմնականում առանձնացնել բանկերն ու վարկային կազմակերպությունները, վերջիններս դարձել են ոլորտի մասնավոր ֆինանսավորման

առանցքային աղբյուրը: Սույն հետազոտության շրջանակներում մենք դիտարկել ենք ոլորտի վարկավորման կառուցվածքն ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ վարկերի արժույթային կառուցվածքի տեսանկյունից:



Նկար 3.1.14. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ A ոլորտի, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի մոտ 70%-ն ապահովվում է բանկային հատվածի կողմից: Ինչպես տեսնում ենք Նկար 3.1.14-ում, գյուղատնտեսության հատվածում ամենաշատ վարկավորված ոլորտը բուսաբուծությունն է՝ ինչպես դրամով, այնպես էլ

արտարժույթով տրամադրված վարկերի առումով: Ընդհանուր առմամբ, այս հատվածին բաժին է ընկնում բանկային հատվածի վարկերի մոտավորապես 50%-ը: Երկրորդ տեղը զբաղեցնում է անասնաբուծությունը: Միաժամանակ, հարկ է նշել, որ

անասնաբուծությունը հիմնականում վարկավորվում է դրամով: Մնացած հատվածները բանկային հատվածի միջոցով

լրացուցիչ միջոցներ ներգրավելու առումով առավել փոքր դիրք են զբաղեցնում:



Նկար 3.1.15. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ A ոլորտի, մլն դրամ:
Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Վարկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության վարկավորման կառուցվածքը ցույց է տալիս վարկերի առավել հավասարաչափ բաշխում բուսաբուծության և անասնապահության ոլորտների միջև, որոնք հավասարապես կիսում են ստացված բոլոր վարկերի 80%-ը (տե՛ս Նկար 3.1.15): Նշենք նաև, որ կարելի է դիտարկել ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության ոլորտի վարկավորման ծավալների բավականին դինամիկ աճ:

Ամփոփելով, պետք է նշել որ չնայած գյուղատնտեսության որոշակի առաջընթացի, որը հիմնականում արտահայտվում է աշխատանքի արտադրողականության, արտահանման և փոխառու միջոցների ծավալների աճով, եկամտային խզումը գյուղատնտեսության և տնտեսության այլ ոլորտների միջև չի նվազում, որը և հանդիսանում է ներկայիս ճգնաժամի հիմնական պատճառը: Մյուս կողմից չնայած գյուղատնտեսությունից աշխատուժի որոշակի արտահոսքի, դրա ծավալները մնում են ոչ

բավարար: Վերջինս պայմանավորվում է տնտեսության այլ ոլորտներում բարձր և պահպանվող գործազրկությամբ, որը և սահմանափակում է գյուղատնտեսությունից աշխատուժի արտահոսքը:

Այսպիսով՝ գյուղատնտեսության զարգացման առանցքային խնդիր է հանդիսանում եկամտների առաջանցիկ աճի ապահովումը, որը պետք է իրականացնել մի քանի ուղղություններով՝

- ❖ Գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնության աճի ապահովումը:²⁸⁰
- ❖ Գյուղատնտեսական արտադրության վերամշակման հիման վրա ավելացված արժեքի շղթաների ընդլայնումը և խորացումը:²⁸¹
- ❖ Հաշվի առնելով վերը նշված արտաքին բավականին բարձր արդյունավետությունը՝ արտահանման աճի ապահովումը:
- ❖ Ապրանքայնության բարձր աստիճան ունեցող արտադրողների նպաստակային սուբսիդավորումը:
- ❖ Փոխառու միջոցների գների նվազեցումը:

²⁸⁰ Ներկայումս ապրանքայնության աստիճանը 50 և 60 տոկոսի սահմաններում է


²⁸¹ Ելնելով Հայաստանի առանձնահատկություններից դա հիմնականում սննդի արդյունաբերությունն է

3.2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում

Հասնող զարգացման համար առաջնային կարևորություն ունի մշակող արդյունաբերության և դրա հետ կապված ոլորտների զարգացումը ներմուծվող կամ այլ կերպ յուրացվող տեխնոլոգիաների հիման վրա: Այդ կապակցությամբ հանքագործական արդյունաբերությունը կարևոր է մի շարք առումներով, մասնավորապես արտահանման միջոցով երկրի ֆինանսական ռեսուրսների ընդլայնումը և ներքին սպառման միջոցով օգտակար հանածոների վրա հիմնված ավելացված արժեքի ներքին շղթաների ընդլայնումը և երկարացումը: Մյուս կողմից, ելնելով ոլորտի բարձր կապիտալատարությունից և ցածր աշխատատարությունից, այն չունի նշանակալի ազդեցություն աշխատատեղերի ստեղծման վրա:

Ներկայումս Հայաստանի տարածքում հայտնաբերվել են ավելի քան 480 օգտակար հանածոների հանքավայրեր, մասնավորապես՝ երկաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի, ալյումինի և նեֆելինային սիենիտի: Այժմ Հայաստանում գործում են յոթ պղնձամոլիբդենային, երեք պղնձի, տասներեք ոսկու և ոսկու բազմամետաղային, երկու բազմամետաղային և երկու երկաթի հանքավայրեր:

Ոլորտի ծավալները բացարձակ մեծությամբ ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ տարվա միջին տարեկան գներով, դրսևորում են կայուն առաջանցիկ աճ (Նկար 3.2.1): Նշենք նաև, որ վերջին 20 տարիների ընթացքում ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում էականորեն աճել է՝ 0.77%-ից հասնելով 5.54%-ի 2021թ.-ի դրությամբ:



Նկար 3.2.1. Բ ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ամբողջ 2001-2020թթ. ժամանակահատվածում ոլորտի ներդրումը գումարային տնտեսական աճին կազմել է 5.55%, ինչը նշանակում է, որ ոլորտը հանդիսացել է


տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Ոլորտի կառուցվածքում (Նկար 3.2.2) առանցքային տեղը զբաղեցնում է մետաղական

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

հանքաքարի արդյունահանումը՝ ոլորտի թողարկման շուրջ 95%-ը: Հաշվի առնելով վերջին 10-15 տարվա ընթացքում մետաղների, հատկապես պղնձի, համաշխարհային

պահանջարկի կայուն աճը՝ կարելի է ենթադրել, որ ոլորտը կշարունակի մնալ Հայաստանի զարգացման շարժիչ ուժերից մեկը:




Նկար 3.2.2. Բ ոլորտի կառուցվածքը, մլն դրամով

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով, որ արդյունահանման ոլորտը բավականին արագ զարգացող ոլորտ է՝ ավելացված արժեքի ծավալները նույնպես աճի

միտում են դրսևորում հատկապես վերջին մի քանի տարիների ընթացքում (Նկար 3.2.3):




Նկար 3.2.3. Ավելացված արժեքն Բ ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Նույն միտումը նկատվում է նաև միջանկյալ սպառման ծավալների դինամիկայում (Նկար 3.2.4): Մինևնույն ժամանակ նյութատարության ցուցանիշը, որը 2009-2015թթ.-ին աճի միտում է

ցուցաբերել, վկայում է ոլորտի արդյունավետության անկման մասին: Այս ցուցանիշի դրական միտումներ են նկատվել 2005-2008թթ.-ին և 2016-2019թթ.-ին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.2.4. Միջանկյալ սպառումը B ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Արդյունահանման ոլորտում հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների ծավալները զգալիորեն աճել են հատկապես վերջին մի քանի տարիներին (Նկար 3.2.5): Սակայն

մնացորդային արժեքի պարագայում վերջին 13 տարիների ընթացքում ծավալների փոփոխությունը կազմել է 50%:




Նկար 3.2.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը B ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում դիտարկվում է կապիտալատարության անկում: Եթե 2009թ.-ին կապիտալատարությունը կազմել է 5.75, ապա 2020թ.-ին այն կազմում է շուրջ 3.17 (Նկար 3.2.6): Կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը վերջին 15 տարիների ընթացքում զգալիորեն աճել է, ինչը, անշուշտ, վկայում է

դրական տեխնոլոգիական փոփոխությունների մասին: Այնուամենայնիվ, 2020թ.-ին դիտարկվում է սույն ցուցանիշի որոշակի անկում: Աշխատանքի արտադրողականությունը վերջին տարիներին նույնպես զգալիորեն աճել է՝ հիմնականում կապիտալազինվածության աճի շնորհիվ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.2.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականությունը B ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Արտադրողականության աճի շնորհիվ ոլորտում զգալիորեն աճել է նաև աշխատավարձի մակարդակը (Նկար 3.2.7)՝ կրկնակի գերազանցելով տնտեսության միջին

աշխատավարձը: Նույնը կարելի է ասել աշխատանքի գնի մասին, որը մոտ երեք անգամ գերազանցում է նույն ցուցանիշը տնտեսության մակարդակով:




Նկար 3.2.7. Աշխատավարձ և աշխատանքի գինը B ոլորտում, դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչպես արդեն նշվել է, ոլորտը կապիտալահնարունակ թնայած ունի և այդ պատճառով ցածր աշխատատար է: Ոլորտում

զբաղվածների տեսակարար կշիռը միջինում մեկ տոկոսից պակաս է (Նկար 3.2.8), և բացարձակ թվով կազմում է 7-8 հազար մարդ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.2.8. Չբաղվածությունը B ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հարկ է նշել, որ Հայաստանում արդյունահանման գները մեծապես կախված են համաշխարհային գներից: Ընդհանուր առմամբ, գների դինամիկան դրսևորում է նվազման միտում (Նկար 3.2.9): Սակայն տարբեր ժամանակահատվածներում նկատվում են բավականին կտրուկ թռիչքներ, որոնք կապված են վերջին քսան տարիների ընթացքում

ոլորտում կտրուկ աճի հետ: Ամենակտրուկ թռիչքը գրանցվել է 2003-2004թթ.-ին: Ընդ որում, համեմատելով ոլորտում գների դինամիկան ՀՆԱ-ի դեֆլյատորի հետ՝ հարկավոր է նշել, որ ոլորտում գների տատանողականությունը հարթվում է միայն 2016թ.-ից հետո:



Նկար 3.2.9. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի B ոլորտում, %, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտի կարևոր ցուցանիշներից է իրացման աշխարհագրությունը, որում, ինչպես և ոլորտի համախառն թողարկման կառուցվածքում, գերակշռում է մետաղական հանքաքարերի հատվածը (Նկար 3.2.10): Եթե 2004-2005թթ.-ին սույն ոլորտը ապրանքներ էր մատակարարում


ինչպես ԱՊՀ, այնպես էլ այլ երկրներ, վերջին 14 տարիների ընթացքում արտադրանքի գրեթե 100%-ն իրացվել է ԱՊՀ-ից դուրս: Այնուամենայնիվ նկատվում է նաև ընդհանուր իրացման զգալի աճ: Բացի այդ, ինչպես ցույց են տալիս հաշվարկները, ոլորտում առևտրայնաց-

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

ման մակարդակը 2019թ.-ի դրությամբ 93.4% է: Միջինում, դիտարկվող ժամանակահատվածում այս ցուցանիշը կազմում է շուրջ 90%:

Հետաքրքրաշարժ է վաճառքի դինամիկան Հայաստանում, որը վերջին 15 տարիների ընթացքում զգալիորեն նվազել է՝ 2005թ.-ի 69%-


ից հասնելով 5%-ի 2019թ.-ին, ինչը մի կողմից նշանակում է արտահանման աճ՝ վաճառքի աճին համընթաց, իսկ մյուս կողմից արդյունահանող ոլորտի հիման վրա ձևավորվող ավելացված արժեքի ներքին շղթաների կրճատում:



Նկար 3.2.10. Պատրաստի արտադրանքի վաճառքը B ոլորտում, մլն դրամով
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

ինչ վերաբերում է արտահանմանը, ապա հարկ է նշել, որ դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման մեջ ամենամեծ բաժինը զբաղեցնում է հանքագործական


արդյունաբերության այլ արտադրանքը (Նկար 3.2.11): Երկրորդ տեղում է մետաղական հանքաքարի արտահանումը, որը 2020թ.-ին զգալիորեն աճել է:



Նկար 3.2.11. B ոլորտի արտահանում դեպի ԵԱՏՄ երկրներ, ԱՄՆ դոլար
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Այլ երկրներ արտահանումը բնութագրվում է բոլորովին այլ կառուցվածքով (Նկար 3.2.12): Այսպես, արտահանման գերիշխող մասը կազմում է մետաղական հանքաքարը, որի

արտահանումը վերջին հինգ տարիների ընթացքում կրկնապատկվել է, ինչն ապահովել է դեպի այլ երկրներ արտահանման ընդհանուր ծավալների աճ:




Նկար 3.2.12. Բ ոլորտի արտահանում դեպի այլ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ներմուծման տեսանկյունից դիտարկվում է աճի առավել ցածր մակարդակ՝ արտահանման համեմատ (Նկար 3.2.13): Ընդհանուր առմամբ, ներմուծման հիմնական ապրանքներն են նավթն ու բնական գազը, որոնք Հայաստանի համար կրիտիկական ներմուծում են: Երկրորդ տեղը զբաղեցնում է հանքարդյունաբերության այլ

արտադրանքի ներմուծումը: Ներմուծման ամենամեծ ծավալները դիտարկվում են 2018թ.-ին: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, բացառությամբ 2018թ.-ի, վերջին հինգ տարիների ընթացքում ներմուծումը չի բնութագրվել բարձր տատանողականությամբ:



Նկար 3.2.13. Բ ոլորտի ներմուծում այլ երկրներից, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Ինչ վերաբերում է ոլորտի ֆինանսավորմանը, վարկերի ամենամեծ հոսքերը, ինչպես բանկային համակարգից, այնպես էլ վարկային կազմակերպություններից,

ուղղվում են մետաղական հանքաքարի արդյունահանման հատվածին (Նկար 3.2.14 և Նկար 3.2.15): Ընդ որում, ֆինանսավորման մեջ գերակշռում են արտարժույթային վարկերը:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Մինչույն ժամանակ բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների կողմից տրվող վարկերի դինամիկան էապես տարբերվում է: Այսպես, 2018թ.-ից ի վեր նկատվում է մետաղական հանքաքարի

արդյունահանման հատվածին տրված վարկերի զգալի աճ: Նույն ժամանակահատվածում ավելի քիչ, բայց, այնուամենայնիվ, ֆինանսավորման որոշակի աճ է դիտարկվում շինանյութի արդյունահանման ոլորտում:




Նկար 3.2.14. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ B ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերին, ապա, կարելի է փաստել, որ միակ նշանակալի գործարքը իրականացվել է 2013թ.-ին մետաղական հանքաքարի արդյունահանման հատվածում, որից հետո որոշակի ակտիվություն է նկատվում միայն 2020թ.-ից հետո: Ընդ որում վերջին երկու տարիների ընթացքում վարկային կազմակերպությունները վարկեր են

տրամադրում միայն շինանյութի արդյունահանման, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման հատվածներում: Անհրաժեշտ է նշել նաև, որ երկու դեպքում էլ ֆինանսավորումն իրականացվում է ազգային արժույթով: Արդյունահանման ոլորտին տրվող վարկերի ընդհանուր տեսակարար կշիռը ոլորտի ծավալների նկատմամբ 2020թ.-ին կազմել է մոտ 20%:



Նկար 3.2.15. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ B ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ամփոփելով պետք է նշել, որ արդյունահանող ոլորտի ներդրումը տնտեսական զարգացմանը վերջին տարիների ընթացքում բավականին բարձր էր: Գունավոր մետաղների նկատմամբ կանխատեսվող պահանջարկի ավելացումը երկարաժամկետ հեռանկարում ամենայն հավանականությամբ կպահպանի արդյունահանող ոլորտի դերը որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժերից մեկը: Այդ պատճառով ոլորտի ընդլայնումը նոր պաշարների ընդլայնման և հետագա օգտագործման նպատակով և եղած տեխնոլոգիաների արդիականացումը ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծման միջոցով հանդիսանում է և կհանդիսանա երկրի գերակայություններից մեկը:

Ոլորտի զարգացման հիմնախնդիրներն են արտահանման հումքային բնույթը և արդյունահանման հիման վրա ավելացված արժեքի շղթաների խորության և երկարության կրճատումը վերջին տարիների ընթացքում:

3.3. Մշակող արդյունաբերություն

Արագ հասնող զարգացման հիմնական աղբյուրը մշակող արդյունաբերությունն է: Ընդ որում, ինչպես արդեն նշվել էր սույն հետազոտության տեսական հիմքերի բաժնում, մշակող արդյունաբերության գերակա ոլորտները, որոնցում պետք է խրախուսվի տեխնոլոգիաների ներմուծումը և հարմարեցումը, ընտրվում են ելնելով երկու հայտանիշներից՝ համեմատաբար էժան և պատրաստված աշխատուժի առկայություն և ավելացված արժեքի եղած շղթաների խորացում ու երկարացում, ինչպես նաև նոր շղթաների ստեղծում: Ընդ որում հասնող զարգացման այն փուլում, երբ զարգացման ապահովման հիմնական գործիքներն են տեխնոլոգիաների ներմուծումը և ավելացված արժեքի շղթաների


Ելնելով ոլորտի բարձր կապիտալատարությունից՝ անցումը հումքի արտահանումից պատրաստի արտադրանքի արտահանմանը և հետևաբար ոլորտում ստեղծվող ավելացված արժեքի կտրուկ աճը²⁸² կպահանջի էական ներդրումներ, որոնց իրականացման գործում պետությունը պետք է ունենա որոշիչ դեր ինչպես ֆինանսական երաշխիքների տրամադրման, այնպես էլ ֆինանսավորման արժեքի կրճատման գործում:

Ինչ վերաբերում է արդյունահանման հիման վրա ձևավորվող ներքին ավելացված արժեքի շղթաների խորացմանը և երկարացմանը, այն կախված է մի կողմից այդ արտադրանքը սպառող ոլորտների՝ մասնավորապես շինարարության, զարգացման տեմպերից, մյուս կողմից էլ արդյունահանող ոլորտի արդյունավետության աճից, որի համար նույնպես անհրաժեշտ են բավականին ինտենսիվ ներդրումներ:

քանակի ավելացումը և խորացումը, պետք է ապահովվի մշակող արդյունաբերության առաջանցիկ զարգացումը և դրա տեսակարար կշռի նկատելի աճը: Սակայն Հայաստանում սույն ոլորտի կշիռը, ըստ էության, չի ավելանում: 2021թ. դրությամբ մշակող արդյունաբերության կշիռը ՀՆԱ-ում կազմում է 11.4%, 2000թ. 16%-ի համեմատ (Նկար 3.3.1): Այսպիսով, այդ ընթացքում չի պահպանվել մշակող արդյունաբերության առաջանցիկ աճի պահանջը: Ընդ որում, ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության կշռի տեսանկյունից Հայաստանը զգալիորեն զիջում է աշխարհի, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշներին:

²⁸² Օրինակ՝ պղնձի կամ ոսկու խթանյութի արտահանման փոխարինումը պատրաստի պղնձի կամ ոսկու արտահանմանը

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.3.1. Ը ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի և Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ոլորտի կառուցվածքին, ապա համախառն թողարկման ավելի քան 50%-ը զբաղեցնում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (Նկար 3.3.2), երկրորդ տեղը՝ հիմնական մետաղների արտադրությունը, երրորդը՝ ծխախոտի արտադրությունը: Նշված ճյուղերը նաև ցույց են տալիս զարգացման ամենալավ դինամիկան: Այսպես, ծխախոտի արտադրությունը 2000թ. դրությամբ կազմում էր


ոլորտի 1-2%, 2021թ.-ին արդեն զբաղեցնում է ավելի քան 9%-ը: Ակտիվ զարգանում է նաև սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Հարկ է նշել նաև, որ վերջին հինգ տարիների ընթացքում բարձր ակտիվություն է դիտարկվում ընդհանրապես բոլոր ճյուղերի զարգացման առումով, իսկ թվարկված հատվածներում՝ հատկապես:



Նկար 3.3.2. Ը ոլորտի կառուցվածքը, մլն դրամով

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Վերլուծելով մշակող արդյունաբերության կառուցվածքը հասնող զարգացման տեսանկյունից՝ պարզվում է, որ Հայաստանը ըստ էության չի օգտագործում իր հիմնական համեմատական առավելությունը՝ էժան աշխատուժը: Այսպես՝ 2021թ. արդյունքներով մշակող արդյունաբերության աշխատատար ոլորտների²⁸³ տեսակարար կշիռը կազմել է մշակող արդյունաբերության թողարկման ընդհանուրը 5.9%: Մյուս կողմից մշակող արդյունաբերությունում գերակայում են տեղական հումքի վերամշակման շղթաների վրա հիմնված ոլորտները²⁸⁴, որոնց տեսակարար կշիռը կազմել է մշակող արդյունաբերության թողարկման 71%-ը: Մշակող արդյունաբերության այլ ճյուղերի տեսակարար կշիռը 2021թ.-ին կազմել էր 23.1%, որի մոտ 40%-ը ներկայացված է ծխախոտի արտադրությամբ, իսկ մնացած ոլորտները կազմել են ընդհանուր թողարկման 13.8%-ը:



Նկար 3.3.3. Ավելացված արժեքը C ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ավելացված արժեքի դինամիկայի նման, դիտարկվող ժամանակահատվածում միջանկյալ սպառման ծավալների փոփոխությունը նույնպես կարելի է բաժանել նույն երկու փուլերին: Զգալի աճ է դիտարկվում միայն վերջին մի քանի տարիների ընթացքում: Ընդհանուր առմամբ,

մշակող արդյունաբերության ոլորտում միջանկյալ սպառումը վերջին 20 տարիների ընթացքում աճել է մոտ 4 անգամ (Նկար 3.3.4): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջանկյալ սպառման ծավալներն ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ տարվա գներով

²⁸³ Այդ ոլորտներին համաձայն հասնող զարգացման միջազգային փորձի պատկանում են հագուստի արտադրությունը, համակարգիչների, օպտիկական և էլեկտրոնային սարքավորման արտադրությունը, մեքենաների և սարքավորման արտադրությունը ու ոսկերչական արտադրությունը


²⁸⁴ Այդ ոլորտներին պատկանում են սննդամթերքի և խմիչքների արտադրությունը, այլ, ոչ մետաղական միներալ ապրանքների արտադրությունը և հիմնական մետաղների արտադրությունը

²⁸⁵ Խոսքը գնում է սև մետալուրգիայի, նավթաքիմիական արտադրության և տարբեր տիպի մեքենայաշինության ներառյալ հաստոցաշինության մասին

բավականին մոտ են, այս հատվածում կարելի է արձանագրել գնաճի բավականին ցածր ցուցանիշ:

Ինչ վերաբերում է նյութերի սպառմանը, ապա նշենք, որ 2003-2008թթ.-ին թողարկման նյութատարության ցուցանիշը ցուցաբերել է նվազման միտում, ինչը վկայում է տվյալ

ժամանակահատվածում ոլորտի արդյունավետության բարձրացման մասին: Սակայն 2009թ.-ից ի վեր կարելի է նկատել նյութատարության որոշակի աճ, ինչը թույլ է տալիս արձանագրել ոլորտի արդյունավետության որոշակի անկում մինչև 2020թ.-ը:




Նկար 3.3.4. Միջանկյալ սպառումը C ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մշակող արդյունաբերության հատվածում հաշվեկշռային և մնացորդային արժեքով հիմնական միջոցները նույնպես դրսևորում են զգալի աճի միտում (Նկար 3.3.5): 2005թ.-ից

հետո արտադրական հատվածի և՛ հաշվեկշռային, և՛ մնացորդային արժեքով հիմնական միջոցները աճել են 2.5–3 անգամ:



Նկար 3.3.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը C ոլորտում, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտի կապիտալատարությունը ցուցաբերում է անկայուն դինամիկա՝ ընդհանուր նվազման միտումով վերջին մի քանի տարիների ընթացքում (Նկար 3.3.6), և 2020թ.-ի դրությամբ

կազմում է 1.32: Ցուցանիշն իր առավելագույնին է հասել 2015թ.-ին և կազմել 1.96: Ինչ վերաբերում է կապիտալ-աշխատուժ հարաբերակցությանը, ապա պետք է ասել, որ

դիտարկվում է չափավոր աճի միտում, որն ուղեկցվում է արդյունաբերության ոլորտում աշխատավարձերի նմանատիպ չափավոր աճով (Նկար 3.3.6): Միաժամանակ, ոլորտում

արձանագրվում է աշխատանքի արտադրողականության աճ, որը վերջին 15 տարիների ընթացքում գրեթե եռապատկվել է:




Նկար 3.3.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականությունը C ոլորտում :

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դրան զուգահեռ, 2012թ.-ից հետո ոլորտում միջին աշխատավարձը զիջում է տնտեսությունում միջին աշխատավարձի ցուցանիշներին (Նկար 3.3.7): Նկատենք նաև,

որ ոլորտում աշխատանքի գինը բավականին մոտ է ընդհանուր տնտեսության միջին ցուցանիշին, ինչը կարելի է դրական միտում համարել:



Նկար 3.3.7. Աշխատավարձ և աշխատանքի գինը C ոլորտում, դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Մշակող արդյունաբերության ոլորտում վերջին 17 տարվա ընթացքում գրանցվել է չափավոր աճ միջին տարեկան մոտ 4.4%-ով²⁸⁶, որի 58.7%-ն ապահովվել է զբաղվածության աճի հաշվին (միջին տարեկան մոտ 2.6%), իսկ 42.3%-ը՝ աշխատանքի արտադրողականության աճի հաշվին (միջին տարեկան մոտ 1.8%) (Նկար

3.3.8): Ինչ վերաբերում է իրական աշխատավարձին, ապա 2010-2021թթ. ընթացքում այն աճել է միջին տարեկան 4%-ով՝ նույն ժամանակահատվածի արտադրողականության 1.9% աճի համեմատ, ինչը վկայում է երկրի էժան աշխատուժի համեմատական առավելության որոշակի կրճատման մասին:

²⁸⁶ Համեմատության համար 2004-2021թթ. տնտեսությունը աճել էր միջին տարեկան 4.3%

Դրա մասին է վկայում նաև միավոր աշխատանքի արժեքի²⁸⁷ աճը 2010թ. 8.7%-ից մինչև 10.9% 2021թ.-ին: Չնայած մշակող արդյունաբերությունում զբաղվածության աճն անկասկած դրական երևույթ է, այն ունի բավականին սահմանափակ ծավալներ և չի կարողանում էականորեն ազդել երկրում

զբաղվածության աճի վրա տնտեսության մասշտաբով, որը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսությամբ զբաղվողների քանակի կրճատմամբ: 2020թ.-ին զբաղվածությունը մշակող արդյունաբերությունում կազմել էր ֆորմալ²⁸⁸զբաղվածության 12%-ը:




Նկար 3.3.8. Մշակող արդյունաբերության թողարկումը, զբաղվածությունը, աշխատանքի արտադրողականությունը, աշխատավարձը և միավոր աշխատանքի արժեքը²⁸⁹:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դեֆլյատորի միջոցով հաշվարկված գների դինամիկան ցույց է տալիս բավականին բարձր տատանողականություն 2001-2012թթ.-ին, ինչը խիստ տարբերվում է ընդհանուր տնտեսության

ՀՆԱ-ի դեֆլյատորից (տես Նկար 3.3.9): Հաջորդ տարիներին գների դինամիկան կայունանում է, և 2016թ.-ից այն գրեթե հավասարվում է ՀՆԱ-ի դեֆլյատորի դինամիկային:



Նկար 3.3.9. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի C ոլորտում, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

²⁸⁷ Unit labor cost, որը հաշվարկվում է որպես տարեկան աշխատավարձի հարաբերակցությունը աշխատանքի արտադրողականությանը

²⁸⁸ Հարկային մարմիններում գրանցված զբաղվածները

²⁸⁹ Թողարկումը, միջին տարեկան աշխատավարձը և աշխատանքի արտադրողականությունը՝ 2021թ. համադրելի գներով

Մշակող արդյունաբերության հատվածի արտադրանքի վաճառքի կառուցվածքն ունի կարևոր նշանակություն և ներկայացված է Նկար 3.3.10-ում: Ինչպես տեսնում ենք, վաճառքում գերիշխող դիրքը զբաղեցնում է սննդամթերքի և խմիչքների արտադրության հատվածը, որը միջինում զբաղեցնում է ամբողջ վաճառքի մոտ 40-45%-ը: Վաճառքի ծավալով երկրորդ տեղը զբաղեցնում է հիմնական մետաղների արտադրությունը, սակայն այս հատվածի տեսակարար կշիռը ոլորտի վաճառքի կառուցվածքում զգալիորեն նվազել է: Այսպես, եթե 2005թ.-ի սկզբին հիմնական մետաղների արտադրության հատվածը զբաղեցնում էր ոլորտի ընդհանուր վաճառքի մոտ 30%-ը, ապա

արդեն 2021թ.-ի վերջին այդ ցուցանիշը կազմում էր ընդամենը 14%:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել ոլորտի աճի բարձր տեմպերը վաճառքի առումով: Աճի տեմպերի դանդաղում է նկատվում միայն 2020թ.-ին, ինչը միանգամայն բացատրելի է Covid-19 համավարակով: Սակայն դիտարկելով ոլորտի վաճառքի հարաբերակցությունը ընդհանուր թողարկման ծավալներին՝ նկատում ենք, որ մինչև 2008թ.-ը տեղի է ունեցել ոլորտի առևտրայինացման ցուցանիշի զգալի աճ, որին հաջորդել է ցուցանիշի դանդաղ անկում: 2021թ.-ի դրությամբ մշակող արդյունաբերության ոլորտում վաճառքի մասնաբաժինը ընդհանուր թողարկման մեջ կազմել է 89%:

- Մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում
- Էլեկտրական սարքավորանքի արտադրություն
- Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն
- Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտ., բացի մեքենաներից և սարքավորանքից
- Հիմնական մետաղների արտադրություն
- Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
- Դեղագործական արտադրանքի արտադրություն
- Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն
- Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում
- Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն
- Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից, հյուսկեն նյութերից արտ., բացի կահույքից
- Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն
- Հագուստի արտադրություն
- Մանածագործական արտադրատեսակների արտադրություն
- Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- Սննդամթերքի և խմիչքների արտադրություն




Նկար 3.3.10. Պատրաստի արտադրանքի վաճառքը C ոլորտում, մլն դրամով

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մշակող արդյունաբերության արտադրանքի՝ դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման կառուցվածքը հիմնականում պայմանավորված է հենց ոլորտի կառուցվածքով: Արտահանման մեջ հիմնական արտադրանքն է սննդամթերքը, խմիչքները և հագուստը (Նկար 3.3.11): Մնացած

ապրանքներն արտահանման կառուցվածքում աննշան դիրքեր են զբաղեցնում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մինչև 2018թ.-ը դիտարկվում է դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման զգալի աճ, իսկ վերջին երկու տարիներին՝ անկում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.3.11. C ոլորտի արտահանում դեպի ԵԱՏՄ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է արտահանմանը դեպի այլ երկրներ, ապա դրա կառուցվածքն էսպես տարբերվում է դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանումից: Ինչպես տեսնում ենք Նկար

3.3.12-ում, այլ երկրներ արտահանվող հիմնական ապրանքներն են ծխախոտային արտադրատեսակները և հիմնական մետաղները:



Նկար 3.3.12. C ոլորտի արտահանում դեպի այլ երկրներ, ԱՄՆ դոլար


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Մինևույն ժամանակ, դեպի այլ երկրներ արտահանման ծավալն ունի չափավոր աճի միտում, և 2020թ.-ին դիտարկվում է արտահանման զգալի նվազում՝ պայմանավորված Covid-19 համավարակի հետևանքներով:

Անդրադառնալով մշակող արդյունաբերության ոլորտի ներմուծմանը՝ հարկ է նշել, որ ի տարբերություն արտահանման, ներմուծումն ավելի տարբերակված է և ներառում է

ներմուծվող արտադրանքի մեծ տեսականի (Նկար 3.3.13): Ապրանքների ներմուծման առումով առավել նկատելի աճող հատվածներից կարելի է նշել մեքենաների ոլորտը, որը 2017-2020թթ.-ին գրանցել է երկնիշ աճ և երեք տարվա ընթացքում ընդհանուր առմամբ աճել է 5-6 անգամ: 2020թ.-ին տեղի է ունեցել ներմուծման զգալի կրճատում, ինչը պայմանավորված է 2020թ.-ին ճգնաժամային իրավիճակով:




Նկար 3.3.13. Ը ոլորտի ներմուծում այլ երկրներից, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում էներգիայի սպառումը բավականին կայուն է իր ծավալների և աճի դինամիկայի առումով (Նկար 3.3.14): Վերջին մի քանի տարիներին դիտարկվում է արտադրության ոլորտի էներգիայի բոլոր տեսակի աղբյուրների սպառման որոշակի

նվազում: Թողարկման էներգատարության ցուցանիշի տեսանկյունից, ընդհանուր առմամբ, դիտարկվում է նվազման միտում, ինչը կարող է վկայել ոլորտում էներգարդյունավետության որոշակի բարելավման մասին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.3.14. Էներգետիկ հաշվեկշիռը C ոլորտում, տերաջուլ

Աղբյուր՝ Կազմվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության վիճակագրական բաժնի կողմից հրատարակվող «Էներգետիկ հաշվեկշիռ» զեկույցների հիման վրա – <https://unstats.un.org/unsd/energystats/pubs/balance/>

Հաշվի առնելով վերջին մի քանի տարիների ընթացքում մշակող արդյունաբերության ոլորտի աճը՝ ակնհայտ է ոլորտի վարկավորման աճի դինամիկան ինչպես բանկային հատվածի (Նկար 3.3.15 և Նկար 3.3.16), այնպես էլ վարկային կազմակերպությունների (Նկար

3.3.17 և Նկար 3.3.18) կողմից դիտարկվող ժամանակահատվածում: Ոլորտի ֆինանսավորման առաջնահերթությունները համընկնում են մշակող արդյունաբերության ոլորտի որոշ հատվածների ակտիվ աճի դինամիկայի հետ:




Նկար 3.3.15. Առևտրային բանկերի կողմից տրված դրամային վարկեր՝ ըստ C ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ Կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Հարկ է նշել, որ բանկային հատվածից ՀՀ դրամով վարկավորման ծավալները դրսևորում են զգալի աճի միտում: Միևնույն ժամանակ, բանկերի կողմից արտարժույթով տրված վարկերը չեն դրսևորում կտրուկ փոփոխության

դինամիկա: Ընդ որում, ինչպես բանկերից, այնպես էլ վարկային կազմակերպություններից վարկեր ներգրավելու առումով գերիշխող ոլորտը սննդի և խմիչքների ոլորտն է:


Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.3.16. Առևտրային բանկերի կողմից տրված արտարժույթային վարկեր՝ ըստ C ոլորտի, մլն դրամ:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով տրված վարկերը բնութագրվում են ավելի մեծ տատանողականությամբ ինչպես ընդհանուր ծավալի դինամիկայի, այնպես էլ


առանձին հատվածներում: Սակայն զգալի աճ նկատվում է սկսած 2016թ.-ից, ինչպեսև մշակող արդյունաբերության ոլորտը բնութագրող բոլոր ցուցանիշների համար:



Նկար 3.3.17. Վարկային կազմակերպությունների կողմից տրված դրամային վարկեր՝ ըստ C ոլորտի, մլն դրամ:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Եթե վերջին տասը տարիների ընթացքում դրամային վարկավորման ծավալն աճել է մոտ 10 անգամ, ապա արտարժույթային վարկերի

ծավալը ընդամենը կրկնապատկվել է (Նկար 3.3.18):



Նկար 3.3.18. Վարկային կազմակերպությունների կողմից տրված արտարժույթային վարկեր՝ ըստ C ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ամփոփելով վերը նշվածը կարելի է պնդել հետևյալը.

1. Չնայած մշակող արդյունաբերության որոշիչ դերին հասնող զարգացման մեջ, Հայաստանում այդ դերը շատ ավելի ցածր է²⁹⁰ քան բարձր միջին եկամուտ ունեցող երկրների միջինները՝ ինչպես ՀՆԱ-ում և զբաղվածության մեջ տեսակարար կշռի, աճի տեմպերի, այնպես էլ ապրանքային արտահանման մեջ տեսակարար կշռի առումով:
2. Ինչպես վկայում է Հայաստանի մշակող արդյունաբերության և ապրանքային արտահանման կառուցվածքը և դրանց դինամիկան, այն հիմնականում զարգացել է տեղական հումքի վերամշակման շղթաների ստեղծման և խորացման հիման վրա, ինչի մասին են վկայում սննդի

արդյունաբերության գերակայությունն ինչպես արտադրական, այնպես էլ արտահանման կառուցվածքում: Դրա ապացույցն է այն, որ 2019թ. սննդամթերքի արտահանումը Հայաստանում կազմել էր ընդհանուր ապրանքային արտահանման 31.7%-ը՝ բարձր միջին եկամուտ ունեցող երկրների խմբում գրանցված 9.8%-ի համեմատ, իսկ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումը (առանց սննդի արտահանման)՝ 19.4%, բարձր միջին եկամուտ ունեցող երկրների՝ 67.4% համեմատ²⁹¹:

3. Հայաստանը անբավարար չափով է օգտագործել իր դեռ գոյություն ունեցող էժան աշխատուժի համեմատական առավելությունը, ինչի մասին նույնպես վկայում է թեթև արդյունաբերության արդեն նշված շատ

²⁹⁰ 2019թ. դրությամբ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում երկրների այդ խմբում կազմել էր 19.3% Հայաստանի 11.7% համեմատ, ինչ վերաբերում է մշակող արդյունաբերության աճի տեմպերին, ապա այն

2000-2019թթ. երկրների այդ խմբում կազմել է միջին տարեկան մոտ 10% Հայաստանի 5,7% համեմատ
²⁹¹ Հաշվարկված է Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանի հիման վրա

փոքր տեսակարար կշիռը արտադրական և ապրանքային արտահանման կառուցվածքի մեջ, ինչպես նաև աշխատատար հավաքող արդյունաբերության (assembly) գործնականում բացակայությունը և՛ արտադրական, և՛ արտահանման կառուցվածքում:

4. Ինչպես արդեն նշվել էր, Հայաստանում գործնականում բացակայում են մշակող արդյունաբերության բազիսային և բարձր տեխնոլոգիական ճյուղերը, ներառյալ հաստոցաշինությունը, սարքաշինությունը և ոռոտատեխնիկան, որը ներկայումս գործնականում անհնար է դարձնում սեփական տեխնոլոգիաների մշակումը և էականորեն դժվարացնում ներմուծվող տեխնոլոգիաների տեղում սպասարկումը և հարմարեցումը տեղական պայմաններին:
5. Ինչ վերաբերում է տեխնոլոգիաների ներմուծմանը, ապա այն հանդիսանում է երկրի և մասնավորապես մշակող արդյունաբերության զարգացման հիմնական շարժիչ ուժը, և հիմնականում իրականացվում է ֆինանսական միջնորդության համակարգի կողմից տրամադրվող միջոցների հաշվին: Սակայն բանկային վարկավորման վերն իրականացված վերլուծությունը վկայում է, որ փոխառու միջոցների տեղի ունեցած ընդլայնումն ավելի շատ վերաբերում է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը (դրամական վարկեր, որոնք վերջին 10 տարվա ընթացքում տասնապատկվել են), քան տեխնոլոգիաների ներմուծմանը, որոնց համար անհրաժեշտ են արտարժույթային վարկեր, և որոնց ծավալն աճել է նույն ժամանակահատվածում մոտ 2 անգամ, և որոնք չնայած վարկային տոկոսի նվազմանը մնում են բավականին թանկ՝ վարկերի

համաշխարհային միջին տոկոսների համեմատ:

Այս խնդիրները հասցեագրելու նպատակով երկրում պետք է մշակվի ադեկվատ արդյունաբերական քաղաքականություն, որը ներկայումս բացակայում է և որի հիմնական օգտատերը պետք է լինի մշակող արդյունաբերությունը: Այդ քաղաքականությունը պետք է ապահովի՝

1. Մշակող արդյունաբերության կայուն աճի տեմպեր միջնաժամկետ հեռանկարում՝ տարեկան 9-10 տոկոսի սահմաններում:
2. Լրացուցիչ աճը (4-5% սահմաններում) պետք է հիմնականում ապահովվի էժան աշխատուժի վրա հիմնված թեթև և հավաքող (assembly) արդյունաբերության առաջանցիկ աճի հաշվին, որն էլ իր հերթին պետք է իրականացվի համապատասխան տեխնոլոգիաների ներմուծման շնորհիվ տարբեր ձևերով՝ օտարերկրյա ներդրումների օժանդակության, տեղական արտադրողներին տեխնոլոգիաների ներմուծման գնի իջեցման համապատասխան նպատակային ֆինանսական կառույցների ստեղծման և արտարժույթային վարկավորման գների իջեցման միջոցով:


Երկրում պետք է հիմքեր նախապատրաստվեն համապատասխան տեխնոլոգիաների ներքին սպասարկման, դրանք ներքին տեղական պայմաններին հարմարեցման, որը ենթադրում է և՛ կադրերի պատրաստում, և՛ համապատասխան սպասարկող տեխնոլոգիաների ներմուծում հիմնական տեխնոլոգիաների սպասարկման նպատակով, ինչպես նաև հայրենական հաստոցաշինության և սարքաշինության հիմքերի ստեղծում:

3.4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում: Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում

Էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտները կարևոր ենթակառուցվածք են, որի շնորհիվ հնարավոր է դառնում տնտեսության այլ ոլորտների արդյունավետ գործունեությունը: Արդյունաբերական գործունեությունը սպառում է էներգիայի զգալի մաս և վերջինիս մատակարարման խափանումները կարող են խաթարել ոլորտի արդյունավետ գործունեությունը: Ընդհանուր առմամբ 2018թ.-ի դրությամբ Հայաստանում միավոր ավելացված արժեքի արտադրության համար սպառվում է 15.8 կՋոուլ էներգիա: Ընդհանուր սպառված էներգիայի մեջ զգալի կշիռ ունի էլեկտրաէներգիայի սպառումը, որը 2018թ.-ին

կազմել է ընդհանուրի 21%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում ԵՄ ՀՆԱ-ում սույն ոլորտների կշիռը տատանվել է 2.9-3.1% միջակայքում (Նկար 3.4.1):

Հայաստանում 2011-2016թթ.-ին դիտարկվում է էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտների համախառն թողարկման ծավալների աճի կայուն տեմպեր: CAGR-ի հաշվարկը ցույց է տալիս, որ այս 6 տարիների ընթացքում աճի միջին տեմպը կազմել է 18%: 2017-2020թթ.-ը բնութագրվում են ոլորտների համախառն թողարկման կրճատմամբ՝ միջինում տարեկան -2.8%-ով: 2020թ.-ի դրությամբ համախառն թողարկումը կազմում է շուրջ 377 մլրդ դրամ:




Նկար 3.4.1. D և E ոլորտների ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ընդ որում ընդհանուր թողարկման ծավալներում գերակայող կշիռ ունի էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտը: 2020թ.-ի

դրությամբ ոլորտի կշիռը կազմում է 91% (Նկար 3.4.2): Դիտարկվող ժամանակահատվածում վերջինիս կշիռը տատանվել է 86-92% միջակայքում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.4.2. Համախառն թողարկման կառուցվածքն ըստ D և E տնտեսական գործունեության, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դիտարկելով միջանկյալ սպառման ծավալները էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտներում՝ կարելի է նկատել աճի կայուն տեմպեր 2011-2016թթ.-ին միջինում տարեկան 18.4%-ով (Նկար 3.4.3), ինչը որոշակիորեն գերազանցում է նույն ժամանակահատվածում համախառն թողարկման աճի տեմպին: Հաշվի առնելով համախառն թողարկման աճի տեմպերին գերազանցող աճը՝ նույն ժամանակահատ-

վածում տեղի է ունեցել ոլորտներում նյութատարության նշանակալի աճ, որը 2010թ.-ի 35%-ից հասել է 40%-ի 2014թ.-ին, ինչը վկայում է այդ ժամանակահատվածում ոլորտի թողարկման արդյունավետության նվազման մասին: Սակայն հաջորդող տարիներին, մասնավորապես 2015-2017թթ.-ին, տեղի է ունեցել ոլորտի թողարկման արդյունավետության վերականգնում և նյութատարության ցուցանիշը 2017թ.-ին կազմում էր արդեն 35%: 2016-2020թթ.-ին միջանկյալ սպառման ծավալները գրեթե չեն փոխվել:




Նկար 3.4.3. Միջանկյալ սպառումը D և E ոլորտներում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտներում ավելացված արժեքի ծավալները նույնպես դինամիկ աճել են 2011-2016թթ.-ին: Ըստ CAGR-ի հաշվարկի տարեկան միջին աճը կազմել է 18% (Նկար 3.4.4), ինչը զիջում է և՛ միջանկյալ

սպառման, և՛ համախառն թողարկման ծավալների աճին նույն ժամանակահատվածում: 2017-2020թթ.-ին դիտարկվում է ավելացված արժեքի ծավալների որոշակի նվազում՝ տարեկան միջինում -2.8%-ով: 2020թ.-ի դրությամբ ոլորտում ավելացված արժեքը կազմում է շուրջ 242 մլրդ դրամ:




Նկար 3.4.4. Ավելացված արժեքը D և E ոլորտներում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

2012-2016թթ.-ին ոլորտում հիմնական միջոցների ծավալները գրեթե չեն փոխվել: 2017-2019թթ.-ին դիտարկվում է կապիտալի զգալի աճ

տարեկան միջինում 9.2%-ով: 2019թ.-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է 1 841 միլիարդ դրամ:




Նկար 3.4.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը D և E ոլորտներում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով ոլորտում համախառն թողարկման և կապիտալի դինամիկան դիտարկվող ժամանակահատվածում՝ կապիտալատարության ցուցանիշը դրսևորել է նվազման

միտում 2013-2016թթ.-ին և զգալիորեն աճել է վերջին 3 տարիների ընթացքում՝ վերականգնելով 2012թ.-ի մակարդակը (Նկար 3.4.6):

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.4.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականություն D և E ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մյուս կողմից 2013թ.-ին տեղի է ունեցել ոլորտում զբաղվածության կրճատում 25.7%-ով՝ հասնելով 25 հազար զբաղվածի (Նկար 3.4.7): 2014-2017թթ.-ին ոլորտում դիտարկվում է զբաղվածության մակարդակի աճի ցածր տեմպեր՝ միջինում տարեկան 4.7%, հասնելով 31.2 հազարի: 2018թ.-ին կրկին տեղի է ունեցել զբաղվածության մակարդակի կրճատում մինչև 25.2 հազար: 2019թ.-ի դրությամբ ոլորտի զբաղվածության կշիռը ընդհանուր զբաղվածության մեջ կազմել է շուրջ 3%: Հաշվի առնելով կապիտալի և զբաղվածության դինամիկան դիտարկվող ժամանակահատվածում՝ 2015-2019թթ.-ին դիտարկվում է կապիտալ-աշխատուժ հարաբերակցության աճ: Մյուս կողմից զգալիորեն աճել է աշխատանքի արտադրողականությունը 2012-2019թթ.-ին՝ հասնելով մեկ զբաղվածի հաշվով 8.8 մլն դրամ թողարկման 2019թ.-ին: Տարեկան միջին աճը կազմել է 16%:

Ինչ վերաբերում է ոլորտում աշխատանքի գնի դինամիկային, ապա 2012թ.-ին ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում այն գրեթե համընկնում էր տնտեսությունում աշխատանքի միջին գնին՝ կազմելով շուրջ 134 հազար դրամ: Սակայն առաջիկա տարիներին դրա աճը զիջում էր տնտեսության միջին ցուցանիշին, 2016թ.-ին կրկին հավասարվելով դրան: Այնուհետև 2017թ.-ին տեղի ունեցավ վարձատրության մակարդակի անկում, ինչից հետո զգալի փոփոխություն տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարման ոլորտում աշխատանքի գնին, ապա այն զգալիորեն գերազանցում է տնտեսության ընդհանուր միջին ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածում և 2019թ.-ին կազմել է 270 հազար դրամ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.4.7. Զբաղվածություն և աշխատանքի գին D և E ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

2009-2015թթ.-ին ոլորտում գների փոփոխությունն ուներ աճի միտում՝ ՀՆԱ դեֆլյատորին գերազանցող մակարդակով (Նկար 3.4.8): Սակայն 2016թ.-ից հետո ոլորտում նկատվում է գնանկման միտում, որը իր նվազագույնին հասավ 2018թ.-ին: Բացի այդ անհրաժեշտ է նշել, որ եթե մինչ 2016թ.-ը ոլորտում ավելացված արժեքի, համախառն


թողարկման և միջանկյալ սպառման գների փոփոխությունները տարբերվում էին և ավելացված արժեքի գծով տեղի ուներ զգալի գնաճ, ապա վերջին 5 տարիներին ըստ երեք ցուցանիշների գների տատանումները համահարթվել են՝ 2020թ.-ին հասնելով ՀՆԱ դեֆլյատորի մակարդակին:



Նկար 3.4.8. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի D և E ոլորտներում, ՀՆԱ դեֆլյատոր,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանումը ներառում է միայն ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտը: Ընդ որում, մինչև 2018թ.-ը ոլորտի արտահանման ծավալներն




աննշան էին: 2019թ.-ին գրանցվեց կտրուկ թռիչքային աճ և արտահանման ծավալները հասան 1.9 մլն ԱՄՆ դոլարի (Նկար 3.4.9): 2020թ.-ին արտահանման ծավալներն էլ ավելի աճեցին՝ հասնելով 4 մլն ԱՄՆ դոլարի:

Նկար 3.4.9. E ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/

Ընդհանուր առմամբ ոլորտի արտահանումը դեպի այլ երկրներ ունի անհամեմատ ավելի մեծ ծավալներ և հիմնականում բաժին է ընկնում «Էլեկտրաէներգիա, գազ, գոլորշի, լավորակ օդ» ոլորտին: Այսպես, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտի արտահանումը 2015թ.-ին կազմում էր 7 մլն ԱՄՆ դոլար: 2016թ.-ին գրանցված որոշակի անկմանը հաջորդեց աճի կայուն տեմպը տարեկան միջինում 29%-ով՝ 2020թ.-ին հասնելով 14.5 մլն ԱՄՆ դոլարի: Արտահանման շատ ավելի մեծ ծավալներ է

կազմում էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի ոլորտի արտահանումը: Այսպես, 2015թ.-ին ոլորտի արտահանման ծավալները կազմում էին ավելի քանի 81 մլն ԱՄՆ դոլար: 2016թ.-ին տեղի ունեցավ արտահանման ծավալների 25% անկում: Հաջորդող երկու տարի անընդմեջ աճին և 2015թ.-ի ծավալների վերականգնմանը հաջորդեց արտահանման անկում 2019թ.-ին, իսկ 2020թ.-ին արտահանման ծավալները մնացին գրեթե նույնը՝ կազմելով ավելի քան 69 մլն ԱՄՆ դոլար:



Նկար 3.4.10. D և E ոլորտների արտահանումը Հայաստանից դեպի այլ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/


Ոլորտում վարկային ծանրաբեռնվածությունը դիտարկվող ժամանակահատվածում տատանվել է 37-56% միջակայքում՝ դրսևորելով

աճի կայուն միջին տեմպ: Ոլորտը վարկավորվել է ինչպես առևտրային բանկերի (Նկար 3.4.11), այնպես էլ վարկային կազմակերպությունների

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

կողմից (Նկար 3.4.12): Ընդհանուր վարկավորման 96-99.8%-ը դիտարկվող ժամանակահատվածում ապահովվել է բանկային համակարգի կողմից: Ընդ որում ընդհանուր վարկերի 96.3-99.8%-ը ընկնում է էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի ոլորտին: Մինևույն ժամանակ, բանկային համակարգի կողմից ոլորտին տրամադրված վարկերի 70-88%-ը եղել են արտարժույթային:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի ոլորտին տրամադրված արտարժույթային վարկերի ծավալը կտրուկ աճել է 2017թ.-ի առաջին եռամսյակում և վերադարձել իր նախկին մակարդակին երկու տարի անց՝ 2018թ.-ի չորրորդ եռամսյակում: Նման աճ է գրանցվել նաև սկսած 2020թ.-ի հունիսից մինչև 2021թ.-ի մարտը՝ ճգնաժամի հետևանքների չեզոքացման նպատակով:




Նկար 3.4.11. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ D և E տնտեսական ոլորտների, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

2011թ.-ի դեկտեմբերին տեղի է ունեցել էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի ոլորտին վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող արտարժույթային վարկի կտրուկ աճ մինչև 2014թ.-ի դեկտեմբեր, որից հետո ոլորտում ընդհանուր վարկերի ծավալները

կտրուկ նվազել են: Հետագա տարիներին նվազման միտումը շարունակվել է՝ 2019թ.-ի վերջին հասնելով 240 հազար դրամի: Ճգնաժամի հետ կապված 2020-2021թթ.-ին վարկերի ծավալների որոշակի աճ նկատվեց՝ հասնելով գրեթե 1 մլն դրամի:




Նկար 3.4.12. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ D և E ոլորտների, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում


2000-2020թթ. ընթացքում տեղի է ունեցել ոլորտի արդյունավետության էական աճ, որն էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում մասնավորապես արտահայտվում է երկու

հիմնական ուղղություններով՝ ընդհանուր օգտագործման ցանցերում կորուստների և ՀՆԱ էլեկտրատարության աստիճանի նվազման միջոցով (Նկար 3.4.13):



Նկար 3.4.13. Էլեկտրաէներգետիկայի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների դինամիկան 2000-2020թթ.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am



Նկար 3.4.14. Էլեկտրաէներգիայի խնայողությունը Հայաստանում 2000-2020թթ.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Էլեկտրաէներգիայի խնայողության առավելագույն չափը 2020թ. նկատմամբ դիտարկվել է 2019թ.-ին, երբ այն կազմել է այդ տարվա ընդհանուր սպառման 93.8%, որը

նշանակում է տնտեսության էներգարդյունավետության աճ 2000թ. նկատմամբ գրեթե 2 անգամ, որի 74%-ը պայմանավորված էր ՀՆԱ էներգատարության

նվազմամբ, իսկ 26%-ը՝ ընդհանուր
 օգտագործման ցանցերում կորուստների
 կրճատմամբ: Հաշվի առնելով
 էլեկտրաէներգիայի արտադրության
 կառուցվածքը²⁹² 2019թ.՝
 էլեկտրաէներգետիկայի
 կախվածությունը
 էլեկտրաէներգետիկայի
 համեմատությամբ կրճատվել է մոտ 50%:
 հարաբերական
 ներմուծվող
 2000թ.

Աղյուսակ 3.4.1. Բնական գազի ներմուծումը և օգտագործումը Հայաստանում 2000-2021թթ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ներմուծում, մլն խորանարդ մետր	2069	2455	2361	2450	2371	2236	2378	2463	2545	2595	2793
Այդ թվում ՌԴ-ից	1609	1967	1956	2061	2000	1864	1996	1939	2166	2208	2449
ԻԻՀ-ից	460	488	405,	389	371	372	383	524	379	387	345
Իրացված գազի ծավալը	1535	1608	1822	2009	1820	1844	1941	2156	2202	2262	2300
Իրացված գազի ծավալը, մլրդ դրամ	165,6	180,5	203,3	228,9	234,1	229,9	213,1	219,3	243,5	254,9	301
ՀՆԱ նկատմամբ, %	3,6	3,7	4,0	4,3	4,3	4,2	3,6	3,5	3,7	4,1	4,6
Բնակչություն	551	542	539	515	527	581	622	554	669	725	766
Էներգետիկա	185	232	252	594	428	420	422	630	501	583	504
Արդյունաբերություն	252	260	275	252	205	186	210	226	209	239	254
Տրանսպորտ	362	418	455	481	485	467	478	553	577	473	505
Բյուջետային հիմնարկներ	51	48	50	49	49	54	56	44	52	50,9	56,7
Այլ սպառողներ	134	109	251	116	127	136	154	149	195	192	215

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Հանրային Ծառայությունների Կարգավորող Հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.psrc.am

Աղյուսակը ցույց է տալիս, որ 2011-2021թթ. բնական գազի օգտագործման ծավալներն աճել են տարեկան 4.1% ՀՆԱ 3.5%-ի համեմատ: Տեղի է ունեցել նաև գների 21.3% աճ ամբողջ ժամանակահատվածում: Հաշվի առնելով գազի շուկայում ներկայումս ստեղծված լարված իրավիճակը՝ գների աճը կշարունակվի միջնաժամկետ հեռանկարում, հնարավոր է ավելի բարձր տեմպերով: Այդ պարագայում բնական գազի օգտագործման


արդյունավետության հարցերն էլ ավելի են կարևորվում:

Ինչպես ցույց է տալիս Նկար 3.4.15-ը 2011-2021թթ.-ին բնական գազի օգտագործման արդյունավետությունը Հայաստանում չի ավելացել բացառությամբ արդյունաբերության²⁹³ ոլորտի, որտեղ այն աճել է 2019թ. դրությամբ մոտ 2 անգամ՝ նվազելով 2020 և 2021 թվականներին:

²⁹² Ներքին աղբյուրների հաշվին իրականացվում է էլեկտրաէներգետիկայի արտադրության մոտ 1/3

²⁹³ Գումարային արդյունահանող և մշակող արդյունաբերության համար

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.4.15. Բնական գազի օգտագործման արդյունավետությունը Հայաստանում 2000-2020թթ

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Հանրային Ծառայությունների Կարգավորող Հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.psrc.am

Այսպիսով, հաշվի առնելով վերը ասվածը՝ էներգախնայողությունը պետք է շարունակի մնալ երկրի էներգետիկ քաղաքականության հիմքը և հիմնական գերակայությունը:

Այդ քաղաքականության նպատակը պետք է լինի կրիտիկական հումքի ներմուծումից (տվյալ դեպքում բնական գազից և նավթամթերքից) երկրի հարաբերական և բացարձակ կախվածության կրճատումը, մասնավորապես բնական գազի օգտագործման աճի սահմանափակումը ՀՆԱ աճի տեմպերով:

Մասնավորապես էլեկտրաէներգետիկայի ոլորտում ջերմային կայանների հզորությունները պետք է գործարկվեն հների փոխարեն և ապահովեն էներգետիկայի գազատարության կրճատումը: Պետք է հնարավորինս երկար

գործի ատոմակայանը, իսկ հզորությունների աճն ապահովվի հիդրոկայանների և “կանաչ” էներգետիկայի միջոցով: Անհրաժեշտ են գազի խնայողության պետական ծրագրեր վերջնական սպառման, ավտոտրանսպորտի և ծառայությունների ոլորտում:

Մյուս կարևոր խնդիրն է գազի մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացումը, այդ թվում ԻԻՀ գազի օգտագործման բարտերային սխեմաներից հրաժարվելը: Անհրաժեշտ է նաև էներգետիկ մեքենաշինության առանձին ոլորտների ստեղծման խրախուսումը Հայաստանում²⁹⁴, որը կկրճատի էներգետիկ մեքենաների և սարքավորման կրիտիկական ներմուծումը:

²⁹⁴ Բացառությամբ արևային պանելների հավաքման ոլորտի, որը զարգանում է վերջին մի քանի տարիներին բայց

բացառապես հիմնված է ներմուծված կոմպոնենտների հիման վրա:


3.5. Շինարարություն

Հայաստանում շինարարության ոլորտը առանցքային է՝ 2000-2008թթ. տնտեսական աճի բարձր տեմպերի ժամանակաշրջանում ապահովելով ընդհանուր տնտեսական աճի 26.8%, մշակող արդյունաբերության 6.3% և գյուղատնտեսության 9.8% համեմատ: Որպես կանոն, շինարարությունը որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ նպաստում է նաև արդյունահանող և մշակող արդյունաբերության հարակից ճյուղերի զարգացմանը: Սակայն Հայաստանում դա տեղի չունեցավ հիմնականում այդ ժամանակ դրամի արժևորման հակաճանաչի քաղաքականության պատճառով, որը բարենպաստ էր շինարարության և ծառայությունների (non-tradables) և անբարենպաստ ապրանքների (tradables) արտադրության համար: Մյուս կողմից, տնտեսական գործունեության մեկ ոլորտից բարձր կախվածությամբ տնտեսություն կառուցվածքը զգալի ռիսկեր է պարունակում հատկապես ճգնաժամային ժամանակահատվածներում: Հենց այս ռիսկերը Հայաստանում արտահայտվեցին 2009թ. ճգնաժամի

ընթացքում շինարարության աննախադեպ 41.6% անկմամբ:

Նկար 3.5.1-ում ներկայացված է շինարարության ոլորտի զարգացման դինամիկան վերջին քսան տարիների ընթացքում: Ինչպես տեսնում ենք, ոլորտը վերելք է ապրել 2003-2008թթ.-ին՝ աճելով գրեթե հինգ անգամ: Այնուհետև համաշխարհային ֆինանսական ճգնաժամի սկսվելուց հետո ոլորտում տեղի ունեցավ կտրուկ անկում, և այդ պահից դիտարկվում է ոլորտի ծավալների չափավոր անկում հաջորդող 12 տարիների ընթացքում: Ընդ որում, նվազում է և՛ տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում, և՛ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի աճի մեջ:

Մինևս այն ժամանակ, համեմատելով շինարարության ոլորտի տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում ԵՄ28-ի նույն ցուցանիշի հետ, կարելի է նկատել զգալիորեն ավելի բարձր ցուցանիշներ (մինչև 2018թ.-ը), ինչպես նաև ցուցանիշի բարձր տատանողականություն Հայաստանում և շատ ավելի կայուն դինամիկա ԵՄ երկրներում:



Նկար 3.5.1. F ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Հաշվի առնելով, որ ՀՆԱ-ի կառուցվածքում շինարարության ոլորտը 2003-2008թթ.-ին գերիշխող էր՝ այն հանգեցրեց Հայաստանում

տնտեսական աճի բարձր տեմպերի դիտարկվող ժամանակահատվածում: Սակայն մեկ հատվածից տնտեսական աճի կախվածության

բացասական հետևանքներն ավելի էական են եղել, քան կարճաժամկետ հեռանկարում դրական ազդեցությունը: Ոլորտի կտրուկ անկումը, որը պայմանավորված է համաշխարհային ֆինանսական ճգնաժամով, հիմնականում պայմանավորված էր արտաքին գործոններից նրա ուժեղ կախվածությամբ, քանի որ ոլորտում և՛ առաջարկը, և՛ պահանջարկը

ներառում էին օտարերկրյա ներդրումների և օգնության մեծ մասնաբաժին:

Հաշվի առնելով շինարարության ոլորտում ավելացված արժեքը՝ հարկ է նշել, որ մինչև 2008 թվականը ցուցանիշի ակտիվ աճ է նկատվում, իսկ 2009 թվականից՝ կտրուկ և նկատելի անկում (Նկար 3.5.2): Մինևույն ժամանակ, հաջորդող տարիներին ոլորտը պահպանել է ավելացված արժեքի ցուցանիշը կայուն մակարդակում:




Նկար 3.5.2. Ավելացված արժեքը F ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Շինարարության ոլորտում միջանկյալ սպառումը ներկայացված է Նկար 3.5.3-ում: Միջանկյալ սպառման ծավալները՝ համախառն թողարկման և ավելացված արժեքի դինամիկայի նման նույնպես զգալիորեն աճել են մինչև զլոբալ ֆինանսական ճգնաժամը: Առավել հետաքրքրաշարժ է ոլորտի թողարկման նյութատարության ցուցանիշը, որը որոշակիորեն բարձրացել է աճի բումի ժամանակ, ինչը վկայում է ոլորտի արդյունավետության նվազման մասին: Մյուս

կողմից, 2009 թվականին ոլորտի թողարկման կտրուկ անկումից հետո նյութատարության ցուցանիշը ցուցաբերեց անկման միտում, ինչն այլ կերպ ասած նշանակում է ոլորտի արդյունավետության բարձրացում: Հարկ է նշել, սակայն, որ ցուցանիշի տատանողականությունն ինքնին բավականին աննշան է, ինչը մեզ թույլ չի տալիս ավելի հիմնավոր ենթադրություններ անել այս հատվածի արդյունավետության վերաբերյալ դիտարկվող ժամանակահատվածում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.5.3. Միջանկյալ սպառումը F ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կապիտալի ցուցանիշները դրսևորում են կայուն և զգալի աճ մինչև 2016 թ.-ը (Նկար 3.5.4): 2017թ.-ից ի վեր կարելի է նկատել հիմնական միջոցների ծավալների անկում, հատկապես մնացորդային արժեքով

արտահայտված հիմնական միջոցների պարագայում: Այսպիսով, հիմնական միջոցների մնացորդային արժեքը կրկնակի կրճատվել է և պահպանել իր դիրքը վերջին երեք տարիների ընթացքում:



Նկար 3.5.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը F ոլորտում, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կապիտալատարության ցուցանիշը դրսևորել է կայուն աճի միտում դիտարկվող ժամանակահատվածում՝ 2005թ.-ի 9%-ից հասնելով 31%-ի 2020թ.-ին: Դիտարկելով կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը, հարկ է նշել, որ դրա դինամիկայի միտումն այնքան էլ միանշանակ չէ (Նկար 3.5.5): Կապիտալ-աշխատուժ հարաբերակցության

նկատելի աճ է նկատվում միայն 2014-2016թթ.-ին:

Ինչ վերաբերում է աշխատանքի արտադրողականությանը, ապա ցուցանիշն աճի միտում է դրսևորել մինչև 2007թ.-ը, այնուհետև այն բնութագրվում է կամ անկումով կամ թույլ տատանողականությամբ, ինչը վկայում է ոլորտի ցածր արդյունավետության մասին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.5.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականություն F ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինևույն ժամանակ, ոլորտում աշխատավարձերը ցուցաբերում են զգալի աճի միտում դիտարկվող ժամանակահատվածում: Համեմատելով երկրի միջին աշխատավարձի հետ՝ կարելի է ասել, որ ոլորտում աշխատավարձերը փոքր-ինչ գերազանցում են այդ ցուցանիշը (Նկար 3.5.6): Նույն միտումը

նկատվում է աշխատանքի գնի մասով: Նշենք նաև, որ 2019թ.-ին և՛ աշխատավարձի, և՛ աշխատանքի գնի միջին ցուցանիշները փաստացի հավասարվում են ընդհանուր տնտեսության մակարդակով նույն ցուցանիշներին, ինչը խոսում է ոլորտի մրցունակության բավարար մակարդակի մասին:



Նկար 3.5.6. Աշխատավարձ և աշխատանքի գինը F ոլորտում, դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Ջբաղվածության առումով շինարարության ոլորտը կարելի է բնութագրել որպես բավականին անկայուն: Ակնհայտ է, որ ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն ու թիվը մեծապես կախված են բուն ոլորտի զարգացումից, ինչպես նաև երկրում շինարարության աճի ինտենսիվությունից: Ընդ

որում, շինարարության ոլորտին յուրահատկ է նաև աշխատանքի սեզոնայնությունը, ինչպես նաև այս կամ այն տեսակի մասնագիտությունների պահանջարկը:

Շինարարության ոլորտում զբաղվածության դինամիկան ներկայացված է Նկար 3.5.7-ում: Ոլորտում զբաղվածների թվի տատանումները

որոշ դեպքերում հասնում են տարեկան 50 և ավելի տոկոսի: Վերջին երկու տարիներին գրանցվել է շինարարության ոլորտում զբաղվածների թվի զգալի աճ: Այսպես, 2019թ.-ի դրությամբ ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 96.6 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածների շուրջ 9%-ը, ինչը գրեթե 10 հազար մարդով ավելի է նախորդ պիկից, որը գրանցվել էր 2010 թվականին: Ընդհանուր

զբաղվածության մեջ շինարարության աշխատողների թիվը 2019 թվականին կազմում է 9% և գերազանցում է նախորդ բոլոր տարիների միջին ցուցանիշը: Ոլորտում զբաղվածների թվի նման կտրուկ աճի առանցքային պատճառը, մեր կարծիքով, ոլորտում չգրանցված աշխատողների զգալի մասի հաշվառման ՀՀ կառավարության ծրագիրն է:




Նկար 3.5.7. Զբաղվածությունը F ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում գների տատանողականությունը բավականին բարձր է: Ոլորտի գների դինամիկան՝ արտահայտված դեֆլյատորով, ներկայացված է Նկար 3.5.8-ում: Հարկ է նշել, որ ոլորտում գների դինամիկան, արտահայտված դեֆլյատորով, այնքան էլ չի համընկնում ՀՆԱ-ի

դեֆլյատորի դինամիկայի հետ: Ընդհանուր առմամբ, նման միտում նկատվում է սույն հետազոտության մեջ դիտարկված գրեթե բոլոր ոլորտներում: Բացի այդ, ոլորտին հատուկ է գների տատանողականության բարձր մակարդակ:




Նկար 3.5.8. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի F ոլորտում, ՀՆԱ դեֆլյատոր, %, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ֆինանսավորման առումով հարկ է նշել, որ շինարարության ոլորտն ակտիվորեն վարկավորվում է ինչպես բանկերի, այնպես էլ վարկային հաստատությունների կողմից (Նկար 3.5.9 և Նկար 3.5.10): Միևնույն ժամանակ, բանկային հատվածի վարկավորման տրամաբանությունն էապես տարբերվում է վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման կառուցվածքից և դինամիկայից:

Այսպիսով, բանկային հատվածի կողմից տրված վարկերի մասով վարկերի ամենամեծ կշիռն ընկնում է բնակելի և ոչ բնակելի շենքերի կառուցման ոլորտին տրված արտարժույթային

վարկերին: Ընդ որում վերջին երկու տարիներին դիտարկվում է վարկերի ծավալների զգալի աճ, մինչդեռ նախորդ տարիներին վարկավորման ծավալը բավականին կայուն էր: Միևնույն ժամանակ, 2018թ.-ից ի վեր դիտարկվում է նաև դրամային վարկերի զգալի աճ, ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ազգային արժույթով և արտարժույթով վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի քաղաքականությամբ: Այս միջոցառումներն առավելապես կապված են դոլարային արժույթի և միևնույն ժամանակ երկրում փողի առաջարկի կարգավորման հետ:




Նկար 3.5.9. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ F ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերին, ապա 2011-2014 թթ.-ին նկատելի է դրանց ամենաբարձր ծավալները դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում, ընդ որում կրկին գերակշռում են արտարժույթային վարկերը (Նկար 3.5.10): Հաշվի առնելով 2016-2017թթ.-ին բանկային ոլորտի վարկավորման ծավալների աճը՝ կարելի է ենթադրել, որ վարկային կազմակերպություններից վարկային շուկայում առաջարկը փոխարինվել է բանկերի առաջարկով:

Հարկ է նշել, որ ոլորտում վարկային ծանրաբեռնվածությունը բավականին ցածր է և 2011թ.-ին կազմում էր 11.4% թողարկման ծավալների նկատմամբ: Այնուամենայնիվ, հաջորդող տարիներին նկատվում է սույն ցուցանիշի աճ մինչև 2019թ.-ը՝ հասնելով 26.4%-ի: Covid-19 համավարակով և շինարարության ոլորտի աշխատանքների իրականացման նկատմամբ կարճաժամկետ արգելքներով պայմանավորված՝ ցուցանիշի կտրուկ աճ է տեղի ունեցել 2020թ.-ին, հասնելով 35.63%-ի:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.5.10. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ F ոլորտի, մլն դրամ:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 3.5.1-ը, շինարարության արագացված զարգացման ժամանակահատվածում (ներկայացված են 2007 և 2008 թվականները) շինարարությունը ֆինանսավորվում էր հիմնականում բնակչության միջոցների հաշվին²⁹⁵ և

հիմնականում ուղղված էր անշարժ գույքի շինարարությանը (տես՝ Նկար 3.5.11), որը 2008թ.-ին կազմել էր շինարարության ամբողջ թողարկման 61.7%-ը՝ 2010թ.-ին բացարձակ արտահայտությամբ կրճատվելով մոտ 2.75 անգամ և չվերականգնվելով մինչև 2021թ.-ը²⁹⁶:

Աղյուսակ 3.5.1. Շինարարության ֆինանսավորման աղբյուրները Հայաստանում 2007-2021թթ.

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Թողարկում, մլրդ դրամ	639,8	842,4	575,7	579,8	480,8	469,7	442,3	433,2	457,2	397,8	415,9	422,3	434,6	413,8	470,1
Բյուջետային միջոցներ	60,6	67,9	184,3	142,5	117,8	111,8	101,7	97,3	110,0	98,2	112,6	120,0	128,5	141,1	142,0
Համայնքային միջոցներ	0,6	0,7	1,3	5,4	29,6	21,8	12,0	19,9	9,1	8,6	6,5	11,0	9,2	14,0	22,4
Կազմակերպությունների միջոցներ	165,4	152,3	194,2	273,8	221,9	231,2	188,4	200,0	208,8	186,0	186,4	183,3	182,9	178,5	203,9
Բնակչության միջոցներ	396,7	599,1	184,8	118,5	77,2	96,7	131,0	108,8	116,2	100,0	102,2	104,8	109,4	78,7	96,0
Այլ միջոցներ	16,5	22,4	11,2	39,6	34,3	8,2	9,2	7,2	13,1	5,1	8,2	3,3	4,6	1,6	5,8
Տեղական ֆինանսավորում, %	96,6	96,8	79,8	82,5	86,5	88,9	90,5	83,8	81,4	81,3	70,3	74,4	76,2	72,8	81,3
Օտարերկրյա ֆինանսավորում, %	3,4	3,2	20,2	17,5	13,5	11,1	9,5	16,2	18,6	18,7	29,7	25,6	23,8	27,2	18,7
Պետական ֆինանսավորում, %	9,6	8,1	32,2	25,5	30,7	28,4	25,7	27,1	26,1	26,8	28,6	31,0	31,7	37,5	35,0
Ոչ պետական ֆինանսավորում, %	90,4	91,9	67,8	74,5	69,3	71,6	74,3	72,9	73,9	73,2	71,4	69,0	68,3	62,5	65,0


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

²⁹⁵ Հայաստանի վիճակագրությունը բնակչության միջոցների հաշվին շինարարության ֆինանսավորման ծավալներում չի առանձնացնում մասնավոր ուղղակի օտարերկրյա ներդրումները, այդ պատճառով հնարավոր չի առանձնացնել տեղական և օտարերկրյա ֆինանսավորման ծավալները, այնուամենայնիվ 2009թթ բնակչության կողմից ֆինանսավորման ծավալների 3-ից ավել անգամ անկումը

անուղղակիորեն վկայում է որ շինարարության ծավալների անկումը 2009թ հիմնականում պայմանավորված էր օտարերկրյա ներդրումների աննախադեպ կրճատմամբ
²⁹⁶ 2008թ անշարժ գույքի շինարարության ծավալները կազմել էին ընթացիկ գներով մոտ 520 միլիարդ դրամ, իսկ 2021թ՝ 143.4 միլիարդ դրամ:

Ինչ վերաբերում է տնտեսության այլ ոլորտներին, ապա բացառությամբ առևտրի և ծառայությունների՝ շինարարության ծավալները 2009թ.-ից հետո էականորեն աճել են: Մեր կարծիքով տնտեսական ճգնաժամից հետո շինարարության կառուցվածքը նկատելիորեն ավելի կայուն է քան մինչճգնաժամային տարիներին, որի մասին և վկայում է Նկար 3.5.11-ը: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն

նշվել էր սույն հետազոտության առաջին փուլում, մտահոգիչ է հիփոթեքային վարկավորման առաջանցիկ աճը 2008թ. 83.6 միլիարդ դրամից մինչև 481.2 միլիարդ դրամ 2020թ.-ին, ինչպես նաև եկամտահարկի հաշվին հիփոթեքային համաֆինանսավորման ծրագիրը, որը ստեղծում է արհեստական պահանջարկ անշարժ գույքի շուկայում և կարող է համապատասխան փուչիկի հիմք հանդիսանալ:



Նկար 3.5.11. Շինարարության ոլորտային կառուցվածքը 2007-2021թթ.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ամփոփելով պետք է նշել, որ շինարարական քաղաքականության հիմնական նպատակները պետք է ուղղված լինեն հասնող աճի ապահովման հիմնական նպատակներին: Այդ առումով անհրաժեշտ է ապահովել շինարարական ներդրումների հետագա վերաուղղումն արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքի արդիականացման խնդիրներին, որը հիմնականում պետք է իրականացվի պետական միջոցների հաշվին, ինչպես նաև արդյունաբերական շինարարությանը՝ սահմանափակելով արհեստական պահանջարկն անշարժ գույքի շուկայում, մասնավորապես քայլ առ քայլ կրճատելով հիփոթեքային համաֆինանսավորման ծրագրերը: Տնտեսական քաղաքականության

այլ հիմնական խնդիրը, որը ազդում է նաև շինարարության ծավալների վրա՝ դա «թանկ» վարկերն են, որոնք սահմանափակում են շինարարական ոլորտի առաջարկը և որոնք պետք է ենթակա լինեն վերանայման երկրի ընդհանուր վարկային քաղաքականության շրջանակներում, որում հակազնաճային նպատակներն անհրաժեշտ է զուգակցել երկրի տնտեսական զարգացմանը նպաստող վարկային քաղաքականության հետ:

Ինչ վերաբերում է աշխատատեղերի ստեղծմանը, համաձայն վերջին տարիների շինարարությունում զբաղվածության տվյալներին, շինարարությունն աշխատատար ոլորտ է²⁹⁷ հետևաբար ծավալների միավոր աճը կբերի զբաղվածության մոտ 0.2 միավոր աճի:

²⁹⁷ 2019թ տվյալներով շինարարությունում զբաղված են եղել ընդհանուր զբաղվածների 9%, այն ժամանակ երբ շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2019թ կազմել է 6,2%, հետևաբար աշխատանքի արտադրողականությունը շինարարությունում կազմել է ընդհանուր


արտադրողականության մոտ 2/3: Քաի որ շինարարությունը չի հանդիսանում ապրանքային ոլորտ և որպես կանոն ենթակա չի արտահանման կամ ներմուծման ապա համեմատաբար ցածր արտադրողականությունը չի ազդում ոլորտի մրցունակության վրա

3.6. Մեծածախ և մանրածախ առևտուր: Ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում:

Նկար 3.6.1-ում ներկայացված են Հայաստանի առևտրի ոլորտի ծավալները՝ ինչպես բացարձակ, այնպես էլ ՀՆԱ-ում դրանց կշռի չափով: Ինչպես տեսնում ենք, բացարձակ ցուցանիշները նկատելի տեմպերով աճում են մինչև 2012թ.-ը: Այնուհետև դիտարկվում է որոշակի լճացում, որին հաջորդում է ցածր ակտիվություն 2018-2019թթ.-ին, իսկ 2020թ.-ին՝ կտրուկ անկում պայմանավորված ճգնաժամով և բնակչության գնողունակության անկմամբ: Հաշվի առնելով, որ Հայաստանում առևտրի ոլորտը բավականին սերտորեն կապված է սպառման, հետևաբար կենսամակարդակի և եկամուտների մակարդակի հետ՝ ակնհայտ է, որ

սպառման կրճատումը հանգեցրել է առևտրի ծավալների նվազմանը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ աշխարհում, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշի ֆոնին ՀՆԱ-ում առևտրի հատվածի տեսակարար կշիռը Հայաստանում բավականին ցածր է: Եթե Հայաստանում առևտրի ոլորտի կշիռը կազմում է ՀՆԱ մոտ 10.7%-ը և ունի նվազման միտում, ապա աշխարհում այդ ցուցանիշը կազմում է 56.5%, իսկ միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 47.7%: Այսպիսով, Հայաստանում ապրանքաշրջանառությունը 4-5 անգամ պակաս է աշխարհում և միջին եկամուտ ունեցող երկրներում գրանցված ցուցանիշներից:




Նկար 3.6.1. G ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտի ավելացված արժեքը՝ թե՛ ընթացիկ, թե՛ նախորդ տարվա գներով, վերջին քսան տարիների ընթացքում աճել է՝ մոտ 7.5 անգամ: Անկում է դիտարկվում 2015-2016 և 2020 թվականներին, ընդ որում երկու դեպքում էլ այն

կազմել է շուրջ 10% (Նկար 3.6.2) և պայմանավորված է եղել ճգնաժամային պայմաններում բնակչության գնողունակության անկմամբ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.6.2. Ավելացված արժեքը G ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ոլորտի արդյունավետությանը, ապա, ինչպես տեսնում ենք, միջանկյալ սպառման ծավալներում զգալի աճ է դիտարկվում մինչև 2008թ.-ը, որին հաջորդում է լճացման երկարատև շրջան (Նկար

3.6.3): Սակայն ոլորտի նյութատարության տեսանկյունից, կարելի է նկատել ոլորտի արդյունավետության զգալի աճ սկսած 2004թ.-ից՝ 38%-ից հասնելով 25%-ի 2020թ.-ին:




Նկար 3.6.3. Միջանկյալ սպառումը G ոլորտում, մլն. դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում հիմնական միջոցների ծավալը հաշվեկշռային արժեքով դրսևորում է չափավոր աճ, մինչդեռ մնացորդային արժեքի առումով աճ գործնականում չկա (Նկար 3.6.4): Ավելին,

ժամանակի ընթացքում դիտարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային և մնացորդային արժեքների միջև աճող ճեղք:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.6.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը G ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Նկար 3.6.5-ում ներկայացված է կապիտալ-աշխատուժ հարաբերակցության, կապիտալատարության, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության դինամիկան առևտրի ոլորտում: Ինչպես տեսնում ենք, կապիտալ-աշխատուժ հարաբերակցության տեսանկյունից նկատելի աճի տեմպեր չեն դիտարկվում, և վերջին 15 տարիների ընթացքում ցուցանիշն

աճել է ընդամենը 2.5 անգամ: Կապիտալատարությունը նույնպես էապես չի աճել վերջին դիտարկվող ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է աշխատանքի արտադրողականությանը, ապա հարկ է նշել ցուցանիշի աճի դրական դինամիկան, ինչը որոշակիորեն վկայում է ոլորտի արդյունավետության բարձրացման մասին:




Նկար 3.6.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականություն G ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում դիտարկվում է նաև աշխատանքի գնի զգալի աճ: Ինչպես տեսնում ենք, և՛ միջին ամսական աշխատավարձը, և՛ աշխատանքի գինը ոլորտում բավականին ցածր են ընդհանուր տնտեսության միջինից: Վերջինս վկայում է

ոլորտի ցածր մրցունակության մասին աշխատանքի շուկայում: Նշենք նաև, որ վերջին տարիների ընթացքում նկատելի է եկամուտների աճի բացակայությունը:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.6.6. Աշխատավարձ և աշխատանքի գինը G ոլորտում, դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Առևտրի ոլորտում գների դինամիկան սերտորեն կապված է տնտեսության ներսում արտադրվող ապրանքների գների, ինչպես նաև ներմուծման գների հետ: Այստեղ հարկ է նշել, որ հաշվի առնելով ներմուծման զգալի տեսակարար կշիռը Հայաստանի տնտեսության մեջ, երկրորդ գործոնն ավելի մեծ ազդեցություն ունի առևտրի ոլորտում գների դինամիկայի վրա: Բացի այդ, առկա է տնտեսության կենտրոնացվածության բարձր մակարդակ, ինչը նույնպես բացասաբար է արտացոլվում երկրում գների ընդհանուր դինամիկայի վրա, այդ թվում՝ առևտրի ոլորտում: Միևնույն ժամանակ, բացասական ազդեցությունն արտահայտվում է ինչպես տատանողականության, այնպես էլ հենց գների մակարդակի վրա:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով առևտրի ոլորտում գների դինամիկան, ընդհանուր առմամբ դիտարկվում է նվազման միտում (Նկար 3.6.7): Այս միտումն այսօր բնորոշ է աշխարհում սպառողական շուկայի գներին, իսկ առևտրի դեպքում գործ ունենք հիմնականում սպառողական ապրանքների գների հետ: Բացի այդ, գների տատանողականությունն առևտրի ոլորտում ավելի է համընկնում ՀՆԱ-ի դեֆլյատորի դինամիկայի հետ, քան տնտեսության այլ ճյուղերի դեպքում: Բացառություն կարելի է համարել 2002, 2004 և 2016 թվականները, երբ նկատելի է ոլորտում գների կտրուկ տատանում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.6.7. Գների դինամիկան ըստ ղեֆյատորի G ոլորտում, ՀՆԱ ղեֆյատոր, %, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում զբաղվածների թիվը դրսևորում է կայուն դինամիկա: Դիտարկվող ժամանակահատվածում տեղի է ունեցել աննշան աճ, հատկապես առևտրի ոլորտում զբաղվածների տեսակարար կշռի առումով

ընդհանուր զբաղված բնակչության մեջ (Նկար 3.6.8): Ընդհանուր առմամբ 2019թ.-ի դրությամբ ոլորտում զբաղվածների քանակը կազմում է շուրջ 133 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածների շուրջ 12.3%-ը:



Նկար 3.6.8. Զբաղվածություն:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտի ֆինանսավորման առումով պետք է նշել, որ առևտուրը Հայաստանի տնտեսության առանցքային հատվածներից է, որը լրացուցիչ միջոցներ է ներգրավում ինչպես բանկային հատվածից, այնպես էլ վարկային կազմակերպություններից:

Այսպես, բանկային հատվածի վարկերի ծավալը կայուն աճում է և վերջին տասը

տարիների ընթացքում ավելացել է ավելի քան երկու անգամ (Նկար 3.6.9): Վարկերի կառուցվածքում գերիշխող դիրքը զբաղեցնում են մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտին տրված արտարժույթով վարկերը, ինչը վկայում է այն մասին, որ այս ոլորտի ձեռնարկությունների մեծ մասն աշխատում է ներմուծվող ապրանքների մատակարարների հետ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.6.9. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ G ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերին, ապա հարկ է նշել, որ վարկավորման ծավալները բավականին անկայուն են, սակայն ընդհանուր միտումով դրանք չափավոր աճ են գրանցում դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում (Նկար 3.6.10): Այստեղ գերիշխող են մանրածախ սեգմենտի վարկերը՝ արտահայտված ինչպես արտարժույթով, այնպես էլ դրամով:

Ոլորտին բնորոշ է վարկային ծանրաբեռնվածության միջին մակարդակ:

2011թ.-ին ոլորտում վարկային ծանրաբեռնվածությունը թողարկման նկատմամբ կազմում էր շուրջ 43%: Առաջիկա տաս տարիների ընթացքում դիտարկվում է ցուցանիշի կայուն աճ՝ հասնելով 53%-ի 2019թ.-ին: 2020թ.-ին ճգնաժամային իրավիճակով, ոլորտի գործունեության ժամանակավոր սահմանափակումներով և թողարկման ծավալների անկմամբ պայմանավորված ցուցանիշը կտրուկ աճեց՝ հասնելով գրեթե 63%-ի:



Նկար 3.6.10. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ G ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Առևտրի ոլորտի 2000-2021թթ. զարգացման հիմնական առանձնահատկությունը՝ կազմակերպված առևտրի տեսակարար կշռի անընդհատ աճն է. եթե 2000թ. դրությամբ խանութների միջոցով իրականացվում էր մանրածախ առևտրի շրջանառության 38.8%-ը, ապա 2021թ.-ին՝ արդեն 91.3%-ը: Ինչ վերաբերում է սպառողական ապրանքների շուկաներին (տոնավաճառներին)՝ 2000թ.-ին դրանք ապահովում էին շրջանառության 32.1%-ը, իսկ 2021թ.-ին միայն 5.5%-ը, գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 5.6% և 1.3%, կրպակները՝ 22.7% և 1.8% համապատասխանաբար: Հիմնականում այս գործընթացներով է բացատրվում վերը նշված արտադրողականության (Նկար 2.6.5), միջին աշխատավարձի (Նկար 2.6.6) առաջանցիկ աճը և շատ ավելի ցածր տեմպերով զբաղվածության աճը (Նկար 2.6.8).

Վերջին տարիներին տեղի է ունենում նաև խանութների միջին չափերի աճը, հայրենական և օտարերկրյա առևտրային ցանցերի աճող գերակայությունը ոչ ցանցային խանութների նկատմամբ: Այդ գործընթացն առավել արտահայտված է սննդամթերքի առևտրում, բայց ինտենսիվ տեղի է ունենում նաև ոչ պարենային առևտրում՝ դրականորեն ազդելով

ոլորտում արտադրողականության և աշխատավարձերի աճի տեմպերի վրա, ապահովելով ավելի ցածր գների մակարդակ ոչ ցանցային խանութների նկատմամբ, բայց միևնույն ժամանակ հարաբերականորեն կրճատելով զբաղվածությունը ոլորտում:

Կարևոր խնդիր է մանրածախ առևտրի չնվազող կենտրոնացումը Երևանում՝ 2000թ.-ին այն կազմել էր ապրանքաշրջանառության 79.2%, իսկ 2021թ.՝ 71%, որը մի կողմից արտահայտում է տնտեսական իրողությունները²⁹⁸, մյուս կողմից կենտրոնացման աստիճանը զգալիորեն ավելի բարձր է քան Երևանի դերը երկրի տնտեսության մեջ:

Այսպիսով, առևտրի զարգացման տնտեսական քաղաքականությունը պետք է հաշվի առնի լրացուցիչ աշխատատեղերի քանակի ավելացման անհրաժեշտությունը հատկապես Երևանից դուրս և նույն նպատակից ելնելով ապահովի ոչ ցանցային խանութների մրցունակության աստիճանի ավելացումը համապատասխան հարկային և վարկային քաղաքականությամբ Երևանից դուրս գտնվող և ոչ ցանցային խանութների համար, հատկապես սննդամթերքի առևտրի ոլորտում, որը 2020թ. տվյալներով կազմել է մանրածախ առևտրի 52%-ը:

3.7. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն

Փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտը կարևոր դեր է խաղում այսօրվա տնտեսության և հասարակության մեջ և մեծ ազդեցություն ունի տնտեսական աճի և զբաղվածության վրա: Այս ոլորտը ներառում է ցամաքային տրանսպորտի գործունեությունը և փոխադրումը խողովակաշարերով, ջրային և օդային տրանսպորտի գործունեություն, պահեստավորումը և տրանսպորտային օժանդակ գործունեությունը, ինչպես նաև փոստային և սուրհանդակային գործունեությունը:

Տրանսպորտային ենթակառուցվածքը որպես ընդհանուր ենթակառուցվածքի մաս հանդիսանում է կայուն տնտեսական աճի նախապայմաններից մեկը: Ներդրումները փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտում ազդում են տնտեսական զարգացման վրա՝ արտադրողականության բարձրացման, տնտեսական գործունեությանը լայն զանգվածների ներգրավման և սպառման ավելացման շնորհիվ՝ ավելի կարճ տարանցման ժամանակի պատճառով՝ լրացուցիչ տրանսպորտային կարողությունների, արդյու-


²⁹⁸ Երևանը կազմելով վերջին տարիներին Հայաստանի բնակչության մոտ 40%, արտադրում է երկրի ՀՆԱ 55-60%

նավետության և ավելի լավ հուսալիության և սպասարկման որակի բարելավման արդյունքում: Ավելին, տրանսպորտային ծառայությունների որակը մեծ ազդեցություն ունի մարդկանց կյանքի որակի վրա: Ոլորտը մեծապես կախված է էլեկտրաէներգիայից, գազի և վառելիքի ռեսուրսներից և ներկայացնում է CO² արտանետումների նշանակալի աղբյուր:

Տրանսպորտային ենթակառուցվածքների արագացված զարգացումը և տրանսպորտային ու լոգիստիկ համակարգերի կատարելագործումը կարող է էական ազդեցություն ունենալ տնտեսական աճի և, ի վերջո, բնակչության բարեկեցության վրա: Լոգիստիկ ոլորտը համարվում է Եվրոպայի առավել արագ զարգացող ոլորտներից մեկը և զգալի կշիռ ունի ՀՆԱ կազմում: ԵՄ ընդհանուր ՀՆԱ կազմում փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտի կշիռը 2008-2019թթ.-ին եղել է բավականին կայուն և տատանվել է 4.8-

4.9% միջակայքում (Նկար 3.7.1): Ընդ որում ԵՄ անդամ զարգացող երկրներում ոլորտի կշիռը էլ ավելի բարձր է և 2019թ.-ի դրությամբ կազմում է ՀՆԱ 6.7%-ը:

Հայաստանում փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտի կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 2.2-3.3% միջակայքում դիտարկվող ժամանակահատվածում (Նկար 3.7.1): Մինչև 2016թ.-ը ոլորտը գտնվում էր լճացման փուլում: 2017-2019թթ.-ին նկատվել է համախառն թողարկման ծավալների դինամիկ աճ միջինում տարեկան 10.3%-ով՝ հասնելով շուրջ 320 մլրդ դրամի: 2020թ.-ին Covid-19 համավարակի պատճառով սահմանափակումների արդյունքում ոլորտի աճը խաթարվեց և տեղի ունեցավ շուրջ 35% անկում հիմնականում ուղևորափոխադրումների անկման պատճառով: Սակայն ոլորտը 2021թ. սահմանափակումների վերացմանը զուգահեռ գրեթե վերականգնվեց՝ ցույց տալով 27% աճ:




Նկար 3.7.1. Ի ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

2013-2015թթ.-ին կարելի է նկատել ոլորտում միջանկյալ սպառման ծավալների նշանակալի կրճատում (Նկար 3.7.2): Արդյունքում կրճատվեց նաև համախառն թողարկման մեջ միջանկյալ սպառման կշիռը 46%-ից հասնելով 36%-ի, ինչը վկայում է ոլորտում նյութատարության նվազման

և հետևաբար թողարկման արդյունավետության բարձրացման մասին: Հետագա տարիներին ոլորտի թողարկման նյութատարության մակարդակը մնացել է կայուն՝ տատանվելով 32-35% միջակայքում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.7.2. Միջանկյալ սպառումը H ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտում թողարկման նյութատարության մակարդակի կրճատումը սկսած 2013թ.-ից նպաստեց ավելացված արժեքի աճի առավել բարձր տեմպերին՝ համախառն թողարկման աճի համեմատ: Այսպես, 2017-2019թթ.-ին ոլորտի ավելացված արժեքի տարեկան միջին աճը կազմել է 11.8%, ինչը զգալիորեն գերազանցում է նույն

ժամանակահատվածում գրանցված ընդհանուր տնտեսական աճի տեմպերը: 2019թ.-ի դրությամբ ոլորտում ավելացված արժեքը կազմում էր 214 մլրդ դրամ, որից հետո տեղի ունեցավ 33.4% անկում: Ինչպես արդեն նշեցինք, 2021թ.-ին սահմանափակումների վերացմանը զուգահեռ տեղի ունեցավ ոլորտի արագ վերականգնում՝ դրսևորելով 27% աճ:




Նկար 3.7.3. Ավելացված արժեքը H ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում հիմնական միջոցների ծավալների աճ է դիտարկվում 2013-2016թթ.-ին և 2018-2019թթ.-ին, որը ավելի շուտ կարելի է բնութագրել որպես 2017թ.-ի կրճատումից հետո տեղի ունեցած վերականգնում (Նկար 3.7.4): 2013-2016թթ.-ին հիմնական միջոցների աճի

միջին տեմպը կազմել է 8.4%: 2020թ.-ի դրությամբ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների ծավալը կազմում է շուրջ 675 մլրդ դրամ, իսկ մնացորդային արժեքով՝ 427 մլրդ դրամ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.7.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը H ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով ոլորտում կապիտալի և համախառն թողարկման ծավալների դինամիկան դիտարկվող ժամանակահատվածում՝ 2016թ.-ից սկսած կարելի է նկատել կապիտալատարության զգալի անկում (Նկար 3.7.5): Մինևույն ժամանակ 2019թ.-ի դրությամբ 7 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ շուրջ 50%-ով բարձրացել է աշխատանքի

արտադրողականությունը 2012թ.-ի համեմատ: Ինչ վերաբերում է կապիտալ-աշխատուժ հարաբերակցությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ 2012-2016թթ.-ին զգալիորեն աճել է մեկ աշխատողի հաշվով կապիտալի չափը, որը սակայն շուրջ 32%-ով նվազել է հաջորդող 3 տարիներին:



Նկար 3.7.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականություն H ոլորտում:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինևույն ժամանակ դիտարկելով ոլորտում զբաղվածության մակարդակը՝ կարելի է նկատել, որ փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտի լճացման շրջանում մինչև

2016թ.-ը տեղի էր ունենում զբաղվածության մակարդակի կրճատում (Նկար 3.7.6): Ավելին, չնայած 2012թ.-ի դրությամբ ոլորտում և ընդհանուր տնտեսությունում աշխատանքի գնի

գրեթե հավասար մակարդակներին՝ 138677 և 139 603, համապատասխանաբար, արդեն 2015թ.-ի դրությամբ դրանց միջև առկա էր ճեղք 15.6% չափով: Սկսած 2017թ.-ից ոլորտում սկսեց աճել ինչպես վարձատրության, այնպես էլ զբաղվածության մակարդակը՝ համախառն թողարկման ծավալների աճին զուգընթաց: Արդեն 2019թ.-ին վերականգնվել էր ոլորտի

մրցակցությունն աշխատանքի շուկայում: 2019թ.-ի դրությամբ ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 54.4 հազար մարդ, որը ընդհանուր զբաղվածության 5%-ն է: Մինևույն ժամանակ ոլորտում աշխատանքի գինը շուրջ 205 հազար դրամ է, ինչը գրեթե հավասար է ընդհանուր տնտեսության միջինին:




Նկար 3.7.6. Զբաղվածություն և աշխատանքի գին H ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչպես արդեն նշվել է, փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտը խիստ կախված է էներգիայի սպառումից: Ինչպես ցույց է տալիս ոլորտի էներգետիկ հաշվեկշիռը, սպառման հիմնական էներգետիկ աղբյուրներն են նավթամթերքը և գազը (Նկար 3.7.7): Ընդ որում, գազի սպառումը 2012-2013թթ.-ին կազմում էր ընդհանուրի 72%: 2014թ.-ից սկսած ոլորտում ավելացավ նավթամթերքի սպառումը, և հաջորդող տարիներին բնական գազի սպառման կշիռը տատանվում էր 59-63%

միջակայքում: Փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտում մեկ միավոր արտադրանքի թողարկման վրա էներգիայի ծախսի ցուցանիշը 2012-2018թթ.-ին տատանվել է 99-104 կՋոուլ միջակայքում: Ընդ որում, մինչև 2015թ.-ը դիտարկվում է ոլորտում թողարկման էներգատարության աճ, իսկ դրանից հետո նվազում: Վերջինս վկայում է 2016թ.-ից սկսած ոլորտի արդյունավետության վերականգնման մասին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.7.7. Էներգետիկ հաշվեկշիռը տրանսպորտի ոլորտում, տերաջոուլ

Աղբյուր՝ Կազմվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության վիճակագրական բաժնի կողմից հրատարակվող «Էներգետիկ հաշվեկշիռ» գեկույցների հիման վրա – <https://unstats.un.org/unsd/energystats/pubs/balance/>

2012թ.-ից սկսած, բացառությամբ 2016 և 2020 թվականների, ոլորտում գների դինամիկան հաշվարկված դեֆյատորով ըստ ավելացված արժեքի, միջանկյալ սպառման և համախառն թողարկման, ցուցաբերել է աճի միտում: 2016 և 2020 թվականներին

դեֆյատորի մակարդակը եղել է 100–ից որոշակիորեն ցածր՝ վկայելով ոլորտում գնանկման մասին: Ընդհանուր առմամբ ոլորտում գների դինամիկան համընկնում է ՀՆԱ դեֆյատորի դինամիկայի հետ՝ ոչ նշանակալի շեղումներով:



Նկար 3.7.8. Գների դինամիկան ըստ դեֆյատորի H ոլորտում, ՀՆԱ դեֆյատոր, %, տարեկան


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Փոխադրման և պահեստային տնտեսության վարկավորման հիմնական աղբյուրներն են առևտրային բանկերի (Նկար 3.7.9) և վարկային կազմակերպությունների (Նկար 3.7.10) կողմից տրված վարկերը: Ընդհանուր առմամբ ոլորտի վարկային ծանրաբեռնվածությունը դիտարկվող ժամանա-

կահատվածում եղել է ցածր և տատանվել համախառն թողարկման 13-22% միջակայքում: Սակայն 2020թ.-ին, պայմանավորված covid-19 համավարակով, ոլորտում տեղի է ունեցել վարկային ծանրաբեռնվածության կտրուկ աճ մինչև 41%:

Անհրաժեշտ է նշել, որ ոլորտում վարկերի 91-95%-ն ապահովում է բանկային համակարգը: Բացի այդ ընդհանուր վարկերի 75-87%-ը արտարժութային է: Ինչպես նկատում ենք 2018թ.-ի վերջին եռամսյակում սկսվել է ոլորտում վարկերի ծավալի զգալի աճ և մեկ տարվա ընթացքում ընդհանուր ոլորտի վարկերն աճել են ավելի քան երկու անգամ: Նման զգալի աճի

հիմնական շարժիչներն էին ավտոճանապարհային բեռնափոխադրումների և փոխադրման ծառայությունների, ինչպես նաև օդային տրանսպորտի գործունեության ոլորտները: Վերջիններս 2021թ.-ի դրությամբ կազմում են ընդհանուր արտարժութային վարկերի շուրջ 90%-ը:




Նկար 3.7.9. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ H ոլորտի, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպություններին, ապա ինչպես արդեն նշվեց, դրանց կողմից տրամադրված վարկերի ծավալը չի գերազանցում ընդհանուր վարկերի 9%-ը դիտարկվող ժամանակահատվածում: Բանկային համակարգի համեմատ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող

վարկերի արժույթային կազմում 2011-2016թթ.-ին գերակայում էին դրամային վարկերը՝ տատանվելով 51-65% միջակայքում: Սակայն 2017թ.-ից հետո արտարժույթային վարկերի ծավալը գերազանցեց դրամային վարկերին՝ տատանվելով 51-67% միջակայքում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.7.10. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ H ոլորտի, հազար դրամ:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչպես վկայում է Նկար 3.7.11-ը ՀՆԱ բեռնատարությունը 2007-2021թթ. տատանվում էր բավականին մեծ միջակայքում՝ 2008թ.-ին 1.9 տոննա/միլիոն դրամից մինչև 4.9 տոննա/միլիոն դրամ 2017 և 2018 թվականներին: Դա պայմանավորված է ներքին փոխադրումների բավականին բարձր տատանողականությամբ 2016-2018թթ., որն իր հերթին պայմանավորված է ներհանրապետական ավտոտրանսպորտային փոխադրումների ծավալների կտրուկ աճով այդ ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է երկաթգծով ներքին և արտաքին փոխադրումներին, դրանց ծավալները ՀՆԱ նկատմամբ ընդհանուր առմամբ պայմանավորված են ՀՆԱ կառուցվածքով և ունեն հարաբերականորեն կայուն բնույթ:

2011թ.-ից սկսած հիմնական բեռը, որը տեղափոխվում է երկաթգծով՝ գունավոր

մետաղների հանքաքարն է, որը կազմել է 2011թ.-ի բեռների ընդհանուր ծավալի 55.2%-ը՝ հասնելով մինչև 83.4% 2019թ.-ին և 64.5% 2021թ.-ին: Երկրորդ խումբը նավթ և նավթամթերքներ են, որոնց ծավալները խիստ տատանողական են՝ 0.1% 2007թ.-ին, 2010-2016թթ.-ին փոխադրումներ չեն եղել, վերականգնվելով 2017թ.-ին և 2021թ.-ին հասնելով 12.3%: Ծավալով երրորդ բեռների խումբը՝ շինանյութերն են, որոնց փոխադրման ծավալները շատ ավելի տատանողական են՝ սկսած 37.6%-ից 2007թ.-ին մինչև 7.6% 2021թ.-ին: Այսպիսով, այդ 3 ապրանքային խմբերն ապահովել են 2021թ. երկաթգծով տեղափոխման 84.3%-ը, 2018-2020թթ.՝ 90%-ից ավելին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.7.11. ՀՆԱ բեռնատարրությունը 2007-2021թթ

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Երկաթգծային փոխադրումները և՛ ծավալով, և՛ անվանացանկով ունեն խիստ սահմանափակ բնույթ և գերակայող տրանսպորտային միջոցը՝ ավտոտրանսպորտն է²⁹⁹, որը պայմանավորված է մի շարք գործոններով՝ երկաթգծի ներքին կառուցվածքով, ելքի արտաքին սահմանափակումներով և արտաքին առևտրի աշխարհագրությամբ: Այդ գործոնների ազդեցության թուլացումը պետք է լինի երկրի տրանսպորտային և առևտրային քաղաքականության հիմնական ուղղությունը և պետք է ուղղված լինի ինչպես երկրի երկաթգծային համակարգի ներքին, այնպես էլ տարածաշրջանային ինտեգրացմանը՝ նպատակ ունենալով կտրուկ ավելացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բեռնափոխադրումների ծավալն ու անվանացանկը, դրանով ավելացնելով արտահանվող ապրանքների շրջանակը և էականորեն իջեցնելով ներմուծման արժեքը: Ինչ վերաբերում է ներքին ինտեգրացիային, ապա այն կարելի է ապահովել

Հայաստանի երկու երկաթգծերի միացմամբ Դիլիջան-Վանաձոր հատվածում և Երևան-Իջևան-Ադրբեջանի սահման երկաթգծի վերագործարկմամբ, որը էականորեն կավելացնի երկաթգծով տեղափոխվող բեռների քանակը և անվանացանկը:

Արտաքին ինտեգրացիայի հարցում, որը տեսականորեն հնարավոր է դառնում երկրորդ Արցախյան պատերազմից հետո միջնաժամկետ հեռանկարում, պետք է բացվեն բոլոր ներկայումս չգործող կոմունիկացիաները, ապահովելով երկաթգծային կապը Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի հետ:

Ինչ վերաբերում է ուղևորափոխադրումներին, այստեղ նույնպես գերակայում է ավտոմոբիլային տրանսպորտը՝ 2018-2021թթ.-ին կազմելով ընդհանուր փոխադրումների 75-80%, երկաթգծային ինչպես ներքին, այդպես էլ արտաքին փոխադրումներն աննշան են, իսկ արտաքին փոխադրումներում գերակայում է օդային տրանսպորտն ավտոմոբիլայինի հետ միասին:

²⁹⁹ 2007թ ավտոտրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը մոտ 2 անգամ գերազանցում էր երկաթգծով բեռնափոխադրումների ծավալը և ունի աճի տենդենց՝

հասնելով 8,5 անգամի 2018թ նվազելով հետագայում մինչև 3 անգամ 2019թ և հասնելով 3,86 2021թ:

Այստեղ նույնպես քաղաքականությունը պետք է ուղղված լինի փոխադրումների էժանացմանը: Ներքին փոխադրումների դեպքում այն պետք է ուղղված լինի Երևանի մետրոյի զարգացմանը՝ ավելացնելով էլեկտրատրանսպորտով տեղափոխման տեսակարար կշիռը: Մյուս ուղղությունը երկաթգծային ինտեգրացումից հետո՝ երկաթգծով ուղևորափոխադրման ծավալների առաջանցիկ աճի ապահովումն է:

Ինչ վերաբերում է արտաքին ուղևորափոխադրումներին, այստեղ նույնպես

պետք է ավելացնել երկաթգծով տեղափոխման տեսակարար կշիռը:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է էական ներդրումներ կատարել ինչպես երկաթգծային ենթակառուցվածքի ինտեգրացման և վերագործարկման, այնպես էլ մետրոյի ընդլայնման հետ կապված, որը ենթադրում է տրանսպորտային երթակառուցվածքի վրա կատարվող պետական և մասնավոր ներդրումների էական ընդլայնում միջնաժամկետ հեռանկարում:

3.8. Կացության և հանրային սննդի կազմակերպում

Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը սերտորեն կապված է մի կողմից ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման և մյուս կողմից բնակչության եկամուտների դինամիկայի հետ և զգալի ներդրում ունի տնտեսական ու զբաղվածության աճի մեջ³⁰⁰: Կացության ոլորտը հիմնականում ներառում է ճանապարհորդներին և այլ այցելուներին կարճաժամկետ կացարանների տրամադրում՝ հյուրանոցների, մոթելների, հյուրատների, հանգստյան տների, մահճակալների և նախաճաշերի և այլնի միջոցով: Հանրային սննդի կազմակերպման ոլորտը ներառում է սննդի և խմիչքների տրամադրումը, որոնք նախատեսված են վերջնական սպառման համար՝ լինեն բարերում, ռեստորաններում, սրճարաններում, կամ հանրային սննդի այլ վայրերում: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը զարգացած երկրներում, ինչպիսիք են EU15 երկրները,


կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտն ավելի մեծ կշիռ ունի ՀՆԱ-ում, քան ԵՄ անդամ այլ երկրներում: Այսպես, 2019թ.-ի դրությամբ EU15 երկրներում սույն ոլորտի կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 3%, իսկ այլ երկրներում 2.1%:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա անհրաժեշտ է նշել, որ մինչև 2009թ.-ը ոլորտը գտնվում էր լճացման փուլում և զարգացման ուղղությամբ զգալի փոփոխություններ նկատելի չեն (Նկար 3.8.1): 2010-2016թթ.-ը կարելի է բնութագրել որպես ոլորտում համախառն թողարկման կայուն աճի ժամանակահատված: Իսկ ահա 2017-2019թթ.-ին ոլորտում տեղի է ունեցել զգալի աճ: Ընդամենը 2 տարում համախառն թողարկումն աճեց 70%-ով՝ 2019թ.-ին հասնելով ավելի քան 201 մլրդ դրամի (ՀՆԱ 1.9%): Covid-19-ի պատճառով ոլորտը զգալի անկում ապրեց 2020թ.-ին՝ կազմելով 43.3%, մասամբ վերականգնվելով 2021թ.-ին:

³⁰⁰ Համաձայն Հայաստանի վճարային հաշվեկշռի ներգնա զբոսաշրջությունից ստացված եկամուտները (ճանապարհորդություններ տողը) 2000թ կազմել էր 37,8 միլիոն ԱՄՆ դոլար աճելով ներգնա տուրիզմի հետ և հասնելով 645,7 միլիոն ԱՄՆ դոլար 2010թ, 1528 միլիոն ԱՄՆ

դոլար (ՀՆԱ մոտ 11%), կտրուկ նվազելով քրվիդի պատճառով 2020թ մինչև 292,8 միլիոն ԱՄՆ դոլար և մասամբ վերականգնվելով 2021թ՝ մինչև 720,4 միլիոն ԱՄՆ դոլար (ՀՆԱ մոտ 5%)

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.8.1. Ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեյի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Չնայած ոլորտի դինամիկ զարգացմանն ու համախառն թողարկման աճի զգալի տեմպերին՝ մինչև 2017թ.-ը ոլորտում միջանկյալ սպառման զգալի աճ տեղի չի ունեցել: Արդյունքում 2009թ.-ից սկսած կայուն տեմպով նվազել է թողարկման նյութատարությունը, ինչը վկայում է արտադրողականության բարձրացման մասին:

Այսպես, 2017թ.-ի դրությամբ սույն ցուցանիշը կազմում էր 34%՝ 2008թ.-ին գրանցված 53%-ի նկատմամբ (Նկար 3.8.2): 2018թ.-ին կարելի է նկատել նյութատարության ցուցանիշի որոշակի աճ մինչև 38%, որը հետագա տարիներին մնացել է կայուն:



Նկար 3.8.2. Միջանկյալ սպառումն Ոլորտում, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեյի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կացության և հանրային սննդի ոլորտում արդյունավետության բարձրացման շնորհիվ սկսած 2009թ.-ից ավելացված արժեքն աճել է համախառն թողարկման աճին համամասնորեն (Նկար 3.8.3): Այսպես, 10 տարիների ընթացքում ոլորտում ավելացված արժեքն աճել է ավելի քան 6 անգամ՝ 2019թ.-ին հասնելով 127 մլրդ դրամի:

2009թ.-ի դրությամբ ոլորտի կշիռը ՀՆԱ-ում կազմում էր ընդամենը 0.42%: Սակայն ոլորտի ավելացված արժեքի զգալի աճի շնորհիվ 2019թ.-ի դրությամբ սույն ցուցանիշն արդեն կազմում էր 1.9%: Անհրաժեշտ է նշել, որ այս ցուցանիշով Հայաստանը բավականին մոտ է ԵՄ անդամ EU15 խմբին չպատկանող երկրների միջին ցուցանիշին՝ 2.1%:

Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտն ամբողջ աշխարհում

ամենաշատ տուժած ոլորտն է 2020թ.-ի Covid-19 համավարակի հետևանքով: Ճանապարհորդական սահմանափակումների, ինչպես նաև խիստ կարանտինային միջոցառումների հետևանքով որոշակի ժամանակահատվածի ընթացքում ոլորտում բիզնես գործունեությունը գրեթե ամբողջությամբ պարալիզացվեց: Մասնավորապես, Հայաստանում, սկսած 2020թ.-ի մարտ ամսից, որոշակի ժամանակով արգելվել էր հանրային սննդի ձեռնարկությունների գործունեությունը: Այս ամենի հետևանքով ոլորտում տեղի ունեցավ աննախադեպ անկում: Իրական ավելացված արժեքի ցուցանիշի անկումը կազմեց ավելի քան 41%, այն դեպքում, երբ ընդհանուր տնտեսական անկումը երկրում կազմեց 7.4%:




Նկար 3.8.3. Ավելացված արժեքն I ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Այժմ դիտարկենք կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում հիմնական միջոցների դինամիկան (Նկար 3.8.4): Ինչպես տեսնում ենք 2009թ.-ից ոլորտում համախառն թողարկման կայուն աճին նախորդում է 2007թ.-ից սկսած հիմնական միջոցների դանդաղ տեմպով ավելացումը: Արդեն 2013թ.-ից հետո հիմնական միջոցների ավելացման տեմպը

զգալիորեն արագանում է՝ էլ ավելի արագացնելով համախառն թողարկման աճը: Եվ վերջապես 2017թ.-ին կարելի է նկատել հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների 34% աճ նախորդ տարվա նկատմամբ, ինչն էլ համապատասխանում է այդ երկու տարիների ընթացքում համախառն թողարկման 70% աճին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.8.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքն I ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

2012-2017թթ.-ի ընթացքում կարելի է նկատել ոլորտում կապիտալ-աշխատուժ, կապիտալատարության և աշխատանքի արտադրողականության ցուցանիշների աճ: Սակայն արդեն սկսած 2018թ.-ից ոլորտում հիմնական միջոցների նվազման և թողարկման

ծավալների զգալի աճի հետևանքով տեղի ունեցավ կապիտալատարության նշանակալի կրճատում: Մյուս կողմից, 2018-2019թթ.-ին ոլորտում զբաղվածության աճի հետևանքով տեղի է ունեցել նաև կապիտալ-աշխատուժ հարաբերակցության նշանակալի անկում:



Նկար 3.8.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականություն I ոլորտում:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Շնորհիվ ոլորտում ավելացված արժեքի աճի համեմատ զբաղվածության աճի համեմատաբար ավելի դանդաղ տեմպերի՝ 2012թ.-ից սկսած (Նկար 3.8.6) տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության զգալի աճ դիտարկվող 7 տարիների ընթացքում:

2019թ.-ի դրությամբ աշխատանքի արտադրողականությունն աճել էր 68%-ով: Ինչ վերաբերում է կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում աշխատանքի գնին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում սույն ցուցանիշի զգալի

աճ չի նկատվում: Ավելին, ոլորտում աշխատանքի գնի մակարդակը զգալիորեն ցածր է տնտեսության ընդհանուր միջին ցուցանիշից և վերջին 10 տարիների ընթացքում

դրանց միջև ճեղքն ավելի է մեծացել: Այսպես, 2019թ.-ի դրությամբ ոլորտում աշխատանքի գինը կազմում է շուրջ 118 հազար դրամ, ինչը ցածր է ընդհանուր միջինից 43%-ով:




Նկար 3.8.6. Չբաղվածություն I ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ոլորտում գների դինամիկային (Նկար 3.8.7), ապա կարելի է նկատել դեֆլյատորի բոլոր երեք ցուցանիշներով՝ ըստ ավելացված արժեքի, ըստ համախառն թողարկման, ըստ միջանկյալ սպառման, գների բավականին բարձր տատանողականություն: Ընդ որում, գների դինամիկան ոլորտում բացառությամբ 2003, 2006, 2015 և 2019 թվականների, հիմնականում համընկնում է ՀՆԱ

դեֆլյատորի հետ: Հատկանշական է, որ 2019թ.-ին տեղի է ունեցել միջանկյալ սպառման գների զգալի կրճատում (դեֆլյատորը կազմել է 94), մինչդեռ միևնույն ժամանակ դիտարկվում է ավելացված արժեքի գների զգալի աճ (դեֆլյատորը կազմել է 106.5): Արդյունքում համախառն թողարկման գները մնացել են գրեթե անփոփոխ:



Նկար 3.8.7. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի I ոլորտում, %, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում կարելի է նկատել ինչպես առևտրային բանկերի կողմից (Նկար 3.8.8), այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից (Նկար 3.8.9) ֆինանսավորման կայուն աճ վերջին տաս տարիների ընթացքում:

Առևտրային բանկերի կողմից ոլորտին տրամադրված վարկերի ծավալը աճել է տարեկան միջինում 17.3%-ով: Հատկանշական է, որ թե՛ հանրային սննդի կազմակերպման, թե՛ հյուրանոցային ծառայությունների ոլորտում վարկերի գերակշռող մեծամասնությունն արտարժույթային է: Այսպես, մինչճգնաժամային 2019թ.-ի դեկտեմբերի դրությամբ ոլորտում առևտրային բանկերի կողմից տրամադրված արտարժույթային վարկերի կշիռն էր 77%: Ցուցանիշը որոշակիորեն նվազեց 2020թ.-ի ճգնաժամի հետևանքով՝ կազմելով 75% նույն

տարվա դեկտեմբերին և 74% 2021թ.-ի օգոստոսի դրությամբ:

2011-2015թթ.-ի ընթացքում առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում մեծ էր հանրային սննդի ոլորտի վարկային բեռը՝ կազմելով 61% 2011թ.-ին և 52% 2015թ.-ին: Սկսած 2016թ.-ից հյուրանոցային ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերի ծավալը կտրուկ աճեց՝ կազմելով ընդհանուր վարկերի 63%-ը: Վերջինս պահպանվում է մինչ այսօր:

Ոլորտին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը բավականին փոքր տեղ են զբաղեցնում և մինչճգնաժամային 2019թ.-ին կազմում էին շուկայի ընդամենը 1.6%-ը: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս կողմից առավելապես տրամադրվում են դրամային վարկեր:




Նկար 3.8.8. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ I ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

2020թ.-ի ճգնաժամի հետևանքով տեղի է ունեցել վարկային կազմակերպությունների կողմից ոլորտին տրամադրվող ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային

վարկերի կրկնակի աճ: Այնուամենայնիվ, 2021թ.-ի դրությամբ ընդհանուր վարկավորման 97.6%-ը բաժին է ընկնում առևտրային բանկերին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.8.9. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ I ոլորտի, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ընդհանուր առմամբ ոլորտում բավականին բարձր է վարկային բեռը համախառն թողարկման նկատմամբ, որը վերջին տաս տարիներին ունի աճի միտում: 2016թ.-ին այն կազմել է 124%՝ 2011թ. 75%-ի նկատմամբ, սակայն հաջորդող 3 տարիներին սույն ցուցանիշը նվազել է՝ հասնելով 87%-ի 2019թ.-ի դրությամբ: Այնուամենայնիվ, 2020թ.-ի ճգնաժամի հետևանքով տեղի է ունեցել զգալիորեն կրճատված համախառն թողարկման նկատմամբ վարկային բեռի կտրուկ աճ՝ հասնելով մինչև 165%:

Այդուսակ 3.8.1-ը ցույց է տալիս, որ ոլորտի երկու ենթաօլորտներից ավելի դինամիկ է զարգանում հասարակական սնունդը, որի միջին տարեկան աճի տեմպերը 2009-2019թթ. կազմել էին 19.7% հյուրանոցային ոլորտի համեմատ, որը 2009-2019թթ. աճել է միջին տարեկան 16.6%³⁰¹: Ինչպես արդեն նշվել էր, 2020թ.-ին ոլորտն աննախադեպ անկում ապրեց հիմնականում բնակչության համախառն սպառման անկման (հասարակական սնունդ) և զբոսաշրջության կրճատման պատճառով (հյուրանոցային տնտեսություն), ընդ որում երկրորդի անկումը շատ ավելի մեծ էր: 2021թ. ընթացքում առաջին

ոլորտն ըստ էության վերականգնվեց, իսկ երկրորդը հասավ 2018թ. Մակարդակի՝ վերականգնելով 2019թ. ներքին զբոսաշրջության ծավալները: Ամենայն հավանականությամբ ոլորտի ներգնա զբոսաշրջության հատվածն ամբողջությամբ կվերականգնվի 2023-2024թթ.-ին:

Ոլորտը, հատկապես դրա հասարակական սննդի ենթաօլորտը, կշարունակի մնալ երկրի տնտեսական զարգացման շարժիչ ուժերից մեկը: Դա պայմանավորված է հիմնականում այն գործոնով, որ 2009-2021թթ. անընդհատ (բացառությամբ 2020թ. կորոնավիրուսի ճգնաժամի) աճել է հասարակական սննդի տեսակարար կշիռը բնակչության վերջնական սպառման մեջ 2009թ. 1%-ից մինչև 3% 2021թ.-ին: Ինչ վերաբերում է հյուրանոցային տնտեսության աճին, ապա ներքին և ներգնա զբոսաշրջության ծավալային աճի հետ մեկտեղ այն նաև պայմանավորված է հյուրանոցներ օգտագործող զբոսաշրջիկների տեսակարար կշռի աճով: Այսպես, եթե 2009թ.-ին ներգնա զբոսաշրջիկների միայն 11.4%-ն է օգտվել հյուրանոցային տեսությունից, ապա 2021թ.-ին այդ թիվը կազմել է արդեն 32%³⁰²:

³⁰¹ Ընթացիկ գներով, ներառելով գնաճը

³⁰² Նմանատիպ տեղեկատվությունը չի հրապարակվում արագ զարգացող ներքին տուրիզմի համար, սակայն

ակնհայտ է որ այդ ոլորտում նույնպես ավելանում է հյուրանոցներ օգտագործող զբոսաշրջիկների քանակը:

Աղյուսակ 3.8.1. Կացության և հանրային սննդի ոլորտի դինամիկայի հիմնական ցուցանիշները Հայաստանում 2009-2021թթ, միլիարդ դրամ ընթացիկ գներով

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Բնակչության վերջնական սպառում	2647	2974	3306	3700	3951	4110	3916	3893	4415	4883	5417	4627	4988
Հյուրանոցներ թողարկում	9	11,3	12,9	15,5	17,9	18,9	22,1	23	28,4	34,5	41,8	16,5	32
Հասարակական սնունդ թողարկում	25,2	32,2	35,9	45,6	55,4	64,8	68,7	71,4	83,6	116,4	152,5	97,8	148,7
Հասարակական սնունդ, % վերջնական սպառման	1,0	1,1	1,1	1,2	1,4	1,6	1,8	1,8	1,9	2,4	2,8	2,1	3,0
Ներգնա զբոսաշրջիկներ 1000	575	687	758	843	1082	1204	1192	1259,7	1495	1652	1894	360	870
Ներքին զբոսաշրջիկներ 1000	436	456	489	515	670	860	872	980	1087	1092	1545	1046	1596
Ընդհամենը զբոսաշրջիկ	1011	1143	1247	1358	1751	2064	2064	2239,7	2582	2744	3439	1406	2466
Հյուրանոցների հասույթը 1 զբոսաշրջիկի հաշվով, դրամ	8903	9883	10342	11413	10220	9160	10707	10269,2	11001	12572	12155	11735	12976

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ոլորտը կարգավորող քաղաքականությանը, ապա այն բավականին ազատական է և ամբողջությամբ հիմնված է ոչ պետական հայրենական և օտարերկրյա ներդրումների վրա և մեր կարծիքով միջնաժամկետ ապագայում հատկապես հասարակական սննդի ոլորտում որևէ լրացուցիչ կարգավորումներ, հարկային փոփոխություններ և խստացումներ չի պահանջվում: Ինչ

վերաբերում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը, այն պետք է ուղղված լինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակավայրերի ճիշտ գոտիավորմանը և երկրի առանձին մասերի՝ օրինակ Սևանա լճի, բարեկարգմանը դրանց տուրիստական գրավչության բարձրացման նպատակով:

3.9. Տեղեկատվություն և կապ

Տեղեկատվության և կապի ոլորտը կարևոր նշանակություն ունի տնտեսական զարգացման համար և կարող է նպաստել տնտեսական աճի ավելի արագ տեմպերի ձեռքբերմանը և արտադրողականության բարձրացմանը, հատկապես ինտերնետի հասանելիության և արագության ավելացման միջոցով: Ոլորտը ներառում է հեռահաղորդակցությունը, հեռուստառադիոհաղորդումների կազմում և հեռարձակումը, ֆիլմերի և հեռուստաձրագրերի արտադրությունը, ծրագրային ապահովման մշակումը, խորհրդատվությունները և համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում հարակից գործունեությունը, ինչպես նաև հրատարակչական գործը:


Տեղեկատվական և կապի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը կարող է զգալիորեն նպաստել տնտեսական զարգացմանն ու աճի բարձր և կայուն տեմպերի ձեռքբերմանը: ԵՄ անդամ EU15 երկրներում 2008-2019թթ.-ին տեղեկատվության և կապի ոլորտի կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 4.9-5.4% միջակայքում: Միևնույն ժամանակ ԵՄ անդամ այլ երկրներում դիտարկվող ժամանակաշրջանում նույն ցուցանիշը 2008թ.-ին կազմել է 4.2%: Սակայն ԵՄ-ին անդամակցությունից հետո ներդրումների ներգրավման և տնտեսական զարգացման արդյունքում այս երկրներին հաջողվել է ապահովել ոլորտի աճի կայուն

տեմպեր և արդեն 2019թ.-ին գրեթե հասնել EU15 երկրների ցուցանիշին՝ կազմելով 5.2%:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, տեղեկատվության և կապի ոլորտում համախառն թողարկման ծավալների որոշակի աճ է գրանցվել 2012-2013թթ.-ին՝ 7.3% և 10.8%, համապատասխանաբար (Նկար 3.9.1): Այնուհետև ոլորտը հայտնվել է լճացման շրջանում երեք տարի շարունակ: 2016թ.-ից սկսած դիտարկվում է տեղեկատվության և կապի ոլորտի համախառն թողարկման ծավալների կայուն աճ: Արդյունքում 2021թ.-ին

ոլորտի համախառն թողարկման ծավալները կազմել են 348 մլրդ դրամ, որը գերազանցում է 2016թ.-ի ցուցանիշը 44%-ով:

Հաշվի առնելով դիտարկվող ժամանակահատվածում երկրում ՀՆԱ աճի տեմպերը՝ 2012-2019թթ.-ին ոլորտի կշիռը ՀՆԱ նկատմամբ գրեթե չի փոխվել, տատանվելով 3.3-3.5% միջակայքում: 2020թ.-ին ոլորտի կշիռը ՀՆԱ-ում զգալիորեն աճել է, հասնելով 3.8%՝ շնորհիվ նրա, որ ի տարբերություն ընդհանուր տնտեսությանը, տեղեկատվության և կապի ոլորտն աճ է գրանցել համավարակի ընթացքում:




Նկար 3.9.1. Ոլորտի թողարկման ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Միջանկյալ սպառման ծավալների դինամիկան 2008-2015թթ.-ին տարբերվում է համախառն թողարկման դինամիկայից (Նկար 3.9.2): Այսպես, 2009-2013թթ.-ին միջանկյալ սպառման ծավալները զգալիորեն աճել են՝ հասնելով 79.8 մլրդ դրամի, մինչդեռ

համախառն թողարկման ոլորտում լճացման շրջան էր: Արդյունքում բարձրացել է նաև տեղեկատվության և կապի թողարկման նյութատարության ցուցանիշը 2009թ. 27%-ից հասնելով 35%-ի 2013թ.-ին:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.9.2. Միջանկյալ սպառումը J ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Միևնույն ժամանակ դիտարկվող ժամանակահատվածում կրճատվել է նաև ոլորտի ավելացված արժեքը (Նկար 3.9.3): 2013թ.-ից հետո դինամիկան ամբողջովին փոխվեց: 2014-2015թթ.-ին տեղի ունեցավ միջանկյալ սպառման ծավալների կտրուկ կրճատում՝ հասնելով 58.1 մլրդ դրամի, ինչի

արդյունքում տեղի ունեցավ արտադրողականության բարձրացում և նյութատարության ցուցանիշի կրճատում մինչև 25%: միևնույն ժամանակ 2013թ.-ից մինչ այժմ ոլորտում դիտարկվում է ավելացված արժեքի աճի կայուն տեմպ, ներառյալ ճգնաժամային տարիներին՝ 2014-2015թթ., 2020թ.:




Նկար 3.9.3. Ավելացված արժեքը J ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կարելի է առանձնացնել տեղեկատվության և կապի ոլորտում հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների աճի երկու ժամանակաշրջան՝ 2012-2016թթ. և 2018-2020թթ. (Նկար 3.9.4): Առաջին ժամանակահատվածում տեղի է ունեցել

տարեկան միջին 5% աճ՝ կազմելով 488.5 մլրդ դրամի: Այնուհետև տեղի է ունեցել 6.6% անկում: Աճի երկրորդ ժամանակահատվածում հիմնական միջոցների ծավալները հասել են 542 մլրդ-ի 2020թ.-ի դրությամբ:


Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.9.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը J ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով տեղեկատվության և կապի ոլորտում ավելացված արժեքի և հիմնական միջոցների ծավալների բավականին կայունությունը՝ կապիտալատարության ցուցանիշը նույնպես չի դրսևորել զգալի տատանումներ (Նկար 3.9.5):




Նկար 3.9.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականությունը J ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում զբաղվածության ծավալները դրսևորել են նվազման միտում 2012-2015թթ.-ին՝ 22 300 զբաղվածից հասնելով 19 100-ի: Որից հետո երեք տարի շարունակ զգալի փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ արդեն 2018թ.-ին դիտարկվում է փոքր աճ: 2019թ.-ին տեղի է ունեցել ոլորտում զբաղվածների 47% աճ՝

հասնելով 31 000-ի, որին հաջորդել է անկում ճգնաժամային 2020թ.-ին: Հաշվի առնելով ոլորտում ավելացված արժեքի և զբաղվածության դինամիկան՝ 2015-2018թթ.-ին տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության որոշակի աճ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.9.6. Զբաղվածությունը J ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Դիտարկելով գների դինամիկան ոլորտում հաշվարկված դեֆյատոր ցուցանիշով ըստ ավելացված արժեքի, միջանկյալ սպառման և համախառն թողարկման՝ կարելի է նկատել տատանողականության բավականին բարձր մակարդակ (Նկար 3.9.7): Ընդ որում ավելացված արժեքի դեֆյատորի դինամիկայում նկատվում է գնանկում, իսկ միջանկյալ սպառման դինամիկայում մինչև 2015թ.-ը հիմնականում դիտարկվում է գնաճ, որին հաջորդում է գնանկումը: Արդյունքում, հաշվի առնելով ոլորտում նյութատարության ցածր մակարդակը, դիտարկվող ողջ ժամանակահատվածում դիտարկվում է համախառն թողարկման դեֆյատորի 100-ից ցածր մակարդակ, բացառությամբ 2011 և 2020

թվականների, երբ այն կազմել է 102.7 և 100.9 համապատասխանաբար: Անհրաժեշտ է նշել, որ ՀՆԱ դեֆյատորը, բացառությամբ 2012թ.-ի, դիտարկվող ժամանակահատվածում միշտ ունեցել է 100-ից բարձր մակարդակ: Չնայած տնտեսությունում գրանցվող ընդհանուր գնաճի, տեղեկատվության և կապի ոլորտը բնութագրվում է գնանկմամբ վերջին 12 տարիների ընթացքում: Այդ գնանկումը հիմնականում պայմանավորված է ոլորտի երկու ամենամեծ ենթաօլորտների՝ բջջային կապի և ինտերնետի ապահովման սակագների անկմամբ, որը տեղի է ունեցել այդ ծառայությունների ծածկույթի ավելացմանը զուգահեռ:




Նկար 3.9.7. Գների դինամիկան ըստ դեֆյատորի J ոլորտում, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Դիտարկելով ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի ԵԱՏՄ (Նկար 3.9.8) և այլ երկրներ (Նկար 3.9.9)՝ կարելի է նկատել, որ արտահանման հիմնական ոլորտն է հրատարակչական գործը: Ընդ որում արտահանման ծավալներն առավել մեծ են դեպի

ԵԱՏՄ երկրներ: Չնայած հիմնականում կայուն ծավալներին վերջին տարիներին, 2016թ.-ին կարելի է նկատել կտրուկ աճ մինչև 910 հազար ԱՄՆ դոլար: Դեպի այլ երկրներ արտահանման ծավալները զգալիորեն աճել են 2020թ.-ին՝ կազմելով 178 հազար ԱՄՆ դոլար:



Նկար 3.9.8. Երկրորդ արտահանումը Հայաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա - www.eurasiancommission.org/




Նկար 3.9.9. Երկրորդ արտահանումը Հայաստանից դեպի այլ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա - www.eurasiancommission.org/

Տեղեկատվության և կապի ոլորտում վարկերի ընդհանուր ծավալը, ներառյալ առևտրային բանկերի (Նկար 3.9.10) և վարկային կազմակերպությունների (Նկար 3.9.11) կողմից տրամադրված, բավականին փոքր է համեմատած ոլորտի համախառն թողարկման ծավալների հետ: Դիտարկվող ժամանակաշրջանում վարկեր/համախառն

թողարկում հարաբերակցությունը տատանվել է 4-21% միջակայքում: Վարկային բեռի կտրուկ աճ է գրանցվել 2015թ.-ին՝ 7.5%-ից հասնելով 18.4%-ի: Ընդ որում 2015թ.-ի երրորդ եռամսյակում նկատվում է հեռահաղորդակցության և հրատարակչական գործի ոլորտներին առևտրային բանկերի կողմից տրամադրված արտարժույթային վարկերի զգալի աճ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.9.10. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ յ ոլորտի, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Վարկային կազմակերպությունների կողմից ոլորտին տրամադրված վարկերի ծավալները դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում չեն գերազանցում 450 հազար

դրամը, բացառությամբ 2014-2015թթ.-ին 18 ամիս շարունակ շուրջ 5.5 մլն դրամ վարկային ծավալի:



Նկար 3.9.11. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ յ ոլորտի, հազար դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչպես վկայում է Նկար 3.9.12-ը, հեռահաղորդակցության 3 հիմնական միջոցները վերջին 11 տարվա ընթացքում լայնորեն տարածվել են Հայաստանում: Ինչ վերաբերում է բջջային կապին, ապա դրա ծածկույթը (penetration rate) 2011թ.-ից սկսած

սկսել է գերազանցել բնակչության 100%-ը՝ հետագայում տատանվելով 110-120% սահմաններում, որը համապատասխանում է միջին համաշխարհային և բարձր միջին եկամտային խմբի մակարդակին³⁰³: Ինտերնետի ծածկույթը սկսել է գերազանցել բնակչության

³⁰³ 109.4% 2019թ. դրությամբ, 122% վերին միջին եկամտային խմբի համար

100%-ը 2019թ.-ին³⁰⁴, որը բարձր է ժամանակ մալուխային հեռուստատեսություն համաշխարհային միջինից և օգտագործողների քանակը 2010-2020թթ.-ին համապատասխանում է բարձր միջին աճել է 14.5 անգամ: Եկամտային խմբի մակարդակին: Միևնույն



Նկար 3.9.12. Բջջային կապի, ինտերնետի և մալուխային հեռուստատեսության օգտագործողները 2009-2020թթ.:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչպես վկայում է Նկար 3.9.13-ը, հեռահաղորդակցության թողարկումն ընթացիկ գներով նվազել է 2009թ. 163 միլիարդ դրամից մինչև 126.5 միլիարդ դրամ 2020թ.-ին, որը ոլորտի այդ ժամանակահատվածում միջին տարեկան 7.1% աճի պարագայում վկայում է տրամադրվող ծառայությունների սակագների էական նվազման մասին: Հիմնականում դա պայմանավորված է բջջային կապի սակագների 3-ից ավելի անգամ անկմամբ: Ինչ վերաբերում է ինտերնետի սակագներին, ապա դրանք մնացել


են փաստորեն անփոփոխ՝ ոչ էական տատանումներով արագության էական ավելացման պայմաններում³⁰⁵: Մալուխային հեռուստատեսության սակագները նույնպես կրճատվել են 2010թ. 52.3 հազար դրամից մինչև 36.9 հազար դրամ 2020թ.-ին:

Այսպիսով հեռահաղորդակցությունը Հայաստանի տնտեսության միակ ոլորտն է, որտեղ տեղի է ունեցել սակագների բացարձակ կրճատում:

³⁰⁵ 2020թ դրությամբ ինտերնետի միջին արագությունը Հայաստանում կազմել է մոտ 40 մբիտ/վարկյան

համեմատած համաշխարհային միջին 85,7 մբիտ/վարկյան արագության հետ

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.9.13. Բջջային կապի, ինտերնետի և մալուխային հեռուստատեսության թողարկման ծավալները (միլիարդ դրամ) և միավորի միջին տարեկան արժեքը 2009-2020թթ ընթացիկ գներով:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ամփոփելով պետք է նշել, որ Հայաստանում ստեղծված հեռահաղորդակցության համակարգը և դրա հիմնական բաղադրիչներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ժամանակակից պահանջներին ինչպես ծածկույթի, այնպես էլ մատչելիության առումով: Հիմնական խնդիրն է մնում ինտերնետի

արագության աճի ապահովումը և նշված ծառայությունների մատչելիության պահպանումը: Ոլորտը զարգացել է բացառապես ոչ պետական ներդրումների հաշվին և ոլորտային քաղաքականության էական փոփոխությունների անհրաժեշտություն միջնաժամկետ հեռանկարում մեր կարծիքով բացակայում է:

3.10. Ֆինանսական և ապահովագրական, անշարժ գույքի հեղ կապված գործունեություն:


Ֆինանսական և ապահովագրական գործունեությունը տնտեսությունում ռեսուրսների ֆինանսավորման հիմնական գեներատորներն են: Որքան զարգացած է երկրի ֆինանսավորման համակարգը, այնքան շատ են տնտեսական աճի խթանման աղբյուրները: Միևնույն ժամանակ, անշարժ գույքի ոլորտը, որը պահանջարկի ֆինանսավորման առումով առավելապես ներկայացված է հիփոթեքային շուկայով, սերտորեն կապված է ֆինանսական միջնորդության համակարգի հետ: Այս առումով, սույն հետազոտության շրջանակներում այս երկու ոլորտները դիտարկվում են մեկ ենթաբաժնում: Ֆինանսական և ապահովագրական հատվածի թողարկման ծավալները

Հայաստանում բնութագրվում են երկնիշ և կայուն աճով: Ինչպես տեսնում ենք Նկար 3.10.1-ում, և՛ ոլորտի ծավալը, և՛ կշիռը ՀՆԱ-ում աճի միտում ունեն նույնիսկ տնտեսական ճգնաժամի կամ լճացման ժամանակաշրջաններում: Ամենակտիվ աճը նկատվում է 2015թ.-ից հետո, այդ թվում՝ ՀՆԱ մեջ կշռի մասով: 2020թ.-ի դրությամբ ֆինանսական և ապահովագրական գործունեության տեսակարար կշիռը կազմում է ՀՆԱ-ի 7%-ը, մինչդեռ 2000 թվականին այն կազմում էր 1.87%³⁰⁶: Հայաստանը վերջին երեք տարիներին ՀՆԱ-ում ֆինանսական և ապահովագրական գործունեության տեսակարար կշռով առաջ է անցել ԵՄ երկրների միջին ցուցանիշից:

³⁰⁶ 2021թ արդյունքներով ոլորտի աճը դադարել է, կազմելով 2020թ 99,2%, որը կարելի է բնութագրել որպես արձագանք համակարգում կուտակված խնդիրների, մասնավորապես պահանջարկի խրախուսմանը ուղղված վարկերի առաջանցիկ աճի պատճառով

առաջացած լարումների թուլացման արդյունքում: Ելնելով դրանից պակասել է նաև ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մինչև 5,9%

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.10.1. Ֆինանսական և ապահովագրության (K) ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է անշարժ գույքի ոլորտի ծավալներին, ապա մինչև 2012թ.-ը ոլորտը բնութագրվում էր բավականին չափավոր աճով, որին հաջորդեց կտրուկ թոփչք (Նկար 3.10.2): Կտրուկ աճը կարելի է բացատրել հիփոթեքային ոլորտը պահանջարկի կողմից խթանելու կառավարության երկու ծրագրերի ներդրմամբ: Անշարժ գույքի հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նույնպես բնութագրվում է կայուն աճի դինամիկայով երկու ժամանակահատվածում՝

2000-2012 և 2012-2021 թվականներին, իսկ ցուցանիշի կտրուկ աճով 2012թ.-ին: Զարգացման առաջին փուլում անշարժ գույքի ոլորտը միջինում կազմում է ՀՆԱ-ի մոտ 3%-ը, մինչդեռ երկրորդ փուլում անշարժ գույքի հետ կապված գործունեությունն արդեն կազմում է ՀՆԱ-ի մոտ 8%-ը: 2021 թվականի դրությամբ ոլորտի կշիռը ՀՆԱ-ում 7.4% է, ինչը 3-4%-ով պակաս է ԵՄ երկրների նույն ցուցանիշից:



Նկար 3.10.2. Անշարժ գույքի (L) ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ֆինանսական և ապահովագրական հատվածի ավելացված արժեքը բնութագրվում է կայուն աճով դիտարկվող

ժամանակահատվածում (Նկար 3.10.3): Աճի ամենաբարձր տեմպերը դիտարկվում են 2016թ.-ից ի վեր: Այսպիսով, 2016-2021թթ.-ին

Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում ավելացված արժեքը գրեթե կրկնապատկվել է: Ինչ վերաբերում է անշարժ գույքի ոլորտում ավելացված արժեքին, ապա կարելի է նկատել թողարկման

ծավալների համանման դինամիկա՝ կտրուկ աճ 2012թ.-ին, որին հաջորդում է չափավոր, բայց կայուն աճը հետագա տարիներին (Նկար 3.10.3):




Նկար 3.10.3. Ավելացված արժեքը K և L ոլորտներում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում միջանկյալ սպառումը վերջին մի քանի տարիների ընթացքում զգալիորեն գերազանցել է նույն ցուցանիշն անշարժ գույքի ոլորտում (Նկար 3.10.4): Այնուամենայնիվ, դիտարկելով 2000-2008թթ.-

ին երկու հատվածներում միջանկյալ սպառման հարաբերակցությունը, նկատում ենք հակառակ պատկեր, երբ անշարժ գույքի ոլորտում միջանկյալ սպառման ծավալները գերազանցել են ֆինանսական հատվածում նույն ցուցանիշը:




Նկար 3.10.4. Միջանկյալ սպառումը K և L ոլորտներում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Երկու հատվածներում էլ կարելի է նկատել թողարկման նյութատարության նվազման միտում, որն ընդհանուր առմամբ վկայում է երկու հատվածների արդյունավետության բարձրացման մասին: Սակայն անշարժ գույքի ոլորտում նյութատարության ցուցանիշի նվազման տեմպերը շատ ավելի արագ են, քան ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում:

Անշարժ գույքի հատվածում կապիտալի հաշվեկշռային արժեքները մինչև 2017թ.-ը

գրեթե հավասար են ֆինանսական և ապահովագրական ոլորտում նույն ցուցանիշին, մինչդեռ մնացորդային արժեքով գերազանցում են (Նկար 3.10.5): Սկսած 2018թ.-ից անշարժ գույքի ոլորտում հաշվեկշռային արժեքով և կապիտալի մնացորդային արժեքով հիմնական միջոցների ծավալները գրանցել են ավելի քան եռակի աճ և զգալիորեն գերազանցում են նույն ցուցանիշները ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածում³⁰⁷:



Նկար 3.10.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը K և L ոլորտներում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Ֆինանսական հատվածի կապիտալատարությունը և կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը դիտարկվող ժամանակաշրջանում նկատելի փոփոխություններ չեն կրել (Նկար 3.10.6): Չնայած դիտարկվող որոշակի աճին, ելնելով ցուցանիշների դինամիկայից, դժվար է դատել դրական միտման մասին: Ինչ վերաբերում է ֆինանսական հատվածում աշխատանքի արտադրողականությանը, ապա 2012-2016թթ.-ին այս ցուցանիշն աճել է վեց անգամ: Սակայն հաջորդ երկու տարիների ընթացքում ցուցանիշը կրկնակի նվազել է, ինչը նույնպես չի բնութագրում ոլորտը դրական կողմից:

Անշարժ գույքի ոլորտում կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը բավականին կայուն է մինչև 2017թ.-ը: 2018թ.-ին դիտարկվում է զգալի աճ: Անշարժ գույքի ոլորտում կապիտալատարությունը դիտարկվող ժամանակահատվածում բավականին անկայուն է, իսկ աշխատանքի արտադրողականությունը գրանցում է բավականին ցածր ցուցանիշներ:

Հետաքրքրաշարժ է, որ ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը միջինում 10-15 անգամ գերազանցում է անշարժ գույքի ոլորտում նույն ցուցանիշը:

³⁰⁷ Դա նույնպես կապված է վերը նշված հաշվարկի մեթոդաբանության փոփոխման հետ

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.10.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականությունը K և L ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Երկու հատվածներում էլ միջին ամսական աշխատավարձերը վերջին 15 տարիների ընթացքում էական աճ չեն գրանցել: Այսպես, երկու հատվածներում էլ միջին աշխատավարձի աճը 2006-2019թթ.-ին եղել է ընդամենը 2.5 անգամ և 2019 թվականին կազմել է 401 հազար դրամ ֆինանսական հատվածում և 132 հազար դրամ՝ անշարժ գույքի ոլորտում (Նկար 3.10.7): Նշենք նաև, որ ֆինանսական և ապահովագրական ոլորտներում միջին ամսական աշխատավարձը կրկնակի բարձր է անշարժ գույքի ոլորտում նույն ցուցանիշից:

Համեմատելով երկու ոլորտների միջին ամսական աշխատավարձերը տնտեսության միջին ամսական ցուցանիշի հետ՝ կարելի է նշել, որ եթե ֆինանսական հատվածում աշխատավարձը ավելի քան երկու անգամից գերազանցում է միջին ամսական աշխատավարձը տնտեսությունում, ապա անշարժ գույքի ոլորտի ցուցանիշը զիջում է վերջինիս 20-25%-ով: Երկու ոլորտներում աշխատուժի ծախսերը նույն միտումն են ցույց տալիս:




Նկար 3.10.7. Աշխատավարձ և աշխատանքի գինը K և L ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինչև 2014թ.-ը ֆինանսական հատվածում զբաղվածությունն ունի աճի միտում: Հաջորդող տարիներին այս ոլորտում դիտարկվում է զբաղվածների թվի որոշակի նվազում: 2018թ.-ի դրությամբ ֆինանսական և ապահովագրական ոլորտում զբաղված է 14.6 հազար մարդ: Ոլորտում զբաղվածների թվի որոշակի կրճատմանը զուգընթաց՝ տնտեսությունում ընդհանուր զբաղվածների նկատմամբ ոլորտի տեսակարար կշիռը գրեթե կրկնապատկվել է վերջին 15 տարիների ընթացքում և 2018 թվականի դրությամբ կազմում է 1.4%:

Ինչ վերաբերում է անշարժ գույքի ոլորտում զբաղվածության մակարդակին, ապա նշենք, որ մինչ 2009թ.-ը դիտարկվում է սույն ցուցանիշի որոշակի աճ: Սակայն, 2010թ.-ին ոլորտում զբաղվածների թվի կտրուկ անկում է նկատվում՝ 2009թ.-ի 26.6 հազարից հասնելով 3 հազարի 2010թ.-ին, ինչը կապում ենք հաշվարկի մեթոդի փոփոխության հետ: 2018 թվականի դրությամբ անշարժ գույքի ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 2.4 հազար մարդ կամ տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվի 0.2%-ը:




Նկար 3.10.8. Զբաղվածությունը K և L ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում գների դինամիկան բավականին կայուն է, բացառությամբ 2008 թվականի կտրուկ թռիչքի, որն ամենայն

հավանականությամբ պայմանավորված էր համաշխարհային ֆինանսական ճգնաժամով (Նկար 3.10.9):

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.10.9. Ֆինանսական և ապահովագրության ոլորտում գների դինամիկան ըստ դեֆլյատորի,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Նկատենք, որ նույն ժամանակահատվածում գների կտրուկ անկում է գրանցվել անշարժ գույքի ոլորտում: Մնացած ժամանակահատվածում մենք վերջին վեց տարիների ընթացքում

նկատում ենք գների կայուն դինամիկա, որը գործնականում համընկնում է ՀՆԱ-ի ընդհանուր դեֆլյատորի դինամիկայի հետ (Նկար 3.10.10):



Նկար 3.10.10. Անշարժ գույքի ոլորտում գների դինամիկան ըստ դեֆլյատորի,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Խոսելով ֆինանսական և ապահովագրական ոլորտներում վարկերի ծավալների մասին՝ պետք է նշել, որ վերջին հինգ տարիներին դիտարկվում է կայուն աճ: Ֆինանսական հատվածում վարկերի արժույթային կառուցվածքում դրամային և արտարժույթային վարկերի կշիռները գրեթե հավասար են: 2020 թվականի դրությամբ վարկերի ներգրավման առաջատար կարող են

համարվել առևտրային բանկերը և ներդրումային ընկերությունները:

Ընդհանուր առմամբ, պետք է նաև նշել ֆինանսական հատվածում առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի դինամիկայի բարձր տատանողականությունը՝ ինչպես ընդհանուր դինամիկայի, այնպես էլ ոլորտի առանձին հատվածների միջև վարկերի բաշխման առումով: Դա պայմանավորված է

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

շուկայում առաջարկի որոշակի ֆինանսական ակտիվների առաձգականությամբ, ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մակարդակներում:




Նկար 3.10.11. Առևտրային բանկերի կողմից տրված վարկերը ֆինանսական և ապահովագրության ոլորտում, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Զգալի աճի տեմպեր ունեն նաև վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտին տրամադրված վարկերը (Նկար 3.10.12): Սակայն վարկերի կառուցվածքն ըստ վարկառուների տարբերվում է բանկային համակարգից: Մասնավորապես, վարկային

կազմակերպություններից ՀՀ դրամով վարկեր ներգրավելու գերիշխող դիրքը զբաղեցնում են առևտրային բանկերը: Արտարժույթով վարկերի մեծ մասը տրամադրվում է տարբեր ոլորտների՝ ֆինանսական համակարգի առանցքային սեգմենտներից դուրս:




Նկար 3.10.12. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր ֆինանսական և ապահովագրության ոլորտում, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Բանկային համակարգի կողմից անշարժ գույքի ոլորտին տրամադրվող վարկերի դինամիկան ցույց է տալիս կայուն աճի միտում

(Նկար 3.10.13): Բանկային համակարգի կողմից անշարժ գույքի ոլորտին տրված վարկերի մեծ մասը արտարժույթով վարկեր են:




Նկար 3.10.13. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր անշարժ գույքի ոլորտում, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերին, ապա դինամիկան բավականին երկմաստ է: Այսպիսով, մինչև 2013թ.-ը նկատելի է արտարժույթով վարկավորման աճ, որը գերակշռում է վարկային կազմակերպություններից անշարժ գույքի ոլորտին տրվող վարկերի կառուցվածքում: 2014թ.-ի սկզբից վարկային կազմակերպություններից անշարժ գույքի

ոլորտի բոլոր վարկերը կտրուկ կրճատվել են և առաջիկա երկու տարիների ընթացքում մնացել են գրեթե գրոյական մակարդակում: Միայն 2016թ.-ից հետո է նկատվում որոշակի ակտիվություն անշարժ գույքի «Այլ» հատվածի արտարժույթով վարկերի հատվածում: Սակայն մինչ օրս վարկավորման ծավալը հասել է 2011-2013թթ.-ի ծավալների մակարդակի միայն մեկ քառորդին:




Նկար 3.10.14. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր անշարժ գույքի ոլորտում, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչպես արդեն բազմիցս նշվել էր տվյալ հետազոտության առաջին փուլի հաշվետվության մեջ, ֆինանսական միջնորդության համակարգը, որտեղ բանկերի տեսակարար կշիռը կազմում է մոտ 95%, ֆոնդային շուկայի փաստացի բացակայության պայմաններում, ըստ էության, տնտեսության շուկայական հատվածի ներքին ֆինանսավորման միակ աղբյուրն է: Նկարը ցույց է տալիս, որ մինչև 2004թ. բանկային հատվածի միակ վարկային գործառույթ է հանդիսացել առաջարկի³⁰⁸ ֆինանսավորումը, 2004թ.-ից սկսած սկսել է զարգանալ պահանջարկի ֆինանսավորումը՝ սպառողական և հիփոթեքային վարկերի տեսքով, որը առաջանցիկ աճել է մինչև 2020թ. ներառյալ: 2021թ.-ին 0.8% անկումը, մեր կարծիքով, պայմանավորված էր համակարգում արագ,

հատկապես պահանջարկի ֆինանսավորման վարկերի աճի պայմաններում ավելացված ռիսկերի մեղմանը և կնպաստի համակարգի կայունության աճին: Վարկավորման հիմնական կրճատումները պայմանավորված էին սպառողական վարկերի ծավալների կտրուկ կրճատմամբ՝ 2020թ. ՀՆԱ 14.5%-ից մինչև 6.5% 2021թ.-ին: Միևնույն ժամանակ և՛ բացարձակ, և՛ ՀՆԱ նկատմամբ շարունակում է աճել հիփոթեքային վարկերի ծավալը, որը 2021թ.-ին կազմել էր ընդհանուր բնակարանային շինարարության ծավալների 511%-ը՝ անընդհատ աճելով 2018թ. 225%-ի համեմատ³⁰⁹: Այսպիսով, չնայած սպառողական վարկերի հետ կապված ռիսկերը 2021թ.-ին նվազել են, հիփոթեքային վարկավորման և անշարժ գույքի շուկայում փուչիկի և հետագա ճգնաժամի ռիսկերն ավելացել են:



Նկար 3.10.15. Առևտրային բանկերի կողմից տրված վարկերի կառուցվածքը 2000-2021թթ., % ՀՆԱ նկատմամբ

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

³⁰⁸ Արտադրության, առևտրի և ծառայությունների ֆինանսավորումը

³⁰⁹ Հայաստանի վիճակագրությունը չի հրապարակում անշարժ գույքի շուկայի ընդհանուր դրամական ծավալները, որը հնարավորություն չի տալիս համեմատել հիփոթեքային վարկերի ծավալները շուկայի ծավալների հետ: Անուղղակի տվյալները գրանցված գործարքների քանակի մասին վկայում են որ հիփոթեքային վարկավորման ծավալները


աճում են ավելի արագ քան անշարժ գույքի գործարքների քանակը: Այսպես, 2021թ 2020թ համեմատ հիփոթեքային վարկերի աճը կազմել էր 173.4 միլիարդ դրամ կամ 36%, իսկ գործարքների քանակը աճել էր 21%: Հաշվի առնելով որ անշարժ գույքի գների աճ (Երևանի օրինակով) չի գրանցվել, կարելի է ենթադրել որ հիփոթեքային տեսակարար կշիռը անշարժ գույքի շուկայում 2021թ 2020թ նկատմամբ աճել է մոտ 15%:

Չնայած ֆինանսական միջնորդության համակարգում բանկային համակարգի չափերին, տնտեսության զարգացման ներկա փուլում, ինչպես նշվում էր տվյալ հետազոտության առաջին փուլի հաշվետվության մեջ, դրանք բավարար են տնտեսության ֆինանսավորման խնդիրների համար, իսկ պահանջարկի առումով նաև ռիսկային; դեռ մնում է «թանկ» վարկի խնդիրը³¹⁰, որը հատկապես արդիական է հիփոթեքային և սպառողական վարկերի համար: Այսպես, 2020թ. դրամական հիփոթեքային վարկերի միջին տոկոսը կազմել էր 10.4, դոլարայինը՝ 9.5, 2021թ.-ին՝ 10.7 և 9.5 տոկոսի համեմատ, որը և ստիպում է պետությանն իրականացնել այդ վարկերի տոկոսադրույքների համաֆինանսավորման ծրագրեր պետական բյուջեի միջոցներից³¹¹:

Ֆինանսական միջնորդության համակարգը ներկայացված է չափազանց փոքր և դանդաղ զարգացող ապահովագրական հատվածով, որի ակտիվները 2021թ.-ին կազմել էին ՀՆԱ 1 տոկոսից պակաս: Համեմատության համար 2019թ. դրությամբ 90 երկրի տվյալներով³¹²

համաշխարհային միջինը կազմել էր 25.4% (առավելագույնը Թայվանն էր 157.7%, նվազագույնը՝ Ուգանդան՝ 1.3%): Ինչպես վկայում է Նկար 3.10.16-ը ապահովագրական ոլորտի մոտ կեսը որոշակի տատանումներով կազմում է ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրումը, որը ներդրվել էր 2011թ.-ից սկսած, կյանքի ապահովագրման ոլորտը բացակայում է, չի ներկայացված նաև գյուղատնտեսական ապահովագրումը: Բժշկական ապահովագրումը շատ փոքր է և չկա պարտադիր բժշկական ապահովագրման համակարգ:

Ապահովագրման համակարգի արագացված զարգացման ապահովումը, մասնավորապես պետական մասնակցությամբ գյուղատնտեսական, ինչպես նաև բժշկական ապահովագրման որոշակի պարտադիր տարրերի քայլ առ քայլ ներդրումը, օրինակ պետական ծառայության, բյուջեից ֆինանսավորվող այն ոլորտների, որտեղ աշխատավարձի չափերը սահմանում է պետությունը և տնտեսության ֆորմալ կորպորատիվ ոլորտների համար:



Նկար 3.10.16. Ապահովագրական ոլորտի հիմնական ցուցանիշները և կառուցվածքը 2009-2021թթ
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

³¹⁰ 2021թ դեկտեմբերի դրությամբ իրավաբանական անձանց համար մինչև 1 տարի դրամական վարկի միջին տոկոսը կազմել էր 11,2%, սփրեդը՝ 3,1%, դոլարայինը՝ 7,5%, սփրեդը՝ 5,3%: 2020թ համար այդ թվերը համապատասխանաբար կազմել էին 10,3%, սփրեդը՝ 3,5%, դոլարայինը՝ 7,8%, սփրեդը՝ 6,6%:

³¹¹ Եկամտահարկից
³¹² https://www.theglobaleconomy.com/rankings/insurance_compa ny_assets/

Ինչպես վկայում է Աղյուսակ 3.10.1-ը, վերջին 8 տարիների ընթացքում պետական համաֆինանսավորմամբ³¹³ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի

ներդրման արդյունքում Հայաստանում ձևավորվել է արագ աճող ինստիտուցիոնալ պորտֆելային ներդրող, որը ՀՆԱ նկատմամբ դեռ զիջում է համաշխարհային միջինին³¹⁴:

Աղյուսակ 3.10.1. Կուտակային կենսաթոշակային ֆոնդերի գործունեության հիմնական ցուցանիշները 2014-2021թթ.

	2021	2020	2019	2018	2017	2016	2015	2014
Զուտ ակտիվների արժեք, միլիարդ դրամ	482,5	369,4	251,2	157,2	105,7	63,3	31,8	12,1
Զուտ ակտիվների արժեք, % ՀՆԱ	7,4	6,0	3,8	2,6	1,9	1,3	0,6	0,3
Դրամական միջոցներ և ավանդներ	141,6	103,2	83,3	5,6				
ՀՀ պետական պարտատոմսեր	158,7	107,2	66,2	47,0				
Այլ պարտատոմսեր	37,0	37,5	23,4	15,6				
Բաժնային արժեթղթեր	142,9	117,5	75,4	39,5				
Այլ ակտիվներ	2,9	4,4	3,2	2,2				
Պարտավորություններ	0,6	0,4	0,2	1,8				

Ինչ վերաբերում է ոլորտում իրականացվող քաղաքականությանը, ապա բանկային ոլորտի կարգավորումները, ելնելով Կենտրոնական բանկի հիմնական խնդրից, ենթարկվում են սղաճի սահմանափակման նպատակին, որը և հիմնականում պայմանավորում է «թանկ» վարկերի և լոզացող փոխարժեքի քաղաքականությունը: Մյուս կողմից, հասնող զարգացման պարագայում անհրաժեշտ են «էժան» վարկեր տեխնոլոգիաների ձեռք բերման համար և դրանք տրամադրող մասնագիտացված ֆինանսական կառույցներ, ինչպես նաև այնպիսի փոխարժեք, որը հանդիսանում է տեղական արտադրության և արտահանման խրախուսման հիմնական միջոցը: Մեր կարծիքով ունիվերսալ բանկային

համակարգին զուգահեռ պետք է ստեղծել նաև մասնագիտացված կառույցներ, որոնց վրա տեղափոխել զարգացման ֆինանսավորման հիմնական բեռը, ունիվերսալ բանկային համակարգի վրա թողնելով գործող և կայացած կառույցների ֆինանսավորումը:

Ինչ վերաբերում է կենսաթոշակային ֆոնդերին որպես ինստիտուցիոնալ ներդրող, դրանց դերը ժամանակի ընթացքում աճելու է և պահպանելով ներդրումների ցածր ռիսկային և կոնսերվատիվ ուղղությունը՝ անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել ներդրումների պորտֆելը պետական արժեթղթերի տեսակարար կշռի կրճատման և հուսալի բաժնային արժեթղթերի տեսակարար կշռի ավելացման հաշվին:

³¹³ 2021թ հաստատված բյուջեով պետական համաֆինանսավորման ծավալները կազմել էին մոտ 70 միլիարդ դրամ


³¹⁴ Համաձայն https://www.theglobaleconomy.com/rankings/pension_funds_as

[sets/](#) 2019թ դրությամբ 83 երկրների տվյալների համաձայն կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ/ՀՆԱ միջին հարաբերակցությունը կազմել էր 29,7%՝ առավելագույնը՝ Նիդերլանդներ 192%, նվազագույնը՝ Ուկրաինա՝ 0.08%

3.11. Կրթություն, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն

Գիտությունն ու կրթությունն առաջընթացի և տնտեսական աճի ու զարգացման շարժիչներ են: Ե՛վ մարդկային ներուժի զարգացումը, և՛ տնտեսության հասնող աճի ներուժն ու հնարավորությունները տեխնոլոգիաների յուրացման և օգտագործման առումով, կախված են երկրում կրթության և գիտության համակարգի զարգացման մակարդակից:

Քանի որ կրթության և գիտության ոլորտը, որպես կանոն, ընդհանուր առմամբ դրական ազդեցություն է թողնում տնտեսության վրա, այս ուսումնասիրության շրջանակներում մենք միավորել ենք դրանք: Կրթության ոլորտի ծավալները ներկայացված են Նկար 3.11.1-ում:



Նկար 3.11.1. Կրթության (P) ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Նկար 3.11.1-ը ցույց է տալիս, որ ամբողջ ժամանակահատվածում ոլորտն աճել էր ավելի դանդաղ քան ամբողջ տնտեսությունը, որի մասին է վկայում ոլորտի տեսակարար կշռի նվազումը 2000թ. ՀՆԱ 3.4% -ից մինչև 2.8% 2020թ.-ի դրությամբ, մինչդեռ ԵՄ երկրներում նույն ցուցանիշը կազմում է 5% և առանձնապես չի փոխվել նշված ժամանակահատվածում: Որոշ չափով դա կապված է համապատասխան տարիքային խմբի կրճատման հետ բնակչության ծերացման և միգրացիայի պատճառով: Սակայն նույնանման ծերացման ավելի ինտենսիվ գործընթացներ են տեղի ունեցել նաև ԵՄ երկրներում, որտեղ այդ տեսակարար կշիռը չի նվազել:

Ինչ վերաբերում է մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտի

ծավալներին, ապա պատկերն այնքան էլ լավ չի թվում: Վերջին 12 տարիների ընթացքում ոլորտն ընդամենը կրկնապատկվել է՝ 2020 թվականի դրությամբ կազմելով ՀՆԱ-ի մոտ մեկ տոկոսը (Նկար 3.11.2): Միևնույն ժամանակ, դիտարկվող ողջ ժամանակահատվածում մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտը ոչ միայն դրական դինամիկա չի ցուցաբերում, այլև կայունորեն պահպանում է շատ ցածր ցուցանիշներ:

Համեմատության համար նշենք, որ ԵՄ երկրներում գիտական գործունեության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում է միջինում 7%, և պահպանել է իր դիրքերը վերջին 10 և ավելի տարիների ընթացքում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.11.2. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն (M) ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է ավելացված արժեքին, ապա հարկ է նշել, որ ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտներում դիտարկվում է աճի միտում: Սակայն, ինչպես երևում է Նկար 3.11.3-ից, կրթության ոլորտի ավելացված արժեքը ոչ միայն գերազանցում է գիտության ոլորտի բացարձակ ցուցանիշները, այլև զգալիորեն գերազանցում է աճի տեմպերով: Այսպիսով, կրթության ոլորտը Հայաստանում շատ ավելի արագ տեմպերով է զարգանում, քան գիտությունը: Ընդ որում, մասնագիտական,

գիտատեխնիկական գործունեության ոլորտը վերջին 12 տարիների ընթացքում աճել է ընդամենը 20%-ով, իսկ կրթական ոլորտում ավելացված արժեքի ծավալներն աճել են 5-6 անգամ:

Այստեղից կարելի է ենթադրել, որ ոլորտների փոխկապակցումն այնքան էլ արդյունավետ չէ, և ընդհանրապես գիտական գործունեությունը երկրում առաջնահերթ չէ և զարգացման առումով որևէ կերպ չի խթանվում:




Նկար 3.11.3. Ավելացված արժեքը M և P ոլորտներում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կրթության ոլորտում միջանկյալ սպառման ծավալներում դիտարկվում է աճի նշանակալի տեմպ մինչև 2016թ.-ը (Նկար 3.11.4): Սակայն միջանկյալ սպառման աճին զուգահեռ նկատվում է նաև նյութատարության աճ, ինչը

վկայում է ոլորտի արդյունավետության նվազման մասին: Նյութատարության դինամիկայի ամենամեծ աճը նկատվում է 2005-2010թթ.-ին:




Նկար 3.11.4. Միջանկյալ սպառումը կրթության ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Միջանկյալ սպառումը մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում վերջին 12 տարիների ընթացքում աճել է բավականին դանդաղ տեմպերով (Նկար 3.11.5): Նյութերի սպառման դինամիկան կայուն

է, սակայն ցուցանիշն ընդհանուր առմամբ դրսևորում է նվազման միտում, ինչը վկայում է ոլորտում արդյունավետության դրական միտման մասին:




Նկար 3.11.5. Միջանկյալ սպառումը մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հիմնական միջոցների ծավալներն ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտում, կայուն տեմպերով աճել են մինչև 2016թ.-ը: Սակայն այս ժամանակահատվածից հետո դիտարկվում է կապիտալ ներդրումների

ծավալների կտրուկ և շատ զգալի աճ կրթության և գիտության ոլորտներում: Ամենամեծ աճը կարելի է նկատել կրթության ոլորտում, ինչը բացատրվում է բանկային ոլորտից կրթության ոլորտի վարկավորման նկատելի աճով:



Նկար 3.11.6. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը M և P ոլորտներում, մլն դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կրթության և գիտության ոլորտում կապիտալ-աշխատուժե հարաբերակցության ցուցանիշները բնութագրվում են կայուն դինամիկայով մինչև 2005 թվականը և կտրուկ աճով՝ 2016թ.-ին (Նկար 3.11.7): Նույն դինամիկան բնորոշ է կապիտալատարության ցուցանիշին ինչպես գիտության, այնպես էլ կրթության ոլորտում: Այսպիսով, կրթության ոլորտում կապիտալատարությունն աճել է 5-6 անգամ՝ 2015թ.-ի 72%-ից հասնելով 367%-ի 2017թ.-ին, որից հետո սկսել է նվազել: Գիտության ոլորտում նույնպես կապիտալատարության աճ է նկատվում, բայց շատ ավելի ցածր տեմպերով:

Կրթության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը վերջին 15 տարիների ընթացքում չնչին աճ է գրանցել, մինչդեռ մասնագիտական, գիտական և տեխնիկական հատվածում աշխատանքի արտադրողականության աճը միջինում կազմել է մոտ 20%:

Միաժամանակ, հարկ է նշել, որ մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտում աշխատանքի արտադրողականությունը մոտ երեք անգամ գերազանցում է կրթության ոլորտում այս ցուցանիշը:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.11.7. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, Աշխատանքի արտադրողականությունը M և P ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Կրթության ոլորտում միջին ամսական աշխատավարձը զգալիորեն ցածր է մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտի միջինից: Եթե կրթության ոլորտում միջին աշխատավարձը 121 հազար դրամ է, ապա մասնագիտական, գիտատեխնիկական ոլորտում այս ցուցանիշը 2020 թվականին կազմում է 186 հազար դրամ,

ինչը գրեթե համընկնում է տնտեսության միջին աշխատավարձի մակարդակի հետ:

Նույն միտումը նկատվում է երկու ոլորտներում աշխատանքի գնի հարցում: Այսպիսով, աշխատանքի գինը նկատելիորեն ավելի ցածր է տնտեսության միջինից կրթության ոլորտում:




Նկար 3.11.8. Աշխատավարձ և աշխատանքի գինը M և P ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Գների դինամիկայի առումով և՛ կրթության, և՛ մասնագիտական, գիտական և տեխնիկական հատվածում նկատվում է տատանողականության բարձր մակարդակ: Հարկ է նշել, որ երկու հատվածներում էլ գների դինամիկան շատ

դեպքերում ավելի բարձր է, քան ՀՆԱ-ի դեֆլատորը: Կրթության ոլորտում գների ամենամեծ թոփքը նկատվում է 2007-2009թթ.-ին:




Նկար 3.11.9. Գների դինամիկան ըստ դեֆլատորի կրթության ոլորտում,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում գների դինամիկան նույնպես գերազանցում է ՀՆԱ-ի դեֆլատորը: Միաժամանակ գնային թոփքներ են նկատվում 2012 և 2015 թվականներին, ինչն ամենայն հավանականությամբ կապված է

բուհերում կրթական ծառայությունների թանկացման հետ: Վերջին երկու տարիների ընթացքում գների դինամիկան երկու հատվածներում էլ համընկել է ՀՆԱ-ի դեֆլատորի հետ:




Նկար 3.11.10. Գների դինամիկան ըստ դեֆլատորի մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է կրթության և գիտության ոլորտներում զբաղվածությանը, ապա հարկ է նշել, որ դիտարկվում է զբաղվածների քանակի կայուն մակարդակ և կրթության ոլորտում 2019թ.-ի դրությամբ կազմում է 107 հազար մարդ, իսկ մասնագիտական, գիտատեխնիկական ոլորտում՝ 17 հազար մարդ: Այսպիսով, ինչպես 2019թ.-ին, այնպես էլ դիտարկվող ողջ ժամանակահատվածում գիտության ոլորտում զբաղվածների թիվը մոտ վեց անգամ պակաս է կրթության ոլորտում զբաղվածներից: Ընդհանրապես, նման բացը չի կարելի դրական միտում համարել: Անգամ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական

համակարգում աշխատողները ներառում են կրթական բոլոր մակարդակները, զբաղվածների մոտ կեսն աշխատում է բարձրագույն կրթական համակարգում, որից միայն մեկ երրորդն է զբաղվում գիտական գործունեությամբ:

Կրթության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածության մեջ կազմում է մոտ 10%, ինչը կարելի է համարել բավականին բարձր ցուցանիշ, որը պահպանվել է առնվազն վերջին 15 տարիների ընթացքում: Մասնագիտական, գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր բնակչության 1.6%-ը:




Նկար 3.11.11. Զբաղվածությունը M և P ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտում ներմուծման դինամիկան միանշանակ չէ: Այսպես, 2016թ.-ին ներմուծման կտրուկ թռիչք է նկատվում ճարտարապետության և ճարտարագիտական գործունեության, տեխնիկական փորձարկումների և վերլուծությունների ոլորտում: 2015-

2016թթ.-ին դիտարկվում է նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեության գծով ներմուծման զգալի կշիռ: Մնացած ժամանակահատվածը բնութագրվում է այս հատվածի ներմուծման բավականին ցածր ցուցանիշներով:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.11.12. M և P ոլորտների ներմուծումը, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/

Եվ վերջապես, կրթության, ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտների ֆինանսավորման հետ կապված հարկ է նշել, որ բավական մեծ ծավալներով վարկավորումն իրականացվում է ինչպես բանկային հատվածի, այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից:

Կրթության ոլորտում բանկային հատվածի կողմից տրված վարկերը հիմնականում

ներկայացված են բարձրագույն կրթությանն ուղղված արտարժույթային վարկերով: Մինևույն ժամանակ, 2018թ.-ից հետո բարձրագույն կրթությանը տրվող վարկերի կտրուկ աճ է նկատվում՝ ինչպես արտարժույթով, այնպես էլ դրամով, ինչը կարող է կապված լինել այս ընթացքում այսպես կոչված «ուսանողական վարկերի» բավականին ակտիվ զարգացման հետ (Նկար 3.11.13):



Նկար 3.11.13. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր կրթության ոլորտում, հազար դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Վարկային կազմակերպությունների կողմից կրթական համակարգին տրված վարկերը նույնպես առավելապես ուղղված են բարձրագույն կրթության վարկավորմանը (Նկար 3.11.14): Սակայն այս դեպքում վարկերի գերակշիռ մասը տրվել է ՀՀ դրամով: Հետաքրքիր միտում է դիտարկվում 2014-2019թթ.-ին, երբ կրթությանը տրամադրվող

արտարժույթով վարկերի ծավալը նվազում է, իսկ դրամային վարկերը նկատելիորեն ավելանում են: Հարկ է նշել ևս մեկ առանձնահատկություն, որ ի տարբերություն բանկային համակարգի, վարկային կազմակերպություններն ավելի մեծ ծավալով են ֆինանսավորում բարձրագույն կրթության հետ չառնչվող ոլորտը:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ վարկային կազմակերպությունների կողմից վարկավորումը նվազում է մինչև 2020 թվականի կեսերը, այնուհետև սկսվում է կտրուկ աճ, ինչը

մեծապես պայմանավորված է ՀՀ կառավարության՝ COVID-19 համավարակի հետևանքների մեղմացման ծրագրով:




Նկար 3.11.14. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր կրթության ոլորտում, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Առևտրային բանկերի կողմից մասնագիտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտում տրված վարկերը բնութագրվում են կայուն աճով: Ոլորտի վարկավորման աճի ընդհանուր դինամիկան կարելի է բաժանել երկու փուլի՝ 2014-2018թթ. և 2018-2020թթ., որոնք բնութագրվում են փուլի սկզբում կտրուկ աճով և առաջիկա մի քանի տարիների ընթացքում աճի կայուն տեմպերի պահպանմամբ:

Միաժամանակ, 2015թ.-ից սկսած լրացուցիչ թե՛ ՀՀ դրամով, թե՛ արտարժույթով ֆինանսավորման ներգրավման մեջ գերիշխողը իրավաբանական և հաշվապահական գործունեության ոլորտն է: Հետագոտությունը և զարգացումը մեծապես ֆինանսավորվում է բանկային հատվածի կողմից արտարժույթով, ինչը, սակայն, վերաբերում է գրեթե բոլոր ոլորտներին:




Նկար 3.11.15. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից վարկավորմանը, ապա պետք է նշել, որ առկա է տատանողականության բարձր աստիճան և, ընդհանուր առմամբ, ֆինանսավորման ծավալների աճ (Նկար

3.11.16): Ճարտարապետական և հաշվապահական հատվածները հիմնականում ֆինանսավորվում են վարկային կազմակերպությունների կողմից, իսկ վարկերի մեծ մասը տրամադրվում է ՀՀ դրամով:




Նկար 3.11.16. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտում, միլիոն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչպես վկայում է Նկար 3.11.17-ը, ընթացիկ գներով կրթության արտադրանքը 2008-2020թթ.-ին աճել է միջին տարեկան 5%-ով, որից պետական ֆինանսավորմամբ 2.8%, իսկ ոչ պետական ֆինանսավորմամբ՝ 12.3%: Եթե պետական ֆինանսավորումն ապահովել է 2008թ. ոլորտի թողարկման 84.5%, ապա 2019թ.-ին՝ 61.9%, իսկ 2020թ.-ին՝ 65.2%: Դա հիմնականում տեղի է ունեցել մասնագիտական կրթության, հատկապես բարձրագույն կրթության ոլորտի պետական

ֆինանսավորման ծավալների կրճատման, և համապատասխանաբար դրանք ոչ պետական ֆինանսավորմամբ փոխարինելու միջոցով: Մասնագիտական կրթության այդպիսի խառը ֆինանսավորման մոդելը, որը տարածված է նախկին ԽՍՀՄ երկրներում, ստիպողական քայլ էր և նպատակ ուներ հնարավորինս պահպանել եղած ներուժը ֆինանսական ռեսուրսների կրճատման և անվճար մասնագիտական կրթությունը պահպանելու անհնարինության պայմաններում:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.11.17. Կրթության ֆինանսավորման կառուցվածքը 2008-2020թթ.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մեր կարծիքով ժամանակն է անցնելու համաֆինանսավորման սկզբունքին, որը գործում է մի շարք երկրներում և կապված հասնող զարգացման կադրային պահանջներից դիֆերենցել պետական համաֆինանսավորման չափերը տարբեր մասնագիտությունների համար՝ դրանք հասցնելով առավելագույնի ժամանակակից ճարտարագիտական և կիրառական մաթեմատիկայի մասնագիտությունների համար, և նվազագույնի որոշ հումանիտար մասնագիտությունների համար, որոնցով սովորելու պահանջարկն ավելի շատ է քան շուկայի ներկա և ապագա պահանջարկը:

Կրթական համակարգն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք պահանջում են արագ լուծումներ և պետք է առարկա դառնան առանձին լուրջ հետազոտության: Ընդհանուր առմամբ բնակչության շարունակվող ծերացման պայմաններում ոլորտի հիմնական խնդիրներն են կրթական հաստատությունների և զբաղվածության օպտիմալացումը, մասնագիտական կրթության ուղղումը հասնող զարգացման կադրային ներկա և ապագա պահանջների բավարարմանը, կրթության որակի կտրուկ աճը, աշխատավարձերի բարձրացումն այն հաշվարկով, որ դրանք միջնաժամկետ հեռանկարում գերազանցեն 1 շնչին ՀՆԱ-ն ընդհանուր կրթության

համակարգում մոտ 1.5 անգամ, իսկ մասնագիտական կրթության համակարգում՝ մոտ 3 անգամ՝ որակյալ կադրեր պահպանելու և ներգրավելու նպատակով: Այս փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ է ավելացնել կրթության ոլորտի ֆինանսավորումը՝ միջնաժամկետ հեռանկարում այն հասցնելով ԵՄ միջին 5 տոկոսի:


Ինչ վերաբերում է մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտին, ապա այնտեղ նույնպես զուգակցվում է պետական և ոչ պետական ֆինանսավորումը, ընդ որում գիտական հետազոտությունների ոչ պետական ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է օտարերկրյա գրանտների հաշվին, իսկ ներքին ֆինանսավորումը շուկայական սեկտորի կողմից պետականից էականորեն քիչ է:

Ինչպես վկայում է Նկար 3.11.18-ը ներքին աղբյուրների կողմից ֆինանսավորվող գիտության և հետազոտությունների տեսակարար կշիռը ոլորտի թողարկման մեջ 2008-2020թթ. ընթացքում տատանվել է առավելագույնը 15.6%-ից 2012թ.-ին մինչև նվազագույնը 10.75% 2018թ.-ին, իսկ ՀՆԱ նկատմամբ 0.2% սահմաններում ամբողջ ժամանակահատվածում, որը անթույլատրելի

ցածր է³¹⁵ և համապատասխանում է ցածր եկամտային խմբի երկրների մակարդակին:

Այդ պայմաններում երկիրը ոչ միայն չի կարողանա նորարարական տեխնոլոգիաներ և ապրանքներ ստեղծել, այլ լուրջ խնդիրներ

կունենա հասնող զարգացման հիմքը կազմող ներուժված տեխնոլոգիաների և ինստիտուցիոնալ կառույցների օգտագործման և երկրի պայմաններին հարմարեցման գործում:



Նկար 3.11.18. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտի ֆինանսավորման կառուցվածքը 2008-2020թթ

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Այստեղ նույնպես անհրաժեշտ են խորը բարեփոխումներ, որը պետք է առարկա դառնա առանձին լուրջ հետազոտության: Խնդրահարույց հարցերի շրջանակը պետք է իր լուծումը գտնի գիտության և հետազոտությունների պետական ֆինանսավորման կտրուկ աճի հետ զուգահեռ այն հաշվարկով, որ միջնաժամկետ հեռանկարում այն հասնի ՀՆԱ մոտ 1.6%՝ բարձր միջին եկամտային խմբի ներկայիս մակարդակին: Այդ հարցերի շրջանակը բավականին լայն է սկսած միջին

աշխատավարձի աճից մինչև մոտ 3 ՀՆԱ մեկ շնչին՝ ներառելով ներկայիս թեմատիկ ֆինանսավորման տեսակարար կշիռների կրճատումը բազային ֆինանսավորման տեսակարար կշռի համապատասխան ավելացման հետ³¹⁶, ուղղելով բազային ֆինանսավորման կոնկրետ արդյունքների հասնելուն, որոնք պետք է մասնավոր հատվածի համար օգտագործման ներուժ ունենան, և վերջացած հետազոտությունների շրջանակի օպտիմալացմամբ:

³¹⁵ Համաձայն Համաշխարհային բանկի 2018թ տվյալների, գիտության և հետազոտությունների միջին տեսակարար կշիռը աշխարհում կազմել էր 2,2%, Իսռայելում՝ 4,94%, Հարավային Կորեայում՝ 4,53%, բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում՝ 2,59%, բարձր միջին եկամտային խմբի երկրներում՝ 1,64%

³¹⁶ Թեմատիկ ֆինանսավորումը պայմանավորված է գիտական հետազոտությունների բուռնացմամբ, որը Հայաստանում տարբեր


պատճառներով տեղի չի ունենում: Բացի դրանից զարգացած երկրներում հետազոտությունների հիմնական մասը ֆինանսավորվում է ոչ պետական սեկտորի կողմից, որը Հայաստանում նույնպես տեղի չի ունենում, այսպիսով թեմատիկ ֆինանսավորումը նպատակահարմար է օգտագործել միայն բուհական մակարդակում և հիմնականում իրականացնել պետապատվերով, կապելով այն երկրի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջը:

3.12. Վարչարարական և օժանդակ գործունեություն

Վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը ներառում է ծառայություններ բիզնեսին, ներառյալ վարչական ծառայությունները, շենքերի սպասարկումը, ճանապարհորդական և զբոսաշրջային ծառայությունները և անվտանգության ծառայությունները³¹⁷: Տնտեսական զարգացման տեսանկյունից վարչարարական և օժանդակ ծառայությունները կարևոր դեր են խաղում անձնակազմի ընդհանուր համալրման, ինչպես նաև աշխատաշուկայի բնականոն գործունեությանն աջակցության հարցում, հատկապես զբաղվածության բարձր աճի ժամանակաշրջաններում: Զարգացած երկրներում այս ոլորտն ավելի մեծ տեղ է

զբաղեցնում ՀՆԱ-ի մեջ, քան զարգացող երկրներում: Մասնավորապես, մինչև 2004թ. ընդլայնումը ԵՄ անդամ 15 երկրներում 2008թ.-ին սույն ոլորտը զբաղեցնում էր 4.2%-ը, իսկ արդեն 2019թ.-ին՝ 5%-ը: Մինչդեռ 2004 և 2007 թվականների ԵՄ ընդլայնման ծրագրերի շրջանակներում միացած երկրներում սույն ցուցանիշը կազմել է 2% և 2.9% համապատասխանաբար: Ցուցանիշի դինամիկայում կարելի է նկատել աճի միտում՝ տնտեսական զարգացմանը զուգընթաց:

Հայաստանում վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտի ծավալները բացարձակ արժեքով ցուցաբերում են աճի միտում սկսած 2017թ.-ից (Նկար 3.12.1): Մինչ այդ ոլորտում լճացում էր:



Նկար 3.12.1. Ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Չնայած ոլորտի ընդհանուր թողարկման ծավալների աճի, դրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ում գրեթե չի փոփոխվել դիտարկվող ժամանակաշրջանում՝ տատանվելով 0.7-1% միջակայքում: Վերջինս կարելի է բացատրել երկու գործոնով: Առաջինը, 2017թ.-ից կտրուկ աճ է դիտարկվում նաև ոլորտում միջանկյալ սպառման ծավալներում (Նկար 3.12.2): Միջանկյալ սպառման աճը տեղի է ունեցել թողարկման ծավալի աճին համամասնորեն՝

ավելացված արժեքի աճին գերազանցող տեմպերով: Անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ ոլորտում թողարկման նյութատարությունն ունեցել է աճի միտում 2010-2012թթ.-ին՝ հասնելով 28%-ի: Այնուհետև սկսվել է լճացման շրջանը մինչև 2016թ.-ը: Դրան հաջորդել է երկու տարի շարունակ կտրուկ աճը, ինչի արդյունքում ոլորտում նյութատարության մակարդակը հասել է 41%-ի 2018թ.-ին: 2020թ.-ի դրությամբ կազմում է 37%, իսկ 2021թ.-ի՝ 34%:

³¹⁷ 2021թ. դրությամբ ոլորտի թողարկման ընդհանուր ծավալը կազմել էր 63.8 միլիարդ դրամ, աճել էր 2020թ. համեմատ 20.1% և ուներ հետևյալ կառուցվածքը՝ վարձակալություն և լիզինգ՝ 10%, զբոսաշրջության հետ

կապված գործունեությունը՝ 14.9%, շենքերի սպասարկումը և բարեկարգումը՝ 10.4%, ձեռնարկատիրական գործունեությունը՝ 34.3%, այլ գործունեությունը՝ 24.6%

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.12.2. Միջանկյալ սպառումը N ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Արդյունքում վարչարարական և օժանդակ գործունեության ավելացված արժեքի աճի տեմպերն այս ոլորտում անհամեմատ ավելի դանդաղ են եղել (Նկար 3.12.3): Մյուս կողմից ավելացված արժեքի որոշակի աճը ոլորտում

տեղի է ունեցել երկրում դանդաղ տնտեսական աճին զուգընթաց, ինչի արդյունքում ՀՆԱ կառուցվածքում դրա կշիռը մնացել է գրեթե անփոփոխ (Նկար 3.12.1):




Նկար 3.12.3. Ավելացված արժեքը N ոլորտում, մլն.դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտի զարգացման տեմպի փոփոխությունը և լճացման փուլից դուրս գալը հիմնականում պայմանավորված էր երկրում զբոսաշրջային ծառայությունների շուկայի ընդլայնմամբ: Ավելին, 2016թ.-ին տեղի է ունեցել

ոլորտում հիմնական միջոցների կտրուկ աճ՝ 3.5 անգամ (Նկար 3.12.4): Արդյունքում աճեց նաև կապիտալատարությունը՝ 2015թ.-ի 61%-ից 2016թ.-ին հասնելով 192%-ի:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.12.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը N ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մինևույն ժամանակ էլ ավելի կտրուկ աճ գրանցեց կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը (Նկար 3.12.5)՝ 2015թ.-ին 3.8 մլն-ից 2017թ.-ին հասնելով ավելի քան 24 միլիոն

կապիտալի մեկ աշխատողի հաշվով: Նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև աշխատանքի արտադրողականության զգալի աճ:



Նկար 3.12.5. Կապիտալատարությունը և կապիտալ-աշխատուժ հարաբերակցությունը N ոլորտում:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Վերոնշյալ փոփոխությունների տեղի ունենալուն զուգահեռ 2014 և 2017 թվականներին զգալիորեն կրճատվել էր նաև ոլորտում զբաղվածության մակարդակը: Այսպես, դեռ 2013թ.-ին ոլորտում զբաղվածների թիվն էր 10200 մարդ, որը կազմում էր ընդհանուր զբաղվածության 0.9%-ը: 2014թ.-ին ոլորտում կապիտալի աճին զուգընթաց զբաղվածների թիվը կրճատվեց մինչև 7600-ի: Իսկ 2017թ.-ին տեղի ունեցավ էլ ավելի կտրուկ կրճատում և ոլորտում զբաղվածների թիվը

հասավ 4000-ի, իսկ զբաղվածության կշիռը՝ 0.4%-ի: Այս ամենը նպաստեց կապիտալ-աշխատուժ հարաբերակցության էլ ավելի զգալի աճին: Ինչ վերաբերում է ոլորտում վարձատրության մակարդակին, ապա աշխատանքի գինը (ամսական) վարչարարության և օժանդակ ծառայությունների ոլորտում ավելի քան 30%-ով ցածր է տնտեսությունում միջին աշխատանքի գնից (Նկար 3.12.6): Մյուս կողմից աշխատանքի գնի բարձրացմանը զուգընթաց նկատվում է

կապիտալի աճի միտում մինչև 2018թ.-ը: Այնուամենայնիվ, 2019թ.-ին ոլորտում տեղի է ունեցել զբաղվածության մակարդակի աճ՝ հասնելով ընդհանուր զբաղվածության 1%-ի և 10700 մարդու: Վերջինս, հավանաբար

պայմանավորված էր 2019թ.-ին Հայաստանում զբոսաշրջության ոլորտի աննախադեպ աճով, ինչպես նաև ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմամբ՝ կապված պետական աճող վերահսկողության հետ:




Նկար 3.12.6. Զբաղվածություն և աշխատանքի գինը N ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ոլորտում գների դինամիկայի վերլուծության համար մեր կողմից դիտարկվել է երեք ցուցանիշ, հաշվարկված դեֆլյատորի հիման վրա՝ ըստ ավելացված արժեքի, ըստ համախառն թողարկման և ըստ միջանկյալ սպառման (Նկար 3.12.7): Բոլոր երեք

ցուցանիշների դինամիկան գրեթե նույնն է դիտարկվող ժամանակաշրջանում և ընդհանուր առմամբ ունի նվազման միտում: Սկսած 2014թ.-ից գների մակարդակը ոլորտում տատանվում է 1%-ի շուրջ, իսկ 2019թ.-ին տեղի է ունեցել գնանկում:



Նկար 3.12.7. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի N ոլորտում, տարեկան:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ընդհանուր առմամբ ոլորտում գների մակարդակի տատանումները համընկնում են ՀՆԱ դեֆլյատորի հետ, բացառությամբ 2012 և

2019 թվականների: 2012թ.-ին ոլորտում տեղի է ունեցել ավելացված արժեքի գների զգալի աճ (9.5%), մինչդեռ միջանկյալ սպառման գներն

աճել են ընդամենը 3.7%-ով: Ընդ որում, ընդհանուր ՀՆԱ դեֆյաստորի գծով տեղի է ունեցել գնանկում: Իսկ 2019թ.-ին տեղի է ունեցել ոլորտի ավելացված արժեքի գների մակարդակի զգալի իջեցում, մինչև ՀՆԱ դեֆյաստորը գրանցեց 102 ցուցանիշ:

2020թ.-ին կորոնավիրուսի համավարակով պայմանավորված լոքդաունի հետևանքով սույն ոլորտը առավել շատ տուժած ոլորտների շարքում է: Ավելացված արժեքի անկումը կազմել է ավելի քան 42% (Նկար 3.12.3):

Ամփոփելով՝ ոլորտը և դրա հիմնական բաղադրիչները հիմնականում ունեն այլ ոլորտները սպասարկող բնույթ և ոլորտի դինամիկան պայմանավորված է սպասարկվող ոլորտների զարգացումներով: Մասնավորապես վարձակալության և լիզինգի ծավալները մի կողմից պայմանավորված են ֆինանսական միջնորդության համակարգի հնարավորություն-

ներով և այդ ծառայությունների գնով, իսկ մյուս կողմից՝ տնտեսությունում ներդրումային ակտիվությամբ: Դրանց ծավալների առաջանցիկ աճը պետք է կրճատի ներդրումային ծախսերը և հեշտացնի ներդրումային գործունեությունը՝ կրճատելով շուկայի մուտքի գինը: Զբոսաշրջության հետ կապված գործունեությունն ուղղակիորեն կապված է ներքին, ներգնա և արտագնա զբոսաշրջության հետ և քաղաքականությունն այդ ոլորտում պայմանավորված է ընդհանուր զբոսաշրջության քաղաքականությամբ:

Ոլորտի հիմնական մասը ոչ պետական է և մեր կարծիքով հատուկ ոլորտային քաղաքականություն չի պահանջում, բացառությամբ շենքերի սպասարկման և բարեկարգման մասի, որտեղ հատկապես վերելակային սպասարկման հատվածում անհրաժեշտ են ավելի խիստ կարգավորումներ:


3.13. Պետական կառավարում և պաշտպանություն. Պարտադիր սոցիալական ապահովություն: Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում

Պետական կառավարման, պաշտպանության, առողջապահության և սոցիալական ապահովության հատվածների բնականոն գործունեությունն ու արդյունավետությունը կարևոր նշանակություն ունեն տնտեսության գործունեության և զարգացման համար: ԵՄ15 երկրներում այս հատվածների մասնաբաժինն ընդհանուր ՀՆԱ-ում միջինում կազմում է 14%, մնացած երկրներում՝ 10%: Մինչդեռ Հայաստանում նշված տնտեսական գործունեությունն անհամեմատ ավելի փոքր տեղ է զբաղեցնում ՀՆԱ կառուցվածքում (Նկար 3.13.1): Հատկանշական է, որ զլոբալ

ֆինանսական ճգնաժամից հետո 2008-2009թթ.-ին թե՛ ԵՄ երկրներում, թե՛ Հայաստանում տեղի է ունեցել ոլորտի տեսակարար կշռի աճ ՀՆԱ-ում, որը պահպանվել է հետագա տարիներին:

Այսպես, 2000թ.-ին պետական կառավարման, պաշտպանության, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտները կազմում էին ՀՆԱ 5%-ը: Վերջին 20 տարիներին կարելի է նկատել ընդհանուր կայուն աճի միտում ոլորտի համախառն թողարկման ծավալներում:


Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.13.1. O և Q ոլորտների ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մյուս կողմից, դիտարկելով միջանկյալ սպառման ծավալները, կարելի է նկատել, որ այն ունեցել է կայուն աճ 2000-2012թթ.-ին և վերջին երեք տարիներ ընթացքում (Նկար 3.13.2): Իսկ 2013թ.-ին որոշակի կրճատումից հետո մինչև 2018թ.-ը միջանկյալ սպառման ծավալների զգալի տատանումներ չեն դիտարկվում: Ինչ վերաբերում է թողարկման նյութատարության մակարդակին, ապա անհրաժեշտ է նշել, որ

դիտարկվող ողջ ժամանակահատվածում նկատվում է դրա կայուն տեմպերով անկում մինչև 2013թ.-ը: Արդյունքում, սույն ցուցանիշը 2003թ.-ի 52%-ի համեմատ 2013թ.-ին արդեն կազմում էր 31%: 2021թ.-ի դրությամբ ոլորտի թողարկման նյութատարությունը 29% է: Սույն ցուցանիշի նման անկումը խոսում է ոլորտում արդյունավետության բարձրացման մասին վերջին 20 տարիների ընթացքում:



Նկար 3.13.2. Միջանկյալ սպառումն O և Q ոլորտներում, մլն դրամ:
 Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով ոլորտում համախառն թողարկման կայուն աճը և միևնույն ժամանակ միջանկյալ սպառման աճի առավել դանդաղ տեմպերը՝ դիտարկվող ողջ ժամանակահատվածում տեղի է ունեցել ավելացված արժեքի կայուն և զգալի աճ բացարձակ արժեքով (Նկար 3.13.3):

Արդյունքում 2000թ.-ին հաջորդող 9 տարիների ընթացքում հնարավոր դարձավ հասնել ՀՆԱ-ի 9%-ի, որից հետո մինչև 2018թ.-ը ոլորտի աճը եղել է տնտեսական աճին համամասնական տեմպերով, ինչի արդյունքում տեսակարար կշիռը ՀՆԱ-ում գրեթե չի փոփոխվել՝ տատանվելով 8-9% միջակայքում: 2019-


2020թ.-ին տեղի է ունեցել ավելացված արժեքի աճի տեմպի բեկում, ինչի արդյունքում արդեն 2020թ.-ին դրա տեսակարար կշիռը կազմում էր 11%, հասնելով ԵՄ անդամ որոշ երկրների ցուցանիշին:

Հայաստանում այդ աճը պետական կառավարման և պաշտպանության ոլորտում պայմանավորված է երկու գործոնով՝ պետական կառավարման ոլորտում աշխատավարձերի զգալի աճով և 44-օրյա երկրորդ Արցախյան պատերազմով: Ինչ վերաբերում է առողջապահության ոլորտին, դրա տեսակարար կշռի աճը 2020թ.-ին հիմնականում պայմանավորված է եղել Covid-19 համավարակի հետ կապված ծախսերով: Ինչ վերաբերում է 2021թ.-ին, ապա պատերազմի ավարտը բերել է պաշտպանության վրա ծախսերի կրճատմանը, որի արդյունքում գրանցվել է պետական կառավարման և պաշտպանության ոլորտի ավելացված արժեքի կրճատում 9.9%-ով: Առողջապահության ոլորտում, հիմնականում կապված Covid-19 համավարակի շարունակման և խորացման հետ, գրանցվել է ավելացված արժեքի աննախադեպ 31.8% աճ, որի

արդյունքում առողջապահության ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմեց 6.7%, պետական կառավարման և պաշտպանությանը՝ 4.8%:

Այդպիսով, ներկայիս առողջապահության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը Հայաստանում սկսել է համապատասխանել OECD առանձին երկրների թվերին³¹⁸: Համեմատության կարգով նշենք, որ առողջապահության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2008թ.-ին կազմել էր 2.7%, 2011թ.՝ 3.7%, 2018թ.՝ 4.3%, 2019թ.՝ 4.6%, 2020թ.՝ 5.5%: Ծախսերի այդպիսի աճը չնայած 2020-2021թթ.-ին պայմանավորված էր հիմնականում Covid-19-ով, անկասկած դրական երևույթ էր և համավարակի վերանալուց հետո այդ ծախսերի մակարդակի պահպանումը հնարավորություն կտա ավելացնել ծառայությունների որակը և ծածկույթը:

Ինչ վերաբերում է պետական կառավարման և պաշտպանության ծախսերին, ապա հասկանալի պատճառներով ՀՆԱ նկատմամբ դրանք ներկայումս բավականին բարձր կշիռ ունեն³¹⁹:



Նկար 3.13.3. Ավելացված արժեքն O և Q ոլորտներում, մլն.դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

³¹⁸ 2019թ. դրությամբ առավելագույն հարաբերակցությունը ԱՄՆ-ում էր՝ 16.8%, Գերմանիայում՝ 11.7%: Հայաստանի 2021թ. ցուցանիշը համապատասխանում է Իռլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի և Լեհաստանի ցուցանիշներին

³¹⁹ 2020թ. դրությամբ Համաշխարհային բանկի տվյալներով պաշտպանության ծախսերը կազմել էին միջինում ՀՆԱ 2.36%:

Ոլորտային գների դինամիկայի ուսումնասիրման նպատակով դիտարկվել են դեֆլյատորներն ըստ ավելացված արժեքի, համախառն թողարկման և միջանկյալ սպառման: Բացառությամբ 2008-2009թթ.-ի գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ երեք ցուցանիշներն ունեն գրեթե նույն դինամիկան դիտարկվող ժամանակաշրջանում: Մինչ-ճգնաժամյան հատվածում գներն ունեին անկանոն միտում՝ որոշակի տարիների գրանցելով գնաճ, այլ տարիների գնանկում: 2009թ.-ին ճգնաժամի ընթացքում միջանկյալ

սպառման գները մնացին անփոփոխ, մինչդեռ տեղի ունեցավ ավելացված արժեքի դեֆլյատորի զգալի աճ՝ հասնելով 30%-ի: Հետճգնաժամային տարիներին ոլորտում գները կայունացան և երեք ցուցանիշները սկսեցին ցուցաբերել նմանատիպ միտում՝ գրանցելով կայուն ցածր աճ 3-8% միջակայքում: Բացառությամբ ճգնաժամային 2008-2009թթ.-ի, ոլորտում գների մակարդակի դինամիկան հիմնականում համընկնում է ընդհանուր տնտեսությունում գների մակարդակի տատանումների հետ:




Նկար 3.13.4. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի O և Q ոլորտներում,%, տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է հիմնական միջոցների դինամիկային, ապա 2010-2018թթ.-ին դիտարկվում է կայուն ցածր աճի տեմպեր,

մինչդեռ 2019թ.-ին տեղի է ունեցել կապիտալի զգալի աճ՝ ավելի քան 52%-ով (Նկար 3.13.5):




Նկար 3.13.5. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը O և Q ոլորտներում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Հաշվի առնելով ոլորտում կապիտալի և աշխատուժի կայուն տեմպերը՝ նմանատիպ դինամիկա է գրանցվել նաև կապիտալատարության, աշխատանքի արտադրողականության, ինչպես նաև կապիտալ-աշխատուժ

հարաբերակցության ցուցանիշներում 2010-2018թթ.-ին (Նկար 3.13.6): 2019թ.-ին կապիտալի կտրուկ աճի հետևանքով աճ են գրանցել նաև նշված ցուցանիշները:



Նկար 3.13.6. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականությունն O և Q ոլորտներում :

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Ինչ վերաբերում է ոլորտում զբաղվածությանը, ապա 2004-2009թթ.-ին զբաղվածների թիվը կազմել է 80-85 հազար մարդ՝ գրեթե հավասար բաշխմամբ առողջապահության և պետական հատվածների միջև (Նկար 3.13.7): 2010թ.-ին պետական հատվածում տեղի է ունեցել զբաղվածության մակարդակի կտրուկ աճ՝ հասնելով 75,200 մարդու: Հաջորդող 10 տարիներին սույն ցուցանիշի զգալի տատանումներ տեղի չեն ունեցել: 2019թ.-ի դրությամբ ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածության մեջ կազմում է 12.8%՝ 2004թ.-ի 7.3%-ի նկատմամբ: Համեմատության համար ԵՄ28 երկրներում նույն ցուցանիշը կազմում է ընդհանուր զբաղվածության 16-17%-ը:

Մինչև 2012թ.-ը ներառյալ միջին աշխատանքի գինն ամսական կտրվածքով պետական հատվածում գրեթե հավասար էր ընդհանուր միջին աշխատանքի գնին

տնտեսության բոլոր հատվածներով: Սակայն սկսած 2013թ.-ից սույն տնտեսական գործունեության հատվածում սկսվեց միջին աշխատավարձերի կայուն տարեկան զգալի աճ: Արդեն 2019թ.-ին ոլորտում աշխատանքի գինը գերազանցում էր տնտեսության ընդհանուր միջինը գրեթե 100 հազար դրամով՝ կազմելով 301,725 դրամ (Նկար 3.13.7):

Ինչ վերաբերում է առողջապահության ոլորտին, ապա անհրաժեշտ է նշել, որ այդտեղ աշխատանքի գինը զգալիորեն ցածր է տնտեսության ընդհանուր միջին ցուցանիշից: Ավելին, ոլորտում վարձատրության տարեկան աճի տեմպերը համընկնում են ընդհանուր աճի տեմպերի հետ: Արդյունքում, 2018թ.-ին առողջապահության ոլորտում աշխատանքի գինը կազմում էր 148,328 դրամ, որը ցածր էր տնտեսության միջինից շուրջ 46 հազար դրամով: 2019թ.-ին տեղի ունեցավ զգալի աճ, և ցուցանիշը հասավ 177,712 դրամի:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.13.7. Չբաղվածությունն O և Q ոլորտներում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Պետական կառավարման, պաշտպանության և սոցիալական ապահովման ոլորտում ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորում տեղի չի ունեցել դիտարկվող

ժամանակահատվածում: Առողջապահության ոլորտը զգալի ֆինանսավորում է ստանում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից:



Նկար 3.13.8. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ O և Q ոլորտների, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am


Այսպես, վերջին 10 տարիների ընթացքում առևտրային բանկերի կողմից ֆինանսավորման ծավալները զրեթե կրկնապատկվել են՝ 2021թ.-ի օգոստոսի դրությամբ կազմելով շուրջ 14 միլիարդ դրամ, որից 53.3%-ն արտարժույթով: Անհրաժեշտ է ընդգծել, որ 2020թ. սեպտեմբերին

կարճաժամկետ (շուրջ 6 ամսով) կտրուկ աճ գրանցվեց ոլորտին տրամադրվող դրամային վարկերի գծով (շուրջ 1 մլրդ դրամ): Վերջինս հավանաբար պայմանավորված էր պատերազմի և կորոնավիրուսային համավարակի նոր ալիքի

հետևանքով առողջապահության համակարգի վրա առաջացած ճնշմամբ:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորման ծավալներն անհամեմատ ավելի ցածր են: 2019թ.-ին ընդհանուր վարկերի ծավալը կազմում էր շուրջ 1.5 մլրդ դրամ: Ընդ որում հատկանշական է, որ ընդամենը 23%-ն էին կազմում արտարժույթային վարկերը: Անհրաժեշտ է ընդգծել, որ 2020թ.-ի

մարտին սկսեց զգալիորեն աճել ոլորտին տրամադրվող հատկապես արտարժույթային վարկերի ծավալները և 2021թ.-ի օգոստոսի դրությամբ կազմում է 1.1 մլրդ դրամ: Դրամային վարկերի ընդհանուր ծավալը կազմում է 1.6 մլրդ դրամ: Հավանաբար 2020թ.-ին գրանցված ֆինանսավորման նման կտրուկ աճը պայմանավորված էր կորոնավիրուսային համավարակով:



Նկար 3.13.9. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ O և Q ոլորտների, հազար դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Առողջապահության ոլորտում ընդհանուր վարկեր / համախառն թողարկում ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածում տատանվում է 1%-ի շուրջ: Վերջինս վկայում է ֆինանսական համակարգից կախվածության թույլ մակարդակի մասին:

Առողջապահության ոլորտն անկախ Հայաստանի պատմության ընթացքում անցել է էական կառուցվածքային փոփոխությունների փուլեր: Այդ փուլերը, ինչպես կրթության ոլորտում, հիմնականում պայմանավորված էին ֆինանսավորման ծավալների կտրուկ կրճատման պայմաններում ոլորտի ներուժը պահպանմանը, որի արդյունքում անցում

կատարվեց ամբողջությամբ պետական միջոցների հաշվին ֆինանսավորվող համակարգից խառը՝ պետական և մասնավոր ֆինանսավորման վրա հիմնված համակարգին: Այդ խառը ֆինանսավորման կառուցվածքը 2008-2019թթ. համար ներկայացված է Նկար 3.13.10-ում, ըստ որի ֆինանսավորման հիմնական բեռն ընկնում է բնակչության միջոցների վրա (out of pocket financing), որի տեսակարար կշիռն ամբողջ ժամանակահատվածում 75%-ից պակաս չի եղել, իսկ 2019թ.-ին մասնավոր բժշկական ապահովագրության հետ միասին կազմել է ամբողջ ծախսերի 86.9%-ը:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.13.10. Առողջապահության ֆինանսավորման կառուցվածքը 2008-2019թթ.-ին


Աղբյուրը՝ Համաշխարհային առողջապահության կազմակերպության տվյալների շտեմարան www.who.org

Նկար 3.13.11-ը ցույց է տալիս, որ աշխարհում ունեցած առողջապահության ֆինանսավորման աղբյուրներից Հայաստանում բացակայում է աշխարհում ներկայումս գերակշռող պարտադիր բժշկական ապահովագրման համակարգը³²⁰, մասնավոր (կամավոր) ապահովագրման համակարգը, որը բնակչության միջոցների հետ միասին ձևավորում է մասնավոր ֆինանսավորման համակարգը, 2019թ. դրությամբ շատ փոքր տեսակարար կշիռ ուներ՝ 2.1%³²¹: Առողջապահության պետական ֆինանսավորման համակարգը Հայաստանում

բոլոր միջազգային ստանդարտներով շատ փոքր է, ինչն էական բեռ է դնում բնակչության վրա, որը 2019թ.-ին բժշկական ծառայությունների վրա ծախսել է իր վերջնական սպառման 11.7%-ը՝ 2008թ. 6.7%-ի համեմատ, այսինքն բնակչության բժշկական բնույթի ծախսերի տեսակարար կշիռը գրեթե 2 անգամ ավելացել է, ինչը բերել է նաև մի շարք ծառայությունների հասանելիության աստիճանի էական կրճատմանը բնակչության հատկապես աղքատ և նաև միջին եկամուտ ունեցող խավերի համար, որն ամբողջությամբ չի փոխհատուցվել պետական ծախսերի աճով:

³²⁰ Ուղղակի պետական ֆինանսավորումը տարբերվում է պարտադիր բժշկական ապահովագրումից ֆինանսավորման օբյեկտով՝ առաջին դեպքում ֆինանսավորվում են բժշկական հաստատությունները կամ գործունեության ծավալով կամ պետական պատվերի սահմաններում, իսկ ապահովագրման դեպքում՝ ֆինանսավորվում է բժշկական ծառայություններից օգտվող ֆիզիկական անձանց այս կամ այն շրջանակը, որը ինքնուրույն է ընտրում համապատասխան ծառայություն իրականացնելու իրավունք ունեցող բժշկական հաստատությունը:

³²¹ OECD և մի շարք այլ բարձր միջին եկամուտ ունեցող երկրներում կամավոր բժշկական ապահովագրման տեսակարար կշիռը 2019-2020թթ. կախված երկրի առանձնահատկություններից տատանվում էր բավականին լայն ինտերվալում՝ Բրազիլիայի 31.1 % մինչև Նորվեգիայի 0.1%: Միջին արժեքները գտնվում էին 6-7 տոկոսի սահմաններում: Համապատասխանաբար բնակչության միջոցների հաշվին իրականացվող ֆինանսավորումը նույնպես բավականին տատանողական է՝ սկսած Ռուսաստանի 36.6% մինչև Ֆրանսիայի 9.3%:



Նկար 3.13.11. Առողջապահության ֆինանսավորման համեմատական կառուցվածքը 2019թթ

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների շտեմարան www.worldbank.org

Սրանով ուրվագծվում է առողջապահական համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունը՝ միջնաժամկետ հեռանկարում քայլ առ քայլ փոխել ֆինանսավորման համակարգը, նպատակ ունենալով հասնել բարձր միջին եկամուտ ունեցող երկրների ներկայիս միջին ցուցանիշին, այսինքն քայլ առ քայլ կրճատել բնակչության միջոցների տեսակարար կշիռը, համապատասխանաբար ավելացնելով պետական ֆինանսավորման ծավալները, մաս առ մաս ներդնելով պարտադիր բժշկական ապահովագրման մեխանիզմները, սկսելով պետության կողմից ֆինանսավորվող ոլորտներից՝ պետական ծառայություն, պաշտպանություն, անվտանգություն, կրթություն, մշակույթ և այլն, այդ թվում համաֆինանսավորման սկզբունքով և հետագայում ընդլայնելով և՛ օգտվողների, և՛ սպասարկվող ծառայությունների շրջանակը: Հարկավոր է խրախուսել նաև ոչ պետական բժշկական ապահովագրման համակարգի աճը ոչ պետական ֆորմալ աշխատուժի համար՝ մասնավորապես կիրառելով որոշակի հարկային արտոնություններ: Երկարաժամկետ հեռանկարում երկիրը, ընդլայնելով և՛ պարտադիր, և՛ կամավոր ապահովագրության շրջանակներն ու ծածկույթը, պետք է հասնի բազիսային ծառայությունների ընդլայնված

ցանկի ունիվերսալ ծածկույթին³²²: Ներկայումս ունիվերսալ ծածկույթի ներդրումը որևէ խելամիտ բազիսային ծառայությունների ցանկի համար մեծապես կավելացնի հարկային բեռը և բացառապես կազդի երկրի գործող համեմատական առավելությունների վրա՝ մասնավորապես էականորեն կավելացնի աշխատուժի արժեքը:

Նշված փուլային բարեփոխումները պետք է լրացվեն այլ բազմաթիվ բարեփոխումների հետ՝ անվճար և վճարովի ծառայությունների ցանկի վերանայմամբ, անվճար և արտոնյալ պայմաններով ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բնակչության խմբերի ընդլայնմամբ, ծառայությունների ստանդարտների մշակմամբ ու պարբերաբար վերանայմամբ և այլն:


Ինչ վերաբերում է պաշտպանության ոլորտին, ապա դրա հետագա զարգացումը և ֆինանսավորման պայմանները հիմնականում պայմանավորված են տնտեսությունից դուրս գտնվող գործոններով, տարածաշրջանային գեոքաղաքական պայմաններով, դրանց զարգացմամբ ու փոփոխմամբ և որևէ կանխատեսման այստեղ ենթակա չեն: Այնուամենայնիվ, երկրի ներքին վտանգներից պաշտպանելու աստիճանի ավելացումը երկրի նաև տնտեսական քաղաքականության

³²² Ունիվերսալ ծածկույթը նշանակում է բժշկական ծառայությունների հասանելիությունը բոլորի համար անկախ եկամտից, ներառելով երեխաներին և տարեց բնակչությունը:

հիմնական գերակայություններից մեկն է, ինչը նշանակում է, որ տնտեսությունն ի վիճակի պետք է լինի ապահովել պաշտպանության ծախսերի աճը տնտեսական զարգացման տեմպերի պահպանման և ավելացման պայմաններում:

Ուղղակի գնահատել պետական կառավարման ոլորտի արդյունավետությունը, արտադրողականության աճը, հիմնական միջոցների անհրաժեշտ դինամիկան հնարավոր չի, քանի որ պետական կառավարումը հանդիսանում է հասարակական բարիք և պետք է գնահատվի ամբողջ տնտեսության արդյունավետության աճի և հասարակության զարգացման միջոցով: Այնուամենայնիվ,

պետական կառավարման համեմատական որակը կարելի է գնահատել օգտագործելով Համաշխարհային բանկի World Governance Indicators շտեմարանի տվյալները՝ 6 ցուցանիշների գծով, որոնցից երեքը՝ կառավարման արդյունավետությունը, կարգավորման որակը և օրենքի իշխանությունը այն մասով, որով կարգավորվում են տնտեսական վեճերը վերաբերում են ավելի շատ տնտեսությանը և հանդիսանում են տնտեսության կառավարման արդյունավետությունը բնութագրող, իսկ մնացած երեքն ավելի շատ վերաբերում են հասարակական կյանքի կազմակերպման արդյունավետությանը:



Նկար 3.13.12. Պետական կառավարման ցուցանիշները 2008-2020թթ.-ին

Հղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների շտեմարան www.worldbank.org

միջին ցուցանիշը բնութագրում է բոլոր 6 ցուցանիշների միջին արժեքը և հնարավորություն է տալիս ստանալ պետական կառավարման ընդհանուր գնահատականը³²³: Ինչպես ցույց է տալիս Նկար 3.13.12-ը, 2008-2020 թթ. ընթացքում տեղի է ունեցել կառավարման որակի ընդհանուր բարձրացում, որի մասին վկայում է միջին ցուցանիշի

դինամիկան, որը 2008-2017 թթ-ի ընթացքում տատանվել է 42-46 շրջակայքում, սակայն 2018-2020 թթ.-ին աճել է մինչև 49.1՝ մոտենալով համաշխարհային միջին մակարդակներին³²⁴: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ տնտեսական կառավարումը բնութագրող երկու հիմնական ցուցանիշները՝ կառավարման արդյունավետությունը և կարգավորումների

³²³ Որպես գնահատականներ ընտրված են երկրի դիրքի գնահատականները 1-ից 100 սանդղակով, որտեղ մեկը նվազագույն գնահատականն է, իսկ 100-ը առավելագույն հնարավոր գնահատականը:

³²⁴ Ելնելով հաշվարկի առանձնահատկություններից համաշխարհային միջինը բոլոր 6 ցուցանիշների համար կազմում է 50

որակը, առանձնապես չեն փոխվել՝ տատանվելով առաջինը 50-ի, իսկ երկրորդը՝ 60 սահմաններում, իսկ տնտեսական կառավարման արդյունավետության ոչ մեծ աճը ապահովվել է վերջին տարիներին գրանցված օրենքի իշխանության ցուցանիշի աճով:

Այսպիսով, պետական կառավարման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները կապված են այդ երեք, ինչպես նաև կոռուպցիայի վերահսկման ցուցանիշի արժեքների առաջանցիկ ավելացման հետ: Այդ ուղղությունները բավականին փոխկապված բնույթ ունեն և ազդում են տարբեր ցուցանիշների վրա: Մասնավորապես կառավարման արդյունավետության բարձրացումն էական կապ ունի կառավարման թվայնացման և փոխկապված տվյալների շտեմարանների ընդլայնման հետ, որը բարձրացնում է տվյալների հուսալիությունը և հասանելիությունը, ավելացնում է որոշումների հիմնավորվածության աստիճանը և դրանց ընդունման արագությունը: Մյուս կողմից թվայնացումը կրճատում է կարգավորումների կատարման հետ կապված տրանսակցիոն ծախսերը և հետևաբար կարգավորման բեռը: Դատական համակարգում թվայնացումը նպաստում է տնտեսական և կոռուպցիան գործերի քննարկման ժամկետի և արժեքի

կրճատմանը, որը տնտեսական զարգացման տեսակետից այդ համակարգի հիմնական գերակայությունն է: Կարգավորման որակի բարձրացումը թվայնացման հետ միասին պետք է մի կողմից ուղղված լինի կարգավորիչ բեռի կրճատմանը, որը Հայաստանում տարբեր գնահատականներով կազմում է ՀՆԱ 4-4.5%-ը, իսկ մյուս կողմից հիմնավորված որոշումների ընդունմանը (evidence based decision making), որոնք ներկայումս ըստ էության չեն կիրառվում: Ինչ վերաբերում է պետական կառավարման ֆոնդազինվածությանը, ապա այն պետք է կապված լինի առաջին հերթին թվայնացման հետ կապված գործընթացների հետ՝ ապահովելով տվյալների շտեմարանները ձևավորելու և դրանցից օգտվելու հնարավորությունները պետական համակարգի ծառայողների համար:

Վերջին տարիներին նկատվում է պետական կառավարման ոլորտի աշխատավարձերի առաջանցիկ աճ: Այդ աճը, լինելով ընդհանուր առմամբ դրական երևույթ, մի կողմից պետք է կապված լինի վերը նշված ցուցանիշների դինամիկայի հետ, իսկ մյուս կողմից թույլ տա ներդնելու բժշկական ապահովագրման սխեմաները, որի մասին արդեն ասվել էր սույն բաժնում:

3.14. Մշակույթ, զվարճություններ և հանգիստ


Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը ներառում է հաստատությունների լայն շրջանակ, որոնք ծառայություններ են մատուցում տարբեր մշակութային, ժամանցային և հանգստի կարիքների բավարարման համար: Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտն ուղղակի տնտեսական օգուտներ է տալիս պետություններին և համայնքներին: Այն ստեղծում է աշխատատեղեր, ներգրավում ներդրումներ, ստեղծում հարկային եկամուտներ և խթանում համայնքային զարգացումը զբոսաշրջության միջոցով: Բացի այդ, քանի որ մշակութային, զվարճանքի և հանգստի

միջոցառումները բարձրացնում են կյանքի որակը, արվեստն ու մշակույթը կարևոր նշանակություն ունեն համաչափ տնտեսական զարգացման համար՝ դեպի համայնք ներդրումների և երիտասարդ մասնագետների ներգրավման միջոցով: EU28 երկրներում մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը զբաղեցնում է ՀՆԱ շուրջ 1.4%-ը (Նկար 3.14.1):

Մինչև 2013թ.-ը Հայաստանում մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի ծավալները բավականին փոքր էին և բնութագրվում էին աճի ցածր տեմպերով՝

2013թ.-ի դրությամբ կազմելով ՀՆԱ 1.3%: Սակայն սկսած 2014թ.-ից կարելի է նկատել ոլորտի աշխուժացում և համախառն թողարկման ծավալների աճի տեմպի զգալի բարձրացում՝ միջինում կազմելով տարեկան 30.6%³²⁵: Արդյունքում 2019թ.-ին այն կազմում էր 476 մլրդ դրամ՝ 2014թ.-ի 124 մլրդ դրամի

համեմատ: 2020թ.-ին Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամի արդյունքում տեղի ունեցավ ոլորտի թողարկման ծավալների կտրուկ անկում, որը շարունակվեց նաև 2021թ.-ին, ինչի արդյունքում ոլորտի թողարկման ծավալները կազմեցին շուրջ 276 մլրդ դրամ:



Նկար 3.14.1. R ոլորտի ծավալները (մլն դրամով), մասնաբաժինը ՀՆԱ-ում և ՀՆԱ աճի մեջ, %:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Ոլորտի միջանկյալ սպառման ծավալների դինամիկան դիտարկելիս կարելի է նկատել, որ այն գրեթե համընկնում է համախառն թողարկման ծավալների դինամիկայի հետ՝ սկսելով զգալիորեն աճել 2014թ.-ից (Նկար 3.14.2): Այնուամենայնիվ CAGR-ի հաշվարկը ցույց է տալիս, որ 2014-2019թթ.-ին միջանկյալ

սպառման միջին տարեկան աճի տեմպը կազմել է 25.6%՝ 5%-ով զիջելով համախառն թողարկման աճի տեմպին: Արդյունքում ոլորտում նվազել է թողարկման նյութատարությունը 2014թ. 29%-ից հասնելով 24%-ի 2019թ.-ին: Վերջինս վկայում է ոլորտում արդյունավետության որոշակի բարձրացման մասին:

³²⁵ Այդ աճը ճնշող մեծամասությամբ ապահովվել էր շահումով խաղերի ոլորտի հաշվին, որը բերեց ոլորտի ՀՆԱ-ում տեսակարար կշռի աճին մինչև 5.6% 2018 և 2019թթ.:

2020-2021թթ. այդ ոլորտը սկսեց կրճատվել մինչև համապատասխանաբար 4.9% և 3.1% շահումով խաղերի կտրուկ կրճատման պատճառով:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.14.2. Միջանկյալ սպառումն R ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Ինչ վերաբերում է մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի ավելացված արժեքի ծավալներին, ապա նույնպես կարելի է նկատել, որ ոլորտի դինամիկան համընկնում է համախառն թողարկման և միջանկյալ սպառման դինամիկայի հետ: Այսպես, կրկին կարելի է նկատել ոլորտի լճացում մինչև 2013թ.-ը և աճի

կայուն տեմպեր սկսած 2014թ.-ից: CAGR–ի հաշվարկները ցույց են տալիս, որ ավելացված արժեքի աճի տարեկան միջին տեմպը 2014–2019թթ.-ին գերազանցել է համախառն թողարկման աճին՝ կազմելով 32.5%: 2019թ.-ի դրությամբ ոլորտի ավելացված արժեքը կազմում էր 302 մլրդ դրամ՝ 2014թ.-ի 89 մլրդ դրամի նկատմամբ:



Նկար 3.14.3. Ավելացված արժեքն R ոլորտում, մլն.դրամ:


Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտն ամբողջ աշխարհում ամենաշատ տուժած ոլորտներից է 2020թ.-ի Covid-19 համավարակի

հետևանքով: Ճանապարհորդական սահմանափակումների, ինչպես նաև խիստ կարանտինային միջոցառումների հետևանքով

որոշակի ժամանակահատվածի ընթացքում ոլորտում բիզնես գործունեությունը գրեթե ամբողջությամբ պարալիզացվեց: Մասնավորապես, Հայաստանում, սկսած 2020թ.-ի մարտ ամսից, որոշակի ժամանակով արգելվել էր գվարճությունների և հանգստի ոլորտի ձեռնարկությունների գործունեությունը: Այս ամենի հետևանքով ոլորտում տեղի ունեցավ զգալի անկում: Իրական ավելացված արժեքի ցուցանիշի անկումը կազմեց ավելի քան 18.4%, այն դեպքում, երբ ընդհանուր տնտեսական անկումը երկրում եղել էր 7.4%: Ոլորտի ավելացված արժեքի անկումը շարունակվեց նաև 2021թ.-ին:

Այժմ վերլուծենք դիտարկվող ժամանակահատվածում մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում հիմնական միջոցների դինամիկան: 2010-2015թթ.-ին հիմնական միջոցների ծավալը հաշվեկշռային արժեքով գրեթե չի փոխվել՝ տատանվելով 13.5-ից 15 մլրդ դրամ միջակայքում (Նկար 3.14.4): 2015թ.-ին, երբ ոլորտը արդեն երկրորդ տարին շարունակ գրանցում էր ավելացված արժեքի կայուն և զգալի աճ, կապիտալատարության ցուցանիշը կազմեց 13% (Նկար 3.14.5):




Նկար 3.14.4. Կապիտալ, հաշվեկշռային և մնացորդային արժեքը R ոլորտում, մլն դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Սկսած 2016թ.-ից ոլորտում գրանցվում է հիմնական միջոցների ծավալների կայուն նշանակալի աճ: 2019թ.-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքով ծավալը կազմում էր 219 մլրդ ՀՀ դրամ, որը

գերազանցում է 2016թ.-ի ցուցանիշը գրեթե 11 անգամ: Նման փոփոխությունների արդյունքում զգալիորեն աճեց ոլորտի ավելացված արժեքի ստեղծման կապիտալատարության ցուցանիշը՝ 2019թ.-ին կազմելով 60%:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.14.5. Կապիտալատարություն, կապիտալ-աշխատուժ հարաբերակցություն, աշխատանքի արտադրողականությունն R ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am


Հատկանշական է, որ 2012-2015թթ.-ին զգալիորեն կրճատվել է ոլորտում զբաղվածության մակարդակը՝ 2015թ.-ին կազմելով 13,700, որը ցածր է 2012թ.-ին գրանցված մակարդակից 41.7%-ով (Նկար 3.14.6): 2016թ.-ին մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում զբաղվածության մակարդակը 23.3%-ով աճեց նախորդ տարվա նկատմամբ: Հետագա տարիներին զգալի տատանումներ չեն գրանցվել:

Հաշվի առնելով 2014-2019թթ.-ին ոլորտի ավելացված արժեքի տարեկան միջինը 32.5% աճի տեմպերը և միևնույն ժամանակ զբաղվածության մակարդակի նախ կրճատումը, այնուհետև կայուն մակարդակը՝ կարելի է ասել, որ տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության բարձրացում: Դրա մասին է վկայում նաև աշխատանքի

արտադրողականության ցուցանիշը, որը 2015թ.-ից սկսած կտրուկ աճ է գրանցել:

Ինչ վերաբերում է մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում զբաղվածների վարձատրությանը և մեկ աշխատակցի հաշվով կազմակերպությունների կողմից կատարվող ընդհանուր ծախսերին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում աշխատանքի գինը ոլորտում զգալիորեն ավելի ցածր է եղել քան ընդհանուր միջինը: Մասնավորապես, 2010-2017թթ.-ին ճեղքը տատանվել է 37-43% միջակայքում: 2018-2019թթ.-ին տեղի է ունեցել ոլորտում աշխատանքի գնի կտրուկ աճ, ինչի արդյունքում վարձատրությունը ոլորտում զիջում է ընդհանուր միջին ցուցանիշին 28% և 20% համապատասխանաբար (Նկար 3.14.6):


Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում



Նկար 3.14.6. Զբաղվածություն և աշխատանքի գինն R ոլորտում:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտից գրեթե արտահանում չի կատարվել դեպի ԵԱՏՄ երկրներ դիտարկվող ժամանակահատվածում (Նկար 3.14.7):




Նկար 3.14.7. Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/

Դիտարկելով արտահանման ծավալները դեպի այլ երկրներ՝ կարելի է նկատել, որ հիմնական արտահանումը կատարվում է ստեղծագործական, արվեստի և զվարճությունների ոլորտում ծառայությունների շրջանակներում (Նկար 3.14.8): 2016թ.-ին մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի ծառայությունների արտահանման ծավալները 88%-ով աճեցին 2015թ.-ի նկատմամբ՝ կազմելով 1.2 մլն ԱՄՆ դոլար: Հետագա տարիներին գրադարանների,

արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների ոլորտում ծառայությունների արտահանման ծավալները մնացին կայուն՝ տատանվելով 115-182 հազար ԱՄՆ դոլարի շրջանակներում, մինչդեռ ստեղծագործական, արվեստի և զվարճությունների ոլորտում ծառայությունների արտահանման ծավալները սկսեցին կայուն տեմպով նվազել՝ հասնելով 312 հազար ԱՄՆ դոլարի 2019թ.-ին: 2020թ.-ին վերջինս գրանցեց 17% աճ:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.14.8. Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի արտահանումը Հայաստանից դեպի այլ երկրներ, ԱՄՆ դոլար

Աղբյուր՝ կազմվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա – www.eurasiancommission.org/

Ինչ վերաբերում է ոլորտում գների դինամիկային, ապա բացառությամբ 2009, 2015-2016 ճգնաժամային և հետճգնաժամային տարիների, ոլորտում գների դինամիկան, հաշվարկված դեֆլյատորով ըստ ավելացված արժեքի, համախառն թողարկման և միջանկյալ

սպառման, համընկնում է ՀՆԱ դեֆլյատորի դինամիկայի հետ (Նկար 3.14.9): 2009, 2015-2016 թվականներին ոլորտում տեղի է ունեցել ավելի բարձր գնաճ քան տնտեսությունում ընդհանուր առմամբ:




Նկար 3.14.9. Գների դինամիկան ըստ դեֆլյատորի R ոլորտում, % տարեկան.

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի տվյալների բազայի հիման վրա – www.armstat.am

Մշակույթի, զվարճության և հանգստի ոլորտը վարկավորվում է ինչպես առևտրային բանկերի (Նկար 3.14.10), այնպես էլ վարկային կազմակերպությունների (Նկար 3.14.11) կողմից:

Ընդ որում առևտրային բանկերի կողմից ֆինանսավորումը զբաղեցնում է ընդհանուր ֆինանսավորման գերակշիռ մասը՝ 2021թ.-ի օգոստոսի դրությամբ կազմելով 98.7%-ը:

Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում




Նկար 3.14.10. Առևտրային բանկերի կողմից տրված վարկեր՝ ըստ R ոլորտի, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները կայուն տեմպով աճել են 2011-2019թթ.-ին: 2020թ.-ին կարելի է նկատել հատկապես արտարժույթային վարկերի կտրուկ աճ, ինչը կապված էր ճգնաժամի հետևանքների հաղթահարման հետ: Հատկանշական է, որ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերը կտրուկ նվազել են 2019թ.-ից սկսած: Վերջինիս նվազման միտումը շարունակվում է ցայսօր: Դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում ոլորտում վարկերի

ծավալը համախառն թողարկման նկատմամբ տատանվում է 4-9% միջակայքում, իսկ ավելացված արժեքի նկատմամբ՝ 5-14% միջակայքում:

Անհրաժեշտ է նշել, որ 2015-2021թթ.-ին առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի 71-93%-ը կազմել են արտարժույթային վարկերը՝ 2021թ.-ին կազմելով 6.3 մլրդ դրամ: Մյուս կողմից վարկային կազմակերպությունների կողմից սույն ոլորտին տրամադրվում են առավելապես դրամային վարկեր հատկապես սկսած 2018թ.-ից:



Նկար 3.14.11. Վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկեր՝ ըստ R ոլորտի, հազար դրամ:

Աղբյուր՝ կազմված է Հայաստանի Կենտրոնական Բանկի տվյալների բազայի հիման վրա – www.cba.am

Ինչ վերաբերում է ոլորտում տարվող քաղաքականությանը, ապա ելնելով ոլորտի բնույթից այն տարբերվում է արվեստի,

մշակույթի և զվարճությունների համար: Վերջինս լինելով ամբողջությամբ շուկայական՝ 2013-2019թթ.-ին հանդես էր գալիս որպես

ամենաարագ զարգացող ենթաոլորտ, կտրուկ անկում ապրեց 2020-2021թթ.-ին և ամենայն հավանականությամբ կդադարի զարգացման նշանակալի շարժիչ ուժ լինելուց: Մեր կարծիքով ներկայումս կիրառվող քաղաքականությունն այս ենթաոլորտում բավարար է և նշանակալի փոփոխության կարիք չի զգում: Պետք է նաև նշել, որ ենթաոլորտում զգալի դեր ունի ծրագրային բաղկացուցիչը, որը կարևոր է տնտեսության համար և այդ պատճառով դիսկրիմինացիոն միջոցների կարիք չկա:

Ինչ վերաբերում է ոլորտի բազմաթիվ այլ բաղկացուցիչներին՝ դրանք մեծամասամբ կարիք ունեն պետական աջակցության, չնայած կան նաև շուկայական հատվածներ: Մշակույթի այն ոլորտներում, որոնք գերակայող չափով կախված են պետական օժանդակությունից, մասնավորապես մշակույթի տները, հասարակական գրադարանները, թանգարանների մեծ մասը, պետք է շարունակեն այդ աջակցությունը ստանալ³²⁶ և այդ աջակցության չափի տեսակարար կշիռը չպետք է պակասի:

Արվեստի ոլորտում ամենաձախսատարը ազգային կինեմատոգրաֆն է, որի պահպանման և զարգացման համար անհրաժեշտ է էականորեն ավելացնել պետական ֆինանսավորման ծավալները՝ փոխելով միջոցների բաշխման մեխանիզմները և ապահովելով դրանց հասանելիությունը բնակչության համար: Պետության կողմից թատերական արվեստի ֆինանսավորումը նույնպես պետք է պահպանել և համամասնորեն ավելացնել բյուջեյի ծախսերի աճի տեմպի չափով: Մասսայական և մասնագիտական սպորտի զարգացման համար նույնպես անհրաժեշտ է պետական ֆինանսավորման համամասնական ավելացումը բյուջեյի ծախսերի աճին զուգահեռ: Քանի որ մշակույթը, արվեստը և սպորտը բազմաոլորտային բնույթ ունեն, անհրաժեշտ է նաև կիրառել պետական-մասնավոր համագործակցության մոդելը (public-private partnership) այնտեղ, որտեղ դա նպատակահարմար է:

³²⁶ Մշակույթի տների և հասարակական գրադարանների ցանցերը պետք է օպտիմալացվեն և ապահովվեն ժամանակակից անվճար ինտերնետով, իսկ գրադարանները

նաև թվայնացված գրականությամբ և դրա պարբերական լրացմամբ:

Գրականության ցանկ

1. "Hectic efforts on by Argentina to avoid second default". Argentina News.Net. Archived from the original on 8 August 2014. Retrieved 15 April 2021
2. "Agricultural Policies in Argentina", agriculture policy brief by OECD, 2019.
3. "Agricultural Policy Monitoring and Evaluation 2020: Argentina", OECD Library.
4. "Analysis of Agricultural Policies in Argentina 2007– 2016", IDB 2018.
5. "Argentina Economic Outlook", BBVA Research, 1Q2021, January 2021.
6. "Argentina's Economic Crisis and Default", Congressional research service, June 2020.
7. "Argentina", WTO, WT/TPR/S/277.
8. "Chavez boosts food price controls" by Grant W., BBC, March 2009.
9. "Chavez orders army to seize Venezuela rice mills" Reuters, March 2009. (29.04.2021)
10. "Don't Blame It on the Oil" By Javier Corrales, Foreign Policy, May 2015. (28.04.2021)
11. "Fighting Corruption in Public Services: Chronicling Georgia's Reforms" The World Bank, 2012.
12. "Georgia and the Global Economic Crisis", by Maia Otarashvili, Foreign Policy Research Institute, May 2013.
13. "Global Economic Prospects", a World Bank Group Flagship Report, January 2021.
14. "Government and institution measures in response to COVID-19: Venezuela" KPMG, June 2020.
15. "In Venezuela, Land 'Rescue' Hopes Unmet" by Juan Forero, Washington Post Foreign Service, June 2009. (29.04.2021)
16. "Maduro says Venezuela's 2015 budget to put oil at \$60 dollars", Reuters, October 2014.
17. "Meat, Sugar Scarce in Venezuela Stores" by Pearson N.O., The Washington Post, February 2007 (28.04.2021)
18. "Policy Responses to COVID-19", IMF.
19. "Results-based Country Strategic Opportunities Programme 2019-2024: Republic of Georgia", IFAD report, December 2018.
20. "The Argentine Crisis 2001/2002", Economic Report, Rabobank, August 2013.
21. "The Food Sovereignty Movement in Venezuela, Part 1" By Anna Isaacs, Basil Weiner, Grace Bell, Courtney Frantz and Katie Bowen, Venezuela Analysis, November 2009. (29.04.2021)
22. "The international banking crisis and its impact on Argentina", Central Bank of Argentina, BIS Papers No 54.
23. "Under Maduro, nearly all Venezuelans live in poverty" by N. Kirschner, US Mission, August 2020.
24. "Venezuela Implements New Taxes on Businesses, Cigarettes, Alcohol" by Chris Carlson, Venezuela Analysis, October 2007. (29.04.2021)
25. "Venezuela troops crack down on smuggling" ChinaDaily, January 2008. (29.04.2021)
26. "Venezuela's Chavez increases sales tax to 12 pct", Reuters, March 2009. (29.04.2021)
27. 4 USTR, 2012 Foreign Trade Barriers"

28. Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. 2001. “The Colonial Origins of Comparative Development: An Empirical Investigation.” *American Economic Review* 91 (5): 1369–1401. <https://doi.org/10.1257/aer.91.5.1369>;
29. Acemoglu, Daron, Simon Johnson, and James Robinson. 2004. “Institutions as the Fundamental Cause of LongRun Growth.” 10481. NBER Working Paper.
30. Aghion, P. and Marinescu, I., 2007. Cyclical Budgetary Policy and Economic Growth: What Do We Learn from OECD Panel Data? *NBER Macroeconomics Annual*, 22, pp. 251-278;
31. Aghion, P. Hemous, D. and Kharroubi, E., 2009. Credit Constraints, Cyclical Fiscal Policy and Industry Growth. National Bureau of Economic Research, Working Paper Available at: [Accessed on August 2019].
32. Aghion, Philippe, and Howitt. 1992. “A Model of Growth through Creative Destruction.” *Econometrica* 60 (2): 323–51. <https://doi.org/10.2307/2951599>.
33. Agnès Bénassy-Quéré & Benoît Coeuré & Pierre Jacquet & Jean Pisani-Ferry, 2018. "Economic Policy: Theory and Practice. Second edition," Post-Print halshs-01883894, HAL.
34. Alan Greenspan, Adrian Wooldridge. *Capitalism in America*. Penguin; 1st edition (October 16, 2018). P. 477
35. Alesina, Alberto, and Guido Tabellini, 2005, “Why is Fiscal Policy often Procyclical?” (Unpublished; Milan: IGIER-Bocconi University)
36. Alesina, Alberto, Guido Tabellini and Filipe R. Campante (2008). “Why is Fiscal Policy Often Procyclical?” *Journal of the European Economic Association*, Vol. 6, No. 5, pp. 1006-1036.
37. Alexander Gershenkron “Economic Backwardness in Historical Perspective”, Harvard University Press, 1962
38. Alice H. Amsden “Asia’s Next Giant. South Korea and Late Industrialization”, Oxford University Press, 1989
39. Allen, Mark, and others “A Balance Sheet Approach to Financial Crisis,” IMF Working Paper, 2002. — 02/210 (Washington: International Monetary Fund) P. -34.
40. Allen, R.C. (1983), “Collective Invention”, *Journal of Economic Behavior and Organization* 4, 1-24.
41. Almasi, P, J Dagher, and C Prato (2018), “[Regulatory Cycles: A Political Economy Model](#)”, Working Paper.
42. Altunbasa, Y., L. Gambacorta, and D. Marques-Ibanez (2014). Does monetary policy affect bank risk? *International Journal of Central Banking March*, 95–135;
43. Annicchiarico B., Rossi L. Monetary Policy in a New Keynesian Model with Endogenous Growth. Università degli studi di Pavia, # 167 (02-12), 2012, p. 11
44. Arrow, K.J. (1969), “Classificatory Notes on the Production and Transmission of Technological Knowledge”, *American Economic Review* 59 (May), 29-35.
45. Badger A. *The New Deal: The Depression Years, 1933-1940*. N. Y., Hill-Wang, 1989.
46. Bailliu, J., Lafrance, R. and Perrault, J.F. Does Exchange Rate Policy Matter for Growth? *International Finance*, 6(3), 2003. p.381-414.

47. Banco Central de la República Argentina, Argentina: Macroeconomic, Monetary, and Financial Outlook, Power Point Presentation, Buenos Aires, August 2012.
48. Banco Central de la República, Inflation Report Second Quarter, 2012.
49. Barro, Robert J. 1990. "Government Spending in a Simple Model of Endogeneous Growth." *Journal of Political Economy* 98 (5): S103–25. <https://doi.org/10.1086/261726>.
50. Barro, Robert J., and Xavier Sala-I-Martin. 1992. "Public Finance in Models of Economic Growth." *The Review of Economic Studies* 59 (4): 645. <https://doi.org/10.2307/2297991>.
51. Barry M. Mitnick. *The Political Economy of Regulation: Creating, Designing and Removing Regulatory Forms*, New York: Columbia University Press, 1980.
52. Bates, W. (2001), *How Much Government? The effects of high government spending on economic*
53. Baxter M., King R. G. *Fiscal Policy in General Equilibrium*. *The American Economic Review*, 1993, vol. 83, no. 3, pp. 315–334.
54. Beckerman, P. 1992. "Public Sector 'Debt-Distress' in Argentina, 1988-89." *Policy Research Working Paper 902*, World Bank, Washington, DC.
55. Ben S. Bernanke, 2002. "Deflation: making sure \"it\" doesn't happen here," *Speech 530*, Board of Governors of the Federal Reserve System (U.S.).
56. Bencivenga, Valerie R., and Bruce D. Smith, 1991, "Financial Intermediation and Endogenous Growth," *Review of Economic Studies*, Vol.58, pp.195-209.;
57. Benmelech, Efraim, and Tobias J. Moskowitz. "The political economy of financial regulation: evidence from US state usury laws in the 19th century." *The journal of finance* 65, no. 3 (2010): 1029-1073;
58. Bernstein, M. H. (1955). *Regulating business by independent commissions*. Princeton: Princeton University Press.
59. Bili, M. R., 2011. "Output Gaps and Monetary Policy at Low Interest Rates" *Federal Reserve Bank of Kansas City - Economic Review, First Quarter 2011*, 63-87
60. Blanchard O. J., Summers L. H. *Rethinking Stabilization Policy: Evolution or Revolution?* National Bureau of Economic Research, NBER Working Paper, 2017, no. w24179. DOI: 10.3386/w24179.
61. Blanchard, O. and R. Perotti (2002): "An Empirical Characterization of the Dynamic Effects of Changes in Government Spending and Taxes on Output", *Quarterly Journal of Economics* 117(4), pp. 1329-1368.
62. Blinder, A. S. (1987): "Credit Rationing and Effective Supply Failures", *The Economic Journal* 97(386), pp. 327-352.
63. Blinder, Alan S. "Financial Entropy and the Optimality of Over-regulation." *The New International Financial System: Analyzing the Cumulative Impact of Regulatory Reform* 48 (2015): 3.
64. Blinder, Alan, and Robert Solow (1974), "Analytical Foundations of Fiscal Policy," in *The Economics of Public Finance*, (Washington, D.C: The Brookings Institution).
65. Bordo, Michael D., 2006. "Review of A History of the Federal Reserve. Volume I (2003) by Allan H. Meltzer," *Journal of Monetary Economics*, Elsevier, vol. 53(3), pages 633-657, April.

66. Bouis, R., L. Rawdanowicz, J.-P. Renne, S. Watanabe, and A. K. Christensen (2013). The effectiveness of monetary policy since the onset of the financial crisis. OECD Economics Department Working Paper No. 1081.
67. Bouthevillain, Carine, Philippine Cour-Thimann, Gerrit van den Dool, Pablo Hernández de Cos, Geert Langenus, Matthia Mohr, Sandro Momigliano, and Mika Tujula, 2001, «Cyclically-Adjusted Budget Balances: An Alternative Approach», ECB Working Paper No. 77 (Frankfurt: European Central Bank).
68. Bruno M., Easterly W. “Inflation Crises and Long-Run Growth”, Journal of Monetary Economics, Vol. 41, no.1 (February 1998): pp. 3-26.
69. Buera F., Nicolini J. (2019) “The Monetary and Fiscal History of Argentina, 1960–2017”, Staff Report 580. DOI: <https://doi.org/10.21034/sr.580>
70. Bullard, James, and John Keating, 1995, “The Long-Run Relationship Between Inflation and Output in Postwar Economies,” Journal of Monetary Economics, Vol.36, pp.477-96.
71. Caballero, R. and Krishnamurthy, A. (2004). “Fiscal Policy and Financial Depth”. NBER Working Paper 10532, May;
72. Calder´on, C., Duncan, R., Schmidt-Hebbel, K., 2004a. The role of credibility in the cyclical properties of macroeconomic policies in emerging economies. Review of World Economics. 140(4), 613-633;
73. Calder´on, C., Duncan, R., Schmidt-Hebbel, K., 2004b. Institutions and Cyclical Properties of Macroeconomic Policies. Central Bank of Chile, working paper series 285.
74. Calder´on, César and Klaus Schmidt-Hebbel (2008). ”Business Cycles and Fiscal Policies: The Role of Institutions and Financial Markets”. Central Bank of Chile Working Paper No. 481.
75. Calomiris, Charles W., and Stephen H. Haber. ”Fragile by design.” The political origin of banking crises and scarce credit. The Princeton Economic History of the Western World, Joel Mokyr, Series Editor (2014).
76. Caselli, Francesco. 2005. “Chapter 9 Accounting for Cross-Country Income Differences.” Handbook of Economic Growth. [https://doi.org/10.1016/S1574-0684\(05\)01009-9](https://doi.org/10.1016/S1574-0684(05)01009-9).
77. Cecchetti S., Ehrmann M. Does Inflation Targeting Increase Output Volatility? An International Comparison of Policymakers’ Preferences and Outcomes. Central Bank of Chile. 2002. p. 266.
78. Chenery, Hollis B. 1960. “Patterns of Industrial Growth.” The American Economic Review 50 (4): 624–54. <https://doi.org/10.1257/jep.6.3.79>.
79. Christiano, L. , Aiyagari, S. R. and M. Eichenbaum (1992): ”The output, employment, and interest rate effects of government consumption”, Journal of Monetary Economics 30(1), pp. 73-86;
80. Coats, W. (2000) Inflation Targeting in Transition Economies: The Case of the Czech Republic, ed. by. CNB and IMF.
81. Collins, M.S. On Becoming More Flexible: Exchange rate Regime in Latin America and the Caribbean, Journal of Development Economics, 51, 1996, p.117-138.
82. Coode T. H., Bauman J. F. People, Poverty, and Politics: Pennsylvanians During the Great Depression. East Brunswick, N. J., Associated University Presses, 1981.

83. Corden M., Macroeconomic Policy and Growth: Some Lessons of Experience, Proceedings World Bank fifth Annual Conference Qfl. Development Economics, 1990, pp. 59-84.
84. Corsetti, Giancarlo, Luca Dedola, and Sylvain Leduc. "Optimal monetary policy in open economies." Handbook of Monetary Economics. Vol. 3. Elsevier, 2010. 861-933.
85. Dagher, J (2018), "Regulatory Cycles: Revisiting the Political Economy of Financial Crises", IMF Working Paper, WP 18/8.; Goldstein, M (2009), "Reforming financial regulation, supervision, and oversight: What to do and who should do it", VoxEU.org, 24 February.
86. Darby, J. and Melitz, J. (2008) Social expenditure and automatic stabilisers in the OECD. Economic Policy, 23 (56). pp. 715-756. ISSN 0266-903X
87. De Castro Fernandez, F.; Hernandez De Cos, P. (2006), "The economic effects of exogenous fiscal shocks in Spain: a SVAR approach", ECB Working Paper #647.
88. De Grauwe, P. and Schnabl, G. Exchange Rates Regimes and Macroeconomic Stability in Central and Eastern Europe. CESifo Working Paper, 1182, 2004. p.1-34.
89. De Gregorio J., "Inflation, taxation, and long-run growth". Journal of Monetary Economics 31, 1993, pp. 271-298.
90. Diewert and Fox (1999; 255-257) for the falloff in OECD country TFP growth after 1973
91. Dodd-Frank Wall Street Reform and Consumer Protection Act, Pub. L. No. 111-203, § 929-Z, 124 Stat. 1376, 1871 (2010).
92. Dovladbekova, I. (2012) "Austerity Policy in Latvia and Its Consequences". International Policy Analysis.
93. Easterly, William, and Ross E. Levine. 2001. "It's Not Factor Accumulation: Stylized Facts and Growth Models." The World Bank Economic Review 15 (2): 177-219. <https://doi.org/10.2139/ssrn.269108>;
94. Economic Survey of Latin America and the Caribbean: Bolivarian Republic of Venezuela. Economic Commission for Latin America and the Caribbean (ECLAC), 2019.
95. Engen, M.E. and Skinner, J., 1996. Taxation and economic growth. National Tax Journal, 49(4), pp.617-642.
96. Engerman, S, and Kenneth L. Sokoloff. 2000. "Institutions, Factor Endowments, and Paths of Development in the New World." Journal of Economic Perspectives 14 (3): 217-32. <http://scholar.google.com/scholar?hl=en&btnG=Search&q=intitle:Institutions+,+Factor+Endowments+,+an+d+Paths+of+Development+in+the+New+World#1>.
97. Fat'as, A. and L. Mihov (2001): "Fiscal Policy and Business Cycles: An Empirical Investigation", Moneda y Credito 212, pp. 167-210.
98. Fatas, A.; Mihov, I. (2001), "The effects of fiscal policy on consumption and employment: theory and evidence", CEPR Discussion Paper # 2760.
99. Fischer S., "The role of macroeconomic factors in growth". Journal of Monetary Economics 32, 1993, pp. 485-512.
100. Fischer, Stanley. "Long-Term Contracts, Rational Expectations, and the Optimal Money Supply Rule." J.P.E. 85 (February 1977): 191-205.
101. Fishback P. "US monetary and fiscal policy in the 1930s", Oxford Review of Economic Policy, Volume 26, Number 3, 2010, Pp. 386-387

102. Frankel, J.A., 2011. Monetary policy in emerging markets, in: Freidman B., Woodford, M. (Eds.), Handbook of Monetary Economics, Vol. 3B. North Holland, Amsterdam, pp. 1439-1520.;
103. Frankel, Jeffrey. "Monetary policy in emerging markets." Handbook of Monetary Economics. Vol. 3. Elsevier, 2010. 1439-1520.
104. Friedman M. "The Role of Monetary Policy" // The American Economic Review, Vol. 58, No. 1, 1968, pp.12.
105. Friedrich, P., Reiljan, J. (2015) "Estonian Economic Policy during Global Financial Crises", CESifo Forum 4/2015.
106. Funke, M. (2002) "Determining the Taxation and Investment Impacts of Estonia's 2000 Income Tax Reform". Finnish Economic Papers – Volume 15 – Number 2.
107. Galì, Jordi (1994), "Government size and macroeconomic stability," European Economic Review 38, 117–132.
108. Garofalo, P. Exchange Rate Regimes and Economic Performance: The Italian Experience. Banca D'Italia Quaderni dell'Ufficio Ricerche Storiche, 10, 2005, p.1-50.
109. Gavin, M. and R. Perotti, 1997, "Fiscal Policy in Latin America," NBER Macroeconomic Annual, (Cambridge, Massachusetts: National Bureau of Economic Research);
110. Gene Smiley "A Note on New Estimates of the Distribution of Income in the 1920s", "A Journal of Economic History", Vol. 60, Issue 4, Dec. 2000, Pp. 1120–1128.
111. Ghosh, A.R., Ostry, J.D., Gulde, A.M. and Wolf, H.C. Does the Exchange Rate Regime Matter for Inflation and Growth? IMF Economic Issues, 2, 1997. p.1-19.
112. Giordano, R.; Momigliano, S.; NeriI, S.; Perotti, R. (2007), "The effects of fiscal policy in Italy: Evidence from a VAR model", European Journal of Political Economy, 23, 707-733.
113. Global Corruption Barometer, 7th Edition, Transparency International, 2010/2011.
114. Global Economic Prospects. January 2022. The World Bank, 2022.
115. Goldstein, M. Managed Floating Plus. Washington DC: Institute for International Economics, Policy Analyses in International Economics. 2002
116. Gottfried von Haberler, Prosperity and Depression: A theoretical analysis of cyclical movements, 1937. (this is the 3rd edition pub. in 1946)
117. Gregory, W. (2007) "Changing Venezuela by taking power : the history and policies of the Chavez government", Verso, New York.
118. Grossman, Gene M., and Elhanan Helpman. 1991. "Quality Ladders in the Theory of Growth." The Review of Economic Studies 58 (1): 43. <https://doi.org/10.2307/2298044>.
119. Guerson, Alejandro, 2003, "On the Optimality of Procyclical Fiscal Policy When Governments Are Not Credible," (unpublished Ph.D. thesis; Washington: George Washington University).
120. Gylfason, T. Fix or Flex? Alternative Exchange Rate Regimes in an Era of Global Capital Mobility, North American Journal of Economics and Finance, 11(2), 2000 p. 173-189.
121. Hall, Robert E, and Charles I Jones. 1999. "Why Do Some Countries Produce so Much More Outper per Worker than Others?" Quarterly Journal of Economics 114 (1): 83–116. <https://doi.org/10.1162/003355399555954>.;

122. Hamilton, James, (1987), Monetary factors in the great depression, Journal of Monetary Economics, 19, issue 2, p. 145-169, <https://EconPapers.repec.org/RePEc:eee:moneco:v:19:y:1987:i:2:p:145-169>;
123. Harold L. Cole & Lee E. Ohanian, 2000. "Re-examining the contributions of money and banking shocks to the U.S. Great Depression," Staff Report 270, Federal Reserve Bank of Minneapolis. P. 79
124. Harris, R.G. (2001), "Determinants of Canadian Productivity Growth: Issues and Prospects", Forthcoming in Productivity Issues in a Canadian Context, A. Sharpe and S. Rao (eds.), Montreal: McGill-Queen's Press.
125. Heppke-Falk, K.H.; Tenhofen, J.; Wolff, G. B. (2006), "The macroeconomic effects of exogenous fiscal policy shocks in Germany: a disaggregated SVAR analysis", Deutsche Bundesbank, Discussion Paper #41.
126. Hicks, John. 1939. Value and Capital. Edited by John Hicks. Oxford, United Kingdom: Clarendon Press.; Schumpeter, Joseph. 1942. Capitalism, Socialism and Democracy. New York: Harper & Row.
127. Husain A., Mody A., Rogoff K. S. Exchange rate regime durability and performance in developing versus advanced economies // NBER working paper. 2004. 47 pp.
128. Ilzetzki, E. and Vegh, C.A., 2008. Procyclical Fiscal Policy in Developing Countries: Truth or Fiction? NBER Working Paper 14191, National Bureau of Economic Research
129. Inglehart, Ronald F. and Pippa Norris (2016): 'Trump, Brexit, and the Rise of Populism: Economic Have-Nots and Cultural Backlash', HKS Faculty Research Working Paper Series, RWP16-026.
130. J. F. Hornbeck (2013) "Argentina's Post-Crisis Economic Reform: Challenges for U.S. Policy", Congressional Research Service.
131. Jim'enez, G., S. Ongena, J.-L. Peydr' o, and J. Saurina (2014). Hazardous times for monetary policy: What do twenty-three million bank loans say about the effects of monetary policy on credit risk-taking? *Econometrica* 82(2), 463–505.
132. John Williamson What Washington Means by Policy Reform, Chapter 2 from Latin American Adjustment: How Much Has Happened? Edited by John Williamson. 1990. Peterson Institute for International Economics
133. Johnson M.H. "Laying Foundations: New Deal Public Works and Aviation Infrastructure". The Journal of Policy History, Vol. 30, No. 4, 2018, P. 696.
134. Joshua Aizenman and Reuven Glick, Sterilization, Monetary Policy, and Global Financial Integration. Review of International Economics, 17(4), 777–801, 2009/ DOI:10.1111/j.1467-9396.2009.00848.x
135. Kajaks, J. (2012) "Study on the economic and social situation in the Baltic States: Latvia". Study on the economic and social situation in the Baltic StatesLatvia.
136. Kaminsky, G., Reinhart, C., V'egh, C., 2004. When It Rains, It Pours: Procyclical Capital Flows and Macroeconomic Policies, in: Gertler, M., Rogoff, K (Eds.), NBER Macroeconomics Annual, Cambridge,MA, MIT Press.
137. Kappler, M., H. Reisen, M. Schularick, and E. Turkisch, E., "The Macroeconomic Effects of Large Exchange Rate Appreciations", Open Economies Review. 2012

138. Kazandziska, M. (2013) “Macroeconomic policy regime in Latvia”. New Challenges of Economic and Business Development.
139. Kazandziska, M. (2013) “Macroeconomic policy regimes in emerging market candidates for a currency union: The case of Latvia”. Institute for International Political Economy Berlin. Working Paper, No. 21/2013
140. Kennedy, David M. Freedom from Fear : the American People in Depression and War, 1929—1945 : — New York; Oxford: Oxford University Press, 2001. — 988 p. — (Oxford history of the United States, vol. 9)
141. Kim, Young Eun, Norman Loayza, and Claudia Meza-Cuadra. 2016. “Productivity as the Key to Economic Growth and Development.” World Bank Research Policy Brief, no. 3. <http://documents.worldbank.org/curated/en/314741472533203058/Productivity-as-the-key-to-economic-growth-and-development>.
142. Kriesi, Hanspeter, Edgar Grande, Romain Lachat, Martin Dolezal, Simon Bornschier and Thimotheos Frey (2006): ‘Globalization and the transformation of the national political space: Six European countries compared’, European Journal of Political Research 45: 921-956.
143. Kroszner, R., Strahan, P., 1999. What Drives Deregulation? Economics and Politics of the Relaxation of Bank Branching Restriction. Quarterly Journal of Economics, pp. 1437 – 1467;
144. Krugman P., Financing vs. Forgiving a Debt Overhand, Journal of Development Economics 29, 1988, pp. 253-268.
145. Krugman, P, The Age of Diminished Expectations: US Economic Policy in the 1980s, MIT Press, Cambridge, 1992, p. 9.
146. Kumhof, Michael, and Douglas Laxton (2009), “Chile’s structural surplus rule: a model-based evaluation,” IMF Working Paper No 09/88.
147. Kuznets, Simon. 1957. “Quantitative Aspects of the Economic Growth of Nations: II. Industrial Distribution of National Product and Labor Force.” Economic Development and Cultural Change 5 (S4): 1–111. <https://doi.org/10.1086/449740>.
148. Laeven, L, and F Valencia (2012), "Systemic banking crises database: An update".
149. Landau (eds.) Growth and development: The economics of the 21st century - [https://web.stanford.edu/~johntayl/Onlinepaperscombinedbyyear/1995/Stabilization Policy and Long-Term Economic Growth.pdf](https://web.stanford.edu/~johntayl/Onlinepaperscombinedbyyear/1995/Stabilization_Policy_and_Long-Term_Economic_Growth.pdf); Wolf R. D. and Resnick S. A. (2012) Contending Economic Theories. Neoclassical, Keynesian, and Marxian. Massachusetts: The MIT Press.
150. Lane, P.R., 1998. On the Cyclicity of Irish Fiscal Policy. The Economic and Social Review, 29(1), pp.1-16.
151. Lane, Philip R. (2003).”Business Cycles and Macroeconomic Policy in Emerging Market Economies”. *International Finance*, Vol. 6, No. 1, pp. 89-108;
152. Lane, Philip, and Aaron Tornell, 1999, “The Voracity Effect,” The American Economic Review, Vol. 89, No.1, pp. 22–46.
153. Laurimäe, M. (2020) “COVID-19 socio-economic responses in Estonia”, ESPN Flash Report 2020/52.
154. Lavarello, P., Sarabia, M. (2015). La política industrial en la Argentina en la década de los 2000, Serie Estudios y Perspectivas de la CEPAL, Buenos Aires, December.

155. Lehne, R. (2006). Government and Business: American political economy in comparative perspective. Washington, DC: CQ Press.
156. Lema, D. (2016). Crecimiento y productividad total de factores en Argentina y países del cono sur: 1961-2013. Washington, DC, United States. World Bank.
157. Lerner, Michael. "Prohibition: Unintended Consequences." PBS, Public Broadcasting Service.
158. Leuchtenburg W. Franklin D. Roosevelt and the New Deal, 1932-1940. N. Y., Harper & Row, 1963
159. Levine R., Zervos S., "What We Have Learned About Policy and Growth from Cross-Country Regressions?" The American Economic Review Vol. 83, No. 2, Papers and Proceedings of the Hundred and Fifth Annual Meeting of the American Economic Association, May, 1993, pp. 426-430
160. Lewis, Arthur W. 1954. "Economic Development with Unlimited Supplies of Labour." The Manchester School 22 (2): 139–91. <https://doi.org/10.1073/pnas.1006652108>.
161. Lipstok, A. (2009) "Estonia's economic environment and central bank activities". BIS Review 91/2009.
162. Lucas, Robert E. 1988. "On the Mechanics of Economic Development." Journal of Monetary Economics 22 (1): 3–42. [https://doi.org/10.1016/0304-3932\(88\)90168-7](https://doi.org/10.1016/0304-3932(88)90168-7).
163. M. Bussière, C. Lopez, C. Tille. Do Real Exchange Rate Appreciations Matter for Growth? Graduate Institute of International and Development Studies Working Paper No: 06. 2014. 41 pp.
164. M. Fridmen, A. Shwarc. A Monetary History of the United States, 1867-1960. Princeton, N.Y. 1963
165. Marshall, A. (1898), Principles of Economics, Fourth Edition (first edition 1890, eighth edition 1920), London: The Macmillan Co
166. McGettingham, D., Moriyama, K., Ntsama, J.N.N., Painchard, F., Qu, H., Steinberg, C., 2013. Monetary policy in emerging markets: taming the cycle. IMF Working Paper 13/96.;
167. Mcleod D., Mileva E. Real Exchange Rates and Productivity Growth // Fordham University Department of Economics Discussion Paper No: 2011-04.
168. Mendoza, E., 1991. Real Business Cycles in a Small Open Economy. American Economic Review. 81(4), 797-818.
169. Mian, Atif, Amir Sufi, and Francesco Trebbi. The political economy of the subprime mortgage credit expansion. No. w16107. National Bureau of Economic Research, 2010.;
170. Mian, Sufi, and Trebbi. The Political Economy of the Subprime Mortgage Credit Expansion. Quarterly Journal of Political Science 2013.8 (2013): , 2013, 8, 373-408. Print;
171. Miceli, Felisa (14 April 2007). "Statement by Ms. Felisa Miceli Minister of Economy and Production Argentina". IMF.
172. Michael D. Bordo & John Landon-Lane, 2013. "Does expansionary monetary policy cause asset price booms? some historical and empirical evidence," Journal Economía Chilena (The Chilean Economy), Central Bank of Chile, vol. 16(2), pages 04-52, August.
173. Musgrave, R.A. Public Finance in Theory and Practice / R.A. Musgrave, P.B. Musgrave. – 5th ed. – NY: McGraw-Hill, 1989. – 664 p.

174. Myles, G.D., 2000. Taxation and Economic Growth. Fiscal Studies. The Journal of Applied Public Economics, 21(1), pp.141- 168
175. Nakamura, A.O. and P. Lawrence (1994), “Education, Training and Prosperity”, John Deutsch Institute for the Study of Economic Policy (March), 235-279.
176. Ocampo J.A., A Broad View of Macroeconomic Stability, DESA Working Paper No. 1, October 2005, p.3
177. Organisation for Economic Co-operation and Development Trade and Agriculture Directorate (2016). OECD Producer Support Estimate and Related Indicators of Agricultural Support: Concepts, Calculations, Interpretations and Use (The PSE Manual). Paris, France. OECD.
178. Pain, N., C. Lewis, T.-T. Dang, Y. Jin, and P. Richardson (2014). OECD forecasts during and after the financial crisis: A post mortem. OECD Economics Department Working Paper No.1107.
179. PC, A Quick Guide to the Productivity Commission, 2009. p.1.
180. Perotti, R. (2004), "Estimating the effects of fiscal policy in OECD countries", University of Bocconi, Working Paper.
181. Phelps, Edmund S., and Taylor, John B. "Stabilizing Powers of Monetary Policy under Rational Expectations." J.P.E. 85 (February 1977): 163-90.
182. Philip Lane, (2003), The cyclical behaviour of fiscal policy: evidence from the OECD, Journal of Public Economics, 87, (12), 2661-2675;
183. Policy Responses to COVID-19: Georgia. IMF Policy Tracker.
184. Posner, Eric A. "The political economy of the Bankruptcy Reform Act of 1978." Michigan Law Review 96, no. 1 (1997): 47-126;
185. Public Works Administration, America Builds: The Record of PWA, Washington, D.C., 1939, Table 16, P. 284, and Table 20, P. 290.
186. R. McKinnon, G.Schnabl. The East Asian Dollar Standard, Fear of Floating, and Original Sin Review of Development Economics, 8(3), 331–360, 2004
187. Rajan, R. G. (2005). Has financial development made the world riskier? *Proceedings – Economic Policy Symposium - Jackson Hole, Federal Reserve Bank of Kansas City Aug*, 313–369.;
188. Rajan, Raghuram G., and Rodney Ramcharan. Constituencies and legislation: The fight over the mcfadden act of 1927. No. w17266. National Bureau of Economic Research, 2011.
189. Ratso, S. (2005) “Miracle of Estonia: Entrepreneurship and Competitiveness Policy in Estonia”. UNECE Palais des Nations, Geneva.
190. Rebelo, S. 1991. “Long-Run Policy Analysis and Long-Run Growth.” Journal of Political Economy 99 (3): 500– 521. <https://doi.org/10.1086/261764>.
191. Reinhart, C M, and K Rogoff (2009), *This time Is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press.
192. Ringa, R., Rainer, K. (2011). Why Did Estonia Choose Fiscal Retrenchment after the 2008 Crisis?. Journal of Public Policy. 31. 163 - 186. 10.1017/S0143814X11000067.
193. Romer C. D. and D. Romer (2010): "The Macroeconomic Effects of Tax Changes: Estimates Based on a New Measure of Fiscal Shocks", American Economic Review, 100(3), pp. 763-801.;
- Mertens and Ravn (2012)

194. Romer, Paul M. 1987. "Growth Based on Increasing Returns Due to Specialization." *The American Economic Review* 77 (2): 56–62. <https://doi.org/10.2307/1805429>.
195. Rotemberg, Julio J. "The New Keynesian Microfoundations." In *NBER Macroeconomics Annual 1987*, edited by Stanley Fischer. Cambridge, Mass.: MIT Press, 1987.
196. Sachs, J. (1996) "Economic Transition and American Economic Review, 86, pp.147–152.
197. Santarcangelo, Juan & Schteingart, Daniel & Porta, Fernando. (2017). *Industrial Policy in Argentina, Brazil, Chile and Mexico: a Comparative Approach*. *Revue Interventions économiques*. *Papers in political economy*.
198. Schumpeter J. A. *Business cycles. A theoretical, historical and statistical analysis of the capitalist process*. Vol. 1. N. Y.— L., 1939, P. 130—137.
199. Serven, Luis, 1998, "Macroeconomic Uncertainty and Private Investment in LDCs: an Empirical Investigation," Working Paper No. 2035 (Washington: World Bank).
200. Shek, Colin (23 May 2019). "Aiming for the Top: Can China Escape the Middle Income Trap?". Cheung Kong Graduate School of Business (CKGSB).
201. Smith, A. (1963), *The Wealth of Nations*, Volume 1 (first published in 1776), Homewood, Illinois: Richard D. Irwin.
202. Solow, R. M. 1956. "A Contribution to the Theory of Economic Growth." *The Quarterly Journal of Economics* 70 (1): 65–94. <https://doi.org/10.2307/1884513>.
203. Spilimbergo, Antonio, Steven Symansky, Olivier Blanchard, and Carlo Cottarelli (2008), "Fiscal policy for the crisis," IMF Staff Position Note No 08/01.
204. Stigler, G., 1971. *The Theory of Economic Regulation*. *The Bell Journal of Economics and Management Science*, 2(1), 3-21.;
205. Stiglitz, J.E. (2003). *Globalization and its discontents*. W.W.Norton & Company, New York, London, 288 pp.
206. Stoian, A. Obreja Braşoveanu, L. Braşoveanu, I.V. and Dumitrescu, B., 2018. *A Framework to Assess Fiscal Vulnerability: Empirical Evidence for European Union Countries*. *Sustainability* 2018, 10(7), 2482, pp. 1-20.
207. Svensson L. *Inflation Targeting* // National bureau of economic research, Working Paper 16654. 2010. pp. 11-12.
208. Swan, T. 1956. "Economic Growth and Capital Accumulation." *Economic Record* 32 (2): 334–61. <https://doi.org/10.1111/j.1475-4932.1956.tb00434.x>.
209. Talvi, Ernesto and Carlos A. Végh (2005). "Tax Base Variability and Procyclical Fiscal Policy in Developing Countries". *Journal of Development Economics*, Vol. 78, pp. 156-190;
210. *Tax Reforms in Georgia*, Ministry of Finance of Georgia, April 2011.
211. *The anti-crisis economic plan, Prevention of coronavirus spread in Georgia*, Government of Georgia, 2020.
212. *The Washington Consensus Reconsidered*, Edited by Marcus Sera & Jozeph Stiglitz. 2020. Oxford University Press.
213. Thornton, John (2008). "Explaining Procyclical Fiscal Policy in African Countries". *Journal of African Economies*, Vol. (17), No. 3, pp. 451-464.
214. Toni Turner. *A Beginner`s Guide to Short Term Trading: Maximize Your Profits in 3 Days to 3 Weeks*. Adams Media (June 1, 2008). P. 336

215. Treaty on European Union – Final Act, 1992, The Euro: explanatory notes by Directorate General II – Economic and Financial Affairs, Euro Papers, Number 17, February 1998.
216. Van den Noord, Paul, 2000, “The Size and Role of Automatic Fiscal Stabilizers in the 1990s and Beyond,” Economics Department Working Paper No. 230 (Paris: Organization for Economic Cooperation and Development);
217. Van der Ploeg, Rick (2005), “Back to Keynes?,” *CESifo Economic Studies* 51/4, 777-822.
218. Vegh, C.A., Vuletin, G., 2013. Overcoming the fear of free falling: monetary policy graduation in emerging markets. NBER Working Paper 18175.
219. Woo, Jaejong (2009). “Why Do More Polarized Countries Run More Pro-cyclical Fiscal Policy?” *The Review of Economics and Statistics*, Vol. 91, No. 4, pp. 850-870;
220. Woodford, M., 2001. The Taylor rule and optimal monetary policy. *American Economic Review, Papers and Proceedings*. 91(2), 232-237.
221. Yakhin, Y., 2008, "Financial Integration and Cyclicity of Monetary Policy in Small Open Economies," Monaster Center for Economic Research Discussion Paper No. 08-11.
222. Young, A.A. (1928), “Increasing Returns and Economic Progress”, *Economic Journal* 38, 527-542.
223. Zvi Hercowitz & Michel Strawczynski, 2004. "Cyclical Ratcheting in Government Spending: Evidence from the OECD," *The Review of Economics and Statistics*, MIT Press, vol. 86(1), pages 353-361, February;
224. Алан Гринспейн Карта и территория, Москва, Альпина 2015
225. Барро Р. (1995 г.) «Инфляция и Տնտեսական աճ», Квартальный бюллетень Банка Англии, май.
226. В. Иноземцев Экономика без догм. Как США создают новый экономический порядок. Москва, Альпина 2021
227. Джастин Линн “Демистификация китайской экономики”, М. Мысль 2013, глава 6
228. Джозеф Стиглиц Люди, власть и прибыль: Прогрессивный капитализм в эпоху массового недовольства, Москва, Альпина 2020
229. Кейнс Дж. М. Общая теория занятости, процента и денег. (The general theory of employment, interest and money, 1935). Перевод с английского Н.Н. Любимова. (Москва: Государственное издательство Иностранной литературы, 1948)
230. Майкл Портер “Международная конкуренция. Конкурентные преимущества стран”, М. Альпина 2017, часть 3
231. Реагирование на кризис, связанный с пандемией COVID-19, в странах восточного партнерства, OECD, 13 октября 2020
232. Рей Далио, Большие долговые кризисы. Принципы преодоления, Москва 2021
233. Տնտեսական ճգնաժամի հաղթահարման և կայուն տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային և ոլորտային քաղաքականությունների կիրառումը ՀՀ-ում, Մաս 1, 1.8. Հայաստանի Հանրապետության Տնտեսության Ակնարկ, ՀՌՀ, սեպտեմբեր 2021
234. «Էներգետիկ հաշվեկշիռ», Միացյալ Ազգերի Կազմակերպության վիճակագրական բաժին – <https://unstats.un.org/unsd/energystats/pubs/balance/>
235. Հայաստանի Կենտրոնական Բանկի կայք – www.cba.am
236. Հայաստանի Ազգային Վիճակագրական Կոմիտեի կայք – www.armstat.am
237. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կայք – www.eurasiancommission.org/

238. Համաշխարհային բանկի տվյալների շտեմարան – www.worldbank.org
239. Համաշխարհային առողջապահության կազմակերպության տվյալների շտեմարան – www.who.org

ISBN 978-9939-67-281-6



9 789939 672816